Լ. Եզեկյան, Ա. Սարգսյան, Ռ. Սաքապետոյան

Հայոց լեզու

Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր

11



ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԵ

Լ. ԵՂԵԿՅԱՆ, Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, Ռ. ՍԱՔԱՊԵՏՈՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԴԱՍԱԳԻՐՔ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԵՎ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ
11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԵՐԵՎԱՆ

2010

ՀՏԴ 373.167.1:809.198.1(075.3)
ԳՄԴ 81.2Հ g72
Ե 193

Խմբագիր՝ Լ. Հովսեփյան
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Եզեկյան Լ.
Ե193 Հայոց լեզու 11: Ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 11-րդ դասարանի դասագիրք /Լ. Եզեկյան, Ա. Սարգսյան, Ռ. Սաքապետոյան: Խմբ.՝ Լ. Հովսեփյան: -Եր.: ՄԱՆՄԱՐ, 2010. - 224 էջ:

ՀՏԴ 373.167.1:809.198.1(075.3)
ԳՄԴ 81.2Հ g72

© Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ., 2010
© ՄԱՆՄԱՐ, 2010
© Պետական գնումների գործակալություն, 2010

ISBN 978-9939-62-018-3

ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒ ԵՎ ԲԱՐԲԱՌ

Գրական լեզուն համաժողովրդական լեզվի առավել մշակված, նորմավորված տարբերակն է: Այն ստեղծվում է պատմական երկարատև զարգացման ընթացքում: Պետականություն ունեցող ժողովուրդների գրական լեզուն ունենում է առավել ընդարձակ գործառույթներ. այն դառնում է գիտության ու կրթության, զանգվածային լրատվամիջոցների, կինոյի ու թատրոնի լեզու: Գրական լեզուն համաժողովրդական լեզվի բարձրագույն դրսևորումն է: Ժամանակակից գրական հայերենն ունի երկու տարբերակ՝ արևելահայերեն և արևմտահայերեն: Արևելահայերենը գործում է ՀՀ տարածքում, իսկ արևմտահայերենը՝ Սփյուռքում (բացի նախկին ԽՍՀՄ-ի և Իրանի Իսլամական Հանրապետության տարածքներից): Վերջին տասնամյակներում ՀՀ-ից մեկնածների միջոցով արևելահայերենը զգալի տարածում է գտել նաև սփյուռքահայ գաղթօջախներում:

Գրական լեզուն ունենում է բանավոր և գրավոր տարբերակներ: Սրանք իրարից տարբերվում են բառապաշարային ու ոճական մի շարք հատկանիշներով:

Գրական լեզուն հայ ժողովրդի հաղորդակցման միասնական միջոցն է, մինչդեռ բարբառները համաժողովրդական լեզվի տարածքային տարբերակներն են: Այլ կերպ ասած՝ բարբառները ծառայում են որոշակի տարածքում բնակվող բնակչության հաղորդակցմանը:

Ընդունված է նշել բարբառների առաջացման երկու պատճառ: Դրանցից առաջինը կարելի է անվանել պատմաքաղաքական: Հայ ժողովուրդը դարեր շարունակ գտնվել է տարբեր նվաճողների լծի տակ, որի հետևանքով եղել է տարբեր պետությունների կազմում: Յուրաքանչյուր հատվածի հայերենը հայտնվել է մեկուսացած վիճակում, ունեցել զարգացման ուրույն պայմաններ, ուստի սկսել է տարբերվել ընդհանուր լեզվից և վերածվել է բարբառի: Երկրորդ պատճառը աշխարհագրական է: Հայաստանում՝ սարերով ու ձորերով կտրատված մակերևույթ ունեցող լեռնային երկրում, միշտ չէ, որ հնարավոր է եղել ապահովել կապը տարբեր մասերի միջև: Սա, անշուշտ, վերաբերում է անցյալին, երբ ձմռանը մի բնակավայրը մյուսից ամիսներով կտրվում էր, և նրա բնակիչները հայտնվում էին նաև լեզվական մեկուսացման մեջ: Դրա հետևանքը լինում էր համաժողովրդական լեզվից տարբեր խոսվածքի՝ բարբառի առաջացումը:

Այսօր հաճախ ասում են, որ բարբառները դատապարտված են մահացման, որ դրանք շուտով կվերանան: Ինչ խոսք, սրանում կա ճշմարտության մեծ բաժին: Միասնական հանրակրթության ու բարձրագույն դպրոցի, ռադիոյի, հեռուստատեսության, կինոյի մեր դարում գրական լեզուն աստիճանաբար դուրս է մղում բարբառային իրողությունները: Սակայն մյուս կողմից չպետք է մոռանալ, որ բարբառները մեր լեզվի դրսևորումներն են, նրա շտեմարանն ու գանձարանը:

Գրական լեզուն բազմաթիվ բառեր, բառաձևեր ու արտահայտություններ է վերցրել բարբառներից, որի շնորհիվ դարձել է աշխույժ ու կենդանի: Բարբառներն այսօր էլ շարունակում են կենդանի ավիշ ներարկել գրական լեզվին, այն դարձնել պատկերավոր և արտահայտիչ: Ուստի դեռ վաղ է խոսել բարբառների վերանալու մասին:

Յուրաքանչյուր բարբառ ունենում է սեփական հնչյունական կազմ, բառապաշար և քերականություն, որոնցով տարբերվում է գրական լեզվից:

Հայերենն ունեցել է շուրջ 60 բարբառ, որոնք իրենց հերթին ունեին ենթաբարբառներ ու խոսվածքներ: Դրանցից առավել տարածվածներից են **Ագուլիսի, Ակնա, Ամասիայի, Առտիալի, Արաբկիրի, Արարատյան, Արդվինի, Բեյլանի, Գորիսի, Դիադինի, Եդեսիայի, Երզնկայի, Զեյթունի, Թիֆլիսի, Խարբերդի, Կիլիկիայի, Համշենի, Ղարաբաղի, Մալաթիայի, Մարաշի, Մեղրու, Մշո, Սասունի, Սվեդիայի, Վանի, Խոյի, Պոլսի, Քեսաբի** բարբառները: Սրանց մի զգալի մասն այսօր չկա (մահացած բարբառներ), քանի որ չկա նրանով խոսող համայնքը: Հայ բարբառների անհետացման հիմնական պատճառը Արևմտյան Հայաստանում իրականացված ցեղասպանությունն էր, որի հետևանքով հայաթափվեց ծաղկուն երկրամասը: Փրկվածների մի մասը շարունակեց գործածել մայրենի բարբառը, սակայն նրանք հետզհետե ավելի են նվազում:

Հայ բարբառները Հր. Աճառյանը դասակարգել է՝ առաջնորդվելով ձևաբանական հատկանիշով: Նա ելակետ է ընտրել բայի սահմանական եղանակի ներկայի կազմությունը և ըստ այդմ նշել է երեք ճյուղ՝ **ում, կը** և **ել:** Հետագայում Ա. Ղարիբյանը նշեց նաև **ս** ճյուղը: Մեր օրերում Գ. Ջահուկյանը կատարեց հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգում՝ ընդգրկելով հարյուր հատկանիշ:

Գրական հայերենը շատ աղքատ կլիներ առանց բարբառների կենարար աղբյուրից եկող ժողովրդական բառ ու բանի, առած-ասացվածքների, թևավոր խոսքերի: Հայ գրողներից շատերը՝ Խ. Աբովյան, Ղ. Աղայան, Հ. Թումանյան, Ա. Բակունց, Հ. Շիրազ, Հ. Մաթևոսյան, իրենց երկերում մեծ հաջողությամբ կիրառել են բարբառներից եկող ժողովրդական բառագանձը:

Բարբառների հետ չպետք է շփոթել ժարգոնները, որոնք լեզվի հասարակական (սոցիալական) տարբերակներն են և բնորոշ են հանրության այս կամ այն խավին, այս կամ այն մասնագիտություն ունեցողներին: Որոշակի զբաղմունքի տեր մարդիկ, երբ խոսում են մասնագիտական թեմաներով, անցնում են մասնագիտական ժարգոնի: Այսպես՝ երկու բժիշկ կարող են զրուցել մասնագիտական թեմաներով՝ գործածելով լատիներեն տերմիններ, և նրանց զրույցին մասնակցող ոչ մասնագետը անհաղորդ կմնա նրանց ասածներին, քանի որ նրանք խոսում են բժշկական ժարգոնով: Կան նաև տեխնիկական մասնագիտություններով զբաղվողների ժարգոններ: Ժարգոնները, ի տարբերություն բարբառների, չունեն ինքնուրույն քերականություն: Դրանք հիմնվում են այս կամ այն լեզվի իրողությունների վրա: Սակայն այսօր մեզանում ժարգոն է համարվում մի խառնափնթոր լեզու, որն օտար

լեզվի ու բարբառի մի տարօրինակ խառնուրդ է: Ցավոք, այդ լեզուն տարածված է նաև մեր սովորողների շրջանում. քննությունից «անբավարար» ստանալը հորջորջվում է *կտրվել*, դասից փախչելը՝ *դասից թռնել, լավ, հետաքրքիր, ուժեղ* բառերը փոխարինվում են *թույն* բառով *(թույն անեկդոտ, թույն կինո, թույն ավտո)* և այլն: Սա շատ մերժելի և վտանգավոր երևույթ է, որը կրթված մարդը իրեն չպիտի թույլ տա:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ ուղիներով են առաջացել բարբառները:
2. Ի՞նչ ճյուղերի են բաժանվում բարբառները:
3. Ի՞նչ դեր են խաղում բարբառները գրական լեզվի հարստացման գործում:
4. Ի՞նչ է ժարգոնը:

Վարժություն 1: Աջ սյունակից ընտրե՛ք ձախ սյունակում գրված բարբառային բառերից յուրաքանչյուրին համապատասխանողը:

աքլոր	այս
լղար	աքաղաղ
մերի	գայլաձագ
օճորք	նիհար
գելաձագ	հրել
բոթել	կատակ
հանաք	անտառ
շլինք	առաստաղ
հրես	վիզ
էս	ահա

Վարժություն 2: Ընտրե՛ք ձախ սյունակում գրված բարբառային բառի գրական համարժեքը:

դոշակ	ներքնակ, վերմակ
աղլուխ	շապիկ, թաշկինակ
արխեին	հանգիստ, անհանգիստ
հալբաթ	երևի, անշուշտ
մուշտարի	հարևան, հաճախորդ
նաղդ	ապառիկ, կանխիկ
բայղուշ	արծիվ, բու
դրուստ	ճիշտ, թյուր
համբարք	հաշիվ, հեռավորություն
օքմին	մարդ, կենդանի

Վարժություն 3: Նշե՛ք ձեզ ծանոթ կամ ձեր մայրենի խոսվածքում հանդիպող բարբառային 10 բառ:

Վարժություն 4: Կարդացե՛ք տրված բնագրերը, վերածե՛ք գրական արևելահայերենի:

ա) – Ախպե՛ր, ա՛յ, ես հիմի օրինակի համար մինն ասեմ, դու տես՝ մե՞նք էլ հացակեր մարդիկ ենք, բա՞ն ենք հասկանում, թե՞ չէ: Մի աշունք մեր Դավոն գնաց քաղաքը՝ խոզ ծախելու: Մի ճանանչ մարդ աբրեշումի ճիճվի սերմ էր տվել....: Ճամփա պահեցինք մինչև գարունքը բաց էլավ: Գարունքը որ բաց էլավ, ոնց որ խրատ էր տվել՝ ես ճիճվի սերմը բերինք, մեր խիզանի ծոցում դրինք, որ տաքանան, դուրս գան: Դուրս էկան ասեղի ծերի չափ մանր զադեր....: Գնացի, ձորիցը մի շալակ թթան տերև բերի, կապեցի մենձ տան ամբարի ոտիցն ու ճիճուն վրեն ածի: Ինչքան մարդ եկավ թամաշա, ոչ մնին տուն չթողինք, որ աչքով չտան, ասինք՝ թող մի տեսնենք՝ ինչ ա դուրս գալի: Ա՛յ տղա, էդ անտեր ճիճուները մի քանի օր կացան ու կոտորվեցին: Հիմի թե ասենք նրանից էր, որ գոմշի ձագը շատ մոտ էր կապած, ոտնատակ էր տալիս, թե նրանից էր, որ հավերը տուն էին թափում, մե-մեն կուտ ուտում, դե ո՞նց անենք: Խո չէի՞նք կարող հավերը կոտորել կամ ձագն սպանիլ: Թե ասենք անձրևիցն էր, որ երդիկովը ներս էր թափվում, մին էլ մարդ միտք ա անում, թե քաղաքումը անձրև չի գալի՞... Մի խոսքով՝ բան գլուխ չեկավ: Տեսանք, որ մեր երկրումը աբրեշումի ճիճուն անում չի, բան չի դառնում: Դե՛, զարմանալի ի՞նչ կա որ. ենպես երկիր կա՝ ղուշ չի ապրում, ենպես երկիր կա՝ ցորեն չի դուրս գալի. ամեն մի աշխարհք մի տեսակ բնություն ունի. ամա էս մեր նոր ուսումնականները էսքանն էլ չեն հասկանում:

Հովհաննես Թումանյան, «Գաբո բիձու շերամապահությունը» (հատված)

բ) ...Ու Նեսո բիձեն, հիվանդի վրեն նստած, չիբուխը բերանին, շարունակում էր իր պատմությունը:

– Մի տարի էս մեր Աբգարն էլ էսպես մրսել էր: Ղանթափու ծաղիկ բերին, չայ շինեցին, խմացրին, պրաշոկ[1] բերին, ջուր արին, տվին իրան, քացախ քսեցին, բան չի դառավ:

Ասի՝ տղե՛ք, բերեք ես դրան մի քարաբաղնիս անեմ: Թե՝ դե դու գիտես: Բերի, մի թեժ կրակ արի, Գարան տատի պռունգը կոտրած պղինձը ջուր լցրի, վրեն դրի, քար հավաքեցի, ածի շեղջը: Ջուրն եփ եկավ, քարը կարմրեց: Սա թե՝ վախում եմ: Ախր նա էլ սրա նման մի լեղապատառ օքմին ա:

– Ադա՛, ընչի՞ ես ասում, Աբգարը հո սրտոտ մարդ ա:

– Վա՛յ է, նրա սրտոտը ո՞րն ա: Մի աշունք ես մի արջի բուն գտա: Էկա, ասի՝ Աբգա՛ր, արջի բուն եմ գտել, արի գնանք, արջին ընիցը հանենք: Գնացինք: Ես մի ձող վեր կալա, էս արջի բունը խըրխըթորեցի: Մին էլ հանկարծ էն անտեր արջը դուրս եկավ ու ինձ կալավ: Աբգա՛ր, քոմագ հա քոմագ: Ո՞վ կտա Աբգար. մին էլ

1 Ռուսերեն порошок (փոշի) բառի աղավաղված ձևը, այսինքն՝ դեղ, դեղամիջոց:

տեսնեմ՝ հրեն փախած գնում ա: Արջի ձեռիցը մի կերպով պրծա, եկա տուն: Ասում եմ, աղա՛, դու էս ի՞նչ արիր: Թե՝ էկա տուն, որ թվանք բերեմ: Սուտ: Վախիցը փախավ:

Էն էի ասում՝ հիմի սա կանգնել ա, թե Նեսո՛ ջան, վախենում եմ, ինձ քարաբաղնիս մի՛ անիլ:

Ականջ չի դրինք, բերինք, կեծացած քարերն եփման ջուրը լցրինք ու հենց էնպես բուղը վեր ըլելով՝ սրա հետ կոխեցինք տեղի տակը.– վա՛յ, մեռա հա մեռա: Լսողն ո՞վ ա: Վրեն նստոտեցինք: Ես եմ, էս մեր Ղուկասն ա, Փիլոն ա, Գաբոն ա, Արութն ա: Հիմի սա տակից գոռում ա, ոնց ա գոռում... Էնքան գոռաց, մինչև դինջացավ: Բաց արինք, տեսանք՝ ջուր ա կտրել: Էն էր ու էն, լավացավ, տեղիցը վեր կանգնեց ողջ, առողջ մարդ:

Հովհաննես Թումանյան, «Նեսոյի քարաբաղնիսը» (հատված)

Վարժություն 5: Տեքստերից դո՛ւրս գրեք բարբառային բառերն ու քերականական ձևերը: Նշե՛ք դրանց գրական ձևերը (անհրաժեշտության դեպքում օգտվե՛ք բառարաններից):

ա) Ժամանակով Կատուն ճոն էր,
Շունն էլ գլխին գդակ չուներ,
Միայն, գիտեմ ոչ՝ որդիանց որդի
Ճանկել էր մի գառան մորթի:
Եկավ մի օր, ձմեռվան մըտին,
Կատվի կուշտը տարավ մորթին:
– Բար աջողում, ուստա Փիսո,
Գլուխս մրսեց, ի սեր աստծո,
Առ էս մորթին ու ինձ համար
Մի գդակ կարի գլխիս հարմար:
Վարձիդ համար միամիտ մնա,
Համա-համա շատ չուշանա:

Հովհաննես Թումանյան

բ) Մին էլ եկավ, դարձյալ չկար.
Էս անգամը դիպան իրար.
Էլ անպատիվ անկարգ խոսքեր,
Էլ հին ու նոր, էլ հեր ու մեր,
Էլ գող Փիսո, էլ քաչալ Շուն...
Բանը հասավ դիվանբաշուն:
Շունը մինչև գընաց, եկավ,
Ուստա Կատուն կոտըրն ընկավ,
Գլուխն առավ ու մի գիշեր,
Հայդե, կորավ. էն կորչիլն էր:

Հովհաննես Թումանյան

գ) Լեռ քարափի վրա ցից գլուխը բարձրացընում, թամաշա ա անում հանդարտ, հազար գլխանի դևի պես, Երևանու հազար տարեկան քավթառ, պառաված, չորս կողմը խանդակով կապած, բրջերով (աշտարակ) ղայիմացրած, սուր-սուր ատամները գլխին շարած, հինգ գազաչափ հաստ պարսպով երկու տակ բռնած, մեկ ոտը Կոնդումը, մեկ ոտը Դամուրբուլաղի գլխին դրած, մեկ բերանը հյուսիս, մեկը հարավ բաց արած, չորացած գլուխը երկինքը ցցած, լեն փեշերը երկրումը փռած, անամոթ երեսը կոկած, սվաղած, հազար բնով, հազար փանջարա աչքերը դես ու դեն չռած, ջուխտ չանգերով Չանգվի քարոտ, զարհուրելի, սևադեմ ձորը խտտած, դոշին կպցրած՝ անմազ, անլեզու, մարդակեր բերդը ու դեղնած երեսը հեռու տեղից ծածկում, ագահ աչքերը գետնին քցում, որ միամիտ տեսնողին դիա շուտով խաբի, դիա հեշտ իր ծոցը քաշի, անձեն, անսաս կուլ տա, փչացնի:

Խաչատուր Աբովյան

դ) **Ծառերն եւ կացինը**

Ծառերն որ մեշումն[1] խիստ շատ զվիրն էկան[2]
Կացնի ձեռիցը, ու էլ չիմացան,
Ի՞նչ անեն՝ իրանց գլուխը պահեն,
Խորհուրդ արին՝ մեկ ճար իրանց անեն:
Ձեն տվեց նրանց մեկը ծառերի.
«Մենք որ կոթ չտանք, կացինը կարա՞
Մեզ վնաս տա, կամ հեչ մեզ մոտանա»:
Թո՛ղ իմացողը ինքը իմանա,
Ու նիախ տեղը կացնի կոթ չտա:
Թե չէ սկիզբը իրան կկտրի,
Հետո փոշմանիլն բանի պետքը չի՛:

Խաչատուր Աբովյան

Գիտե՞ք, որ...

Լեզվաբան Հրաչյա Աճառյանը 21 տարեկանում ընտրվել է Փարիզի լեզվաբանական ընկերության անդամ: Այդ մեծ պատվին նա արժանացել է 1893 թվականին իրանա-կովկասյան լեզվաընտանիքին պատկանող լազերենի կամ ճաներենի բառարան կազմելու և լազերենի ձեռնարկ ստեղծելու համար:

Մխիթարյան միաբանության անդամ, հայագետ Արսեն Այտընյանը Վիեննայում 1845–1849 թվականներին ստեղծել է հայկական առաջին գլոբուսը:

1 Անտառում:
2 Տուժեցին:

ՆՈՐ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆ՝ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ: ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Աշխարհաբարը՝ իբրև գրական լեզվի նոր որակ, հանդես է գալիս 17-րդ դարում: Ընդունված է առանձնացնել աշխարհաբարի զարգացման 4 ենթաշրջան:

Առաջինը կազմավորման կամ վաղ աշխարհաբարի շրջանն է, որն ընդգրկում է 17–18-րդ դարերը, երբ հայ ժողովրդի կյանքում հասարակական, քաղաքական լուրջ տեղաշարժեր են կատարվում: Այս շրջանում ընդլայնվում են գրական լեզվի գործածության ոլորտները: Աշխարհաբարով լույս աշխարհ են գալիս օրագրություններ, նամակներ, ուղերձներ: Իր աշխարհաբար առաջին տաղերն է հորինում Նաղաշ Հովնաթանը, արտասահմանի մի շարք քաղաքներում տպագրվում են աշխարհաբարի անդրանիկ գրքերը, իսկ Ամստերդամում լույս է տեսնում արևելյան աշխարհաբարի առաջին քերականությունը՝ բազմաթիվ արժեքավոր նմուշներով:

Երկրորդը աշխարհաբարի ձևավորման կամ լուսավորական շրջանն է (19-րդ դարի սկզբից մինչև 70-ական թվականները), որը բաժանվում է երկու ենթաշրջանի՝ նախահյուսիսափայլյան և հյուսիսափայլյան: Նախահյուսիսափայլյան ենթաշրջանում գրապայքարը և լեզվաշինարարությունը դեռևս ընթանում են տարերային ձևով, և լեզուն բավականին անմիօրինակ է. կատարվում են մշակման ուղիների որոնումներ (Խ. Աբովյան, Ռ. Պատկանյան, Ս. Նազարյան և ուրիշներ), դեռևս չկան կազմակերպված մամուլ և հրապարակախոսություն: Հյուսիսափայլյան ենթաշրջանը, որը կապվում է Ստ. Նազարյանի և Մ. Նալբանդյանի հրատարակած «Հյուսիսափայլ» պարբերականին, բնութագրվում է իբրև կազմակերպված լեզվաշինարարության և գրապայքարի շրջան:

19-րդ դարը իրոք աշխարհաբարի տիրապետության դարն էր: Հենց այդ դարի առաջին քառորդում հայ ժողովրդի հասարակական, քաղաքական, մշակութային կյանքում տեղի ունեցած տեղաշարժերը նպաստում են նաև նոր լեզվի մշակմանն ու զարգացմանը:

Պատմական Հայաստանի երկու տարբեր հատվածներում ինքնուրույնաբար շարունակվում են զարգանալ արևելահայ և արևմտահայ ճյուղերը՝ իրենց բնորոշ լեզվական օրինաչափություններով:

Արևելահայ աշխարհաբարի մշակման ու հետագա զարգացման գործում կարևոր դեր են խաղում հատկապես մշակութային կյանքում կատարված իրադարձությունները:

1810թ. Աստրախանում բացվում է Աղաբաբյան վարժարանը, 1815թ. Մոսկվայում՝ Լազարյան ճեմարանը, ապա այս հոսանքը թափանցում է Անդրկովկաս, և 1824թ. Թիֆլիսում իր առաջին դասերն է սկսում Ներսիսյան դպրոցը: 1820թ. Թիֆլիսում գործել են նաև հայկական թատերական առանձին խմբակներ:

Գրական լեզվի մշակման ու հարստացման գործում անուրանալի է եղել հայ դպրոցի, ուսումնական հաստատությունների դերը:

Ժամանակի հայ առաջադեմ երիտասարդները, այդ թվում նաև Ներսիսյան դպրոցի և Լազարյան ճեմարանի շրջանավարտները, խմբակներ էին կազմում և օտար լեզուներին զուգընթաց ուսանում նաև հայերեն, մշակում աշխարհաբար լեզուն:

Ուսանողական այս միջավայրում առաջին անգամ ընթերցվում է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի մի ձեռագիր օրինակը, որը գտնվում էր նրա մտերիմ աշակերտներից մեկի՝ Գ. Աքիմյանի մոտ: Այսպես էր մշակվում և աստիճանաբար լայն ոլորտ դուրս գալիս նորաբողբոջ գրական աշխարհաբարը:

Աշխարհաբարի զարգացման հյուսիսափայլյան ենթաշրջանը բնութագրվում է իբրև կազմակերպված լեզվաշինարարության և գրապայքարի շրջան, երբ լեզուն զգալի չափով միօրինակ է դառնում, մշակվում է նաև դպրոցի և գեղարվեստական գրականության լեզուն:

Երրորդ ենթաշրջանը համարվում է դասական աշխարհաբարի շրջան (1870-ական թվականներից մինչև 1920թ.) և բնութագրվում է լեզվի ժողովրդականացումով: Լեզուն արդեն դառնում է միօրինակ ու հարուստ, ձեռք է բերում նոր գործառույթներ, հղկվում է ու մշակվում:

Չորրորդ ենթաշրջանը խորհրդային լեզվի շրջանն է (1920թ. հետո), երբ գրական լեզուն արդեն դառնում է համաժողովրդական, բարբառներն աստիճանաբար տեղի են տալիս գրական միասնական լեզվին: Այս իրողությունները շարունակվում են նաև հետխորհրդային շրջանում (1991թ. հետո): Սակայն այս շրջանում քաղաքական և մշակութային փոփոխությունների հետևանքով կատարվեցին լեզվական մեծ փոփոխություններ. մասնավորապես զգալի չափով փոփոխվեց բառապաշարը: Հետխորհրդային տարիները կարելի է համարել նոր՝ հինգերորդ ենթաշրջանի սկիզբ:

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞ր դարից է հանդես գալիս աշխարհաբարը:
2. Աշխարհաբարի զարգացման քանի՞ ենթաշրջան է ընդունված առանձնացնել:
3. Ո՞ր պարբերականն է կարևոր դեր խաղացել աշխարհաբարի զարգացման երկրորդ ենթաշրջանում. ովքե՞ր էին այդ պարբերականի հրատարակիչները:
4. Հայ կրթական և մշակութային ի՞նչ օջախներ էին գործում 19-րդ դարի առաջին քառորդում:

ՀԱՅԵՐԵՆԻ ԵՐԿՈՒ ՃՅՈՒՂԵՐԸ՝ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՆ ՈՒ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԸ

Հայ ժողովուրդն այսօր ունի գրական լեզվի երկու տարբերակ՝ արևելահայերեն և արևմտահայերեն: Արևելահայերենը Հայաստանի Հանրապետության պետական լեզուն է. արևելահայերեն է գրված ՀՀ Սահմանադրությունը, նրանով են արձակվում Հայաստանի Նախագահի հրամանագրերը, կազմվում պետահրավական բոլոր փաստաթղթերը, իրականացվում է հանրակրթական և բարձրագույն ուսուցումը:

Արևելահայերենը նաև Իրանի Իսլամական Հանրապետության հայության հաղորդակցման միջոցն է:

Արևմտահայերենով հաղորդակցվում է Սփյուռքի հայությունը: Աշխարհի չորս ծագերում ապաստանած հայերը խոսում, գրում և ստեղծագործում են հիմնականում արևմտահայերեն:

Արևելահայերենը նախկինում անվանում էին ռուսահայերեն, իսկ արևմտահայերենը՝ տաճկահայերեն՝ ելնելով դրանց տարածման սահմաններից, սակայն այսօր ավելի ճիշտ է դրանք կոչել ավելի չեզոք աշխարհագրական անուններով:

Հայերենի երկփեղկվածությունն սկսվում է միջնադարից, երբ ի հայտ են գալիս հնչյունական, բառիմաստային ու քերականական տարբերություններ: Դրանք կապվում են մեր լեզվի երկու պատմական փուլերին: Արևելահայերենը իր արմատներով գնում է դեպի գրաբարը, իսկ արևմտահայերենը՝ դեպի միջին հայերենը: 15–16-րդ դարերից սկսած՝ այդ երկփեղկվածությունը դառնում է ավելի նկատելի, որն ի վերջո հանգեցնում է արդի հայերենի գրական երկու ճյուղերի ձևավորմանը:

Տարբեր են նաև մեր լեզվի ճյուղերի հիմքերը: Արևելահայերենը ձևավորվել է հայերենի ամենատարածված բարբառներից մեկի՝ Արարատյան բարբառի հիման վրա, որը պատկանում է **ում** ճյուղին, իսկ արևմտահայերենը՝ Պոլսի և հարակից շրջանների **կը** ճյուղի բարբառի հիման վրա: Բարբառախմբերի անվանումների հիմքում Հ. Աճառյանի առաջարկած սկզբունքն է՝ բայի սահմանական ներկայի կազմության առանձնահատկությունը՝ *գրում եմ – կը գրեմ*:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ տարբերակներ ունի արդի գրական հայերենը:
2. Ի՞նչ անվանումներ են տրվել հայերենի երկու տարբերակներին:
3. Ո՞ր բարբառների հիման վրա են ձևավորվել արևելահայերենն ու արևմտահայերենը:

Վարժություն 6: Անգի՛ր սովորեք Միսաք Մեծարենցի «Վերադարձի երգ» բանաստեղծությունը:

Կսկիծ կա սրտիս մեջը վիրավոր,
զոր արևին լո՛ւյսն անգամ չի բուժեր.
խորունկ ու ցավոտ մորմոքում մը, որ
ա՜հ, պիտի լայնա՛, երբ իջնե գիշեր:
Կը հյուծին ցոլքերն լույսին հեռավոր
խարույկի մը պես, որ վաղ է մաշեր.
բայց դեռ կը հուզե զիս տեսիլք մ'աղվոր,
զոր ինձ կը բերեն անցյալի հուշեր:
Ու պիտի ապրի՛մ, վիշտը նոր ուժեր
կը բերե հանկարծ հոգվույս սիրավեր,
կյանքին կը դառնամ դեռ չըրած գիշեր:
Փուշեր նետվեցան օրե օր վերքիս,
ու հոն հեծեծանք մը բերին հովեր.
բայց սիրո հույս մը կ'արևե հոգիս:

Արևմտահայերենի հնչյունական համակարգը

Արևմտահայերենը, ինչպես նաև արևելահայերենը, գրության մեջ պահում է մաշտոցյան բոլոր տառերը: Սակայն արևմտահայերենում էականորեն տարբերվում են այդ գրերի հնչումները, որոնք կապվում են միջինհայերենյան ծագում ունեցող մի համալիր հնչյունափոխության. այն ընդունված է անվանել տեղաշարժ-տեղափոխություն: Ըստ այդ հնչյունափոխության՝ հայերենի պայթական բաղաձայնների արտասանության մեջ կատարվում է հետևյալ փոփոխությունը:[1]

բ - պ - փ

գ - կ - ք

դ - տ - թ

ձ - ծ - ց

ջ - ճ - չ

Սա նշանակում է, որ բոլոր ձայնեղները արտասանվում են շնչեղ խուլ, իսկ խուլերը՝ ձայնեղ:

1 Պայթական բաղաձայններն են՝ **բ, պ, փ, դ, տ, թ, գ, կ, ք, մ, ն**: Շփական բաղաձայններն են՝ **վ, ֆ, զ, ս, ժ, շ, ղ, խ, հ**: Պայթաշփական բաղաձայններն են՝ **ձ, ծ, ց, ջ, ճ, չ**: Ձայնորդ բաղաձայններն են՝ **լ, ր, ռ, յ, մ, ն**: Ձայնեղ բաղաձայններն են՝ **բ, գ, դ, ձ, ջ, վ, զ, ժ, ղ**: Խուլ բաղաձայններն են՝ **պ, տ, կ, ծ, ճ, փ, թ, ք, ց, չ, ֆ, ս, շ, խ, հ**, որոնցից **փ, թ, ք, ց, չ** հնչյուններն արտասանվում են ուժեղ շնչով և կոչվում են շնչեղ խուլեր:

Այսինքն՝ առաջին ուղղահայաց շարքի բոլոր հնչյունները (ձայնեղներ) արտասանվում են երրորդ ուղղահայաց շարքի հնչյունների նման (շնչեղ խուլ). **բ**-ն արտասանվում է **փ**, **գ**-ն՝ **ք**, **դ**-ն՝ **թ**, և այսպես մինչև վերջ: Ըստ այդմ՝ *բերան* բառն արևմտահայերենում արտասանվում է *փերան, գերան՝ քերան, դահուկ՝ թահուգ, ձայն՝ ցայն, ջուր՝ չուր:*

Իսկ երկրորդ ուղղահայաց շարքի բոլոր հնչյունները (խուլ) արտասանվում են առաջին ուղղահայաց շարքի նման (ձայնեղ), այսինքն՝ **պ**-ն արտասանվում է **բ**, **կ**-ն՝ **գ**, **տ**-ն՝ **դ** և այլն: Համապատասխանաբար բառերը կհնչեն հետևյալ կերպ՝ *պանիր – բանիր, կատու – գադու, տերև – դերև, ծաղիկ – ձաղիգ, ճանճ – ջանջ:*

Միշտ պետք է հիշել, որ բառերը արևելահայերենում և արևմտահայերենում հիմնականում գրվում են նույն կերպ, բայց տարբեր է նրանց արտասանությունը:

Որոշակի տարբերություն կա նաև **ռ** և **ր** հնչյունների արտասանության մեջ: Արևելահայերենում դրանք խստորեն տարբերակված են և առաջացնում են իմաստային տարբերություն *(տար – տառ, արու – առու)*, մինչդեռ արևմտահայերենում դրանք հնչում են միակերպ. կոշտ **ռ**-ն հնչում է փափուկ **ր**-ի նման *(սառույց – սարույց, առնական – արնագան, բառնալ – փարնալ)*:

Արևմտահայերենը առ այսօր գործածում է հին (գրաբարյան) ուղղագրությունը՝ ի տարբերություն արևելահայերենի, որը 1922 թվականից անցել է նոր (աբեղյանական) ուղղագրության:

Արևմտահայերենի բառապաշարը

Բառապաշարային առումով արևմտահայերենը և արևելահայերենը ժառանգորդներն են ընդհանուր հայերեն բառերի, ուստի նրանց միջև ընդհանրություններն ավելի շատ են, քան տարբերությունները: Տարբերությունները վերաբերում են որոշ բառերի արտահայտած իմաստներին, որոնք երկու տարբերակներում նույնը չեն: Այսպես՝ արևելահայերենի *ախոյան* «հակառակորդ» բառը արևմտահայերենում նշանակում է «չեմպիոն», *պահարան՝* «կահույքի տեսակ» – «նամակաձրար», *հով՝* «զով» – «քամի», *անուշ՝* «քաղցր» – «մուրաբա», *գրագետ՝* «գրաճանաչ» – «գրող», *կաթիլ՝* «հեղուկի մասնիկ» – «կաթել», *մականուն՝* «ավել անուն» – «ազգանուն»:

Կան նաև բառեր, որոնք ներկայացնում են ուղղագրական-հնչյունափոխական տարբերակներ՝ *կենտրոն – կեդրոն, կոզիախումբ – կոզեխումբ, ակացիա – աքասիա, մակուկավար – մակուկավար, անձնվեր – անձնանվեր, գցել – ձգել:*

Սակայն հայերենի երկու տարբերակների բառապաշարային առավել ակնհայտ տարբերությունները պայմանավորված են օտար բառերի նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Արևելահայերենը չի խորշում օտար բառերի գործածումից, մինչդեռ արևմտահայերենը ձգտում է բոլոր օտար բառերը թարգմանելու: Այսօր արևելահայերենը ստեղծում է օտար բառերի բազմաթիվ համարժեքներ, այդ թվում՝ փոխառում է արևմտահայերենից, ինչպես օրինակ՝ *կոմպոզիտոր – երգահան, լոմ-*

բարդ – գրավատուն, բանկ – դրամատուն, մենյու – կերակրացանկ, ռադիո – ձայնասփյուռ, կոմպյուտեր – համակարգիչ, մակետ – մանրակերտ, պարկետ – մանրահատակ (կամ *մանրատախտակ*), *դիրիժոր – նվագավար, կորպուս – մասնաշենք, ստրատեգիա – ռազմավարություն* և այլն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է կոչվում միջին հայերենից սկիզբ առած և արևմտահայերենի արտասանական համակարգում գործող հնչյունափոխությունը:
2. Ինչպե՞ս են արտասանվում պ, տ, կ, ծ, ճ հնչյուններն արևմտահայերենում:
3. Ինչպե՞ս են արտասանվում բ, գ, դ, ձ, ջ հնչյուններն արևմտահայերենում:
4. Բառապաշարային ի՞նչ հիմնական տարբերություններ կան արևելահայերենի և արևմտահայերենի միջև:

Վարժություն 7: Օգտվելով բառարաններից՝ գրե՛ք տրված բառերի արևմտահայ տարբերակները:

ա) Ձու, ատամ, շտապել, ուղղել, փոքր, մոտ, մեխ, ափսե, գիժ, սպիտակեղեն, քաղցած:

բ) Պանթեիզմ, ժյուրի, սկլերոզ, օբյեկտիվ, սուբյեկտիվ, բանկ, ավտոմատ, դեմագոգ, կոմունիստ:

Վարժություն 8: Օգտվելով բառարաններից՝ գրե՛ք նշված բառերի արևելահայ տարբերակները:

ա) Վայրկյան, երկվայրկյան, պուպրիկ, քով, ծյուրիլ, հարճ, մելան, գլխագիր, անկարգել, լաթ:

բ) Ախոյան, բանավոր, մականուն, գրագետ, գոց, հով, գործողություն, ծրար, մտիկ ընել, գեշ:

Գիտե՞ք, որ...

Դորպատի (այժմ՝ Տարտու) համալսարանում սովորել են Խաչատուր Աբովյանը, Ստեփանոս Նազարյանը, Գևորգ Դոդոխյանը, Ռափայել և Քերովբե Պատկանյանները, Գևորգ Միրիմանյանը և ուրիշներ: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Տարտուի համալսարանում սովորել է 200-ից ավելի հայ ուսանող:

Ղևոնդ Ալիշանի «Հայբուսակ կամ հայկական բուսաբառ» գիրքը, որում առաջին անգամ նկարագրված են Հայաստանի տարածքում հանդիպող ավելի քան 3400 բույս ու ծառատեսակ, տպագրվել է Վենետիկում 1896 թվականին:

Արևմտահայերենի քերականական հիմնական տարբերությունները արևելահայերենից

Արևմտահայերենի և արևելահայերենի քերականական հիմնական տարբերությունները պայմանավորված են պատմական տարբեր հիմքերով: Արևմտահայերենը բայի սահմանական ներկան կազմում է **կը** մասնիկի միջոցով՝ *կը գրեմ, կը կարդամ*, իսկ արևելահայերենը՝ **ում**-ով՝ *գրում եմ, կարդում եմ:* Գրաբարի բայական չորս լծորդություններից *(ել, ալ, իլ, ուլ)* արևելահայերենը պահպանել է միայն երկուսը՝ **ել** և **ալ** *(վազել, խաղալ)*, իսկ արևմտահայերենը՝ երեքը՝ **ել, ալ, իլ** *(վազել, խաղալ, նայիլ)*: Տարբերություններ կան նաև գոյականների թվակազմության և հոլովման համակարգերի միջև: Եթե արևելահայերենում գրեթե բոլոր գոյականների հոգնակիները հոլովվում են **ի** հոլովմամբ *(տների, քաղաքների, օրերի)*, ապա արևմտահայերենում դրանք ենթարկվում են **ու** հոլովման *(տուներու, քաղաքներու, օրերու)*: Հոգնակիի կազմության ժամանակ հիմքում **ի** և **ու** հնչյուններն ունեցող մի շարք բառեր, ի տարբերություն արևելահայերենի, հանդես են գալիս անհնչյունափոխ հիմքով *(ջուրեր, շուներ, մուկեր, փունջեր, սիրտեր, գիրքեր, երկիրներ)*:

Տարբեր ձևերով են կազմվում նաև այսպես կոչված ստացական հոգնակիները, որոնք մեկ բառով ցույց են տալիս ստացող (տեր) և պատկանյալ: Արևելահայերենում ստացական հոգնակի կարող են ունենալ միայն միավանկ բառերը. հիշյալ ձևը նրանք կազմում են՝ սպասելի *եր* մասնիկը փոխարինելով *ներ* հոգնակերտով՝ *մեր շորերը – շորներս, մեր տեղերը – տեղներս, մեր սրտերը – սրտներս, մեր գրքերը – գրքերս:* Մինչդեռ արևմտահայերենում գործում է բոլորովին այլ կաղապար. անկախ վանկերի քանակից՝ բառի հոգնակի հիմքին ավելանում են նի մասնիկը և ստացական հոդը: Օրինակ՝ *տուն-եր-նի-ս, գիրքերնիդ, զավակներնիս, պտուղներնիս* և այլն:

Արևմտահայերենի շարահյուսական կարևորագույն առանձնահատկությունը, որով նա տարբերվում է արևելահայերենից, անձի առման քերականական կարգի բացակայությունն է: Այս կարգը արևելահայերենում հայցական հոլովի դրսևորումներից մեկն է և բնորոշ է ուղիղ խնդրի ձևավորմանը: Եթե ուղիղ խնդիրն անձնանիշ է (Անահիտ, ուսուցիչ և այլն), ապա այն հիմնականում դրվում է տրականաձև հայցականով, իսկ եթե իրանիշ է՝ ուղղականաձև հայցականով, ինչպես օրինակ՝

Աշոտը միս է սիրում:

Աշոտը Անահիտին է սիրում:

Այս նախադասությունները արևմտահայերենում կունենան հետևյալ ձևը.

Աշոտ միս կը սիրէ:

Աշոտ Անահիտը կը սիրէ:

Այսպիսով՝ արևմտահայերենում ուղիղ խնդիրն ունի միայն մեկ ձև, որը դժվարացնում է ենթական և ուղիղ խնդիրը իրարից տարբերելը: Այս դեպքում

վճռորոշ դեր է խաղում շարադասությունը. ենթական միշտ նախադաս է ուղիղ խնդրին, և դրանց փոխատեղումով կփոխվեն ներգործողը և կրողը (ենթական և ուղիղ խնդիրը):

Արևելահայերենի և արևմտահայերենի շարահյուսական տարբերություններից կարևոր է նաև ժխտական դերանունների գործածությունը բայի հետ: Արևելահայերենում ժխտական խոնարհման ենթարկված բայով արտահայտված ստորոգյալը ունենում է ժխտական դերանուններով արտահայտված ենթակա կամ խնդիր: Այլ կերպ ասած՝ արևելահայերենին բնորոշ է կրկնակի ժխտումը, որն արևմտահայերենում երբեք չի հանդիպում: Այսպես՝ արևելահայերենում սովորական է *«Ոչ ոք չէր ուզում մեռնել»* արտահայտությունը, որի արևմտահայերեն համարժեքը կլինի *«Ոչ ոք կ'ուզէր մեռնիլ»*: Պ. Դուրյանի հանրահայտ տողերը հաստատում են ասվածը. ***«Ոչ ոք ըսավ. – Հե՛ք տղա...»***: Նույնը տեսնում ենք Շ. Շահնուրի ստեղծագործություններից վերցված հետևյալ օրինակում. *«Մեր նախնիները* ***ոչինչ կրցած են բանդակել*** *միսով, անոնք* ***ոչինչ կրցեր են բանդակել*** *միսին վրա»*:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչպե՞ս է կազմվում արևմտահայերենի սահմանական եղանակի ներկան:
2. Բայական ի՞նչ լծորդություններ կան արևելահայերենում և արևմտահայերենում:
3. Ո՞ր հոլովմանն են պատկանում հոգնակի թվով գոյականներն արևելահայերենում և արևմտահայերենում:
4. Ինչպե՞ս է կազմվում ստացական հոգնակին:
5. Ի՞նչ տարբերություններ կան ուղիղ խնդրի ձևավորման մեջ արևելահայերենում և արևմտահայերենում:
6. Ի՞նչ ձևով են գործածվում արևմտահայերենում բայերը ժխտական դերանունների հետ:

Վարժություն 9: Տրված նախադասությունները փոխակերպե՛ք արևելահայերենի՝ ուղիղ խնդիրները դնելով անձի առումով:

ա) 1. Տիգրան կը պաշտե իր սիրելի ուսուցիչը: 2. Դուք կը քաջալերեք կոր ամբողջ խումբ մը հայեր: 3. Անմիջապես ինձ մոտ հրավիրեցի Ծապլվարի հեղափոխական գործուն շարքերը՝ Սմենց Վարդան, Խև Ավո և ուսանողական միության նախագահ Կարո: 4. Երբ նա կերթար ընդունիլ Սիսակ, ոտից քայլերն աննշմարելի չանցան տիկին Աբգարյանե: 5. Օրիորդը տեսնելուն պես հրապուրվեցա և կամաց-կամաց հափշտակվեցա անոր գեղեն, շարժվածքեն, ձևերեն և մանավանդ խնդալու եղանակեն, ուստի բարեկամիս հարցուցի, թե կը ճանչնա՞ր այդ աղջիկն... 6. Փանջունի առաջին անգամ գնաց՝ սուլելու համար պատմության դասախոսը...

7. Գարեջրատունները, որոնց մեջ կը լուծվեին մարդկային ընկերությունը տանջող բոլոր խնդիրները, իր գլխավոր կայաններն էին, իր անառիկ մարտկոցները, ուրկե կը ռմբակոծեր աշխարհի բոլոր կեղտոտ պուրժուաները, կողոպտիչ քափիթալիստները... 8. Հայրը իրիկունը գործեն վերադարձին կը տեսնե եղածը և տղան կանչելով ու անոթին կտորտանքները ցույց տալով՝ կը գոչե: 9. Եղեգնյա գրչով երգեցի հարսեր: 10. Ատեն մ'անոր դռան առջև նստեցավ Ծերուկն, և թոռը ծունկերուն մեջ առած՝ պատմեց զրույցը Արտավազդի, Վահագնի:

բ) 1. Դահլիճներուն փարթամ կիները կ'ատեմ... 2. Երբ խումբը իր երգով ավելի ևս մոտեցավ վրանին, Հայկազ ուզեց արթնցընել Հովսեփ: 3. Շաբաթ մը ամբողջ մտահոգության մատնած էր իր ընտանիքը, բարեկամները և գեղանի այս աղջիկը: 4. Հիշեցի նաև ուրիշ ընկերներ, որ չվերադարձան իրենց նշանածներուն: 5. Ամբողջ օրը թափառեցա, լոտեսեցի թավուտները, սակայն միայն կորյուն մը և մայրը տեսա: 6. Սև հրեշտակը կը պնդեր այդ մասին և շուտով հաջողելու համար իր ծրագրած չկամություններով, փախուստներով ավելի ևս նեղը կը դներ և կը տանջեր Մարիոն:

Վարժություն 10: Բացատրե՛ք ժխտական դերանունների գործածությունը բայերի հետ: Տրված օրինակները վերածե՛ք արևելահայերենի:

ա) 1. Ոչ ոք կիներուն չափ գեղեցկության ճաշակը ու հասկացողությունը ունի: 2. Ոչ ոք կար փողոցներուն մեջ: 3. Ոչինչ կը հետաքրքրե զիս: 4. Ոչ ոք գիտե չորրորդին ուր ըլլալը: 5. Իրենց մեջ ոչ ոք այդ տեսակ գաղափար մը կարող եղած էր հղանալ մինչև այդ ատեն: 6. Ոչ ոք հոն էր այդ ժամուն: 7. Դռան հանդեպ բացվող ընդարձակ սրահին մեջ ոչ ոք կար:

բ) 1. Ոչ ոք կը համարձակեր բերանը բանալով խոսք մը ըսել: 2. Ոչ ոք արթուն էր գյուղին մեջ: 3. Հայտնի մշակություններու կողքին կային սուրճի այնպիսի ցանուցիր անտառներ, որոնք ոչ ոքի կը պատկանեին և ոչ ոքի կողմէ մշակված էին: 4. Մեր նախնիները ոչինչ կրցած են քանդակել միսով, անոնք ոչինչ կրցեր են քանդակել միսին վրա: 5. Ոչ ոք ըսավ. – Հե՛ք տըղա, Արդյոք ինչո՞ւ կը մըխա, Թերևս ըլլա գեղանի, Թե որ սիրեմ, չը մեռնի: Ոչ ոք ըսավ. – Սա տղին Պատռենք սիրտը տրտմագին, Նայինք՝ ինչեր գրված կան..., – Հոն հրդեհ կա, ո՛չ մատյան:

Գիտե՞ք, որ...

Բոլորին հայտնի ուսումնական հաստատության՝ Ճեմարանի անվան ծագումը կապվում է Աթենքի Լիկեյան Ապոլլոնի տաճարի մոտ գտնվող Լիկեոնի զբոսավայրին, որտեղ, ըստ ավանդության, Արիստոտելն իր աշակերտներին դասավանդել է ճեմելով:

Վիեննայի Մխիթարյան միաբանությունն ունի իր հատուկ ըմպելիքը, որը կոչվում է Մխիթարին: Այդ բուրավետ ըմպելիքը պատրաստում են զանազան բույսերից: Մխիթարինը, որը մեծ պահանջարկ ունի Վիեննայում, պատրաստվում է 1899 թվականից:

Աբեղյան Մանուկ խաչատուրի (1865–1944)

Հայ անվանի բանասեր, ականավոր լեզվաբան-հայերենագետ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), գիտության վաստակավոր գործիչ: Ծնվել է Նախիջևանի գավառի Աստապատ գյուղում: Սովորել է Գևորգյան ճեմարանում, ուսումնառությունը շարունակել է եվրոպական համալսարաններում: «Հայ ժողովրդական հավատալիքը» թեմայով ուսումնասիրության համար 1898թ. Ենայի համալսարանում ստացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: Մանկավարժական աշխատանք է կատարել Էջմիածնում, Շուշիում, Թիֆլիսում, դասախոսել և պաշտոնավարել է (դեկան, ամբիոնի վարիչ) Երևանի պետական համալսարանում, 1925–30թթ. եղել է Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի տնօրեն:

Մանուկ Աբեղյանի աշխատություններում հայ բանասիրությունը ներկայացված է իր լայն ընդգրկումներով՝ ժողովրդական բանահյուսություն, հայ հին գրականության պատմություն, հայերենի տաղաչափություն, տեքստաբանություն, հայոց լեզվի տեսություն և այլն:

Նա հայ ժողովրդական էպոսի լավագույն գիտակներից էր: Անձամբ հայտնաբերել է «Սասնա ծռերի» երկրորդ տարբերակը, անդրադարձել է ժողովրդական բանահյուսությանը՝ սկսած հնագույն շրջանից մինչև նոր ժամանակները, ուշագրավ դիտողություններ է արել միջնադարյան հայրենների բնույթի ու դրանց ակունքների վերաբերյալ, ուրվագծել է հայկական վերածննդի ընթացքը: Պատկառազդու գործեր են նրա «Հայ գրականության պատմությունը» (հ. 1–2, 1944–46), «Հայոց լեզվի տաղաչափությունը» (1933):

Աբեղյանը արևելահայ գրական լեզվի ուսմունքը բարձրացրեց նոր աստիճանի, հայերենի կառուցվածքի ըմբռնման մեջ բերեց թարմ պատկերացումներ ու հարցադրումներ: Նրա լեզվաբանական–քերականագիտական ուսումնասիրությունները՝ «Աշխարհաբարի քերականությունը», «Աշխարհաբարի հոլովները», «Աշխարհաբարի շարահյուսությունը», «Հայոց լեզվի տեսությունը», վճռական դեր խաղացին արևելահայերենի գիտական քերականությունն ստեղծելու գործում: Նա առաջինն էր, որ հաղթահարեց ավանդական քերականագիտության կաղապարների ճնշումը և տվեց գրական արևելահայերենի ամբողջական ու հետևողական նկարագրությունը: Անվանի հայագետը զբաղվել է նաև ուղղագրության բարեփոխման, տերմինաշինության հարցերով:

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Խոսքի մեջ բառերը կապակցվում են միմյանց՝ արտահայտելու համար այս կամ այն միտքը: Այդ ընթացքում նրանք կարող են փոփոխվել, որը հիմնականում արտահայտվում է վերջավորություններով: Կապակցումը մասամբ կատարվում է նաև սպասարկու բառերի (կապ, շաղկապ) օգնությամբ: Հաղորդակցումը հիմնականում կատարվում է երկու կարևոր խոսքի մասերի միջոցով՝ գոյական և բայ: Գոյականը անվանում է մեզ շրջապատող աշխարհի առարկաներն ու երևույթները: Գոյականի կրած փոփոխությունը վերջավորություններով կոչվում է հոլովում, որի միջոցով արտահայտվում են զանազան հարաբերություններ այլ բառերի հետ, իսկ բայի փոփոխությունը կոչվում է խոնարհում: Խոնարհումով արտահայտվում են գործողության ժամանակային և դիմաթվային փոփոխությունները: Այսպիսով՝ գոյականը և բայը արտահայտում են նյութը և շարժումը, իսկ հոլովման և խոնարհման միջոցով արտահայտվում են տարածական և ժամանակային հարաբերություններ:

ԲԱՌԱՅԻՆ ԻՄԱՍՏ ԵՎ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏ

Լեզվի յուրաքանչյուր բառ արտահայտում է որևէ կոնկրետ իմաստ: Այսպես՝ **լեռ, քար, ծառ, գետ, ծով, մարդ, անտառ** բառերից յուրաքանչյուրը անվանում է կոնկրետ առարկա, որ հնարավոր չէ շփոթել այլ առարկայի հետ: Սա հենց այդ բառերի արտահայտած բառային իմաստն է: Այսպիսով՝ բառային իմաստը բառի բովանդակությունն է, այն հարաբերակցությունը, որ կա բառի արտաքին հնչյունական կողմի և նրա արտահայտած առարկայի միջև: Ուրեմն **ջ–ու–ր** հնչյունախմբի և մեզ ծանոթ հեղուկի միասնությունը մեր գիտակցության մեջ հենց կազմում է տվյալ բառի իմաստը:

Բառի քերականական իմաստը հանդես է գալիս որպես բառային իմաստին տրվող լրացուցիչ իմաստ և արտահայտում է տարբեր հարաբերություններ, որոնք լեզվում ունենում են իրենց ձևաբանական կամ շարահյուսական դրսևորումները և արտահայտվում են տարբեր միջոցներով՝ զանազան մասնիկներով (գրեց-**ի**, քաղաք-**ներ**, քար-**ից**), արմատահնչյունի փոփոխությամբ (տ**ուն** – տ**ա**ն, գին**ի** – գին**ու**, արյ**ուն** – արյ**ա**ն), բայական ածանցների միջոցով (գրել – գր**վել**, վազել – վազ**եցն**ել), հոդերով (գիրք**ս**, հայրդ) և այլն:

Բառի՝ քերականորեն փոփոխված ձևը կոչվում է բառաձև:

ՁԵՎՈՒՅԹՆԵՐ

Լեզվաբանության մեջ **ձևույթ** են անվանում բառի այն իմաստակիր նվազագույն բաղադրիչները, որոնք այլևս տարրալուծման չեն ենթարկվում: Դրանք ձևի և իմաստի միասնության տեսակետից անտրոհելի միավորներ են: Ձևույթները բաժանվում են երկու մեծ խմբի՝ **հիմնական** և **երկրորդական**: **Հիմնական** են կոչվում բառերի **արմատները**, որոնք արտահայտում են բառային իմաստը: Օրինակ՝ **օդանավաշինություն** բառի մեջ **օդ**-ը, **նավ**-ը, **շին**-ը (շեն) հիմնական ձևույթներ են, քանի որ բառարմատներ են կամ դրանց հնչյունափոխական տարբերակները: Նույն ձևով՝ **տնտեսագիտական** բառի մեջ հիմնական ձևույթներ են **տն** (տուն), **տես, գիտ** (գետ) արմատները:

Երկրորդական ձևույթներ են տարբեր մասնիկները: Երկրորդական ձևույթները իրենց հերթին բաժանվում են երկու ենթատեսակի՝ **բառակազմական** և **քերականական: Բառակազմական** ձևույթները նոր բառեր են կազմում. դրանք ածանցներն են: Վերը բերված օրինակներում **ություն, ական** ածանցները բառակազմական ձևույթներ են: Նույնը վերաբերում է նաև **դժ**գոհ, **ան**համ, սիր**ելի** բառերում **դժ, ան, ելի** ածանցներին, որոնք նույնպես երկրորդական բառակազմական ձևույթներ են: Քերականական ձևույթներն են հոլովման, խոնարհման, հոգնակիի կազմության վերջավորությունները և հոդերը: Օրինակ՝ քար-**ով**, դպրոց-**ում**, գրեց-**իր**, տես-**ավ**, գր-**իր**, քաղաք-**ներ**, գիրք-**դ**, գրիչ-**ը** բառերում առանձնացված բոլոր մասնիկները երկրորդական քերականական ձևույթներ են:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է հոլովումը:
2. Ի՞նչ է խոնարհումը:
3. Ի՞նչ տարբերություն կա բառային և քերականական իմաստների միջև:
4. Ի՞նչ է ձևույթը և ի՞նչ տեսակներ ունի:

Վարժություն 1: Տրված բառերում և բառաձևերում առանձնացրե՛ք ձևույթները և դիմացը գրե՛ք տեսակը;

ա) Ձինվորական, ավագանի, վառարանի, մեծություն, սպիտակեղենով, հագուստեղեն, նախադպրոցական, գրիչներ, հայերենից, մարզիչներ:

բ) Վարորդների, Հայաստանում, դոփյունները, ապադասակարգային, մեքենավարներից, անասուն, հիմունք, ծաղկամանից, գրքում, անհեռատես:

գ) Նախավարժանքներով, գերակատարումներով, սարալանջերում, մանրանկարներով, զբաղմունքներից, ժառանգորդներիդ, վրիժառուներով, երախտամոռներիցդ, թերագնահատումներով, հիվանդանոցից:

Վարժություն 2: Յուրաքանչյուր սյունակից ընտրելով մեկական նախածանց (երկրորդական ձևույթ) և արմատ (հիմնական ձևույթ)՝ կազմե՛ք նախածանցավոր բառեր (անհրաժեշտության դեպքում գործածե՛ք հոդակապ):

ներ	կողմնացույց	դժ	սպայական	գեր	դերբայական
ապ	ինքնագոհ	ց	արքայական	անդր	ձայնակցել
տ	լուսամփոփ	նախ	անմահ	ապ	շնորհալի
թեր	կարգապահ	փոխ	կամավոր	ընդ	աշխարհական
դժ	ինքնուս	է	հոռետես	մակ	ոստյուն
արտ	գիտական	ենթ	ճաշկերույթ	բաղ	հիմնախնդիր
տ	զարկերակ	արտ	արձակուրդ	ց	դիրքային
շաղ	կղզիաբնակ	բաց	դրվածք	մակ	արքայանիստ
համ	վիրակապ	ապ	դիմակավոր	փոխ	խնդրառություն
ապ	քարշարկում	տ	նկարչական	է	պահանջմունք
թեր	բարեբախտ	նախ	երասան	պար	գծավոր
ստոր	հաճելի	ընդ	կարողություն	գեր	տեսողություն

Վարժություն 3: Յուրաքանչյուր սյունակից ընտրելով մեկական արմատ (հիմնական ձևույթ) և վերջածանց (երկրորդական ձևույթ)՝ կազմե՛ք վերջածանցավոր բառեր:

արջորս	ին	քառատրուփ	եղեն	կիսադեմ	արան
անփույթ	ավոր	ձեռնամարտ	յուն	մայրուղի	ացի
լռելյայն	եղեն	ջրահարս	ակ	գանձանակ	ական
գիսաստղ	կան	հրաչյա	ացու	գլխատառ	եղեն
այլազգի	կոտ	ծովանկար	ոց	դեղնականաչ	ապան
խեցեգործ	ություն	աղբաթի	իչ	ընձուղտ	ակ
բարեհունչ	ոտի	խորամուխ	եղեն	փառատենչ	յալ
սնահավատ	ուկ	սարահարթ	մունք	օրինություն	աբար
կատվաձագ	եղ	զբոսայգի	ապան	անգույն	ունդ
սիգաճեմ	արան	հուզական	ոց	օտարալեզու	եղ
սիզամարգ	ենի	քմահաճ	ակ	կաթնասուն	ք
արքայախնձոր	ավետ	ոսկեպատ	ույթ	հերոսական	անի

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Քերականական իմաստի կարևորագույն դրսևորումներից մեկը բառի խոսքիմասային իմաստն է: Այն ոչ կոնկրետ է և տարածվում է բառերի խմբերի վրա՝ առարկա ցույց տվող (քար, տուն, թռչուն, գիրք), գործողություն ցույց տվող (վազել, նկարել, երգել), գործողության հատկանիշ ցույց տվող (արագ, հերոսաբար, կուրորեն, դռնեդուռ) և այլն: Սակայն բառերը նախադասության մեջ կարող են ունենալ իրենց հիմնական իմաստին ոչ բնորոշ կիրառություններ: Այսպես՝ *ծաղիկ*

բառը անվանում է որոշակի առարկա և պատասխանում է **ի՞նչ** հարցին, բայց *ծաղիկ հասակ* կապակցության մեջ այն արդեն պատասխանում է **ինչպիսի՞** հարցին և արտահայտում է առարկայի հատկանիշ: Սակայն այս իմաստը նա ձեռք է բերում սոսկ այս կիրառության մեջ, դրանով նրա խոսքիմասային իմաստը չի փոխվում, այն շարունակում է մնալ գոյականական:

Մի այլ դեպքում կարող է լինել հակառակը, և հատկանիշ արտահայտող բառը կարող է գործածվել առարկայական իմաստով, այսպես՝ *Չարն էլ է միշտ ապրում անմեռ* օրինակում **չար** բառը արտահայտում է ոչ միայն իր բուն՝ հատկանշային իմաստը, այլև նշանակում է *չար մարդ, չար գործ, չար համբավ* և այլն ու պատասխանում է **ի՞նչ** հարցին:

Բարեխղճորեն, մտովի բառերը պատասխանում են **ինչպե՞ս** հարցին և ցույց են տալիս գործողության կատարման ձևը *(բարեխղճորեն կատարել, մտովի թռչել)*: Սակայն նույն դերում կարող են հանդես գալ նաև որոշակի հոլովներով դրված գոյականները *(բարեխղճությամբ կատարել, մտքով թռչել)*: Այս դեպքում ևս *բարեխղճություն, միտք* գոյականները չեն փոխում իրենց խոսքիմասային պատկանելությունը, քանի որ սրանք սոսկ նրանց մասնավոր կիրառություններն են:

Այսպիսով՝ պարզ է դառնում, որ բառերի խոսքիմասային պատկանելությունը որոշելիս պետք է առաջնորդվել դրանց բուն, հիմնական իմաստներով: Շատ բառեր կարող են ունենալ փոխաբերական, ածանցյալ, լրացուցիչ իմաստներով կիրառություններ, որոնք, սակայն, չեն կարող հիմք ծառայել նրանց խոսքիմասային պատկանելությունը որոշելու համար:

Հայերենում կա տասը խոսքի մաս՝ **գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն**: Խոսքի մասերը բաժանվում են երեք մեծ խմբի:

ա) Նյութական իմաստ արտահայտող խոսքի մասեր (գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ): Սրանք արտահայտում են նյութական աշխարհի առարկաներն ու երևույթները, նշում են դրանց բազմապիսի հատկանիշները:

բ) Քերականական իմաստ արտահայտող խոսքի մասեր (կապ, շաղկապ): Սրանք արտահայտում են նախադասությունների և բառերի միջև գոյություն ունեցող բազմազան հարաբերություններ:

գ) Վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասեր (վերաբերական, ձայնարկություն): Սրանք արտահայտում են դատողական կամ զգացական վերաբերմունք:

Խոսքի մասերի դասակարգման գծապատկեր



ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ հիմունքով են առանձնացվում խոսքի մասերը:
2. Ի՞նչ խմբերի են բաժանվում խոսքի մասերը:

Վարժություն 4: Տրված բառերը դասավորե՛ք ըստ նրանց արտահայտած նյութական, քերականական և վերաբերմունքային իմաստների:

Վազել, տուն, գիրք, ավա՛ղ, հե՛յ, որպեսզի, մեծ, ջա՛ն, արագորեն, միամիտ, գիտություն, վո՛ւշ-վո՛ւշ, հայրենիք, թեև, հանկարծ, նկար, ո՞վ, քանի որ, թերևս, տետր, երևի, սայլ, և, մկրատ, անշուշտ, գառնուկ, վո՛ւյ-վո՛ւյ, օխա՛յ, երեք, նա, նկարել, մասին, դեպի, կարդալ, գեղեցիկ:

Վարժություն 5: Որոշե՛ք, թե որ բառերը նյութական իմաստ ունեն, որ բառերը՝ քերականական:

Պատահում է՝ սիրտդ լցվում
Ու չի լալիս ժամանակին,
Ամպը անձրև է խոստանում
Ու չի տալիս ժամանակին:

Շտապում է կամ ուշանում,
Եվ այսպես էլ գլխի չընկանք,
Թե մեր ուզած ժամանակը
Երբ է գալիս ժամանակին:

Համո Սահյան

Վարժություն 6: Կազմե՛ք հինգ այնպիսի նախադասություն, որոնց բառերը կունենան տրված իմաստները:

1. Հատկանիշ – առարկա – գործողություն:
2. Քանակ – առարկա – գործողություն:
3. Հատկանիշ – առարկա – գործողության հատկանիշ – գործողություն:
4. Քանակ – առարկա – գործողության հատկանիշ – գործողություն:
5. Առարկա – գործողության հատկանիշ – գործողություն:

Օրինակ՝ Երեք նկարներն անմիջապես վաճառվեցին *(քանակ – առարկա – գործողության հատկանիշ – գործողություն):*

Վարժություն 7: Նախադասություններն ամբողջացրե՛ք նշված իմաստներն արտահայտող բառերով:

1. Ես այդ *(առարկայի հատկանիշ արտահայտող բառ)* հուշարձանը *(գործողության հատկանիշ արտահայտող բառ)* եմ տեսել:
2. *(Քանակ արտահայտող բառ)* ընկերները գնացել էին *(առարկայի հատկանիշ արտահայտող բառ)* ֆիլմը դիտելու:
3. Տասը *(անձ արտահայտող բառ)* առավոտից խաղում էր *(առարկայի հատկանիշ արտահայտող բառ)* պուրակում:
4. *(Զգացական վերաբերմունք արտահայտող բառ),* ես էլ եմ *(առարկա արտահայտող բառ)* ստանալու:
5. *(Դատողական վերաբերմունք արտահայտող բառ),* այդ օրն ամեն ինչ *(գործողության հատկանիշ արտահայտող բառ)* ավարտվեց:

Գիտե՞ք, որ...

Գրադարանները միշտ էլ համարվել են իմաստության կենտրոններ: Մ. թ. ա. մոտավորապես 1300 թվականին Եգիպտոսի հին մայրաքաղաք Թեբեի մոտ հիմնվել է մի խոշոր գրադարան, որը հավանաբար պատկանել է Ռամզես II-ին: Մուտքի վերևում փորագրված է արձանագրություն՝ «Հոգու դեղատուն»:

ԳՈՅԱԿԱՆԻ, ԱՄԱԿԱՆԻ ԵՎ ՄԱԿԲԱՅԻ ՀՈՄԱՆՇԱՅԻՆ ՇԱՐՔԵՐԸ

Բառերի ձևաիմաստային խմբերի մեջ առանձնահատուկ դեր ունեն հոմանիշ բառերը: Ինչպես հայտնի է, հոմանիշ են կոչվում իրար մոտ իմաստ արտահայտող բառերը: Հոմանիշների մեջ պետք է առանձնացնել համանիշները, որոնք մոտ իմաստներ են արտահայտում *(մաքուր – զուլալ),* ինչպես նաև նույնանիշները, որոնք նույն իմաստն են արտահայտում, ինչպես՝ *ծովափ – ծովեզր, աքլոր – աքա*

դաղ, համեմատել – բաղդատել և այլն: Սակայն լեզվի մեջ նույնանիշներն այնքան էլ շատ չեն, քանի որ ոճական առումով կամ արտահայտած նրբերանգներով դրանք, այնուամենայնիվ, իրարից տարբերվում են, օրինակ՝ *սիրուն – գեղեցիկ, այտ – թուշ, սառը – պաղ* և այլն: Հայերենում տարածված են բազմանդամ հոմանիշները, որոնց թիվը երբեմն տասնյակից անցնում է, ինչպես օրինակ՝ *գժվել, խելագարվել, խենթանալ, խելազրկվել, ցնդել, խելքը թռցնել, խևանալ, ցնորվել, խելառանալ և այլն, կամ՝ մեռնել, մահանալ, վախճանվել, ննջել, հանգչել, հոգին ավանդել, զոհվել, նահատակվել, մարտիրոսվել, մահկանացուն կնքել, սատկել, վերին Երուսաղեմ գնալ, գետնի տակն անցնել, գրողի ծոցը գնալ, ոտքերը տնկել* և այլն: Սրանց մի մասը վերաբերմունքային առումով չեզոք է *(մեռնել, մահանալ)*, մյուս մասը նշանակում է վեհ գաղափարի համար մեռնել *(նահատակվել, մարտիրոսվել)*, մյուսներն ունեն անարգական իմաստ *(սատկել, գրողի ծոցը գնալ, ոտքերը տնկել)*:

Որոշ հոմանիշներ արտահայտում են միևնույն առարկայի տարբեր տեսակները՝ հատկանշի ուժգնացմամբ կամ թուլացումով՝ *սյուք, զեփյուռ, հովիկ, քամի, հողմ, փոթորիկ, մրրիկ, սամում*, կամ՝ *ժպտալ, խնդալ, ծիծաղել, քրքջալ, հռհռալ* և այլն:

Հայերենը շատ հարուստ է հոմանիշներով: Դա ոչ միայն հնարավորություն է տալիս խոսողին ընտրելու առավել դիպուկ, երևույթն առավել ճշգրիտ բնութագրող բառը, այլև գտնելու արտահայտիչ, խոսողի վերաբերմունքը պարունակող հոմանիշը: Լեզվի մեջ հոմանիշներով առավել հարուստ են ածականները, մակբայները, ինչպես նաև բայերն ու գոյականները: Եվ սա բնական է, քանի որ ածականներն ու մակբայները հատկանշային իմաստով բառեր են, սովորաբար պարունակում են նաև խոսողի բնորոշող վերաբերմունքը, որը կարող է ունենալ բազմազան դրսևորումներ:

Իրենց կիրառություններով շատ նման են ածականներն ու մակբայները: Ածականները սովորաբար արտահայտում են առարկայի հատկանիշներ և խոսքի մեջ հանդես են գալիս որպես գոյականի լրացումներ (հիմնականում՝ որոշիչ), ինչպես օրինակ՝ *կարմիր վարդ, մեծ տուն, սառը ջուր, գիշերային լապտեր* և այլն: Մինչդեռ մակբայներն արտահայտում են գործողության հատկանիշ և խոսքի մեջ դառնում են բայական անդամի լրացումներ՝ պարագաներ, ինչպես օրինակ՝ *արագ քայլել, հերոսաբար զոհվել, ամբողջովին նվիրվել, դռնեդուռ ընկնել* և այլն:

Սակայն կան դեպքեր, երբ ածականները ազատորեն կարող են հանդես գալ իբրև մակբայ, այսինքն՝ արտահայտել գործողության հատկանիշ: Սա հատկապես բնորոշ է որակական ածականներին: *Մեծ, քաղցր, գեղեցիկ* և նման բազմաթիվ ածականներ արտահայտում են և՛ առարկայի, և՛ գործողության հատկանիշ՝ *քաղցր թեյ – քաղցր խոսել, գեղեցիկ աղջիկ – գեղեցիկ պարել, մեծ տուն – մեծ բրդել, խոնարհ մարդ – խոնարհ բարևել* և այլն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որո՞նք են հոմանիշ բառերը:
2. Հոմանիշների ի՞նչ տեսակներ են առանձնացվում:
3. Խոսքում կիրառելիս ի՞նչ դեր ունի հոմանիշների ընտրությունը:

Վարժություն 8: Տրված բառերով կազմե՛ք բառակապակցություններ՝ դրանք մի դեպքում գործածելով որպես գոյականի, մյուս դեպքում՝ բայի լրացումներ:

Լավ, հանգիստ, երջանիկ, մեղմ, սիրալիր, հուսահատ, անհանգիստ, անվերջ, զգույշ, անդադար, երկար, նոր, չոր:

Վարժություն 9: Դո՛ւրս գրեք շղատառ բառերը՝ նշելով, թե դրանցից որոնք կարող են լրացնել և՛ գոյականի, և՛ բայի (հաշվի՛ առեք նաև այդ բառերի փոխաբերական իմաստները):

Արևագալից առաջ մենք դարան էինք մտել Եղնուտի կիրճում: Դիմացս կանգնած էր *հինավուրց* անտառը: Ես իմ դիրքից *ուշադիր* հսկում էի դիմացիս բացատը՝ սպասելով, թե երբ կխշխշան *երկար* ու *սլացիկ* եղեգները, ու իր թաքստոցից դուրս կգա առաջին որսը: *Խավարչտին* գիշերը *հետզհետե* աղոտացավ: Ադամամութին երկինքն սկսեց գունատվել ու պարզվել: *Գիշերային* նիրհից արթնացավ *առավոտյան* զեփյուռը, և *հազարաթույր* ծաղիկների *զգլխիչ* բույրով տոգորվեց ողջ մթնոլորտը: Դեռատի արփին գլուխը բարձրացրեց լեռան գագաթը զարդարող *ձյունաթույր* բարձից՝ իր ողջույնը հղելով աշխարհին:

Ես *աննկատելի* դուրս էի եկել թաքստոցից և զմայլված շուրջս էի դիտում: *Հանկարծ* ինչ-որ ձայն լսվեց. չորացած մի ճյուղ էր, որ ճռռոցով կոտրվեց *մոտ* անտառում: *Անփորձ* աչքս չի որոշում, թե ինչ կա այնտեղ. ես միայն *պարզ* լսում եմ *զգույշ* ոտնաձայնը ու տրորվող, փշրվող խաշամի խշշյուն: Որևէ բան *անհնար* է նշմարել, բայց ձայնն ավելի ու ավելի է մոտենում: Ահա երևում է նա: Ես առաջին անգամ էի տեսնում եղջերուին *ազատ* բնության գրկում քայլելիս: Դուրս եկավ մի *խաղաղ* հպարտությամբ, վեհ քայլվածքով՝ իբրև բնության ողջ գեղեցկության սիգապանծ տերը:

Ըստ Հովհաննես Թումանյանի

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկաներ, անձեր և տարբեր երևույթներ, կոչվում են գոյական:

Մեզ շրջապատող առարկաների անվանումների մեջ կարելի է առանձնացնել երկու խումբ: Դրանցից առաջինի մեջ մտնող բառերը ցույց են տալիս իրեր, առարկաներ ու պատասխանում են **ի՞նչ** հարցին, ինչպես օրինակ.

Ձյունը (ի՞նչը) հալվեց, լցվեց առուն:

Նման գոյական անուններ են *քար, տուն, գրիչ, նստարան, սեղան* բառերը:

Գոյականների մի այլ խումբ ցույց է տալիս անձեր և պատասխանում է **ո՞վ** հարցին, ինչպես օրինակ՝ *Վարդանը* (ո՞վ) գնաց դպրոց: Այդպիսի գոյականներ են *Աշոտ, Հայկ, Սահակյան, աշակերտ, հայր, ընկեր* և այլն:

Իր ցույց տվող գոյականները կոչվում են **իրանիշ**, իսկ անձ ցույց տվողները՝ **անձնանիշ**:

Գոյականների մի մասը անվանում է տարբեր կենդանիների՝ *շուն, կատու, աղվես, առյուծ, եղնիկ* և այլն: Այս գոյականները ևս իրանիշ են համարվում, քանի որ հայերենում դրանք պատասխանում են **ի՞նչ** հարցին:

Ի՞նչ հարցին են պատասխանում նաև զանազան երևույթների անվանումները, օրինակ՝

Այդ առաջարկը նա համարում էր մեծ *հաջողություն* (ի՞նչ):

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ են ցույց տալիս գոյականները:
2. Ի՞նչ խմբերի են բաժանվում գոյականները:
3. Ի՞նչ հարցերի են պատասխանում գոյականների տարբեր խմբերը:

Վարժություն 10: Առանձնացրե՛ք անձնանիշ և իրանիշ գոյականները:

Գիրք, աղջիկ, տուն, անտառ, եղնիկ, ուրախություն, ուսուցիչ, Հակոբ, երաժիշտ, երեխա, արջ, դպրոց, արեգակ, մարդ, վիպասան, քաղաք, վարորդ, լեռ, Չարենց, բժիշկ, կատու, թռչուն, ձյուն, դեմք, մայր, նկարիչ, ձուկ, երգիչ, քիմիկոս, պատմագիր, ծրագիր, լուսին, առյուծ, քահանա, ծաղիկ:

Վարժություն 11: Առանձնացրե՛ք և առանձին սյունակներում գրե՛ք իր, անձ, կենդանի և երևույթ անվանող գոյականները:

ա) Հետո Կաքավաբերդի գլխին լռություն իջավ: Օջախներում հանգավ կրակը, եղավ խավար գիշեր: Գազանների ահից շները կուչ եկան վրանների առաջ:

Ոչխարը պառկեց կանաչի վրա: Խսիրի վրա մեկնվեց և կինը՝ թաղիքով ծածկելով տղային: Կաքավաբերդի գլխից ամպը հսկա խխունջի պես սողաց դեպի վրանները. խոնավություն կաթեց քարերի վրա, մամուռների վրա, և մակաղած ոչխարների բրդի վրա նստեց գիշերային խոնավությունը: Ցող կապեց ալպիական մանուշակի ծաղկաթերթերի վրա:

Բուրմունքից արբեցած մի բզեզ քնել էր առէջների մեջ, և նրան այնպես էր թվում, թե աշխարհը հոտավետ բուրաստան է, ալպիական մանուշակ...

Ակսել Բակունց

բ) Գյուղում Ավին լավ որսորդի համբավ ուներ: Տան ապրուստի մի մասը նա Մթնաձորի խորքերից էր հոգում: Բացատներում միրհավ էր որսում, արտերի մոտ՝ կաքավ ու լոր, թակարդ էր լարում աղվեսի համար, երբեմն էլ Մթնաձորի խորքերն էր գնում, ժամերով նստում քարի հետևում, մինչև վարազները ջրի գային:

Ավին նշանը ճիշտ էր բռնում. բերդանի գնդակը վարազի ճարպոտ կողքին մեծ վերք էր բացում: Եվ եթե Պանինից երկյուղ չէր անում կամ տեղյակ էր լինում, որ անտառապահը Մթնաձորում չէ, չոր ցախերից էլ մի շալակ էր անում, ծածուկ մի տեղ պահում՝ գիշերով տուն տանելու համար:

Այդ օրն էլ նա որսի էր գնացել: Թարմ հետքեր կային ձյունի վրա: Ավին մի հետքով գնաց և հենց որ բլրակի գլուխը բարձրացավ, տեսավ երկու աղվես: Մինչև կրակելը աղվեսները փախան: Մի քիչ էլ ման եկավ, պախրայի հետք տեսավ, փնտրեց ու չգտավ:

Ակսել Բակունց

Վարժություն 12: Առանձնացրե՛ք այն գոյականները, որոնց հնարավոր է ուղղակի կամ փոխաբերական իմաստով կցել տրված բառը:

1. Մեծ *(անձրև, սենյակ, կաթ, հպարտություն, հարգանք)*
2. Հինգ *(աշակերտ, ագահություն, սյուն, երգ, բաժակ)*
3. Ուրախ *(երեխա, երաժշտություն, մայթեզր, տրամադրություն, ուս)*
4. Լուսավոր *(ճյուղ, բնակարան, ապագա, դահլիճ, սրճարան)*
5. Երգող *(աղջիկ, առու, պարան, սոխակ, քամի)*

Վարժություն 13: Ձախ սյունակից գտե՛ք այն բառերը, որոնք հնարավոր է կապակցել աջ սյունակի անձնանիշ գոյականներին, և այն բառերը, որոնք հնարավոր է կապակցել աջ սյունակի իրանիշ գոյականներին: Կազմե՛ք բառակապակցություններ:

տարեց	աշակերտ
ալեհեր	բաժակ
նախշազարդ	աղբյուր

մետաղյա	տանտեր
բյուրեղապակե	կենդանի
կապուտաչյա	գորգ
խելացի	նկարիչ
սառնորակ	դուռ
ժպտերես	վարպետ
երկկենցաղ	երեխա

Հատուկ և հասարակ գոյականներ

Ծովն է շառաչում, ու ալիքները զարնվում են ափամերձ ժայռերին:

Աշխարհի բոլոր ծովերը անվանում ենք միևնույն բառով՝ **ծով**: Այդ բառով ենք անվանում թե՛ *Սև*, թե՛ *Բալթիկ* և թե՛ *Միջերկրական* ծովերը: Դա նրանց ընդհանուր անունն է:

Միատեսակ առարկաներին տրվող ընդհանուր անունը կոչվում է **հասարակ անուն**: Նման գոյականներ են *մարդ, լեռ, քաղաք, աշակերտ* բառերը:

Արարատի ծեր կատարին դար է եկել վայրկյանի պես ու անցել...

Ավետիք Իսահակյան

Արարատը սրբազան լեռան անունն է, Աստվածաշնչի հանրահայտ լեռը, որի վրա հանգրվանեց Նոյը: Աշխարհում կան նաև բազմաթիվ այլ լեռներ, որոնք ունեն իրենց անունները՝ *Արագած, Կազբեկ, Էվերեստ, Միփան* և այլն: Նույն ձևով իրենց առանձին անուններն ունեն լճերը, օվկիանոսները, քաղաքներն ու երկրները: Այդ անունները, ինչպես նաև բնակավայրեր, վարչական բաժանումներ ցույց տվող գոյականները կոչվում են **տեղանուններ**:

Մարդկանց ևս իրարից զանազանելու համար տալիս են տարբեր անուններ, ազգանուններ, նաև մականուններ, ինչպես՝ *Հայկ, Անահիտ, Գևորգյան, Ռշտունի, Տիգրան Մեծ, Աշոտ Երկաթ* և այլն: Դրանք կոչվում են **անձնանուններ:**

Այն անունները, որոնք տրվում են միանման առարկաներից միայն մեկին՝ մյուսներից զանազանելու համար, կոչվում են **հատուկ անուններ:**

Հատուկ են բոլոր անձնանունները, տեղանունները, երկնային մարմինների անվանումները, ինչպես նաև հիմնարկ-ձեռնարկությունների անվանումները, գրքերի վերնագրերը, կենդանիներին տրվող անվանումները և այլն:

Հատուկ անունները հոգնակի թվով հիմնականում չեն գործածվում: Դրանք հոգնակի թվով կարող են դրվել միայն այն դեպքում, երբ նշում են նույն անունը կամ ազգանունը ունեցող անձեր, օրինակ՝ *Հրավիրված էին նաև **Սահակյանները**: Նախարարներն էին՝ իրենց համարզներով՝ Վարդանը, Ամատունին և **Արտակները**՝ Ռշտունի ու Մոկաց* (Դերենիկ Դեմիրճյան): Հատուկ անունները, երբեմն հոգնակի դառնալով, պատկերավոր ձևով նշում են հատուկ անվանը բնորոշ հատկանիշը՝ վերածվելով հասարակ անվան, օրինակ՝ *Մեր ժողովուրդն իր պատմության ընթացքում բազում **ավարայրներ** է տեսել* (այսինքն՝ վճռորոշ հերոսամարտեր, օրհասական կռիվներ):

Բոլոր հատուկ անունները գրվում են մեծատառով:

Հատուկ անունները կարող են բաղկացած լինել մեկ կամ մի քանի բառերից:

Այն հատուկ անունները, որոնք բաղկացած են մեկ բառից, կոչվում են **պարզ**: Օրինակ՝ *Երևան, Սևան, Արարատ, Հրազդան* և այլն:

Այն հատուկ անունները, որոնք բաղկացած են մեկից ավելի բառերից, կոչվում են **բաղադրյալ**: Օրինակ՝ *Հայաստանի Հանրապետություն, Սևանա լիճ, Հյուսիսային Կովկաս, Տիգրան Մեծ, Իրանի Իսլամական Հանրապետություն* և այլն:

Բաղադրյալ հատուկ անունները ունեն գրության երկու հիմնական կանոն:

– Մեծատառով են գրվում բոլոր բաղադրիչները:

– Մեծատառով է գրվում միայն առաջին բաղադրիչը:

1. **Բոլոր բաղադրիչները մեծատառով են գրվում հետևյալ դեպքերում:**

ա) Եթե բաղադրյալ հատուկ անունը որևէ երկրի, պետության կամ պետական կազմավորման անուն է, օրինակ՝ *Հայաստանի Հանրապետություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ռուսաստանի Դաշնություն, Սիրիայի Արաբական Հանրապետություն:*

բ) Եթե բաղադրյալ հատուկ անվան բաղադրիչները առանձին-առանձին հատուկ անուններ են, օրինակ՝ *Արփա-Սևան, Դոնի Ռոստով, Ամուրի Կոմսոմոլսկ, Հովհաննես Թումանյան:* Նրանց կազմում եղած քերականական նշանակություն ունեցող բառ-մասնիկները գրվում են փոքրատառ, ինչպես՝ *Ռիո դը Ժանեյրո, Լեոնարդո դա Վինչի, Ժաննա դ'Արկ* և այլն:

գ) Եթե բաղադրյալ հատուկ անունը բաղկացած է լրացում-լրացյալից, և լրացյալը հատուկ անուն է. այդ դեպքում լրացումը ևս գրվում է մեծատառով, իբրև նրա մականուն, օրինակ՝ *Հյուսիսային Կովկաս, Արևելյան Հայաստան, Նոր Նախիջևան, Վազգեն Առաջին, Աշոտ Երկաթ, Զորի Միրո:*

դ) Հոգևոր-պատմամշակութային այն բաղադրյալ հատուկ անուններում, որոնց մեջ բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին կամ «Սուրբ» մականվան հետ հատուկ անուն են, օրինակ՝ *Անգղա Սուրբ Նշան, Ընծայից Սուրբ Աստվածածին, Մաստարայի Սուրբ Հովհաննես:*

2. **Մեծատառով են գրվում բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչները հետևյալ դեպքերում:**

ա) Եթե լրացում-լրացյալի կապակցության մեջ լրացյալը հատուկ անուն չէ, օրինակ՝ *Արարատ լեռ, Արագածոտնի մարզ, Խաղաղ օվկիանոս, Սուլեմայի լեռնանցք, Սուրբ Նշան եկեղեցի:*

բ) Գրական, գիտական և այլ երկերի, գրքերի, պարբերական հրատարակությունների բաղադրյալ անվանումներում, օրինակ՝ *«Պատվի համար», «Թմկաբերդի առումը»:*

գ) Համաշխարհային կազմակերպությունների անվանումներում, օրինակ՝ *Միավորված ազգերի կազմակերպություն, Շախմատի համաշխարհային ֆեդերացիա, Ազգերի լիգա:*

դ) Շքանշանների ու մեդալների, ինչպես նաև պատվավոր կոչումների ու մրցանակների բաղադրյալ անուններում, օրինակ՝ *«Մովսես Խորենացի» մեդալ, «Գրիգոր Լուսավորիչ» շքանշան, «Փառքի առաջին աստիճանի» շքանշան, Պետական մրցանակ, Նոբելյան մրցանակ:*

ե) Բոլոր պետությունների օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն մարմինների բաղադրյալ անուններում, օրինակ՝ *Ազգային ժողով, Պետական դուման, Ներկայացուցիչների պալատ, Գերագույն դատարան, Սահմանադրական դատարան:*

զ) Պատմական նշանավոր իրադարձությունների և ազգային ավանդական, պետական տոների բաղադրյալ անուններում, օրինակ՝ *Երկրորդ համաշխարհային պատերազմ, Մեծ եղեռն, Թոնդրակյան շարժում, Թարգմանչաց տոն, Սուրբ ծնունդ, Զատկի տոն (Զատիկ):*

Այս բոլորից զատ՝ մեծատառով կարող են գրվել հեղինակային հատուկ վերաբերմունք (մեծարանք, քաղաքավարություն, փոխաբերական իմաստ) արտահայտող բառերը, օրինակ՝ «Աբու-Լալա Մահարին» պատկանում է Վարպետի գրչին:

ՀԻՇԵ՛Ք

Արև (արեգակ), երկիր, լուսին, գալակտիկա բառերը հիմնականում գրվում են փոքրատառով: Մեծատառով գրվում են որպես աստղագիտական տերմիններ գործածվելիս, օրինակ՝ *Մեր **Երկիր** մոլորակից մինչև նրա **Լուսին** արբանյակը եղած հեռավորությունը փոփոխվում է 356400–406800 կմ սահմաններում:*

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որո՞նք են հասարակ գոյականները:
2. Որո՞նք են հատուկ գոյականները:
3. Ինչո՞վ են տարբերվում հատուկ և հասարակ գոյականները:
4. Բաղադրյալ ո՞ր հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառ:
5. Բաղադրյալ ո՞ր հատուկ անուններում է միայն առաջին բաղադրիչը գրվում մեծատառ:

Վարժություն 14: Դո՛ւրս գրեք անձնանուններն ու տեղանունները՝ գրելով առանձին սյուներում: Դո՛ւրս գրեք նաև հատուկ անուններից կազմված բառերը:

Հայաստանի ամեն մի լեռ,
Մի քարացած հայ է անմեռ:

Ամեն մի լեռ մի ճգնավոր,
Մի իշխան է, մի թագավոր:
Առնոս լեռը հովիվ է քաջ՝
Բլուրների հոտն իր առաջ:
Անդոկ լեռը՝ մի մարգարե՝
Սիրտը կրակ, դեմքը քարե:
Աչքն աղոթող՝ ծովն է Վանա՝
Նարեկացին՝ սարն է Սասնա:
Վարագա լեռն արծվի պես
Քարացել է՝ Հայրիկն է, տե՛ս:
Աշնակ սարն էլ, աշնակցինե՛ր
Ձեզ Մուշ կանչող իշխանն է ձեր:
Վիհ-Շարան է Արագածը,
Որ տենչում է Կարսա հացը:
Արարատը Հայկն է վիմված՝
Երևանվող հույսի դիմաց,
Վար կնայե՝ մեկ Երևան,
Հազար ու մեկ՝ դեպ Մուշ ու Վան:
Ազնանց Փոքր Միհրն էլ Սիս՝
Ժայռի մեջ է, վա՛յ աչքերիս:
Տավրոս լեռը՝ զիմ Կիլիկիան՝
Ինքն է հայոց վերջին արքան...

Հովհաննես Շիրազ

Վարժություն 15: Արտագրե՛ք՝ մեծատառերը թողնելով ըստ անհրաժեշտության:

ՔԱՂԱՔԱՄԱՅՐ ԵՐԵՎԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ, ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀՈՒՅՍԵՐԻ ՄԱՐՄՆԱՑՈՒՄՆ Է: 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ ԱՅՆ ԳԱ ՎԱՌԱԿԱՆ ԽՂՃՈՒԿ ԳՅՈՒՂԱՔԱՂԱՔ ԷՐ՝ ԳԵՏԱՌ ԳԵՏԱԿԻ ԱՓԵՐԻՆ ԾՎԱՐԱԾ ԵՐԵՎԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ, ԱՅԺՄ ՎԱՐ ԴԱԳՈՒՅՆ ՀՐԱՇՔ Է, ՈՐԸ ՀԱՌՆՈՒՄ Է ԱՐԱՐԱՏ ԵՎ ԱՐԱԳԱԾ ԼԵՌՆԵՐԻ ԱՌԱՋ:

ԱՇԽԱՐՀԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է ԵՐԵՎԱՆԸ, ԱՎԵԼԻ ՀԻՆ, ՔԱՆ «ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՔԱՂԱՔ» ՀՌՈՄԸ:

1950 ԹՎԱԿԱՆԻՆ, ԵՐԲ ՀՆԱԳԵՏՆԵՐԸ ՊԵՂՈՒՄ ԷԻՆ ԱՐԻՆ ԲԵՐԴԸ, ԳՏԱՆ ՔԱՂԱՔԻ ԾՆՆԴՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ՝ ՄԻ ԲԱԶԱԼՏԵ ՔԱՐԱԲԵԿՈՐ, ՈՐԻ ՎՐԱ ՈՒՐԱՐՏՈՒԻ ԱՐԳԻՇՏԻ ԹԱԳԱՎՈՐԸ ԳՐԵԼ Է ԵՐԵԲՈՒՆԻ ՔԱՂԱՔ-ԱՄՐՈՑԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ:

Վարժություն 16: Տրված հատուկ անունները գործածել նախադասությունների մեջ՝ որպես հասարակ անուններ:

Ազնիվ, Անդրանիկ, Անուշ, Աստղիկ, Արփի, Երջանիկ, Զվարթ, Մեխակ, Վարդ, Շուշան, Համեստ, Մարտիկ, Ռազմիկ, Նվեր, Ծաղիկ, Մանուկ, Հարություն, Մանուշակ, Վահան, Ալմաստ, Փայլակ, Քնքուշ, Ծովակ:

Վարժություն 17: Գտե՛ք այն հասարակ անունները, որոնք կարելի է գործածել նաև իբրև հատուկ անուններ:

Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս,
Եվ վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ,
Ու երկինքը հոգուս մեջ, ու արևը աչքերիս,
Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք...
...Անցնում էի երգելով ու շաղ տալով մայթերին
Մանուշակներ ու վարդեր ու հասմիկներ հոգեթով,
Կարծես մի ողջ բնություն մի պատանի էր դարձել,
Քաղաք իջել լեռներից, կանցներ զմրուխտ հեքիաթով:

Հովհաննես Շիրազ

Վարժություն 18: Յուրաքանչյուր տողում գտե՛ք այն կապակցությունը, որի ոչ բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառ:

1. ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ, ԱՇՈՏ ԵՐԿԱԹ, ՔԱՋ ՆԱՁԱՐ, ԽԻՁԱԽ ՎԱՐԴԱՆ
2. ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ, ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴ, ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ, ԻՎԱՆ ԱՅԵՂ
3. ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ, ԱՐԱՑԻ ԼԵՌ, ՆԱՐ-ԴՈՍ, ՄԵԾ ՄԱՍԻՍ
4. ԽԱՂԱՂ ՕՎԿԻԱՆՈՍ, ՎՈԼԳԱ-ԴՈՆ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՓՐԱՏ
5. ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ, ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ, ՏՐԴԱՏ ԱՌԱՋԻՆ, ՍԵՎԱՆԱ ԼԻՃ
6. ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՓՈՔՐ ԱՍԻԱ, ՓՈՔՐ ՄԱՍԻՍ, ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏ
7. ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍ, ԾԻՐ ԿԱԹԻՆ, ՍՅՈՒՆԻՔԻ ՀՈՎԻՏՆԵՐ, ՄԵԼԻՔ-ՀԱԿՈԲՅԱՆ
8. ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՊԱՐՉ ԼԻՃ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ, ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ
9. ԳԱՅԼ ՎԱՀԱՆ, ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ, ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ, ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ
10. ՀԱԿՈԲ ՄԵՂԱՊԱՐՏ, ՔԱՋ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ, ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ, ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Աճառյան Հրաչյա Հակոբի (1876–1953)

Ականավոր հայագետ, լեզվաբան, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), Փարիզի լեզվաբանական ընկերության անդամ (1897), Չեխոսլովակիայի արևելագիտության ինստիտուտի գիտական բաժնի թղթակից անդամ (1937). ծնվել է Կ. Պոլսում, ավարտել է տեղի Կեդրոնական վարժարանը: Ուսումը շարունակել է Սորբոնի համալսարանում՝ ունկնդրելով Ա. Մեյեին, այնուհետև Ստրասբուրգում մեկ կիսամյակ լսել է Հ. Հյուբշմանի դասախոսությունները: Զգալի մանկավարժական աշխատանք է կատարել նախ Արևմտահայաստանում, ապա Էջմիածնում, Շուշիում, Նոր Բայազետում, Նոր Նախիջևանում, Թեհրանում, Թավրիզում: Սկսած 1923-ից՝ մինչև կյանքի վերջը աշխատել է Երևանի պետական համալսարանում՝ նաև պաշտոնավարելով իբրև ամբիոնի վարիչ:

Մեծավաստակ գիտնականը անդրադարձել է լեզվաբանական համարյա բոլոր գիտակարգերին՝ հայ բարբառագիտություն, պատմահամեմատական քերականություն, պատմություն, բառարանագրություն, տեսական լեզվաբանություն և այլն: 1911թ. լույս է տեսնում նրա «Հայ բարբառագիտություն» աշխատությունը, ապա առանձին բարբառների վերաբերյալ նրա ուսումնասիրությունները՝ «Քննություն Նոր-Նախիջևանի բարբառի» (1925), «Քննություն Մարաղայի բարբառի» (1926), «Քննություն Նոր-Զուղայի բարբառի» (1940), «Քննություն Համշենի բարբառի» (1947), ինչպես նաև ուսումնասիրություններ Վանի, Առտիալի, Ղարաբաղի, Ասլանբեգի բարբառների վերաբերյալ: Հր. Աճառյանը հայ բարբառների ձևաբանական դասակարգման հիմնադիրն է. ելնելով բայի սահմանական եղանակի ներկայի կազմությունից՝ նա տարբերակել է հայ բարբառների երեք ճյուղերը՝ **ում, կը** և **էլ**: Այս ասպարեզում նշանակալից է նաև նրա «Հայերեն գավառական բառարանը», որն ընդգրկում է շուրջ 30 հազար բառ:

1926–35թթ. լույս տեսան Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» յոթ հատորները (երկրորդ հրատ.՝ չորս հատորով՝ 1971–79), որը հայերենի եզակի ստուգաբանական բառարան է: Յուրաքանչյուր բառահոդված տրվում է հինգ բաժնով՝ բառագիտական, ստուգաբանական, բարբառագիտական, փոխառություններ, ստուգաբանությունների պատմություն: Ծանրակշիռ է նրա «Հայոց անձնանունների բառարանը» (հ. 1–5, 1942–62), որում ստուգաբանված են անձնանունները:

Ուշագրավ հարցադրումներով ու բացահայտումներով աչքի է ընկնում մեծ գիտնականի «Հայոց լեզվի պատմությունը» (հ. 1–2, 1940–51), որտեղ նա քննում է հայոց լեզվի ծագումը, առանձնացնում է նրա զարգացման փուլերը, աղերսները այլ լեզուների հետ և այլն:

Հիրավի, կոթողային աշխատանք է հանճարեղ գիտնականի «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» ուսումնասիրությունը (հ. 1–6, 1952–71, լրացուցիչ հատոր՝ 2005): Այս գրքում նա շարադրում է իր ընդհանուր լեզվաբանական հայացքները լեզուների ծագման ու զարգացման, դրանց փոխհարաբերությունների, լեզվի հասարակական դերի վերաբերյալ:

Մեծ երախտավորի գիտական ժառանգությունը ամբողջովին չի սպառվում թվարկվածով. կան նաև մի շարք տպագրված ու անտիպ աշխատություններ:

Հր. Աճառյանի անունով է կոչվում ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը:

Գոյականի թիվը

Գոյականները կարող են ցույց տալ մեկ կամ մեկից ավելի առարկաներ կամ անձեր: Մեկ առարկա ցույց տվող գոյականները դրվում են եզակի թվով, օրինակ՝ *քար, տուն, ընկեր, աշակերտ, քաղաք:* Մեկից ավելի միատեսակ անձ կամ առարկա ցույց տվող բառերը դրվում են հոգնակի թվով. օրինակ՝ *քարեր, տներ, ընկերներ, աշակերտներ, քաղաքներ:*

Գոյականի հոգնակին հիմնականում կազմվում է **-եր** և **-ներ** մասնիկներով, որոնք ավելացվում են եզակիին:

Միավանկ բառերի հոգնակին կազմվում է **-եր** մասնիկով՝ *քար-եր, ծառ-եր, տն-եր, ազգ-եր:*

Բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է **-ներ** մասնիկով՝ *աշակերտ-ներ, գրիչ-ներ, քաղաք-ներ:*

Եթե բազմավանկ բառը վերջանում է **ն**-ով, ապա հոգնակիում բառն ունենում է երկու **ն**, օրինակ՝ *գազան-ներ, սեղան-ներ, նստարան-ներ, համալսարան-ներ:*

Որոշ գոյականների հոգնակիի կազմությունը շեղվում է այս ընդհանուր կանոններից:

ա) Մի շարք բառեր *(բեռ, գառ, դուռ, եզ, թոռ, լեռ, ծոռ, ծունկ, ձուկ, մուկ, նուռ, մատ, հարս* և այլն), թեև միավանկ են, սակայն հոգնակին կազմում են **-ներ** վերջավորությամբ: Օրինակ՝ *գառներ, ծնկներ, ձկներ, մկներ:*

Այս միավանկ բառերը հին հայերենում գրաբարում, վերջանում էին **ն**-ով *(ծունկն, մուկն)*, որը ժամանակի ընթացքում ընկել է, բայց հոգնակիի կազմության ժամանակ վերականգնվում է:

բ) *Ռուս* բառը ևս միավանկ է, բայց ստանում է **-ներ** վերջավորությունը՝ *ռուսներ:*

գ) Եթե երկվանկ բառի երկրորդ վանկը կազմված է գաղտնավանկի **ը**-ով, ապա այդ բառի հոգնակին հիմնականում կազմվում է **-եր** մասնիկով, օրինակ՝ *արկղեր, վագրեր, տետրեր* այլն:

դ) Մի շարք բազմավանկ բաղադրյալ բառերի հոգնակին կարող է կազմվել **-եր** վերջավորությամբ, եթե այդ բառի վերջին միավանկ (կամ երկրորդ վանկը գաղտնավանկի **ը**-ով կազմված երկվանկ) բաղադրիչը գոյական է և պահպանում է իր հիմնական իմաստը, օրինակ՝ *հեռագիր – հեռագրեր, գաղտնավանկ – գաղտնավանկեր, անձրևաջուր – անձրևաջրեր, միջնապատ – միջնապատեր, դրամարկղ – դրամարկղեր* և այլն:

Իսկ եթե բաղադրյալ բառի վերջին միավանկ բաղադրիչը չի պահպանում իր հիմնական իմաստը կամ ունի թաքնված բայական իմաստ, բառը ստանում է **-ներ** վերջավորություն. օրինակ՝ *հետախույզ (հետքը խուզարկող) – հետախույզներ, բեռնակիր (բեռ կրող) – բեռնակիրներ, ազգասեր (ազգը սիրող) – ազգասերներ, մեծատուն (մեծ տուն ունեցող, այսինքն՝ ունևոր) – մեծատուններ:*

ե) Ստացական հոգնակի կազմելիս (որը ցույց է տալիս պատկանելություն մեկից ավելի առարկաների) միավանկ բառերին ավելացվում են **-ներ** և հոդ, օրինակ՝ *ձայններդ, տուններս, սիրտներդ* և այլն:

զ) *Մարդ, կին (տիկին), պարոն* բառերի հոգնակին լինում է *մարդիկ, կանայք (տիկնայք), պարոնայք: Տիկին* և *պարոն* բառերի հոգնակիները կարող են կազմվել նաև **-ներ** վերջավորությամբ՝ *տիկիններ, պարոններ*:

է) **Ցի** ածանցն ունեցող այն բառերի հոգնակին, որոնք ցույց են տալիս **որ-տեղացի լինելը**, կարող է կազմել նաև **ք** մասնիկով. օրինակ՝ *երևանցի-ք, մեղրեցի-ք, իտալացի-ք*. սա ավելի տարածված է բանավոր խոսքում: Դրանք ունեն իրենց գրական ձևերը՝ *երևանցիներ, մեղրեցիներ, իտալացիներ: Այլ* բառի հոգնակին ևս կարող է կազմվել **ք**-ով՝ *այլք*, թեև գործածվում է նաև *այլներ* ձևը:

ը) *Անձ* բառի հոգնակին լինում է և՛ *անձինք*, և՛ *անձեր*:

Հոգնակիի կազմության ժամանակ բառի մեջ կարող է կատարվել ձայնավորների հնչյունափոխություն: Միավանկ բառերում փակ վանկի **ի**-ն դառնում է գաղտնավանկի **ը**, օրինակ՝ *գիր – գրեր, միրգ – մրգեր, սիրտ – սրտեր*: Նույնը կատարվում է փակ վանկի **ու** ձայնավորի դեպքում՝ *ջուր – ջրեր, տուն – տներ, սուր – սրեր*:

Այս հնչյունափոխությունը բնորոշ է ոչ բոլոր բառերին: Չեն հնչյունափոխվում *դիրք – դիրքեր, կիրճ – կիրճեր, հիմք – հիմքեր, նիշ – նիշեր*, ինչպես նաև՝ *բուրգ – բուրգեր, գուրգ – գուրգեր, ռումբ – ռումբեր, սուրճ – սուրճեր, քունք – քունքեր* և այլ բառեր:

Միավանկ բառերի **ու** վերջնահնչյունը հոգնակիի կազմության ժամանակ սովորաբար դառնում է **վ**, օրինակ՝ *լու – լվեր, ձու – ձվեր:*

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ցույց տալիս գոյականի թվի կարգը:
2. Քանի՞ թիվ ունեն գոյականները:
3. Ի՞նչ վերջավորություններով է կազմվում հոգնակի թիվը:

Վարժություն 19: Կազմե՛ք տրված բառերի հոգնակիները:

ա) Կեղտաջուր, մուկ, տուն, աշակերտ, միջնապատ, ազգասեր, հեռագիր, մատենագիր, լրագիր, սակագին, հանքափոր, հանքահոր, արշալույս, ծունկ, քաղաքհամալսարան, տնամերձ, օրաթերթ, բեռնակիր, բեռնատար, աստղ, գամփռ, ջրհոր, ծովափ, սերմնացան:

բ) Կակղամորթ, ջրմուղ, կին, կեղտաբիծ, գայլաձուկ, գյուղացի, լույս, հարս, առանձնատուն, մեծատուն, արևմտահայ, ժամացույց, ծրագիր, պատմագիր, գարեջուր, գրագիր, արոտավայր, շնաձուկ, նետաձիգ, քարայր, վագր:

Վարժություն 20: Դո՛ւրս գրեք գոյականները, եզակիները դարձրե՛ք հոգնակի, հոգնակիները՝ եզակի:

Եվ նա՝ ծաղկատար երեսով իմ ընկերը, նայում է ինձ, շարժում հաստ ու նարմիր շրթունքները, ձեռքով նշան անում դեպի ներքև, դեպի գետի արմունկը, փրփուր ջրվեժների մոտ:

Կուրծքը սպիտակ ջրածտերը թռչում են քարից քար, պոչը երերում, ծվծվում ու գնդակի պես իրենց նետում ջրի երեսին պտույտ անող մժեղների երամը: Մեզ հաճելի է դիտել, թե ինչպես նրանք թռչում են փրփուրի վրայով, կորչում ջրվեժի փոշու մեջ, նստում ցից քարերի ծայրին և անվախ ծվծվում, այնինչ շուրջը գետը նատաղությամբ կրծում է քարերը:

Ակսել Բակունց

Վարժություն 21: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն գոյականը, որի հոգնակին կազմվում է *-եր* վերջավորությամբ:

1. անտառ, պողոտա, դիմանկար, փոստարկղ
2. համակարգիչ, գրչատուփ, վարագույր, սրբապատկեր
3. հեռախոսազրույց, հանրագիտարան, անձրևաջուր, զարդաքանդակ
4. զբոսայգի, ձնծաղիկ, արդուկ, դուստր
5. մարզադաշտ, մարգագետին, կամուրջ, գրապահարան
6. կինոթատրոն, լեռնալանջ, թղթապանակ, լապտեր
7. մկնիկ, օվկիանոս, քարայծ, շրջանակ
8. լուսանկար, բառատետր, ծառուղի, ջահակիր
9. տեսաժապավեն, օրացույց, ջերմոց, ոտնաձայն
10. հանրախանութ, առաստաղ, երթուղի, հենապյուն

Վարժություն 22: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն գոյականը, որի հոգնակին կազմվում է *-ներ* վերջավորությամբ:

1. թռչնաբույն, ձեռագիր, մագաղաթ, դասագիրք
2. սիզամարգ, ցայտաղբյուր, շոգենավ, հաղորդալար
3. մայթեզր, ծաղկաթումբ, ծառասունկ, գրավաճառ
4. սառցաջուր, այցետոմս, որմնադիր, գիսաստղ
5. թռչնորս, անտառաշերտ, խճաքար, լողաձև
6. լաստանավ, ավտոմաս, առաքավճար, ներկանյութ
7. ավազահանք, անվադող, մեղրահաց, սրնգահար
8. որսաշուն, մոլախոտ, դիմագիծ, տեղաբնակ
9. ճեմասրահ, քույր, խմբերգ, թվաշարք
10. դերբայ, մարզաձև, մայթաքար, ձայնալար

Վարժություն 23: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն բառը, որի հոգնակին չի կազմվում կամ էլ կարող է չկազմվել *-եր* կամ *-ներ* վերջավորությամբ:

1. բուժքույր, քեռակին, կին, զարմուհի
2. հորեղբայր, նախապապ, դասընկեր, տղամարդ
3. գիրք, հուշ, այլ, կարգ
4. տեղաբնիկ, նախամարդ, ձկնորս, առաջամարտիկ
5. տղա, աղջիկ, անձ, աշակերտ
6. վարպետ, ընկեր, եղբայր, պարոն
7. գործընկեր, վարորդ, ծովանկարիչ, երևանցի
8. մարգուհի, տիկին, լողորդ, ուսանող
9. ուղևոր, օդաչու, քաղաքացի, վիպասան

Գոյականի առումները

*Ես **գիրք** կարդացի:*
*Հասմիկը մի **գիրք** տվեց Աշոտին:*
*Հասմիկը **գիրքը** տվեց Աշոտին:*

Առաջին նախադասության մեջ *գիրք*-ը նշանակում է խոսողին հայտնի, քանի որ նա է կարդացողը, իսկ մյուսներին անհայտ գիրք:

Երկրորդ նախադասության մեջ *գիրք* նշանակում է մեզ կամ Աշոտին անհայտ, անծանոթ գիրք, մինչդեռ երրորդ նախադասության մեջ *գիրքը* նշանակում է որոշակի, նախապես հայտնի գիրք, որի մասին Հասմիկն ու Աշոտը ինչ-որ տեղեկություն ունեն (Աշոտի խնդրած գիրքը կամ այդ օրվա դասին վերաբերող գիրքը և այլն): Այս ամենի հիման վրա առանձնացվում են գոյականի առումները՝ անորոշ և որոշյալ:

Գոյականի անորոշ առումը ցույց է տալիս խոսողին կամ խոսակցին տվյալ իրադրության մեջ անհայտ առարկա կամ անձ:

Անորոշ առումը արտահայտվում է առանց որևէ վերջավորության, օրինակ՝ *Դեղնած դաշտերին իջել է **աշուն**:* (Հովհաննես Թումանյան)

Անորոշ առումը կարող է արտահայտվել նաև **մի** բառի միջոցով, օրինակ՝ ***Մի հավք** զարկի ես **մի օր**:* (Հովհաննես Թումանյան)

Այս դեպքում **մի** բառը ցույց է տալիս ոչ թե քանակ, այլ առավել շեշտում է անորոշությունը, թեև մի բառի հետ գոյականները գործածվում են եզակի թվով:

Գոյականի որոշյալ առումը ցույց է տալիս խոսողին և խոսակցին նախապես ծանոթ, տվյալ իրադրության մեջ հայտնի անձ կամ առարկա և կազմվում է՝ բառին ավելացնելով **ը** կամ **ն** մասնիկները, որոնք կոչվում են **որոշիչ հոդեր:**

Ն հոդը ավելացվում է ձայնավորով վերջացող բառերին, օրինակ՝ *Հղթան, գինին, ափսեն, կատուն, Կարոն:*

Ը հոդը ավելացվում է բաղաձայնով վերջացող բառերին, օրինակ՝ *գիրքը, տետրը, մարդը, սեղանը, աշակերտը:*

Սակայն եթե բաղաձայնով վերջացող գոյականին հաջորդում է ձայնավորով սկսվող բառ, ապա կարող են գործածվել և՛ **ը**, և՛ **ն** հոդերը, օրինակ՝ *Հայկը ասաց* կամ *Հայկն ասաց:*

Այս սկզբունքը գործում է նաև **սպ, սկ, ստ, սփ, զբ, զգ, շտ** հնչյունախմբերով սկսվող բառերից առաջ, քանի որ նրանցից առաջ թույլ լսվում է **ը** հնչյունը: Օրինակ՝ *Հայկն զգուշացավ* (կարդացվում է՝ *Հայկն ըզգուշացավ*):

Բացի որոշիչ հոդերից՝ կան նաև **ստացական, դիմորոշ** և **ցուցական հոդեր:**

ա) **Ստացական** հոդերն են՝ **ս, դ, ն, ը:** Դրանք, դրվելով գոյականների վրա, ցույց են տալիս պատկանելություն և փոխարինում են **իմ, քո, նրա, իր, մեր, ձեր, նրանց, իրենց** բառերին:

*Թռչում է **միտքս, թռչում** դեպի տուն:*

Միտքս նշանակում է *իմ միտքը:*

Նույն ձևով *Նեղացել եմ **ընկերոջիցդ*** նշանակում է *քո ընկերոջից:*

բ) **Դիմորոշ** հոդերն՝ են **ս** և **դ,** որոնք, դրվելով որևէ բառի վրա, նրան տալիս են առաջին կամ երկրորդ դեմքի իմաստ: Օրինակ՝ ***Բանաստեղծս*** (ես) *չեմ կարող ապրել հայրենիքից հեռու:* ***Հերոսներդ*** (դուք) *միշտ կհիշվեք:*

գ) **Ցուցական** հոդը **ս**-ն է, որը բառին տալիս է **այս** դերանվան իմաստը, օրինակ՝

Աշխարհումս *(այս աշխարհում) ախ չիմ քաշի...*

Աշխարհս *(այս աշխարհը) մե փանջարա է... (Սայաթ-Նովա)*

Գիշերս *(այս գիշեր) ձյուն է եկել:*

Օրերս *(այս օրերին) հանդիպեցի ընկերոջս:*

Ս և **դ** հոդերից առաջ արտասանվում է **ը**, օրինակ՝ *գիրքըս, տունըդ:*

Չի կարելի **ն** հոդը գործածել բաղաձայնով, ինչպես նաև **ո**-ով (վo) և **ե**-ով (յե) սկսվող բառերից առաջ. *Հայկն կարդաց, Հայկն եկավ, Հայկն որոշեց* ձևերը սխալ են:

Սխալ են նաև **հ**-ից առաջ **ն** հոդի կիրառության դեպքերը՝ *Հայկն հիշեց, Հայկն հասկացավ:*

Դ հոդը արտասանվում է **տ**, սակայն միշտ պետք է գրել **դ** տառով: Օրինակ՝ արտասանվում է *գիրքըտ*, բայց գրվում է *գիրքդ:*

ՀԻՇԵ՛Ք

Մարդիկ, կանայք, տիկնայք, պարոնայք, անձինք, այլք հոգնակիները, ինչպես նաև **-անք, -ենք, -ոնք, -ունք** վերջածանցներով կազմված այն բառերը, որոնք ազգակցություն, տոհմ են ցույց տալիս՝ *Վարդանանք, Գևորգենք, Մերոնք, Վեդունք* և այլն, որոշիչ հոդ չեն ստանում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է արտահայտում առումի կարգը:
2. Ինչպե՞ս է արտահայտվում անորոշ առումը:
3. Ինչպե՞ս է արտահայտվում որոշյալ առումը:
4. Ի՞նչ գործածություններ ունեն **ս, դ** հոդերը:
5. Ինչպե՞ս են գործածվում **ը, ն** հոդերը:

Վարժություն 24: Տեղադրե՛ք անհրաժեշտ հոդերը:

Քիչ անց, երբ կայծակ պտտվում էր հովտի և բլուրների վրա և մտածում էր ճայթել ու դեռ չէր ճայթել, քուռակի մայր մեղմ խրխինջով կանչեց քուռակի: Քուռակի մայր գիտեր, որ կայծակ ճայթելու է, ճայթյուն վախեցնելու է քուռակի, իսկ քուռակ կարծեց՝ մայր իրեն կանչում է՝ կուրծք տալու: Քուռակ այնքան էլ չէր ուզում ուտել, ուզում էր խոտերից ու ծաղիկներից հոտ քաշել և մեկիկ-մեկիկ ճանաչել խոտեր: Եվ հենց այդ ժամանակ ճայթեց կայծակ: Քուռակ խրտնեց ու վազեց դեպի մայր, բայց շատ էր վախեցել, մոր չէր տեսնում, ուրիշ կողմ էր փախչում:

Հրանտ Մաթևոսյան

Վարժություն 25: Գտե՛ք հոդերը, որոշե՛ք տեսակը:

ա) Հարի՛, հարի՛, խնոցի՛,
Մեջդ բարի, խնոցի՛,
Ունկդ բարակ, խնոցի՛,
Մեջդ կարագ, խնոցի՛:

Հովհաննես Թումանյան

բ) Երազումս մի մաքի
Մոտս եկավ հարցմունքի.
– Աստված պահի քո որդին,
Ո՞նց էր համը իմ ձագի:

Հովհաննես Թումանյան

գ) Ձեռքս պակաս, ուժս հատած,
Հազար ու մի ցավի տեր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ:

Հովհաննես Թումանյան

դ) Մրոտ, ինչպես մի հին ճրագ,
Անբիծ, ինչպես մի հեզ լուսնյակ՝
Մայրս:

Խղճուկ, ինչպես խրճիթը մեր,
Հզոր, ինչպես ջաղացաքար՝
Հայրս:

Հեռու, ինչպես Մասիսը խեղճ,
Մոտիկ, ինչպես Մասիսը պերճ՝
Հույսս:

Հովհաննես Շիրազ

ե) Իսկ արդ, վահագնասե՛րդ, բա՛ց հանդեսը տոնական:
Ո՛վ ոսկեմայրդ Անահիտ, ո՛վ Դերկեդո...
Ահա դիմում եմ քեզ և Վահագնին վիշապաքաղ...

Ողջույն ձեզ, մեծագո՛րծ Արա,
Արքայամայրդ վեհ և թագուհի՛,
Բերել եմ ձեզ պատգամը վեհափառ Շամիրամա
Եվ շնորհները Նեբուի:

Նաիրի Զարյան

գ) Քնքուշ երազով պաճուճի՛ր հոգիս,
Նստի՛ր մահճիս մոտ ու տխուր երգի՛ր,
Մազերդ փռի՛ր հոգնատանջ կրծքիս
Ու մեղմ փայփայի՛ր սիրտս տարագիր:

Վահան Տերյան

Վարժություն 26: Գտե՛ք այն բառերը, որոնք որևէ հոդ ունեն:

Պատճեն, հրազեն, ափսեն, կատուն, դեղատուն, սառը, քարը, ծնունդդ, գիրքդ, տաղանդ, գրիչս, խոտաբույս, պարադոքս, փողոցը, այգին, քերծեն, թատրոնը, կինոն, մետրոն, չափածոն, գայիսոն, բարդին, կարկին, վրձին, հայելին, տետրս, քանոնս, տունդ, հանդ, սեղանը:

Վարժություն 27: Արտագրե՛ք և նշե՛ք, թե որ դեպքում են շղատառ բառերի հոդերը որոշիչ, որ դեպքում՝ ստացական, որ դեպքում՝ դիմորոշ և որ դեպքում՝ ցուցական:

1. *Օրերս* վերադարձել է գործուղումից:
2. Ես *գիրքս* տվել եմ *ընկերոջս:*
3. Այդ գեղեցիկ *ծաղկամանը* նա նվիրել է ինձ *ծննդյանս* օրվա առթիվ:
4. *Հաղթողներդ* կպարգևատրվեք և կմասնակցեք մրցույթի եզրափակիչ *փուլին:*
5. *Գիշերս* անձրև է եկել:
6. – *Օրերս դասընկերներս մեծահասակներիդ* կօգնեն *այգին* մշակելիս,– դպրոցի մոտ ապրող մի քանի ծերերի ասաց դասարանի *ավագը:*
7. – *Պայուսակիդ* միջից *գրիչդ* ընկավ,– *ընկերոջը* զգուշացրեց *Վարդանը:*
8. *Աշակերտներս* պետք է լավ սովորենք:
9. *Գրքերը* դրված էին *սեղանին:*
10. Ծաղկամանում դրված *ծաղիկները* շատ գեղեցիկ էին:

ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԼՈՎՆԵՐԸ

Գոյականը նախադասության մեջ այլ բառերի հետ գործածվելիս կարող է մի շարք փոփոխությունների ենթարկվել: Նրան կարող են ավելանալ վերջավորություններ, օրինակ՝ քաղաք*ի*, քաղաք*ից*, քաղաք*ով*, քաղաք*ում*: Փոփոխությունը կարող է լինել նաև բառարմատի ներսում. ինչպես՝ տուն – *տան*, հայր – *հոր*, լավություն – *լավության* և այլն:

Սրանցից յուրաքանչյուրը առանձին հոլով է:

Հոլովներ են կոչվում քերականական այն ձևերը, որոնցով արտահայտվում են գոյականների կապակցական տարբեր հարաբերությունները այլ բառերի հետ:

Գոյականի այսպիսի ձևափոխությունների ամբողջությունը կոչվում է *հոլովում:*

Հոլովումը լինում է **արտաքին թեքման**, եթե գոյականին ավելանում են վերջավորություններ, և **ներքին թեքման**, եթե փոփոխությունը տեղի է ունենում բառարմատի ներսում:

Այսպիսով՝ գոյականը, բացի հոգնակերտ մասնիկներ ու հոդեր ստանալուց, կարող է հոլովվել: Օրինակ՝

Անտառում *ամպի ծվեններ կային,*
Կապույտ մշուշներ կային ***անտառում.***
Օրոր էր ասում աշունն ***անտառին,***
Բայց դեռ ***անտառի*** *քունը չէր տանում:*

Համո Սահյան

Այս օրինակում *անտառ* բառը դրված է երեք տարբեր հոլովներով՝ *անտառում, անտառին, անտառի:*

Հոլովը հատուկ է գոյականին և դերանվանը, սակայն մյուս խոսքի մասերն էլ կարող են հոլովվել, եթե գոյականաբար գործածվեն:

Հայերենը ունի 7 հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է հոլովումը:
2. Ի՞նչ է հոլովը:
3. Քանի՞ հոլով կա ժամանակակից հայերենում:
4. Հոլովվելիս ինչպիսի՞ փոփոխությունների կարող է ենթարկվել բառը:

Վարժություն 28: Գծիկով առանձնացրե՛ք տրված բառերի հոլովական վերջավորությունները:

Հայրենիքի, նկարից, ճանապարհով, գրքերով, սենյակում, ծառի, այգում, գրիչներից, գետերում, հեռուստացույցից, աշակերտի, բակում, դասերից, ջրով, ջրում, նկարի, նկարների, մատիտով, ամպերի, ծաղիկներով:

Վարժություն 29: Առանձնացրե՛ք ներքին և արտաքին թեքման միջոցով հոլովված գոյականները:

Գրքի, նախահոր, քրոջ, հեռուստացույցի, ափսեի, փողոցի, մոր, դասընկերոջ, գարնան, աղջկա, ծառի, ծովի, ուրախության, մարդու, եղբոր, մանկան, տան, սիրո, դստեր, շաբաթվա, թղթի, օրվա, շան, աշնան, ուսման, անկյան, մորաքրոջ, տարվա, ձիու, կայսեր, ժապավենի, երգի, լեռան, սյան, խաղաղության:

Վարժություն 30: Դո՛ւրս գրեք գոյականները և որոշե՛ք՝ ուղի՞ղ ձևով են գործածվել, թե՞ թեքված, եզակի՞ են, թե՞ հոգնակի, որոշյա՞լ են, թե՞ անորոշ:

Օրինակ՝ պարիսպը – ուղիղ ձև, եզակի թիվ, որոշյալ առում:

Չինական մեծ պարիսպը կառուցվել է ավելի քան երկու հազար տարի առաջ: Այս վիթխարի պարիսպը բարձրանում է լեռներով, իջնում լեռնանցքները, ապա հովիտներով, դաշտերով ու անապատներով հասնում է Տիբեթի հյուսիսային սահմաններին: Պարսպի երկարությունը ավելի քան չորս հազար կիլոմետր է: Բարձրությունը հասնում է մինչև տասը մետրի: Լայնությունը հիմքում վեց և կես մետր է, իսկ վերևի մասում՝ հինգ և կես մետր: Այնպես որ պարսպով անցել են սայլեր, կառքեր և շարժվել են զորամասեր:

Կամսար Ավետիսյան

Գիտե՞ք, որ...

Լեզուների հոլովների միջին թիվը 5–8 է: Կան լեզուներ, որոնք ունեն մինչև 40 հոլով: Էստոներենում կա 14, ֆիններենում՝ 15 հոլով:

ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎ

***Երամն** անցավ վերևից,*
***Զորը** մորմոք է մանում,*
Սևեր հագան ստվերի
***Ծաղիկները** անանուն:*
***Մեծավորը** սարերի*
Ամպե գլխարկն է հանում,
*Շրջվեց **գավաթն** արևի*
Մայրամուտի մառանում,
Ինչ-որ մի տեղ երևի
***Բանաստեղծ** է մահանում:*

Համո Սահյան

Ընդգծված գոյականները դրված են ուղղական հոլովով:

Ուղղական հոլովը ցույց է տալիս մի բան անող կամ լինող առարկա:

Ուղղական հոլովով գոյականները պատասխանում են **ո՞վ, ովքե՞ր, ի՞նչ(ը), ինչե՞ր(ը)** հարցերին:

Այս հոլովը բառի ուղիղ ձևն է՝ առանց որևէ վերջավորության: Ուղղական հոլովին հակադրվում են մնացած բոլոր հոլովները, որոնք կոչվում են **թեք** հոլովներ: Ուղղական հոլովով գոյականները կարող են ստանալ **ը, ն** որոշիչ հոդերը:

Ուղղական հոլովով դրվում են նախադասության հետևյալ անդամները և անդամ չհամարվող բառերը:

ա) **Ենթական**, օրինակ՝

Գիշերն եկավ, զով *հովն* ընկավ,
Աստղունք լուսնին ձայն տվին:

Ավետիք Իսահակյան

...*Ծերունին* լուռ չարչարանքով
Մի քանի կոճղեր դրեց կրակին...

Հովհաննես Թումանյան

Բերված նախադասությունների մեջ *գիշեր, հով, աստղունք, ծերունի* գոյականները ենթականեր են և դրված են ուղղական հոլովով:

բ) ***Բաղադրյալ ստորոգյալի մաս կազմող բառը՝ ստորոգելին***, օրինակ՝

Կյանքը *երազ* է, աշխարհը՝ *հեքիաթ*,
ազգեր, սերունդներ՝ անցնող *քարավան*...

Ավետիք Իսահակյան

Օ՛, գրքերի աշխարհը *տիեզերք* է անեզր:

Եղիշե Չարենց

Ծո՛վ են աչքերը Ջավախքի դստեր...

Հովհաննես Թումանյան

Այս նախադասությունների մեջ բաղադրյալ ստորոգյալի մաս կազմող *երազ, հեքիաթ, քարավան, տիեզերք, ծով* գոյականները ուղղական հոլովով են դրված:

գ) **Կոչականը**, որին ուղղված է խոսքը. կոչականը նախադասության անդամ չի համարվում, օրինակ՝

Դու, *Արագա՛ծ*, ալմաստ վահան
Կայծակեղեն թրերի...

Ավետիք Իսահակյան

Հե՛յ, *պարոննե՛ր*, ակա՞նջ արեք
Թափառական աշուղին,

Սիրուն *տիկնայք*, ջահե՛լ *տղերք*,
Լա՛վ ուշ դրեք իմ խաղին:

Հովհաննես Թումանյան

Արագած, պարոններ, տիկնայք, տղերք գոյականները կոչականներ են՝ դրված ուղղական հոլովով: Կոչականը որոշիչ հոդ չի ստանում:

դ) **Գոյական որոշիչը**, օրինակ՝

Գոհար աստղերի քարավանները
թափառում էին երկնի ճամփեքով...
Եվ ուղտերն իբրև *ոսկի* մակույկներ,
հուր ալիքները *ծով* անապատում
Ճեղքելով արագ սլանում էին
դեպի բոցավառ, լուսավառ հեռուն...

Ավետիք Իսահակյան

Հրա՛շք աղջիկ, գիշերների թագուհի...

Վահան Տեր-Յան

Գոհար, ոսկի, հուր, ծով, հրաշք բառերը բերված նախադասությունների մեջ գոյականական անդամի լրացումներ՝ որոշիչներ են և դրված են ուղղական հոլովով: Գոյականով արտահայտված որոշիչը նույնպես չի կարող որոշիչ հոդով արտածվել, ինչպես կոչականը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ցույց տալիս ուղղական հոլովը:
2. Ի՞նչ հարցերի են պատասխանում ուղղական հոլովով դրված գոյականները:
3. Նախադասության ի՞նչ անդամներ և անդամ չհանդիսացող բառեր կարող են դրվել ուղղական հոլովով:
4. Նախադասության մեջ ուղղական հոլովով դրված ո՞ր բառերը որոշիչ հոդ չեն ստանում:

Վարժություն 31: Կազմե՛ք նախադասություններ՝ *բժիշկ, երգահան, նկարիչ, առյուծ, աղվես, Անի, Մասիս* **բառերը կիրառելով որպես ուղղական հոլովով դրված գոյական որոշիչներ:**

Վարժություն 32: Դո՛ւրս գրեք ուղղական հոլովով դրված բառերը:

Է՛յ հին ծանոթներ, է՛յ կանաչ սարեր,
Ահա ձեզ տեսա ու միտքս ընկան,
Առաջս եկան երջանիկ օրեր...

Հովհաննես Թումանյան

Ա՛խ, մնաք բարև չեմ ասում ես ձեզ,
Իմ հո՛ր գերեզման, օրո՛ցք մայրական,
Իմ հոգին հավերժ խռով է ձեզ հետ,
Հայրենական հա՛րկ, հուշե՛ր մանկական:

Ավետիք Իսահակյան

Այս ամենի համար, օ՛, խե՛ղճ իմ բարեկամ,
Ես քեզ օրհնում եմ արդ իմ անաղարտ երգով...

Վահան Տերյան, ինչպե՞ս երգեմ հիշատակը քո,
Թող լուռ փռվի հիմա իմ դեմ անլույս երեկո:

... Օ՛, հեռու ընկեր իմ, օ՛, Վահան Տերյա՛ն...

Եղիշե Չարենց

Հե՛յ, ճամփանե՛ր, ճամփանե՛ր.
Անդարձ ու հի՛ն ճամփաներ,
Ովքե՞ր անցան ձեզանով,
Ո՞ւր գնացին, ճամփանե՛ր:

Հովհաննես Թումանյան

Վարժություն 33: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն գոյականը, որը դրված է ուղղական հոլովով:

1. պատին, սեղանին, քամին, նկարին
2. ձեռքին, լուսամուտին, մայթին, ծերունին
3. այգուն, առուն, մարդուն, ձիուն
4. ընկերոջ, քրոջ, բողբոջ, կնոջ
5. օրվա, ամսվա, տարվա, փախլավա
6. գերան, դռան, լեռան, ձկան
7. սյունին, լուսին, գույնին, ձայնին
8. մեղուն, կաղնուն, մայրուղուն, քաղաքացուն
9. անկողնու, խնձորենու, ծաղրածու, գինու
10. արյան, մեծության, կայան, ձյան

ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Աշակերտի պայուսակը նոր է:

Մայրը կրծքին սեղմեց *որդու* լուսանկարը:

Այս նախադասություններում *աշակերտի* բառը ցույց է տալիս, թե ում է պատկանում պայուսակը, *որդու* բառն էլ ցույց է տալիս, թե ում է վերաբերում լուսանկարը: *Աշակերտի, որդու* գոյականները դրված են սեռական հոլովով և գոյականական անդամի լրացումներ են՝ հատկացուցիչներ:

Սեռական հոլովը ցույց է տալիս պատկանելություն, վերաբերություն:

Սեռական հոլովով գոյականները պատասխանում են **ո՞ւմ, ինչի՞ (ինչերի՞)** հարցերին:

Սեռական հոլովը ունի կազմության 2 եղանակ՝ **արտաքին** և **ներքին**:

ա) **Արտաքին թեքում:** Այս դեպքում բառի վերջին ավելանում են **-ի, -ու, -վա, -ան, -ոջ, -ց** վերջավորությունները (օրինակ՝ *սեղանի, մարդու, ամառվա, թոռան, ընկերոջ, Գրիգորենց*): Այսպիսի հոլովումը կոչվում է *արտաքին*, որովհետև փոփոխությունը տեղի է ունենում բառավերջում:

1. **Ի** հոլովման է պատկանում գոյականների մեծամասնությունը՝ *ծառ > ծառի, սեղան > սեղանի, գիրք > գրքի* և այլն: Այսպես են հոլովվում նաև մյուս հոլովումներին (բացի **ց** հոլովումից) պատկանող գոյականների հոգնակիները, ինչպես՝ *ընկեր > ընկերոջ*, բայց՝ *ընկերների, օր > օրվա*, բայց՝ *օրերի* և այլն: **Ի**-ով են հոլովվում նաև այլ խոսքի մասերին պատկանող, սակայն տվյալ կապակցության մեջ գոյականաբար գործածված բառերը, օրինակ՝ Վերջին *երեքի* ելույթները հաջող էին: Սպիտակ վարդերի ծաղկմանը դի՛ր սեղանին, իսկ *կարմիրների* ծաղկմանը՝ լուսամուտագոգին:
2. **Ու** հոլովման են պատկանում *Աստված, մարդ, ամուսին, անկողին, ձի* բառերը՝ *Աստծու, մարդու, ամուսնու, անկողնու, ձիու:* Հիմնականում այսպես են

հոլովվում նաև **ի**-ով ավարտվող բառերը, օրինակ՝ *այգի > այգու, գինի > գինու, բարդի > բարդու* (նաև անորոշ դերբայը՝ *գրել > գրելու*):

3. **Վա** հոլովման է պատկանում ժամանակային իմաստ արտահայտող գոյականների մեծ մասը՝ *օր > օրվա, ամիս > ամսվա, տարի > տարվա, շաբաթ > շաբաթվա* և այլն: Սակայն ժամանակ ցույց տվող շատ բառեր էլ **վա** հոլովման չեն պատկանում՝ *դար, վայրկյան, րոպե* և այլն:
4. **Ան** հոլովման պատկանում են *գարուն, ամառ, աշուն, ձմեռ* բառերը՝ *գարնան, ամռան, աշնան, ձմռան*, սակայն *ամառ* և *ձմեռ* բառերը կարող են հոլովվել նաև **վա** հոլովմամբ՝ *ամառվա, ձմեռվա*: **Ան** հոլովման են պատկանում նաև *մուկ, ձուկ, գառ, դուռ, եզ, նուռ, լեռ, բեռ, թոռ, ծոռ, ծունկ* բառերը, *բեռ, թոռ, ծոռ, ծունկ* բառերը կարող են հոլովվել նաև **ի**-ով: *Մանուկ* բառը՝ որպես հասարակ գոյական, հոլովվում է **ան** հոլովմամբ՝ *մանկան*, իսկ որպես անձնանուն՝ **ի** հոլովմամբ՝ *Մանուկի*: Հիմնականում **ան** հոլովման են պատկանում նաև **-ում** վերջածանցով կազմված բառերը՝ *ուսում > ուսման, ծագում > ծագման* և այլն:
5. **Ոջ** հոլովման են պատկանում *քույր, կին, ընկեր, տեր* բառերը, ինչպես նաև *աներ, սկեսուր, տեգր, տալ* բառերը, որոնք կարող են հոլովվել նաև **ի**-ով:
6. **Ց** հոլովման են պատկանում *-անք, -ենք, -ոնք, -ունք* ածանցներով կազմված անձնանիշ գոյականները՝ *Վարդանանք – Վարդանանց, Գևորգենք – Գևորգենց, Մերոնք – Մերոնց, Վեղունք – Վեղունց*, ինչպես նաև *մարդիկ* և *կանայք* հոգնակիները՝ *մարդկանց, կանանց (տիկնանց)*:

բ) **Ներքին թեքում:** Այս դեպքում փոփոխվում է բառամիջի ձայնավորը կամ երկինչյունը, այդ պատճառով էլ հոլովումը կոչվում է **ներքին**: Կա 2 ներքին հոլովում՝ **ա** և **ո**:

1. Բառամիջի **ու** ձայնավորը փոխվում է **ա**-ի 6 բառերում, որոնք են՝ տուն > տան, շուն > շան, սյուն > սյան, ձյուն > ձյան, արյուն > արյան, անկյուն > անկյան: *Անուն* բառի սեռական հոլովի կազմության ժամանակ ավելանում է **ա**՝ *անուն > անուան > անվան* (ձայնավորից առաջ **ու**-ն փոխվում է **վ**-ի):
   Գոյականների **-ություն** ածանցը սեռականում փոխվում է **-ության**՝ *ազնվություն > ազնվության, մեծություն > մեծության, լավություն > լավության:*
2. *Հայր, մայր, եղբայր* բառերի սեռականը լինում է *հոր, մոր, եղբոր:*

Սեռական հոլովով, ինչպես ասվեց, դրվում է **հատկացուցիչը**:

> ***Արարատի*** *ծեր կատարին դար է եկել*
> *վայրկյանի պես ու անցել:*
> *Անհուն թվով* ***կայծակների*** *սուրն է բեկվել*
> *ադամանդին ու անցել:*
> *Մահախուճապ* ***ստրունդների*** *աչքն է դիպել*
> *լույս գագաթին ու անցել:*
>
> *Ավետիք Իսահակյան*

Թողած հեռուն անծայրածիր մութը ***գյուղի***՝
Բերել էր իր մկաններում բեղմնավորված ուժը ***հողի***:

Եղիշե Չարենց

Արարատի, կայծակների, սերունդների, գյուղի, հողի գոյականները հատկացուցիչներ են:

Սեռական հոլովով գոյականները չեն ստանում որոշիչ **ը** կամ **ն** հոդ, բայց նրանց կարող է ավելանալ **ս** կամ **դ** հոդը: Օրինակ՝

Սիրում եմ ***աչքերիդ*** *տխրությունը խորին,*
Անաղմուկ ***խոսքերիդ*** *դաշնակները հիվանդ...*

Վահան Տերյան

Սեռական հոլովով կարող են դրվել նաև նախադասության ուրիշ անդամներ, ինչպես օրինակ՝ որոշիչը:

Օրինակներ՝

Սարի ծաղիկը գեղեցիկ է լինում:
Ծաղկածորը *հանգստի* հիանալի գոտի է:

Սարի և *հանգստի* բառերը սեռականով դրված գոյական որոշիչներ են:

ՀԻՇԵ՛Ք

Սեր (զգացմունքը) բառը ենթարկվում է **ո** արտաքին հոլովման՝ *սիրո:*

Աղջիկ բառը ենթարկվում է **ա** արտաքին հոլովման՝ *աղջկա:*

Մահ բառը ենթարկվում է **վան** արտաքին հոլովման՝ *մահվան:*

Դուստր, կայսր բառերը հոլովվում են **ի**-ով, սակայն կարող են հոլովվել նաև **ե** ներքին հոլովմամբ՝ *դստեր, կայսեր:*

Որպես հին ձևեր՝ որոշ կապակցություններում գործածվում են *հուսո, լուսո, սգո, պատվո, հրո, գալստյան, ծննդյան, հանգստյան, կորստյան* ձևերը, սակայն այս բառերը հիմնականում հոլովվում են **ի**-ով:

Հոլովական ընդհանուր համակարգից այս շեղումը կոչվում է **այլաձև** հոլովում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ցույց տալիս սեռական հոլովը:
2. Ի՞նչ վերջավորություններով են կազմվում սեռական հոլովի արտաքին թեքման ձևերը:
3. Սեռական հոլովի ներքին թեքման ի՞նչ ձևեր կան:
4. Ի՞նչ հարցերի են պատասխանում սեռական հոլովով դրված գոյականները:
5. Նախադասության ո՞ր անդամներն են դրվում սեռական հոլովով:

Վարժություն 34: Գրե՛ք *սեռական + ուղղական* կազմությամբ 10 այնպիսի բառակապակցություն, որոնցում սեռական հոլովով դրված գոյականը արտահայտի հատկանիշ:

Օրինակ՝ *կոկորդիլոսի* արցունք, *սարի* ծաղիկ, *ոչխարի* պանիր:

Վարժություն 35: Արտագրե՛ք և ուղղականով դրված գոյականները նշե՛ք ուղիղ գծով, սեռականով գոյականները՝ ալիքաձև (հոլովը որոշելիս ուշադրությո՛ւն դարձրեք շարահյուսական կիրառություններին):

Լեռան թամբին հանգավ հրդեհն ամպի,
Մոխրափոշին փլվեց լանջերն ի վար:
Խառնվեցին ծալքերն արտի ու թմբի,
Ու մոտեցան քիչ-քիչ լեռներն իրար:
Մեջքին ընկավ, փռվեց հասակով մեկ
Քնաթաթախ բամին քարափի մոտ,
Շշուկները մեռան թփերի մեջ,
Կարկաչները ձորում դարձան որոտ:
Ստվերները մտան իրարու գիրկ,
Թռան երկինքն ի վեր, դարձան երկինք:
Ու երկինքը եկավ, փարվեց հողին...
Փառք տանք այս իրիկունն արարողին:

Համո Սահյան

Վարժություն 36: Գրե՛ք նշված բառերի սեռական հոլովը:

Հեքիաթ, գարուն, ուսում, մանկություն, դուռ, լավություն, ընկեր, նուռ, կին, գի, տարի, ամիս, ապակի, որդի, Վահանենք, ամուսին, ձերոնք:

Վարժություն 37: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն գոյականը, որը սեռական հոլովով չէ:

1. սեղանի, ալբոմի, զամբյուղի, մայրուղի
2. սոսնձի, գետաձի, պղնձի, տողադարձի
3. ժապավենի, հայերենի, խնձորենի, պատճենի
4. հայուհի, սեպուհի, իշխանի, դերասանի
5. այգու, կաղնու, եղջերու, գյուղացու
6. փրկագոտու, գետնամորու, նավաստու, վերարկու
7. հրահան, լեռան, գարնան, նռան
8. մանկան, որսկան, ձմռան, ձկան
9. հորեղբոր, նախահոր, նավթահոր, արքայամոր
10. հնձան, մեծության, անվան, ձյան

ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎ

*Աղջիկը ծաղկեփունջ նվիրեց **մայրիկին**:*
*Նայում էի աստղալից **երկնքին**:*

Այս նախադասություններում *մայրիկին* բառը ցույց է տալիս այն անձը, որին տրվում է մի առարկա, *երկնքին* բառը ցույց է տալիս, թե ինչին է հանգում ենթակայի գործողությունը:

Տրական հոլովը ցույց է տալիս առարկա կամ անձ, որին հանգում է ենթակայի գործողությունը:

Տրական հոլովով գոյականները պատասխանում են **ո՞ւմ, ինչի՞(ն), ե՞րբ, որտե՞ղ** հարցերին:

Տրականը կազմվում է սեռական հոլովի պես, միայն թե տրական հոլովով գոյականները կարող են որոշիչ հոդ ստանալ:

Տրական հոլովով դրվում են միայն բայական անդամների լրացումները:

ա) **Հանգման խնդիրը**, ինչպես՝

Ապրե՛լ, ապրե՛լ, ապրել մեկտե՛ղ,
*Կյանքդ խառնել նրանց **կյանքին**,*
*Տառապանքդ՝ **տառապանքին**,*
*Ջանքդ՝ **ջանքին**,*
*Ցանքդ՝ **ցանքին**,*
Եվ ենթարկվել նրանց կամքին,
Նրանց կամքն էլ քեզ ենթարկել,
Դառնալ և՛ շանթ, և՛ շանթարգել...

Պարույր Սևակ

*Խարխուլ մակույկով հանձնվիր **ծովին**,*
*քան թե հավատա կնոջ **երդումին**:*
*Եվ ետ չէր նայում անցած **ճամփեքին***
և չէր ափսոսում թողած-լքածին,
Ողջույն չէր վերցնում, ողջույն չէր տալիս
*անցնող ու դարձող **քարավաններին**:*

Ավետիք Իսահակյան

Ընդգծված բառերը հանգման խնդիրներ են, որոնք դրված են տրական հոլովով:

բ) **Ժամանակի պարագան**, օրինակ՝

***Լուսաբացին** նա բարձրացավ կախաղան...*

Վահան Տերյան

***Իրիկնապահին** Արթին պապիս նստելու տեղը կամարակապ դարպասի նիշն էր:*

Ակսել Բակունց

գ) **Տեղի պարագան**, օրինակ՝

*Ես կանգնած եմ վայրի ժայռի **կատարին**:*

Վահան Տերյան

*Ամ՛ս, էն կանաչ սարի **լանջին***
Ո՞վ է քնած էն տղեն:

Հովհաննես Թումանյան

*Փերիները սարի **գլխին** հավաքվեցին գիշերով:*

Հովհաննես Թումանյան

ղ) **Նպատակի պարագան**, օրինակ՝

*Իջավ աղբյուրը՝ **ջրի**:*
*Գնաց խանութ՝ **հացի**:*

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ցույց տալիս տրական հոլովը:
2. Ինչպե՞ս է կազմվում տրական հոլովը:
3. Ի՞նչ տարբերություն սեռական և տրական հոլովով գոյականների միջև:
4. Ի՞նչ հարցերի են պատասխանում տրական հոլովով դրված գոյականները:
5. Նախադասության ո՞ր անդամները կարող են դրվել տրական հոլովով:

Վարժություն 38: Դո՛ւրս գրեք տրական հոլովով դրված գոյականները՝ նշելով, թե դրանք ինչ են ցույց տալիս՝ տեղ, հանգում և այլն:

ԱՇՏԱՐԱԿԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԸ

...Եվ երբ ես հոգնեմ
Այս դաժան հողի համար ապրելուց,
Այս հողի համար արյուն թափելուց,
...Կգամ, կնստեմ այս մամռոտ քարին,
Կգամ, կպառկեմ այս քարի վրա
Կամ... այս քարի տակ,
Եվ, ինչպես առաջ,
Կնայեմ փոշոտ այս արահետին,
Այս այգիների զմրուխտե գետին,
Իմ Աշտարակին,
Իմ հին տնակին,
Արյունից կարմիր իմ Կարմրավորին,
Իմ նախնիների լուռ շիրիմներին,
Եվ իմ Քասաղին,
Որ խորունկ ձորից
Այս հողի մասին կխշշա նորից,
Եվ նրանց մասին,
Որոնց այս հողը այնքան է սիրել,
Որ չի համբերել,
Եվ շտապել ու... իր գիրկն է տարել...

Գևորգ Էմին

***

Լիներ այնպես՝
Լուսաբացին
Լավ երազով արթնանայի,
Եվ իմ հոգնած ականջներում
Ոչ մի օտար ձայն չլիներ...

***

Գարնան առավոտ...
Կանաչ է ուռին...
Մի կռունկ իջավ
Մեր տան կտուրին:

Վահագն Դավթյան

Առավոտյան գնում էր հացի, երբ հանդիպեց ընկերոջը, որը մոտենում էր իրենց տանը:

Վարժություն 39: Հետևյալ բառերը տրական հոլովով գործածե՛ք նա
խադասությունների մեջ. *քաղաք, կայարան, Մասիս, Հայկ, հող, ջուր*
լեռ, այգի, ընկեր, սփռոց:

Վարժություն 40: Յուրաքանչյուր տողում գտե՛ք այն բառը, որը տրական
հոլովով չէ:

1. քարին, հողին, քամին, տերևին
2. ասֆալտին, նստարանին, տանիքին, բալենին
3. պահարանին, ծերունին, մեքենային, մայթեզրին
4. այգուն, հենասյուն, խնձորենուն, բանալուն
5. առուն, ծխնուն, որդուն, հայելուն
6. օրվա, ամսվա, տարվա, կատվալվա
7. դռան, փական, լեռան, թոռան
8. ձյանը, ձայնը, սյանը, արյանը
9. տանը, անկյանը, շանը, նշանը
10. ուսմանը, մոտեցմանը, աղամանը, կառուցմանը

Վարժություն 41: Դո՛ւրս գրեք շղատառ գոյականները՝ նշելով, թ
դրանցից որոնք են ուղղական հոլովով, որոնք՝ սեռական, որոնք
տրական:

1. *Աղջիկը* կողովը դրեց *հողաթմբին* և սկսեց հավաքել *ծառի* տակ թափվա
խնձորները:
2. *Մեքենայի ձայն* հասավ *ականջին,* և *ծերունին,* ձեռքը դնելով *ճակատի*
ու աչքերը *արևի* ճառագայթներից կկոցելով, նայեց գյուղ բերո
ճանապարհին:
3. *Զբոսայգու շատրվանի* զվարթ *խշշոցը* զովություն էր հաղորդու
շրջապատին, և զբոսնողներն ակամա պտտվում էին *շատրվանի* շուրջը:
4. *Ֆիլմի* ավարտից հետո վառվեցին *դահլիճի լույսերը,* և սկսվե
հանդիպումը դերակատարների հետ:
5. Մոտենալով *պատուհանին՝* բացեց փեղկը, որպեսզի նայի աստղազար
երկնքին և ցրի խառնիճաղանջ մտքերը, բայց թխպոտ երկնքում ոչ մ
աստղ չէր փայլփլում:
6. *Մայրը* բարի ժպիտով նայեց քնած *որդուն,* ապա վերցրեց *սեղանի*
դրված զարդատուփը և կամացուկ դուրս եկավ ննջասենյակից՝ աշխատե
լով չճռռացնել *հատակի* տախտակները:
7. Մի տեղ հինավուրց *կաղնին* իր հսկա բնով և ահագին ճյուղերով գրավե
ծածկել էր *գետնի* մի ընդարձակ տարածք՝ ճնշելով իր *հովանու* տա
կծկված գաճաճ թփուտները, մի ուրիշ տեղ *հաճարենին* ուղղաձիգ բարձ
րացել էր, ինչպես *տաճարի* սյունը:

8. Այդ *պահին* մենք գտնվում էինք ամենաբարձր լեռներից մեկի *լանջին*, որտեղից *ծառերի* միջով վար նայելիս երևում էին այն *բլուրներն* ու *ձորակները*, որոնցով քիչ առաջ անցել էինք:
9. *Լուսնի* թրթռուն *շողը* ներս ընկավ *լուսամուտի* բաց փեղկից՝ լուսավորելով *մահճակալին* պառկած *երեխայի* դեմքը:
10. Փոքրիկ *լաստանավը* այնպես էր սահում *ջրի* հանդարտ *երեսին*, որ հեռվից անշարժ էր թվում:

ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ

*Երեխան կոտրեց **բաժակը**:*
*Լողորդը փրկեց խեղդվող **տղային**:*

Բաժակը գոյականը ցույց է տալիս այն առարկան, որն իր վրա է կրում երեխայի կատարած գործողությունը, իսկ *տղային* գոյականը ցույց է տալիս այն անձը, որին անցնում է լողորդի կատարած գործողությունը: *Բաժակը* և *տղային* բառերը հայցական հոլովով դրված բայական անդամի լրացումներ են՝ ուղիղ խնդիրներ:

Հայցական հոլովը ցույց է տալիս այն առարկան կամ անձը, որն իր վրա է կրում ենթակայի կատարած գործողությունը:

Հայցական հոլովով գոյականները պատասխանում են **ո՞ւմ, ի՞նչ(ը), ինչե՞ր(ը), ե՞րբ, ո՞ւր** հարցերին:

Հայցական հոլովը չունի հատուկ ձև. այն նման է կա՛մ ուղղականին, կա՛մ տրականին:

Եթե հայցականով դրված ուղիղ խնդիրը նման է ուղղականին, նշանակում է, որ այն դրված է իրի առումով: Օրինակ՝

*Ես իմ անուշ Հայաստանի արևահամ **բառն** եմ սիրում,*
*Մեր հին սազի ողբանվագ, լացակումած **լարն** եմ սիրում...*

Եղիշե Չարենց

Իսկ եթե ուղիղ խնդիրը նման է տրական հոլովին, նշանակում է՝ այն անձի առում ունի: Օրինակ՝

*Ես սիրում եմ **մայրիկին**,*
Ես չեմ ուզում դառնալ կին:

Հովհաննես Թումանյան

Սակայն անորոշ առումով գործածվելիս անձ ցույց տվող ուղիղ խնդիրը նույնպես կարող է կազմվել ուղղականի պես, ինչպես՝

*Ես մի **մարդ** տեսա:*

Իրանիշ գոյականներով արտահայտված ուղիղ խնդիրն էլ երբեմն կարող է կազմվել տրականի ձևով: Օրինակ՝

*Հասոն իր նվագով **քարերին** էր լացացնում, **զեփյուռին** ողբացնում:*

Վրթանես Փափազյան

Գնդացիրները
*խեղճ **արտույտներին** ու **տատրակներին***
գործազրկեցին:

Պարույր Սևակ

Բացի ուղիղ խնդրից՝ հայցական հոլովով դրվում են բայական անդամի ա
լրացումներ ևս, որոնք ցույց են տալիս գործողության տեղը, ժամանակը, չափ
քանակը և կոչվում են պարագաներ:

Օրինակներ՝

***Գյուղն** էին իջել հովիվ պատանիք:*

Քշեց նախիրը մեր նախրորդ հսկան,
*Ելավ Սասունի **սարերն** աննման:*

... Որ կանչեց, նրա ձենից ահավոր
*Դղորդ-դմբդմբոցն ընկավ **սար** ու **ձոր**...*

*Ձմռան մի **գիշեր** կար մի հարսանիք:*

Մի օր սա եկավ, թե չոբան Չատին
*Ոչխարը թաքուն իմ **հանդն** է քաշել:*

*Քերթեցինք, քաշեցինք, դուրս եկավ 60 **փութ**:*

Հովհաննես Թումանյան

*Բայց կայծակը, ավա՜ղ, **մի վայրկյան** է տևում:*

Վահագն Դավթյան

Բերված նախադասություններում *գյուղ, սարեր, սար ու ձոր, հանդ* գոյ-
կանները ցույց են տալիս գործողության կատարման տեղը, ուստի տեղի պար-
գաներ են, *գիշեր, օր* գոյականները՝ ժամանակի, իսկ *(60) փութ, (մի) վայրկյա-*
գոյականները չափ ու քանակի պարագաներ են: Հայցական հոլովով արտ-
հայտված չափ ու քանակի պարագաների հետ հիմնականում գործածվում է չափ
արտահայտող թվական կամ դերանուն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ցույց տալիս հայցական հոլովը:
2. Ո՞ր դեպքում են հայցական հոլովով դրված գոյականները ուղղականած
   իսկ ո՞ր դեպքում՝ տրականաձև:
3. Ի՞նչ հարցերի են պատասխանում հայցական հոլովով դրված գոյակա-
   ները:
4. Նախադասության ո՞ր անդամներն են դրվում հայցական հոլովով:

Վարժություն 42: Առանձնացրե՛ք տրական և հայցական հոլովներով դրված գոյականները:

Լույսի հրճվանքը տվեց երկնքին,
Կապույտ ծիծաղը ծովին ծավալեց,
Ճերմակ ժպիտը սփռեց ձյուներին,
Վեհության խինդը լեռներին տվեց:
Դաշտերին՝ կանաչ ժպիտը գարնան,
Դայլայլը տվեց հավք ու հովերին,
Հողին բերկրանքը տվեց մայրության,
Սիրո խայտանքը տվեց ամենքին,
Ու բոլոր վարդերն իր ուրախության
Շաղ տվեց այսպես նորաստեղծ երկրին:

Հովհաննես Շիրազ

Վարժություն 43: Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունից դո՛ւրս գրեք հայցական հոլովով դրված ուղիղ խնդիրները:

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բո՛ւյրը վառման,
Ու նահրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
Ու հնամյա քաղաքների հազարամյա քա՛րն եմ սիրում:

Ուր էլ լինեմ, չե՛մ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չե՛մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սո՛ւր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր,
Էլի՛ ես որբ ու արնավառ իմ Հայաստան-յա՛րն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխա՛րհ անցիր՝ Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում:

Վարժություն 44: Նշված գոյականները հայցական հոլովով գործածե՛ք նախադասությունների մեջ. *գյուղ, բնություն, բժիշկ, Անահիտ, աշխատանք:*

Վարժություն 45: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն հոլովը, որո կարող է դրվել գոյականով արտահայտված նշված անդամը կա նախադասության անդամ չհամարվող բառը:

1. ենթակա – տրական, ուղղական, հայցական
2. կոչական – ուղղական, սեռական, տրական
3. որոշիչ – ուղղական, տրական, հայցական
4. որոշիչ – տրական, սեռական, հայցական
5. հատկացուցիչ – ուղղական, սեռական, տրական
6. հանգման խնդիր – ուղղական, տրական, հայցական
7. ուղիղ խնդիր – հայցական, սեռական, ուղղական
8. տեղի պարագա – սեռական, ուղղական, հայցական
9. տեղի պարագա – ուղղական, սեռական, տրական
10. ժամանակի պարագա – ուղղական, սեռական, հայցական

Վարժություն 46: Գտե՛ք, թե շղատառ գոյականներից որոնք է ուղղական հոլովով դրված, որոնք՝ սեռական, որոնք՝ տրական որոնք՝ հայցական, և նշե՛ք այդ բառերի կատարած շարահյուսակա պաշտոնները:

1. *Նկարիչ Գևորգը* վերցրեց *վրձինը*, որը դրված էր *սեղանին:*
2. *Լուսնի շողերը* լուսավորել էին *լեռները:*
3. *Արմենը* տեսավ *ընկերոջը* և մոտենալով՝ սեղմեց նրա *ձեռքը:*
4. *Երեխան* գրկեց *շանը* և շոյեց նրա *գլուխը:*
5. *Առվի* մեղմ *խոխոջը* հասնում էր մինչև *պատշգամբ:*
6. *Արշակի* մեծ *հորեղբայր Գեղամը գիշերը* հասավ *գյուղ* և կիսախավարում հազիվ գտնելով *ընկերոջ տունը*՝ բախեց *դուռը:*
7. *Բակի նստարանին* նստած *ծերունին* մի *մարդ* տեսավ, որը մոտենում է իրենց *այգուն:*
8. *Ձին* մոտեցավ *մսուրին* և սկսեց ուտել այնտեղ լցված *գարին:*
9. *Եկեղեցու զանգերի ղողանջը* հասնում էր մինչև մոտակա *գյուղը:*
10. *Մայթեզրերի* սիզամարգերում աճած *ծաղիկները* շատ էին գեղեցկացնում *փողոցը:*

ԲԱԾԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

*Հեռացնում էին որդուն **ծնողից**, եղբորը՝ **եղբորից**, կնոջը՝ **ամուսնուց**. Նա **այգուց** լավ բերք էր ստացել:*

Ոչ մի ուժ ինձ չի բաժանի
*Իմ շռնդալից պայծառ **քնարից**:*

Եղիշե Չարենց

Այս նախադասությունների մեջ *ծնողից, եղբորից, ամուսնուց, այգուց, քնարից* բառերը ցույց են տալիս, թե ումից կամ ինչից է ծագում, սկսվում, անջատվում գործողությունը: Նշված բառերը բայական անդամի լրացումներ են, որոնք դրված են գոյականի բացառական հոլովով:

Բացառական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որից սկսվում է, ծագում է գործողությունը:

Բացառական հոլովով գոյականները պատասխանում են **ումի՞ց, ինչի՞ց, որտեղի՞ց, երբվանի՞ց** հարցերին:

Բացառական հոլովը կազմվում է ուղղականից կամ սեռականից՝ **-ից** կամ **-ուց** վերջավորությունների ավելացմամբ: **-Ուց** ստանում են սեռականում **-ու** վերջավորություն ստացող բառերը: Մնացած գոյականները ստանում են **-ից**: *Սեր* (զգացմունքը) բառը ևս բացառականում ստանում է **-ուց**՝ *սիրուց:*

Բացառական հոլովով դրվում են բայական անդամի լրացումները, որոնք անջատում են ցույց տալիս, այսինքն՝ անջատման անուղղակի խնդիրներ են: Օրինակ՝

Գարուն էր: Ամառ եկավ,
Զագ հանեց ձորում կաքավ,
*Իսկ հայը զրկվեց **ձագից**,*
*Իր պոռթկան թոնրի **տաքից**,*
*Իր **մորից, հորից, յարից**,*
*Իր **բնից** ու **աշխարհից**.*
– Գարուն ա, ձուն ա արել...

Պարույր Սևակ

Բացառական հոլովով է արտահայտվում նաև ներգործող անուղղակի խնդիրը, որը դրվում է միայն կրավորական բայերի հետ և ցույց է տալիս այն առարկան կամ անձը, որը ներգործում, ազդում է ենթակայի վրա: Անձ ցույց տվող գոյականների դեպքում ներգործող խնդիրը կազմվում է **սեռական հոլով + կողմից** կապակցությամբ, օրինակ՝

*Կամուրջը քանդվել էր **հեղեղից*** (առարկա):
*Կամուրջը նորոգվեց **շինարարների կողմից*** (անձ):

Բացառական հոլովով դրվում են նաև գործողության կատարման տեղ, ժամանակ, պատճառ ցույց տվող լրացումները:

***Քաղաքներից** ու **գյուղերից**, **ստեպներից** հեռու ու մոտ*
Եկել էին նրանք նորից՝ հուսավառված ու կրակոտ:

Եղիշե Չարենց

*Եվ մութ **այրերից** մամռոտ ժայռերի,*
*Թավուտ ծմակի լռին **խորքերից**,*
Մանուկ հասակիս ինչուն ծիծաղի
Արձագանքն ահա լսում եմ նորից:

Հովհաննես Թումանյան

Քաղաքներից, գյուղերից, ստեպներից, այրերից, խորքերից բառերը տեղ պարագաներ են:

Ես միշտ էլ էապես անբախտ կլինեմ.
Մանուկ ***օրից*** *են դեռ ինձ անիծել...*

Այն ***օրվանից*** *սրա համար*
Կոգին կոչվեց Ախթամար...

Հովհաննես Թումանյան

Օրից, օրվանից բառերը ժամանակի պարագաներ են:

Երեխան ***բարձր*** *ձայնից արթնացավ:*

Ձայնից գոյականը ցույց է տալիս գործողության կատարման պատճառը պատճառի պարագայի պաշտոն է կատարում:

Բացառական հոլովով դրվում են նաև վերաբերության անուղղակի խնդիրները, որոնք ցույց են տալիս, թե ինչին է վերաբերում խոսքը, ինչի մասին է ասվում կամ մտածվում, օրինակ՝

Խոսում են Լոռու հին-հին ***քաջերից...***

Հովհաննես Թումանյան

Բացառական հոլովով կարող է դրվել նաև որոշիչը:

Երկու մահճակալ կար ***երկաթից****, սպիտակ* ***պղնձից*** *ինքնաեռ ափսեներ, բաժակներ՝ հասարակ* ***ապակուց****:*

Ընդգծված բառերը որոշիչներ են:

Բացառական հոլովով գոյականները որոշիչ հոդ չեն ստանում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ցույց տալիս բացառական հոլովը:
2. Ինչպե՞ս է կազմվում բացառական հոլովը:
3. Ի՞նչ հարցերի են պատասխանում բացառական հոլովով դրված գոյականները:
4. Նախադասության ո՞ր անդամները կարող են դրվել բացառական հոլովով:

Վարժություն 47: Կազմե՛ք նախադասություններ՝ հետևյալ բառերը գործածելով բացառական հոլովով. *այգի, գարուն, սեր, եղբայր, հայրենիք, ընկեր:*

Վարժություն 48: Դո՛ւրս գրեք բացառականով դրված գոյականները, որոշե՛ք՝ նախադասության ինչ անդամ են դրանք:

Երգել են նրանք մեր պտղած հողից,
Գինուց, խաղողից,
Մեր սրտի դողից,

Երգել են նրանք մեր ցորեն հացից,
Մեր խինդ ու լացից,
Մարտում ընկածից...

... Թեթևանում էր երբ աշխատանքից,
Ծառայությունից օձիքն ազատում,
Հեռանում էր նա խուցից ու վանքից,
Գնում էր այնտեղ, ուր երգն էր հնչում:

Պարույր Սևակ

Վարժություն 49: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն միավորը, որը կարող է դրվել բացառական հոլովով:

1. հանգման անուղղակի խնդիր, հատկացուցիչ, անջատման անուղղակի խնդիր
2. ներգործող անուղղակի խնդիր, հատկացուցիչ, կոչական
3. հանգման անուղղակի խնդիր, տեղի պարագա, միջոցի անուղղակի խնդիր
4. ժամանակի պարագա, կոչական, հատկացուցիչ
5. միջոցի անուղղակի խնդիր, որոշիչ, հատկացուցիչ

Վարժություն 50: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն գոյականը, որի բացառականը կազմվում է ոչ թե *-ից*, այլ *-ուց* վերջավորությամբ:

1. երգեհոն, հորիզոն, աշակերտ, մարդ
2. ընկեր, երկինք, Աստված, ամիս
3. տատ, ամուսին, հայր, մայր
4. ուղտ, արջ, ձի, վագր
5. գորգ, անկողին, լամպ, բազմոց
6. կուղբ, օձ, լորտու, ոզնի
7. պարտեզ, բանջարանոց, այգի, արտ
8. այր, ժայռ, սար, բարդի
9. կաղին, խնձոր, թթենի, արևածաղիկ
10. եղանակ, սպունգ, սանր, հայելի

Վարժություն 51: Տրված նախադասություններն ամբողջացրե՛ք՝ ավելացնելով բացառական հոլովով դրված այնպիսի գոյականներ, որոնք կհամապատասխանեն իմաստով:

1. Ծառերն օրորվում էին լճի կողմից փչող մեղմ ...:
2. Ճամփորդները նստեցին ... սկիզբ առնող վտակի մոտ և ... հանելով ուտելիքները՝ սկսեցին ընթրել:
3. Խաղողի ... վերադարձող բեռնատար մեքենաների ... շփոթված աղվեսը մի պահ կանգ առավ, ապա անհետացավ ճամփեզրի թփերում:

4. ... փախած թութակը թռչում էր սենյակում՝ խուսափելով իր վրա նետվ... ..., որով նրան փորձում էին որսալ երեխաները:
5. ... հետո Արմենը դուրս եկավ ... և ... մի հաց գնելով՝ գնաց տուն:
6. ... վերադառնալիս ճանապարհին կանգ առանք, ... ջուր խմեցինք, ապ... շարունակեցինք ճանապարհը, որպեսզի ... առաջ հասնենք քաղաք:
7. ... կամուրջը քանդվել էր, և ուղևորները ստիպված իջան ..., որպես... ոտքով գնան շրջանցող կածանով ու ... առաջ հասնեն գյուղ:
8. ... պատրաստված մուրաբան շատ համեղ էր, և հյուրերը, ... իմանալ... պատրաստման եղանակը, որոշեցին ամռանը եփել այդ ...:
9. Շունը գլուխը հանել էր ... և հաչում էր, իսկ ... վախեցած երեխան կանգն... էր դարպասի մոտ և սպասում էր, որ որևէ մեկը ... դուրս գա:
10. Լողացող երեխաները դուրս էին եկել ... և ափի ավազին նստած՝ զրուցո... էին ...՝ կկոցած աչքերով նայելով ... փայլփլող ալյակներին:

ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Եվ ո՞վ է հյուսել հեքիաթն այս վսեմ,
հյուսել ***աստղերով****, բյուր* ***հրաշքներով****,*
Եվ ո՞վ է պատմում բյուր-բյուր ***ձևերով****՝*
անդուլ ու անխոնջ՝ այսպես ***թռվչանքով****:*

Ավետիք Իսահակյան

Այս օրինակում *աստղերով, հրաշքներով, ձևերով, թռվչանքով* բառերը ցույ... են տալիս, թե ինչի միջոցով, ինչպես է կատարվում գործողությունը: Այդ բառեր... դրված են գործիական հոլովով:

Գործիական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որի միջոցով կա... տարվում է գործողությունը:

Գործիական հոլովով գոյականները պատասխանում են **ինչո՞վ, ումո՞վ, ե՞րբ, որտեղո՞վ, ինչպե՞ս** հարցերին:

Գործիական հոլովը կազմվում է՝ ուղղական կամ սեռական հոլովաձևին ավ... լացնելով **-ով** կամ **-ք** վերջավորությունները: **-Ը** վերջավորություն կարող են ստա... նալ **-ություն**, **-ում** ածանցներով վերջավորվող բառերը, նաև *արյուն* բառը: **Ը** բա... դաձայնից առաջ **ն** հնչյունը փոխվում է **մ**-ի (լավություն > լավությամբ, զգացում > զգացմամբ, արյուն > արյամբ):

Գործիական հոլովով գոյականները որոշիչ հոդ չեն ստանում: Գործիական հոլովով հիմնականում դրվում են բայական անդամի լրացումները, որոնք ցույց է... տալիս գործողության կատարման միջոցը, տեղը, ձևը, ժամանակը և այլն: Օրինակ՝

Գյուղացին ***բահով*** *փորում էր հողը:*
Աշակերտը գրում է ***գրիչով****:*

*Հունձք կժողվեմ **մանգաղով**,*
Լուսնյակը յարս է...

Դանիել Վարուժան

Բահով, գրիչով, մանգաղով բառերը ցույց են տալիս գործողության կատարման միջոցը, այսինքն՝ միջոցի անուղղակի խնդիրներ են:

*Մայր Արաքսի **ափերով** քայլամոլոր գնում եմ:*

Ռափայել Պատկանյան

***Սարերով** ու **դաշտերով** էր գնում ծիավորը:*

Ընդգծված բառերը ցույց են տալիս գործողության կատարման տեղը և տեղի պարագաներ են:

*Մեր սուրը **փառքով** դրեցինք պատյան:*

Ավետիք Իսահակյան

Պսակվելիս ո՞նց են պարել այս ձեռքերը,
*Ի՞նչ **նազանքով**,*
***Երազանքո՛վ**:*

Պարույր Սևակ

Բերված օրինակներում ընդգծված բառերն էլ արտահայտում են գործողության կատարման ձևը, այսինքն՝ ձևի պարագաներ են:

Գործիական հոլովով կարող է դրվել նաև հիմունքի պարագան, որը ցույց է տալիս, թե ինչ հիմունքով, ինչի հիման վրա է կատարվում գործողությունը, օրինակ՝

*Տնօրենի **կարգադրությամբ** նա մեկնեց գործուղման:*
*Իմ **կարծիքով** դա ճիշտ է:*

Գործիական հոլովով կարող է դրվել ժամանակի պարագան, օրինակ՝

*Հորս **կնունքով**, մորս **ծնունդով** վեր կացանք մի օր, հինգ թե վեց հոգով գնացինք որսի:*

Հովհաննես Թումանյան

*Էն, որ **գիշերով** շիու եմ փչում,*
Էն ո՞ւմ եմ կանչում...

Հովհաննես Թումանյան

Կնունքով, ծնունդով, գիշերով գոյականները ցույց են տալիս գործողության կատարման ժամանակը և կատարում են ժամանակի պարագայի պաշտոն:

Գործիական հոլովով կարող է դրվել նաև *գոյական որոշիչը*, ինչպես՝

*Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ՝ ճերմակ **շորերով**:*

Վահան Տեր-Յան

Լուսամփոփի պես աղջիկ՝
*Աստվածամոր **աչքերով**...*

Եղիշե Չարենց

*Խանութից գնեցինք **մսով** կարկանդակ, **ընկույզով** շոկոլադ:*

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ցույց տալիս գործիական հոլովը:
2. Ինչպե՞ս է կազմվում գործիական հոլովը:
3. Ի՞նչ հարցերի են պատասխանում գործիական հոլովով դրված գոյա-կանները:
4. Նախադասության ո՞ր անդամները կարող են դրվել գործիական հոլովով:

Վարժություն 52: Սյունակներով դո՛ւրս գրեք գոյականները՝ նշելով դրանց հոլովները:

Նրան անվանում էին Սեթ և, որովհետև հայրը վաղուց էր մեռել, կոչում էին մոր՝ Երանուհու անունով՝ Երանի տղա Սեթ և կամ՝ Երանի Սեթ:

Կա՞ծ էր հասակը, թե՞ բարձր, թա՞վ էր ձայնը, թե՞ բարակ, և գիտե՞ր նա սրինգ նվագել, սիրե՞լ էր նա մի աղջկա և հենց այդ չինարու տակ մեզ նման հանգստացե՞լ էր նա, երբ վերադառնում էր Արաքսի ափերի արտերից, այդ բոլորն ինձ չավանդեց իմ ընկեր Ավագը կամ գուցե և պատմեց, սակայն իմ հիշողության մեջ ժամանակը խունացրեց այդ պատմության պայծառ գույները:

...Արաքսը գարնանը ելնում է իր ափերից, վարար ջրերը տիղմ են փռում լայն տափարակի վրա, և առափնյա եղեգնուտները դառնում են կանաչ կղզիներ: Սերմնացանը ցանում է սերմը, երբ ետ են գնում ջրերը, և գետնին նստում է թաց տիղմը: Նա հանում է ոտքերը, մինչև ծնկները վեր քաշում և փայտյա կոտոշ պարանոցից կախ՝ գնում է օրոր և հաստատ քայլերով:

Ակսել Բակունց

Վարժություն 53: Նախորդ վարժության տեքստից դո՛ւրս գրեք գոյա-կանները և նշե՛ք դրանց հոլովումը, թիվը և առումը:

Վարժություն 54: Կազմե՛ք հետևյալ գոյականների գործիական հոլովը, գործածե՛ք դրանք նախադասությունների մեջ. *ճանապարհ, արյուն, բարեկամություն, քույր, եղբայր, օր, կամուրջ:*

Վարժություն 55: Տրված նախադասություններն ամբողջացրե՛ք՝ ավե-լացնելով գործիական հոլովով դրված այնպիսի գոյականներ, որոնք կհամապատասխանեն իմաստով:

1. Այգեգործը ... փորում էր հողը:
2. Երկու լեռնաշղթաների միջև եղած ... անցնող ասֆալտապատ ... սլանում էր մի մեքենա:
3. ... կարկանդակն ուտելուց հետո երեխան սկսեց խաղալ ...:
4. ... անցնող ճանապարհը հորդառատ անձրևների պատճառով անանցանելի էր դարձել, և շինարարները փորձում էին .... մաքրել այն քարերից:

5. Ուշ ... վերադառնալով գործուղումից՝ նա օդանավակայանից ... հասավ տուն և պառկեց քնելու, որովհետև վաղ առավոտյան տնօրենի ... պետք է մեկներ հարևան քաղաքը:
6. Փայլուն ... ծածկված տանիքը պատվել էր գիշերը տեղացած ..., և տանտերը առավոտյան ... մաքրում էր ձյունը:
7. ... փորելով հողը՝ հնէաբանները պեղումներ էին կատարում և որևէ առարկա գտնելիս ... մաքրում էին նրա վրայի հողը ու մեծ ... զննում գտածոն:
8. Երեխան ... կտրում էր գունավոր թղթերը, դրանք ... կպցնում իրար, այնուհետև ... դրանց վրա ծաղիկներ էր նկարում:
9. Ճերմակ ... ծածկելով սեղանը՝ տանտիրուհին սկսեց բերել ափսեները, բաժակները, ապակե տարբեր ... խմիչքները, ... կարկանդակները:
10. Տանտերերը հյուրերին դիմավորեցին մեծ ..., ներս հրավիրեցին նրանց, այնուհետև բոլորը ... բարձրացան երկրորդ հարկ, որպեսզի նոր գնած ... դիտեն մի հետաքրքիր ֆիլմ:

ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Բացել ես իմ դեմ ոսկեղեն հեռուն,
*Ծաղկել ես **սարում, անտառում, արտում**...*
*Ուրիշ երգեր են հնչում իմ **սրտում**,*
Ողջո՛ւյն քեզ, արև՛, ողջո՛ւյն քեզ, գարո՛ւն...

Վահան Տերյան

Սարում, անտառում, արտում, սրտում գոյականները ցույց են տալիս գործողության կատարման տեղը: Դրանք դրված են ներգոյական հոլովով:

Ներգոյական հոլովը ցույց է տալիս այն տեղը, որտեղ կատարվում է գործողությունը, այն ժամանակը, որի ընթացքում կատարվում է գործողությունը:

Ներգոյականով դրված գոյականները պատասխանում են **որտե՞ղ, ինչո՞ւմ, ե՞րբ** հարցերին: Այս հոլովը կազմելու համար ուղղականին ավելացնում են **-ում** վերջավորությունը: Այս հոլովով գոյականները նույնպես որոշիչ հոդ չեն ստանում: Ոչ բոլոր գոյականներն ունեն ներգոյական հոլով: Այսպես՝ անձնանիշ հատուկ ու հասարակ անունները, կենդանիների անունները, **-եղեն, -ություն** ածանցներով կազմված գոյականները զուրկ են ներգոյական հոլովից, և նրա իմաստն արտահայտելու համար սովորաբար գործածվում են **սեռական հոլով + մեջ** կառույցները, օրինակ՝ *Արմենի մեջ, ընկերության մեջ* և այլն:

Ներգոյական հոլովով բառերը երբեմն համանուն են դառնում **-ում** ածանցով կազմված բառերին, օրինակ՝ *տապակել **յուղում*** (ներգոյական հ.) և *կատարել շարժիչի **յուղում*** (**-ում** ածանցով բառ):

Ներգոյական հոլովով դրվում է *տեղի պարագան*: Օրինակ՝

Լինում է մի սար,
*Էն **սարում** մի ծառ,*

*Էն **ծառում** փոքրակ,*
***Փոքրակում** մի բուն,*
***Բունում** երեք ծագ...*

Հովհաննես Թումանյան

Ներգոյական հոլովով կարող են դրվել բայական անդամի՝ ժամանակ ցույց տվող լրացումները՝ ժամանակի պարագաները, օրինակ՝

*Նա **կյանքում** իր հայրենի քաղաքից չէր հեռացել:*

*Քառասուն **տարում** «ախ» չէր քաշել դեռ նա իրեն օրում:*

Հովհաննես Թումանյան

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ցույց տալիս ներգոյական հոլովը:
2. Ինչպե՞ս է կազմվում ներգոյական հոլովը:
3. Ի՞նչ հարցերի են պատասխանում ներգոյական հոլովով դրված գոյականները:
4. Ո՞ր բառերը հիմնականում ներգոյական հոլով չեն ունենում:
5. Նախադասության ո՞ր անդամները կարող են դրվել ներգոյական հոլովով:

Վարժություն 56: Հետևյալ բանաստեղծությունից դո՛ւրս գրեք գործական և ներգոյական հոլովներով դրված բառերը:

Ձեռներում Ձեր մանրիկ, նվագուն,
Ձեր ձայնում, երբ ասում եք «Տերյան»,
Ձեր բարակ ժպիտում նաիրյան
Մի թախիծ կա մեղմած ու թաքուն:
Շուրթերում Ձեր մաքուր ու բուրյան,
Ձեր պարում հեզանազ ու ճկուն,
Հաշտորեն խոնարհված Ձեր հոգում
Նաիրյանն է երգում, հնօրյան...
Երբ կիզում եք Ձեր միշտ հրախանդ
Նայվածի բոցերով մթամած,
Ուզում եմ օրորել Ձեզ կամաց,
Փայփայել երգերով հնավանդ,
Տխրությամբ հնազանդ ու մեղմած,
Նաիրյան նվագով իմ հիվանդ...

Վահան Տերյան

Վարժություն 57: Գրե՛ք 10 այնպիսի գոյական, որոնք չունեն ներգոյական հոլով:

Վարժություն 58: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն բառը, որը ներգոյական հոլովով չէ:

1. սենյակում, փողոցում, ձուլում, այգում
2. գրքում, հղկում, սրտում, մտքում
3. գյուղում, ձեռքում, բաժակում, նվաճում
4. դարակում, համեմատում, խճուղում, անտառում
5. շեղում, հողում, ձորում, ափսեում
6. գետում, հատում, արտում, բակում
7. էջում, կաթսայում, պեղում, նավակում
8. նկուղում, պարկում, արկղում, ուղղում
9. թափքում, ցանցում, մղում, ամանում
10. բնում, սղում, ծովում, ալբոմում

Վարժություն 59: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն բառը, որը կարող է համարվել և՛ ներգոյական հոլովով դրված, և՛ *-ում* ածանցով կազմված բառ, որոնք համանուններ են:

Օրինակ՝ *տեղում – տեղ* բառի ներգոյականը և տեղալը՝ *մթնոլորտային տեղում*:

1. դիմում, յուղում, սամում, հմայում
2. ճոճում, ճնշում, խճողում, սրսկում
3. հարձակում, քննարկում, ծավալում, հաղորդում
4. ձեռնարկում, հաճախում, միաձուլում, բաշխում
5. ձևափոխում, շաղախում, տեղափոխում, կանխում
6. հրատարակում, քողարկում, հրապարակում, թվարկում
7. սահմանում, բաժանում, ժամանում, հանձնում
8. որոնում, ճնշում, պատճենում, բնորոշում
9. ներշնչում, հանդիպում, ընդմիջում, ակոսում
10. հապավում, հոլովում, գնահատում, կատարում

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ցույց տալիս գոյականը:
2. Ինչո՞վ են տարբերվում հատուկ և հասարակ գոյականները:
3. Ո՞ր բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառ:

4. Ո՞ր բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառ:
5. Ի՞նչ է ցույց տալիս գոյականի թիվը, և քանի թիվ ունի գոյականը:
6. Որո՞նք են գոյականի հոգնակի թիվը կազմող վերջավորությունները:
7. Ի՞նչ առումներ ունի գոյականը, և ինչպես են դրանք արտահայտվում:
8. Ի՞նչ է հոլովումը, և որո՞նք են հայերենի հոլովները:
9. Ի՞նչ է ցույց տալիս ուղղական հոլովը:
10. Նախադասության ո՞ր անդամները կարող են դրվել ուղղական հոլովով:
11. Ի՞նչ է ցույց տալիս սեռական հոլովը և ինչպե՞ս է կազմվում:
12. Նախադասության ո՞ր անդամները կարող են դրվել սեռական հոլովով:
13. Ի՞նչ է ցույց տալիս տրական հոլովը և ինչպե՞ս է կազմվում:
14. Նախադասության ո՞ր անդամները կարող են դրվել տրական հոլովով:
15. Ի՞նչ է ցույց տալիս հայցական հոլովը և ի՞նչ ձևեր կարող է ունենալ:
16. Նախադասության ո՞ր անդամները կարող են դրվել հայցական հոլովով:
17. Ի՞նչ է ցույց տալիս բացառական հոլովը և ինչպե՞ս է կազմվում:
18. Նախադասության ո՞ր անդամները կարող են դրվել բացառական հոլովով:
19. Ի՞նչ է ցույց տալիս գործիական հոլովը և ինչպե՞ս է կազմվում:
20. Նախադասության ո՞ր անդամները կարող են դրվել գործիական հոլովով:
21. Ի՞նչ է ցույց տալիս ներգոյական հոլովը և ինչպե՞ս է կազմվում:
22. Նախադասության ո՞ր անդամները կարող են դրվել ներգոյական հոլովով:
23. Ո՞ր բառերը հիմնականում ներգոյական հոլով չեն ունենում:

Վարժություն 60: Փակագծերում առնված գոյականները դրե՛ք անհրաժեշտ հոլովով և առումով:

Աշուն էր՝ տերևաթափով, (արև) նվազ (ջերմություն), դառնաշունչ (քամի), որ (ծառեր) (ճյուղեր) պոկում էր դեղնած (տերևներ), (խմբեր) քշում, տանում հեռու (ձորեր): Նույնիսկ (քարափ) հաստաբուն (կաղնի) խոնարհվում էր (քամի) առաջ:

Ամայի (ձորեր), դեղնակարմիր (անտառ) և հնձած (արտեր) վրա իջել էր մի պայծառ տխրություն:

Ցինջ (օդ) (սառնություն) մեջ զգացվում էր առաջին (ձյուն) (շունչ):

(Այգի) երիտասարդ (կեռասենիներ) մրսում էին, (քամի) խշշում: (Սիմինդր) երկար (տերևներ) (թրեր) նման քսվում էին իրար, (պողպատ) ձայն հանում: Կարծես ձիավորներ էին արշավում իրար դեմ, և (սիմինդր) (տերև) որպես բեկված սուսեր ընկնում էր (քամի) առաջ:

(Արև) տակ ժպտում էր վերջին (արևածաղիկ) և օրորում դեղին (գլուխ):

Ակսել Բակունց

Վարժություն 61: **Եզակի և հոգնակի հոլովե՛ք** *քաղաք, բարդի, ժամ, թոռ, ընկեր, մարդ, շուն, մայր* **գոյականները:**

Հոլովման տախտակ

Արտաքին հոլովում

	Եզակի թիվ					
հոլովը	*ի*	*ու*	*վա*	*ան*	*ոջ*	*ց*
ուղղական	սար(ը)	այգի(ն)	օր(ը)	բեռ(ը)	քույր(ը)	–
սեռական	սարի	այգու	օրվա	բեռան	քրոջ	–
տրական	սարի(ն)	այգու(ն)	օրվա(ն)	բեռան(ը)	քրոջ(ը)	–
հայցական	սար(ը)	այգի(ն)	օր(ը)	բեռ(ը)	քրոջ(ը)	–
բացառական	սարից	այգուց	օր(վան)ից	բեռից	քրոջից	–
գործիական	սարով	այգով	օրով	բեռով	քրոջով	–
ներգոյական	սարում	այգում	օրում	բեռում	–	–

	Հոգնակի թիվ					
հոլովը	*ի*	*ու*	*վա*	*ան*	*ոջ*	*ց*
ուղղական	սարեր(ը)	այգիներ(ը)	օրեր(ը)	բեռներ(ը)	քույրեր(ը)	մարդիկ
սեռական	սարերի	այգիների	օրերի	բեռների	քույրերի	մարդկանց
տրական	սարերի(ն)	այգիների(ն)	օրերի(ն)	բեռների(ն)	քույրերի(ն)	մարդկանց
հայցական	սարեր(ը)	այգիներ(ը)	օրեր(ը)	բեռներ(ը)	քույրերի(ն)	մարդկանց
բացառական	սարերից	այգիներից	օրերից	բեռներից	քույրերից	մարդկանցից
գործիական	սարերով	այգիներով	օրերով	բեռներով	քույրերով	մարդկանցով
ներգոյական	սարերում	այգիներում	օրերում	բեռներում	–	–

Ներքին հոլովում

	Եզակի թիվ		Հոգնակի թիվ	
հոլովը	*ա*	*ո*	*ա*	*ո*
ուղղական	անկյուն(ը)	հայր(ը)	անկյուններ(ը)	հայրեր(ը)
սեռական	անկյան	հոր	անկյունների	հայրերի
տրական	անկյան(ը)	հոր(ը)	անկյունների(ն)	հայրերի(ն)
հայցական	անկյուն(ը)	հոր(ը)	անկյուններ(ը)	հայրերի(ն)
բացառական	անկյունից	հորից	անկյուններից	հայրերից
գործիական	անկյունով	հորով	անկյուններով	հայրերով
ներգոյական	անկյունում	–	անկյուններում	–



Հայնրիխ Հյուբշման (1848–1908)

Գերմանացի նշանավոր հայագետ և իրանագետ: Ծնվել է Էրֆուրտում, ուսումնառությունը ձեռք է բերել տարբեր համալսարաններում: 1872թ. նրան շնորհվել է դոկտորի գիտական աստիճան: Ստրասբուրգի համալսարանում կարդացել է դասախոսություններ հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության վերաբերյալ: 1875թ. լույս տեսավ նրա «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանում» հոդվածը, որը միանգամից հանրահայտ դարձրեց հեղինակին: Մինչ այդ իշխում էր այն տեսակետը, որ հայերենը իրանական լեզու է: Խորությամբ ու համակողմանիորեն ուսումնասիրելով հայ-իրանական լեզվական ընդհանրությունները և տարբերակելով բնիկ հայկականն ու իրանական փոխառությունները՝ Հյուբշմանը եզրակացրեց, որ հայոց լեզուն, պատկանելով հնդեվրոպական լեզվաընտանիքին, նրա մեջ ներկայանում է իբրև ինքնուրույն, անկախ ճյուղ և միջին դիրք է գրավում սլավոնականի ու իրանականի նկատմամբ: Այս ուշագրավ տեսությունն իր ընդլայնված փաստական հաստատումը գտավ նրա հետագա ուսումնասիրություններում, մասնավորապես «Հայկական ուսումնասիրություններ» շարքում (1883) և «Հայերենի քերականության» մեջ (1885–87): Հնչյունական համապատասխանությունների մի շարք օրենքներ ձևակերպելուն զուգահեռ՝ Հյուբշմանը նաև ճիշտ ստուգաբանեց բազմաթիվ բառեր: Հայերենի համար կազմեց գիտական տառադարձության այբուբեն, որը այժմ էլ գործածվում է: Հյուբշմանի առաջ քաշած գաղափարներն ու սկզբունքները հեղաշրջող նշանակություն ունեցան հայերենագիտության մեջ:

ԲԱՅ

***Դոփում են, դոփում են, դոփում են** ձիերը,*
*Մթի մեջ **դոփում են, խփում են** պայտերը...*
Եղիշե Չարենց

Բերված օրինակում *դոփում են, խփում են* բառերը բայեր են և ցույց են տալիս գործողություն:

***Հոգնած** նայում եմ ճամփաներին.*
Սերմնացանները չդարձան տուն...
Գեղամ Մարյան

Այս օրինակում *հոգնած* բառը դարձյալ բայ է և ցույց է տալիս վիճակ, դրություն:

Այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկայի գործողություն կամ վիճակ, կոչվում են բայ:

Բայը հայերենի ամենակարևոր խոսքի մասն է: Այն առանձին կարող է խոսք դառնալ, քանի որ խոնարհված բայը իր մեջ ընդհանուր ձևով ունի ենթակայի գաղափարը. օրինակ՝ *Քայլում եմ ու հիանում ճարտարապետական կոթողներով:*

Ակնհայտ է, որ ենթական խոսողն է (ես):

Դիմավոր և անդեմ բայեր

Կան բայեր, որոնք գործողությունն այնպես են արտահայտում, որ հնարավոր է որոշել, թե ով է կատարում գործողությունը, քանի հոգով են կատարում և երբ են կատարում: Նման բայերը կոչվում են դիմավոր, ինչպես օրինակ՝ *գրեցի, նայում էինք, հեռացի՛ր, պիտի գոչեմ* և այլն: Սրանք կոչվում են **դիմավոր բայեր:**

Բայերի մի այլ խումբ ցույց է տալիս վիճակ, դրություն: Այս բայերը չունեն դեմք, և հնարավոր չէ որոշել դրանց արտահայտած գործողությունը կատարողին և այլ հանգամանքներ, ինչպես օրինակ՝ *վազել, նստած, հոսող, խոսելիս:*

Նման բայերը կոչվում են **անդեմ բայեր** կամ **դերբայներ:**

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ցույց տալիս բայը:
2. Ինչո՞վ են տարբերվում բայի դիմավոր և անդեմ ձևերը:
3. Ի՞նչ են կոչվում բայի անդեմ ձևերը:

Վարժություն 62: Գտե՛ք գործողություն ցույց տվող բայերը և ընդգծե՛ք մեկ, իսկ վիճակ ցույց տվող բայերը՝ երկու գծով:

ա) Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,
Երկնքի մթնած ամպերից իջներ,
Ինչպես փոթորիկ սաստիկ սրընթաց,
Գյուղից սլացան մի խումբ կտրիճներ:
Ցավից տաքացած՝ էլ բան չեն հարցնում,

Թռչում են՝ ասես ահից հալածված,
Ու նրանց առջև ահռելի բացվում,
Թշշում է ձորը՝ արյունով լցված:
Գյուղը դատարկվեց մի ակնթարթում,
Քարափի գլխին կանգնած անհամբեր՝
Լուռ, սրտատրոփ ականջ են դնում,
Նայում են ներքև... ձեն չի գալիս դեռ.
Դեբեդն է մենակ անդնդում հուզված
Խլաձայն ողբով սողում դեպի ցած:

Հովհաննես Թումանյան

բ) Տիեզերքի գիրքն է բացում ամեն ծաղիկ բացվելիս,
Ամեն կյանքի գիրքն է գոցում ամեն ծաղիկ գոցվելիս,
Իմաստունը մի ծաղկով էլ տիեզերքն է կշռում,
Մի մրջյունն էլ մի մոր սիրտ է ձագի մահով խոցվելիս:

գ) Կարծես շատ քիչ է աշխարհի հողը,
Որ մարդիկ մեռնում և հող են դառնում,
Բայց տեսնես գիտե՞ բարի մեռնողը,
Թե ո՞ւմ հողին է իր հողը խառնում:
Բարին ու չարը կռվելով մեռնում,
Սև հող են դառնում, խառնվում իրար,
Հողը չի հողի կոկորդից բռնում,
Իրար գրկում են՝ հավիտյան խոնարհ,
Սուզված նավի պես հանգիստ են առնում...

Հովհաննես Շիրազ

Վարժություն 63: Գտե՛ք դիմավոր և անդեմ բայերը՝ դերբայները, և գրե՛ք առանձին սյունակներում:

Խոր ձորի պռնկին եմ: Ձորը ողողվել է աշնանային բոցերով. ձեռքդ դեմ անես՝ կխանձի:

Այլևս անհնարին է ձիու թամբին շարունակել ճանապարհը:

Մի շաբաթ է՝ մեն-մենակ շրջագայում եմ լեռներում: Այդ օրը գլուխս հանդուգն միտք խուժեց՝ մտնել այս խորունկ ձորը, անցնել գետն ու բարձրանալ մյուս կողմի բարձունքին գտնվող գյուղը:

...Ահա և ձորի այն գյուղը, որի տների կտուրները քիչ առաջ հազիվ էին երևում բարձունքից: Երեսիս է զարնվում մեծ կալի ցորենաբույր տաքությունը: Ձիս խրխնջում է հոգնած, դառնացած: Մոտիկ կտուրին մի շուն կանգնում, ձգվում է ու ալարելով չի հաչում:

Կալը ժայռի պռնկին է: Ժայռի եզրերով քարեր են դրել, որ կալվորները չգլորվեն անդունդ: Այդ ցից քարերի արանքով ոսկե առվակի պես դարման է հոսում ցած և դեռ անդունդի եզրին չհասած՝ մարում օդի մեջ:

Սերո Խանզադյան

Վարժություն 64: Գտե՛ք դիմավոր բայերը և դո՛ւրս գրեք իրենց ենթակաների հետ: Եթե ենթական զեղչված է, վերականգնե՛ք այն:

Միշտ էլ հետաքրքրվել եմ բնության բոլոր արարածներով, և դրանցից որն էլ պատահել է, ուսումնասիրել եմ: Մի օր՝ տարիներ առաջ՝ ճահճային թռչունների որսի ժամանակ, մի կրիա գտա և բերեցի տուն: Տանը՝ պատշգամբի մի անկյունում, նրա համար ստեղծեցի մի հարմար անկյուն՝ բերելով խոտեր ու ճյուղեր: Ինքնամփոփ ու զգույշ են կրիաները, բայց երբ համոզվում են, որ իրենց որևիցե վտանգ չի սպառնում, պատյանից դուրս են հանում գլուխն ու ոտքերը և քայլում՝ դանդաղ ու անճոռնի շարժումներ անելով: Փոքր-ինչ ընտելանալուց հետո նույնիսկ կեր են վերցնում ձեռքիցդ: Ընդհանրապես սակավապետ ու քչակեր կենդանիներ են դրանք. շաբաթներով կարողանում են ոչինչ չուտել, բայց շատ հեշտ են դիմանում, որովհետև շարժումներ քիչ են անում, և էներգիա քիչ է ծախսվում: Ժողովրդական մի հինավուրց ավանդություն կրիայի դանդաղաշարժությունը բացատրում է նրանով, որ, ուր էլ լինի, կրիան իր տան մեջ է, ուստի չի շտապում:

Իմ բերած կրիան էլ արագ հարմարվեց պատշգամբում ապրելուն. միայն ջրի պակասությունից էր մի քիչ նեղվում: Մեծ ամանով ջուր էի դնում, բայց դե ամանով ջուրը զովասուն լճին ու ճահճին չէր փոխարինի: Մի օր էլ, երբ համոզվեցի, որ կրիան երկար չի դիմանա առանց իր սիրած ջրի ու սննդի, որոշեցի ազատություն պարգևել նրան: Այդ օրը անձրև էր տեղում, բայց ես, ուշադրություն չդարձնելով դրան, կենդանուն փաթաթեցի մի կտորի մեջ, դրեցի թևիս տակ և գնացի Հրազդան գետի ափը: «Հաղթանակ» կամրջին հասնելով՝ իջա, կրիային դրեցի կամրջի տակ և բարձրացա վեր:

Ըստ Վախթանգ Ամանյանի

ԴԵՐԲԱՅՆԵՐ

Դերբայները ցույց են տալիս տարբեր վիճակներ՝ առանց նշելու դրանց կոնկրետ հանգամանքները:

Դերբայները լինում են չորս տեսակի՝ **անորոշ, համակատար, ենթակայական** և **հարակատար:**

Անորոշ դերբայ

Անորոշ դերբայը գործողության անունն է. այն ընդհանրապես անվանում է գործողությունը՝ *գրել, վազել, խաղալ:*

Անորոշ դերբայն ունի **-ել** և **-ալ** վերջավորությունները: Ըստ այդ վերջավորությունների որոշվում են բայի խոնարհման տիպերը:

-Ել վերջավորություն ունեցող բայերը կոչվում են **ե** խոնարհման բայեր՝ *գրել, սիրել, վազել, երգել:*

-Ալ վերջավորություն ունեցող բայերը կոչվում են **ա** խոնարհման բայեր՝ *նարդալ, խաղալ, հեռանալ, հագենալ:*

Ա և **Ե** խոնարհումները կոչվում են նաև **լծորդություններ**:

Անորոշ դերբայը բայի ուղիղ ձևն է: Բառարաններում բոլոր բայերը տրվում են անորոշ դերբայով:

Անորոշ դերբայով որոշվում է բայի կազմությունը: Եթե **-ել** և **-ալ** վերջավորություններից առաջ կան բայական հատուկ ածանցներ, ապա այդ բայն ածանցավոր է, իսկ եթե չկան, պարզ է: Օրինակ, *թռ-չ-ել, ընկ-**ն**-ել, քար-**ան**-ալ, մոտ-**են**-ալ, հագ-**ցն**-ել, կոտր-**ատ**-ել* բայերը ածանցավոր են, քանի որ վերջավորությունից առաջ ունեն բայական ածանցներ:

Բայական ածանցներն են՝ **սոսկածանցներ** (ան, են, ն, չ), **պատճառական** (ացն, եցն, ցն), **բազմապատկական** (ատ, ոտ, կոտ, տ), **կրավորական** (վ):

Անորոշ դերբայը կարող է ստանալ որոշիչ հոդ և հոլովվել՝ ենթարկվելով **ոլ** հոլովման: Անորոշի ներգոյական հոլովաձևը հազվադեպ է գործածվում, օրինակ՝ *Ես շատ ծույլ եմ նամակներ **գրելում*** (Նար-Դոս):

Ուղղական	վազել(ը), խաղալ(ը)
Սեռական	վազելու, խաղալու
Տրական	վազելու(ն), խաղալու(ն)
Հայցական	վազել(ը), խաղալ(ը)
Բացառական	վազելուց, խաղալուց
Գործիական	վազելով, խաղալով
Ներգոյական	վազելում, խաղալում (հազվադեպ)

Նախադասության մեջ անորոշ դերբայը կարող է ստանալ բոլոր այն պաշտոնները, որոնք կատարում է գոյականը՝ ենթակա, ստորոգյալ կազմող բառ՝ ստորոգելի, և տարբեր լրացումներ: Օրինակներ.

***Աշխատելը** յուրաքանչյուրիս պարտականությունն է* (ենթակա):
*Թղթի վրա խզբզելը դեռևս **նկարել** չէ* (ստորոգելի):
***Շտապելուց** նա գիրքը տանը մոռացավ* (պատճառի պարագա):
*Նա **հևալով** մտավ դասարան* (ձևի պարագա):

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որո՞նք են ժամանակակից հայերենի դերբայները:
2. Ի՞նչ է ցույց տալիս անորոշ դերբայը:
3. Որո՞նք են անորոշ դերբայի վերջավորությունները:
4. Ինչպե՞ս է որոշվում բայի խոնարհումը (լծորդությունը):
5. Որո՞նք են բայածանցները:
6. Ինչպե՞ս է որոշվում բայի կազմությունը:
7. Նախադասության մեջ ո՞ր պաշտոններով կարող է գործածվել անորոշ դերբայը:

Վարժություն 65: Գտե՛ք անորոշ դերբայները, որոշե՛ք լծորդությունները:

ա) Հեռանալ, մոռանալ ամեն ինչ,
Ամենին մոռանալ:
Չսիրել, չխորհել, չափսոսալ,
Հեռանալ:

Վահան Տերյան

բ) Ապրե՛լ, ապրե՛լ, այնպե՛ս ապրել,
Որ սուրբ հողդ երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը:
Ապրե՛լ, ապրե՛լ, այնպե՛ս ապրել,
Որ դու ինքդ էլ երբեք չզգաս քո սեփական մանրությունը:

Ապրե՛լ, ապրե՛լ, ապրե՛լ մեկտե՛ղ,
Կյանքդ խառնել նրանց կյանքին,
Տառապանքդ՝ տառապանքին,
Ջանքդ՝ ջանքին,
Ցանքդ՝ ցանքին,
Եվ ենթարկվել նրանց կամքին,
Նրանց կյանքն էլ քեզ ենթարկել,
Դառնալ և՛ շանթ, և՛ շանթարգել...

Պարույր Սևակ

Վարժություն 66: Դո՛ւրս գրեք դիմավոր և անդեմ բայերը և կազմե՛ք դրանց անորոշ դերբայները:

ա) Կանչում է կրկին, կանչում անդադար
Էն չքնաղ երկրի կարոտը անքուն,
Ու թևերն ահա փռած տիրաբար՝
Թռչում է հոգիս, թռչում դեպի տուն:
Ուր որ հայրենի օջախի առաջ
Վաղո՛ւց կարոտով սպասում են ինձ
Ու ձմռան երկար գիշերը նստած՝
Խոսում են Լոռու հին-հին քաջերից:

Հովհաննես Թումանյան

բ) Տիգրան աղան ժպտաց կոտրված ժպիտով, ապա կանաչ մետաքսե թաշկինակով սրբեց աչքերն ու այտերը և մտավ խանութ: Նա բացեց փողոցի դուռը. ներս մտավ մի զինվորական: Տիգրան աղան ընդունեց նրան ուրախ ժպիտով, ապրանք տվեց, վերցրեց փողը, նետեց դրամարկղը, իսկ երբ զինվորականը հեռացավ, նա նորից մռայլվեց. ինձ թվաց, որ նորից նա լաց կլինի, բայց այդ միջոցին ներս մտան նոր հաճախորդներ, և նա նորից ժպտաց ուրախ և հյուրընկալ ժպիտով: Այդ ամենը ես դիտեցի սենյակի կիսաբաց դռնից:

Գուրգեն Մահարի

Վարժություն 67: Կազմե՛ք նախադասություններ՝ տրված անորոշ դերբայները գործածելով նշված հոլովներով:

Պատմել (ուղղական), հիանալ (սեռական), ստանալ (տրական), մտածել (հայցական), պարել (բացառական), կրկնել (գործիական):

Վարժություն 68: Գտե՛ք անորոշ դերբայները և որոշե՛ք դրանց պաշտոնը նախադասության մեջ:

ա) Առատ, անհատ՝ Աստծու նման՝ միշտ տեղալուց հոգնել եմ ես,
Հոգիս ծարավ՝ սրան-նրան մտիկ տալուց հոգնել եմ ես.
Մինը պիտի գար իմ դեմը՝ ճոխ ու շռայլ անհաշիվ,
Ամեն ճամփում սպասելուց ու փնտրելուց հոգնել եմ ես:

Հովհաննես Թումանյան

բ) 1. Միջատները թռչելով ու վազելով բարձրանում էին պատն ի վեր: 2. Ընդդիմանալը կնշանակեր, որ արքունիքը համաձայն չէ առաջադրվող պայմաններին: 3. Դերասանի բոլոր արարքները՝ հախուռն և անկանխատեսելի, բխում էին արվեստը սիրելուց: 4. Ամբողջ օրն աշխատելուց նա չափազանց հոգնել էր: 5. Ծաղիկները խնամելը նրա սիրած զբաղմունքն էր: 6. Մետաղը կրակին շատ մոտ գտնվելուց տաքացել էր: 7. Ոչ ոք չէր հավատում նրա վերադառնալուն: 8. Երեխան սուլելով քայլում էր այգում: 9. Գյուղացիները տեսան ծառի տապալվելը: 10. Կարդալը զարգացնում է մարդուն:

Վարժություն 69: Գտե՛ք դիմավոր և անդեմ բայերը, կազմե՛ք դրանց անորոշ դերբայը և որոշե՛ք լծորդությունը:

Մի անգամ ետ նայեց Ավին անցած ճամփին. ո՛չ Պանինը երևաց, ո՛չ էլ շները: Ավին պարզ տեսնում էր ծառի բները, անցած ճամփան, ընկած հաստաբուն գերանները:

Իջավ ձորը, լսեց, թե ինչպես սառույցի տակ խոխոջում է ջուրը: Ձրի ձայնը նրան հիշեցրեց եռման կաթսան, տունը, վառած օջախը: Տանը երևի սպասում են: Թվաց, թե ձյունի ծանրոցից մի ճյուղ ջարդվեց: Վեր բարձրանալիս Ավին զգաց, որ մեկը հետևում է իրեն: Ետ նայեց, մի մարդաբոյ արջ էր կանգել մի քիչ հեռու՝ ճյուղն ուսին՝ չոբանի մահակի պես:

Ակսել Բակունց

Եվ հիմա այնտեղ՝ խորունկ մի ձորում,
Գարունն է վառում քնքշանքն իր վայրի,
Ձնծաղկի աչքից կապույտ է ծորում,
Կապույտով լցնում անդունդն ամայի:

Աղբյուրը ժայռից ներքև է կախում
Իր հեկեկանքն ու լույսը իր թախծի,

Եվ պատառոտված ժայռի երախում
Շվար դողում է մենավոր մի ծիլ:

Անդունդներն ի վար թավալվում են դեռ
Զարթնող որոտներ ու մեռնող ձյուներ,
Ու լեռներն ի վեր գալարվում են դեռ
Անձև կարոտներ ու թախծություններ:

Գարնան պաղ քամին մոլորվում ձորում,
Քարայր է մտնում, որ տխուր վայի,
Ձնծաղկի աչքից թախիծ է ծորում,
Թախիծո՛վ լցնում անդունդն ամայի:

Վահագն Դավթյան

Վարժություն 70: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն բառը, որն անորոշ դերբայ չէ:

1. մեծանալ, զլանալ, լիանալ, ֆեոդալ
2. հարստանալ, բարձրանալ, զրնգալ, արևագալ
3. կարդալ, գդալ, գթալ, դղրդալ
4. ափսոսալ, հախճասալ, փսփսալ, որսալ
5. միջանկյալ, շողշողալ, զարգանալ, հորդանալ
6. շրխկալ, տոկալ, հյուրընկալ, մկկալ
7. զուլալ, ծխալ, ցոլալ, ծլվլալ
8. նախազգալ, սողալ, տառասխալ, սնանկանալ
9. կորանալ, բազմածալ, ցնծալ, անէանալ
10. հավատալ, ճրագակալ, փռթկալ, շորորալ
11. երերալ, հուրհրալ, դյուրահալ, ըղձալ
12. խայտալ, վխտալ, նվնվալ, ձնհալ
13. հիանալ, տրտնջալ, ստորոգյալ, մրմնջալ
14. թրթռալ, զառամյալ, քչփչալ, հագենալ
15. թվալ, անշքանալ, մոխրաթավալ, խելոքանալ

Համակատար դերբայ

*Երեխան **վազելիս** ընկավ:*
***Կարդալիս** նա ոգևորվում է:*

Այս օրինակներում ենթակայի կատարած գործողությունը *(ընկավ, ոգևորվում է)* ունի զուգահեռ մի այլ գործողություն՝ *վազելիս, կարդալիս*:

Հիմնական գործողությանը զուգահեռաբար կատարվող գործողություն ցույց տվող դերբայը կոչվում է համակատար:

Համակատար դերբայը կազմվում է՝ անորոշ դերբային ավելացնելով **-իս** վերջավորությունը՝ *գրելիս, նայելիս, աղալիս, հեռանալիս, մեռնելիս:*

Համակատար դերբայը չի միանում օժանդակ բային և նրա հետ ստորոգյալ չի կազմում:

*Լեռներ **տեսնելիս** նա միշտ հուզմունք էր ապրում:*

Այս օրինակում համակատար դերբայով արտահայտված *տեսնելիս* բառը ցույց է տալիս գործողության կատարման ժամանակը, ուստի ժամանակի պարագա է: Սա նրա հիմնական կիրառությունն է:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ցույց տալիս համակատար դերբայը:
2. Ինչպե՞ս է կազմվում համակատար դերբայը:
3. Կարո՞ղ է արդյոք համակատար դերբայով և օժանդակ բայով կապակցություն կազմվել:
4. Շարահյուսական ի՞նչ պաշտոնով է հիմնականում գործածվում համակատար դերբայը:

Վարժություն 71: Դո՛ւրս գրեք համակատար դերբայները, կազմե՛ք դրանց անորոշը և որոշե՛ք լծորդությունը:

Իմ աչքերի մեջ այնքա՜ն կրակներ եմ մարել ես
Եվ հոգուս մեջ հուսահատ այնքա՜ն աստղեր եմ մարել:
Կյանքս, որ հուշ է դարձել, հեռանալիս չանիծես.
Կյանքս կանցնի, կմարի, բայց երգս կա, կապրի դեռ:

Մանկությունս հիշելիս սիրտս դառնում է գինով,
Ես մի ընկեր ունեի Լիպո անունով...

Երգով խնդամ թող բոլորին,
Որ մեռնելիս զգամ, որ իմ
Օրերն անցան ու չկորան:

Եղիշե Չարենց

Ո՞վ ցած կբերի նրան թռչելիս,
Թե չլինեն կինն ու գինին:

Տարիներ անցան, և աչքը ճամփին
Մնաց նայելիս նորահարս Մեհրին:

Հովհաննես Թումանյան

Հայաստա՜ն, անունդ տալիս
Ժայռի մեջ մի տուն եմ հիշում...

Հայաստան ասելիս այտերս այրվում են...

Համո Սահյան

Թռիչքի մեջ են փորձվում թևերը,
Մարմնի ձևերը՝
լոկ մերկանալիս,
Անգին նվերը՝
լոկ ստանալիս,
Լոկ ճուտ հանելիս՝
Թռչունի առողջ կամ լակ ձվերը,
Թռչուններն իրենք՝
Երբ սկսվում է նրանց չվելը:

Պարույր Սևակ

Վարժություն 72: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն բառը, որը համակատար դերբայ չէ:

1. նվազելիս, երազելիս, օազիս, կարդալիս
2. շահելիս, հուլիս, արտասանելիս, երգելիս
3. սովորելիս, ասելիս, ասուլիս, կախարդելիս
4. ամսեամիս, հեղեղելիս, խաղալիս, աշխատելիս
5. տպագրելիս, մրցելիս, նշանակելիս, պտղամիս
6. ըմպելիս, ընթրելիս, էտելիս, էլեկտրամագնիս
7. կառուցելիս, քարաբաղնիս, մշակելիս, բժշկելիս
8. գրելիս, հունիս, հիշելիս, նայելիս
9. ողջունելիս, հյուսիս, ճախրելիս, չվելիս
10. կատարելիս, կազմելիս, կզաքիս, մաքրելիս
11. ջրելիս, հնձելիս, նվիրելիս, ավետիս

Հարակատար դերբայ

Համեմատենք հետևյալ երկու նախադասությունները.

*Հայկը շատ է **կարդացել**: Նա հիմա **կարդացած** տղա է:*

Ակնհայտ է, որ *կարդացած* բառը ցույց է տալիս մի վիճակ, որ կատարված գործողության հետևանքն է: Նույնը տեսնում ենք նաև հետևյալ օրինակում.

*Որպես **լքված** թավջութակի **ձգված** մի լար*
Դողում է սիրտս կարոտով մի ահարկու...

Եղիշե Չարենց

Կարդացած, լքված և *ձգված* բառերը հարակատար դերբայներ են:

Հարակատար դերբայը կազմվում է **-ած** վերջավորությամբ, օրինակ՝ *գրած, կապած, ասած, ներկած, կարդացած, խաղացած, զգացած* և այլն:

Ինչպես տեսնում ենք, **ա** խոնարհման բայերը ունեն **-ացած** վերջավորությունը, որտեղ **աց-**ը հիմքի ածանցն է:

Ն և **չ** սոսկածանցները հարակատար դերբայում ընկնում են, իսկ **ան, են** սոսկածանցների փոխարեն դրվում են **աց, եց**, ինչպես՝ *գտնել – գտած, մտնել – մտած, փախչել – փախած, դիպչել – դիպած, հեռանալ – հեռացած, ծուլանալ – ծուլացած,*

հագենալ – հագեցած, վախենալ – վախեցած, կամենալ – կամեցած և այլն: Իսկ պատճառական **ացն, եցն, ցն** ածանցների փոխարեն դրվում են **ացր, եցր, ցր**, ինչպես՝ *բարձրացնել – բարձրացրած, հեռացնել – հեռացրած, փոքրացնել – փոքրացրած, հագեցնել – հագեցրած, հանգցնել – հանգցրած, հասցնել – հասցրած* և այլն:

Հարակատար դերբայը հանդես է գալիս տարբեր պաշտոններով: Ամենից շատ այն հանդիպում է որոշչի պաշտոնով և պատասխանում է **ինչպիսի՞, ո՞ր** հարցերին՝ *կանգնած մարդ, տպված գիրք, հոգնած ձի*:

Այս դերբայը կարող է գոյականների նման հոլովվել և որոշիչ հոդ ստանալ: Հոլովվում է **ի** հոլովմամբ.

Ուղղական	հոգնած(ը)	բերած(ը)
Սեռական	հոգնածի	բերածի
Տրական	հոգնածի(ն)	բերածի(ն)
Հայցական	հոգնածի(ն)	բերած(ը)
Բացառական	հոգնածից	բերածից
Գործիական	հոգնածով	բերածով
Ներգոյական	–	բերածում

Այս դեպքում հարակատար դերբայը կարող է ունենալ գոյականի բոլոր պաշտոնները. օրինակ՝

Գնացածները *վերադարձան* (ենթակա):

Նա կարդաց ***գրվածը*** (ուղիղ խնդիր):

Հարակատար դերբայն արտահայտում է վիճակ, դրություն՝ իբրև ավարտված գործողության հետևանք: Օրինակ՝ *Նա շատ է* ***մարզվել*** *և դարձել է* ***մարզված*** *և ուժեղ բռնցքամարտիկ:*

Այլ դեպքերում հարակատար դերբայն արտահայտում է կատարված-ավարտված գործողության իմաստ: Օր.՝ *Այդ մասին* ***գրված է*** *բոլոր գրքերում:* Նման դեպքերում հարակատար դերբայը, միանալով օժանդակ բային, դառնում է ստորոգյալ կազմող բառ՝ ստորոգելի:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ցույց տալիս հարակատար դերբայը:
2. Ո՞ր վերջավորությամբ է կազմվում հարակատար դերբայը:
3. Հիմնականում ի՞նչ անդամի պաշտոնով է գործածվում հարակատար դերբայը:

Վարժություն 73: Գտե՛ք հարակատար դերբայները, դո՛ւրս գրեք և նշե՛ք, թե որ խոնարհման (լծորդության) են դրանք՝ *ե՞*, **թե՞** *ա*:

Երկնքից առկախ մի լեռնակղզի՝
Հայաստան աշխարհ:
Երկնքից առկախ այդ լեռնակղզու ուղիղ կենտրոնում՝
երկու զանգ՝ հսկա և անձեռագործ:

Եվ այնքա՜ն հսկա, այնքա՜ն վիթխարի,
որ չէին կարող որևէ կեռից ոչ մի կերպ կախվել,
ուստի պարզապես կործված են հողին:
Անունն՝ Արարատ
կամ
Սիս ու Մասիս:

Նրանց ռումբաձև զույգ լեզվակները խրված են հողում
և խարսխի պես հասնում են մինչև հրահեղուկի մթին հատակը:

Այս լեռնակղզում լեռքարե՞րն են շատ,
թե՞ կերպաձևված շիրմաքարերը:
Եվ ծառե՞րն են շատ այս լեռնակղզում,
թե՞ վեր ծառացած սուրբ խաչքարերը:

Պարույր Սևակ

Սառած ծերպերով գնում էինք մենք՝
Ե՛վ զենք, և՛ զրահ ուսերիս առած:

Վագրերի նման ճկուն էինք մենք՝
Հայացքներս լուրթ գագաթին հառած:

Իսկ ձյունն անընդհատ լարում էր դավեր,
Ոտքերիս կպած՝ մեզ վա՛ր էր կանչում:

Եվ ծանրաբեռնված քարավաններով՝
Դառնում էր մեկը ճամփաներից ետ:

Եղիշե Չարենց

Վարժություն 74: Կազմե՛ք տրված բայերի հարակատար դերբայները և դրանցից առաջին հինգով կազմե՛ք նախադասություններ:

Վարժվել, ոգևորվել, աշխատել, սխալվել, տպել, ազատել, նստել, գնալ, ունենալ, կարդալ, տառապել, լռել, զարգանալ, զայրանալ, խաչվել, երգել, հասնել, թողնել, տեսնել, սփրթնել:

Վարժություն 75: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն բառը, որը հարակատար դերբայ չէ:

1. վստահած, շնորհած, հողմահալած, վերաբաշխած
2. ամոթխած, հաղթանակած, խնամած, կարոտած

3. կարդացած, վաստակած, հասարակած, մոռացած
4. քառապատկած, խաշնարած, քերած, ոսկեզօծած
5. ներկած, ծածկած, վարկած, հյուսած
6. տախտակամած, կարկամած, վերակազմած, տեղավորած
7. անձրևած, ամպամած, խնամած, հուզված
8. հեռացած, սոխառած, ծանրաբեռնած, որոնած
9. հողազանգված, արշաված, ներգրաված, իմացած
10. արտագրված, մեկնաբանված, բառահոդված, ներկայացված
11. տեսակավորած, լայնատարած, բնակված, հեռացած
12. ստեղծված, առեղծված, հռչակված, սուզված
13. ժամանած, ժամանակահատված, միաբանված, ոգևորված
14. տպագրված, նորոգված, խանդավառված, բազմաստված
15. նկարազարդված, փորված, հակահարված, վերահաշված

Վարժություն 76: Արտագրե՛ք նախադասությունները, գտե՛ք դրանցում գործածված հարակատար դերբայները և որոշե՛ք դրանց շարահյուսական պաշտոնները:

1. Հուզված հանդիսատեսները երկար ծափահարում էին:
2. Իրենց հրամանատարի քաջությունից ոգևորված զորքը համախմբվեց և հակահարված տվեց թշնամուն:
3. Մցույթում հաղթածները ստացան իրենց պարգևները:
4. Երեխան հպարտանում էր իր նկարածով և այն ոգևորված ցույց էր տալիս բոլորին:
5. Մի ամպամած օր, երբ կուտակված թուխպերից արդեն պոկվում էին անձրևի առաջին կաթիլները, ընկերս հուզված եկավ մեր տուն:
6. Դասը չսովորած աշակերտը քարտեզի վրա չէր կարողանում ցույց տալ հասարակածը, և առաջին նստարանին նստածները փորձում էին հուշել նրան, սակայն զայրացած ուսուցիչը սաստեց նրանց:
7. Գյուղացին խնձորի մի նոր ծառ էր աճեցրել. իր աճեցրածից մի քանի խնձոր պոկեց և հյուրասիրեց քաղաքից եկածներին, որոնց շատ դուր եկան հասած խնձորները:
8. Խմբից հետ մնացածները փորձեցին կամրջով անցնող կարճ ճանապարհով հասնել իրենց խմբին, սակայն հանդիպակաց ափից նրանց տեսածները ձայն տվեցին, որ կամուրջը խարխլված է, և անցնելը վտանգավոր է:
9. Նա տեսավ կատարվածը, հասկացավ, թե ով է իր իսկական ընկերը, և մնացածների խոսքերին այլևս չէր հավատում:
10. Կատարվածի հետևանքը դժվար էր վերացնել. անհրաժեշտ էին փորձառու մասնագետներ, որոնք միայն կկարողանային վերակառուցել քանդվածը:

ենթակայական դերբայ

Բարի բերք մաղթենք մեր հողին, *Խաղողից գինի* ***քամողին,***
Մեր հողի ոսկե խաղողին, *Այս երկիրը շեն* ***պահողին:***

Գեղամ Մարյան

Քամողին, պահողին բառերը ցույց են տալիս գործողություն՝ իբրև այն կատարողի հատկանիշ: Այս անդեմ բայերը ենթակայական դերբայներ են:

Ենթակայական դերբայը ունենում է **-ող** վերջավորությունը, որը դրվում է անորոշի **-ել** վերջավորության փոխարեն՝ *վազող, նկարող, թռչող, հագնող*, իսկ **ա** խոնարհման բայերի դեպքում ավելանում է **-ացող** վերջավորությունը՝ *կարդացող, խաղացող*: **Ան, են** սոսկածանցների փոխարեն ենթակայականում դրվում են **աց, եց**՝ *հեռանալ – հեռացող, մոտենալ – մոտեցող:*

Մի քանի բառերի ենթակայական դերբայներից առաջացել են գոյականներ, ինչպես՝ *գրող, ուսանող, ծնող:*

Ենթակայական դերբայը գոյականաբար գործածվելիս կարող է հոլովվել և հոդ ստանալ: Ենթակայականը հոլովվում է **ի** հոլովմամբ.

Ուղղական	վազող(ը)
Սեռական	վազողի
Տրական	վազողի(ն)
Հայցական	վազողի(ն)
Բացառական	վազողից
Գործիական	վազողով
Ներգոյական	–

Ենթակայական դերբայները նախադասության մեջ կարող են հանդես գալ գոյականական տարբեր պաշտոններով՝ ենթակա, ստորոգելի և լրացում: Օրինակ՝

Վազողները *հասան վերջնագծին* (ենթակա):
Նա ***չարչարվողը*** *չէ* (ստորոգելի):
Ծառի տակ հավաքվել էր ***նկարողների*** *խումբը* (հատկացուցիչ):

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ցույց տալիս ենթակայական դերբայը:
2. Ո՞ր վերջավորություններով է կազմվում ենթակայական դերբայը:
3. Ծարահյուսական ի՞նչ պաշտոններով կարող է գործածվել ենթակայական դերբայը:

Վարժություն 77: Գտե՛ք և դո՛ւրս գրեք ենթակայական դերբայները, գրե՛ք դրանց անորոշը, համակատարը, հարակատարը:

Ինչ իմանաս Ստեղծողի գաղտնիքները անմեկին.
Ընկեր տվավ, իրար կապեց ես աշխարհում ամենքին:

Հովհաննես Թումանյան

Կործանվող մեր երկրի համար դու եղար փրկության առագաստ...

Եղիշե Չարենց

Վճռել եմ դառնալ խաղալիք սարքող,
Եվ, հավատացե՛ք, իրո՛ք կդառնամ:
Իսկ ի պատասխան հարցնողի հարցի
Ես կասեմ. «Ողջո՛ւյն» :

Եվ խոսո՛ւն-խոսո՛ւն՝
Քամիների հետ վիճող ծառի պես...

Պարույր Սևակ

Պտուղդ քաղող չկա,
Մասրենի՛, սարի՛ մասրենի,
Պատիվդ պահող չկա,
Մասրենի՛, բարի՛ մասրենի:

Երեսիդ նայող չկա,
Մասրենի՛, վայրի՛ մասրենի...

Համո Սահյան

Վարժություն 78: Կազմե՛ք տրված բայերի դերբայական բոլոր ձևերը. *լսել, նայել, տպել, չորանալ, ցնցել, կարոտել, զարգանալ, ընկնել, կարդալ, գտնել:*

Վարժություն 79: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն բառը, որը ենթակայական դերբայ չէ:

1. նկարող, նվագող, ձիագող, վերանորոգող
2. անվադող, հետապնդող, նկարագրող, պատմող
3. հարատևող, ասեղնագործող, ահուդող, եռացող
4. պայթող, պաշտոնաթող, նորոգող, կառուցող
5. թիկնալող, աջակցող, շրջափակող, մրցող
6. տաքացնող, ծածկող, արևկող, ծանոթացնող
7. մշակող, ցանող, ակոսող, վարելահող
8. կարդացող, կարթաձող, մտերմացող, մոռացող
9. արջախաղող, կերակրող, խաղացող, ուսուցանող
10. զարդանախշող, արծաթաշող, հրավիրող, մասնակցող
11. կարկաչող, պահանջող, բարեհաջող, բարեհաճող
12. թրթռացող, ելևէջող, ծալծլող, հնգատող
13. խայտացող, այգացող, հեռացող, կամեցող
14. խուսափող, խոսափող, շրջապատող, հետապնդող
15. հոսող, ձուլող, ժայթքող, կիսասքող
16. լուսավորող, ներկայացնող, հաղթող, հաստակող
17. նայող, դիտող, հեռուստադիտող, նվիրող
18. շատախոսող, նկարահանող, նկարազարդող, ռադիոլսող
19. ձայնագրող, լրագրող, հեռագրող, տպագրող
20. մտածող, հիշող, սևացող, սևահող

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչո՞վ են տարբերվում բայի դիմավոր և անդեմ ձևերը:
2. Ի՞նչ են կոչվում բայի անդեմ ձևերը:
3. Ի՞նչ է ցույց տալիս անորոշ դերբայը:
4. Ի՞նչ վերջավորություններով է կազմվում անորոշ դերբայը:
5. Ինչպե՞ս է որոշվում բայի խոնարհումը (լծորդությունը):
6. Ինչպե՞ս է որոշվում բայի կազմությունը:
7. Որո՞նք են բայածանցները:
8. Շարահյուսական ի՞նչ պաշտոններ կարող է կատարել անորոշ դերբայը:
9. Ի՞նչ է ցույց տալիս համակատար դերբայը:
10. Ինչպե՞ս է կազմվում համակատար դերբայը:
11. Ո՞րն է համակատար դերբայի շարահյուսական հիմնական կիրառությունը:
12. Ի՞նչ է ցույց տալիս հարակատար դերբայը:
13. Ինչպե՞ս է կազմվում հարակատար դերբայը:
14. Սոսկածանցների և պատճառական ածանցների ի՞նչ փոփոխություններ են կատարվում հարակատար դերբայը կազմելիս:
15. Շարահյուսական ի՞նչ պաշտոններով կարող է գործածվել հարակատար դերբայը:
16. Ի՞նչ է ցույց տալիս ենթակայական դերբայը:
17. Ինչպե՞ս է կազմվում ենթակայական դերբայը:
18. Շարահյուսական ի՞նչ պաշտոններով կարող է գործածվել ենթակայական դերբայը:
19. Ո՞ր դերբայները կարող են հոլովվել:

Վարժություն 80: Արտագրե՛ք նախադասությունները և ամբողջացրե՛ք տրված բայերով՝ դրանք ըստ անհրաժեշտության դարձնելով համակատար, հարակատար, ենթակայական դերբայներ, ինչպես նաև հոլովելով:

1. Անհրապույր ... դաշտը, արևի առաջին շողերից ..., բաց դեղին հագավ, ասես կենդանացավ՝ ... թռչունների դյութիչ դայլայլով: *(թվալ, կերպարանափոխվել, լցվել)*
2. Վտանգը ամենևին չգիտակցելով կամ էլ ...՝ նա իսկույն ևեթ հասավ Արտակ Ռշտունուն, որը, զինվորների խիտ շարքի միջից ..., առաջ էր մղվում՝ իր հետևից ... զորագունդը: *(ելնել, տանել, արհամարհել)*
3. Քամի ... քաղաքն ստանում էր հսկայական աղացի կերպարանք, քանի որ ավազափոշին, օդը ... գորշ մշուշի, թափանցում էր ամենուր՝ ... տների ամենախուլ անկյուններից մինչև մարդկանց կոկորդները: *(վերածել, բարձրանալ, սկսել)*

4. Զամբյուղը ... աղբյուրի մոտ՝ գնաց ... իր սիրեցյալին և ամբողջ օրը անդադրում թափառեց Ադամը՝ բարձր ... Լիլիթի անունը: *(ձայնել, թողնել, որոնել)*
5. Ընկերները՝ ամրակազմ, աշխատանքից ... այտերով ու ... աչքերով, սայլ բարձրացան և ... սառած ձեռքերը՝ տեղավորվեցին կողք կողքի: *(փայլփլել, շփել, շիկնել)*
6. Երեկոյան, երբ անակնկալ ... ինչ-որ աղբյուրի մոտ բանակը կանգ առավ ..., Զաքարիան մի փոքրիկ ջոկատ ուղարկեց մոտակա գյուղը՝ սննդամթերք ...: *(ճարել, գիշերել, պատահել)*
7. ... ցանկապատին՝ տղան ցատկեց, սակայն ... ոտքը կպավ բարձր ... փայտերից մեկին, և մի քանի տախտակներ դղրդյունով ընկան: *(թռչել, հասնել, մեխել)*
8. Շուրջը ... զինվորներին՝ զորավարը մտավ պարտեզ. առջևից արագարագ ... զինվորները պարզել էին նիզակները, իսկ հետևից հազիվ ... լարել էին աղեղները, ոմանք էլ պատրաստ պահել էին դաշույնները: *(գնալ, հասնել, համախմբել)*
9. Երկնքի հարավարևմտյան մասում նույնիսկ ուշադիր ... հազիվ նշմարվող մի գիծ երևաց, որը ... մթնեց, սևացավ, ոզնու պես կծկվեց, ապա բացվեց՝ ... սարսափազդու վիշապի հրեշավոր նմանություն: *(գնալ, նայել, ստանալ)*
10. Ծառերի խիտ-խիտ սաղարթները ... խավարի մեջ խորհրդավոր տեսք էին ստացել, սակայն արագ ... կառքի միջից ... մարդկանց դրանք միաձուլ էին թվում: *(ընթանալ, նայել, թանձրանալ)*

Վարժություն 81: Գտե՛ք, թե որ դերբայը իմաստով և քերականորեն չի համապատասխանում տրված նախադասությանը:

1. Հեռվից *(նայողին, նայելու)* քարաժայռը արջի գլուխ էր թվում:
2. Հապճեպ *(հեռացողները, հեռանալուց, հեռացածները, հեռանալը)* մոռացել էին իրենց գրքերը:
3. *(խմելու, խմելիս, խմող, խմած)* ջուրը նրան աղի թվաց:
4. Այդ վտանգավոր աշխատանքը *(կատարածները, կատարելիս, կատարելու, կատարողները)* վնասվածքներ էին ստացել, որոնք բարեբախտաբար վտանգավոր չէին:
5. Հայացքը այդ գեղատեսիլ անտառներին *(հառողը, հառելը, հառելիս, հառած, հառելով)* [՝] կտրվում էր առօրյա ամեն ինչից:
6. Որևէ առիթով այդ չարաբաստիկ դեպքը *(հիշելիս, հիշելով, հիշելուց, հիշածից, հիշողները)* [՝] զայրանում էին:
7. Շենքը *(կառուցողները, կառուցողներից, կառուցածներից, կառուցելիս, կառուցելուց, կառուցել)* գոհ չէին:

Աղայան Էդուարդ Բագրատի (1913–1991)

Ծնվել է Մեղրիում: 1933–38թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետում: 1941-ին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1945-ին՝ դոկտորական ատենախոսություն: Նա ՀԽՍՀ ԳԱԱ ակադեմիկոս էր (1982): Է. Աղայանը 1938-ից մինչև կյանքի վերջը աշխատել է Երևանի պետական համալսարանում. եղել է համալսարանի ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, Հայագիտական կենտրոնի դեկավար, «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի խմբագիր, ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, բանասիրական ֆակուլտետի դեկան: Նա աշխատել է նաև ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում, եղել է բաժնի վարիչ, փոխտնօրեն:

Է. Աղայանի գիտական հարուստ ժառանգությունն ընդգրկում է լեզվաբանության համարյա բոլոր բաժինները՝ ընդհանուր լեզվաբանություն, հայ լեզվաբանության պատմություն, համեմատական քերականություն, բարբառագիտություն, ժամանակակից հայոց լեզու, գրաբար, Արևելքի գրականության պատմություն և այլն: Առանձնապես նշանակալից է նրա «Լեզվաբանության ներածությունը», որը ԽՍՀՄ բարձրագույն կրթության նախարարության կողմից երաշխավորվել է որպես միութենական բուհական դասագիրք և թարգմանվել է ռուսերեն: Նրա հանրահայտ աշխատություններից են «Պատմահամեմատական մեթոդը լեզվաբանության մեջ» (1957), «Գրաբարի քերականություն» (1964), «Հայ լեզվաբանության պատմություն» (հ. 1–2, 1958–62), «Ընդհանուր և հայկական բառագիտություն» (1984), «Արդի հայերենի բացատրական բառարան» (1976) և այլն: Նա համահեղինակ է հայոց լեզվի 4–7-րդ դասարանների դպրոցական դասագրքերի, որոնք ունեցել են բազմաթիվ վերահրատարակություններ:

Է. Աղայանը եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր (1985), պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, Աշխատանքային արիության, Խ. Աբովյանի անվան մեդալներով, արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Աբրահամյան Սերգեյ Գյանջումի (1925–2005)

Հայ լեզվաբան, հայերենագետ, բանասիրական գիտությունների դոկտոր (1966), պրոֆեսոր (1970), ԳԱԱ ակադեմիկոս (1996):

Ծնվել է ԼՂԻՄ Հադրութի շրջանի Տումի գյուղում: Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում: Դասախոսել է հանրապետության տարբեր բուհերում: Երկար տարիներ վարել է ԳԱԱ լեզվի ինստիտուտի ժամանակակից հայոց լեզվի բաժնի վարիչի պաշտոնը: Զբաղվել է ժամանակակից հայերենի կառուցվածքի նկարագրության, նրա պատմության ու դասավանդման մեթոդիկայի, ինչպես նաև խոսքի մշակույթի հարցերով: Ս. Աբրահամյանը արժեքավոր ներդրում ունի հատկապես հայերենի խոսքի մասերի գիտական քննության, շարահյուսության առանցքային հիմնահարցերի մշակման բնագավառներում: Նրա հրապարակած աշխատություններից առավել նշանակալից են «Արդի հայերենի դերանունները» (1956), «Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր» (1962), «Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառաբերանական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում» (1965) և այլն: Հեղինակ է շարահյուսության դպրոցական դասագրքի, որն ունեցել է բազմաթիվ վերահրատարակություններ:

Ձևաբայեր

Կան անդեմ բայեր, որոնք, ի տարբերություն դերբայների, չեն կարող ինքնուրույն գործածվել և նախադասության մեջ դառնալ առանձին անդամ: Նման անդեմ բայերը կոչվում են ձևաբայեր: Դրանք ունեն միայն մեկ կիրառություն. միանալով օժանդակ բային՝ կազմում են բայի դիմավոր ձևերը և նախադասության մեջ դառնում են ստորոգյալ:

Կանչում է կրկին, կանչում անդադար
Էն չքնաղ երկրի կարոտը անքուն...
Հովհաննես Թումանյան

Դու նորից ***եկել ես****, ի՞նչ անեմ...*
Դև (Մարգար Ղարաբեգյան)

Ընդգծված *կանչում է, եկել ես* բայերը դիմավոր են, քանի որ գործողության հետ միաժամանակ ցույց են տալիս գործողությունը կատարողի դեմքը. կանչում է (**նա**), եկել ես (**դու**):

Այս դիմավոր բայերի մեջ *կանչում, եկել* բառերը ձևաբայեր են: Դրանք նախադասության մեջ չեն կարող ինքնուրույն գործածվել:

Հայերենն ունի չորս ձևաբայ՝ **անկատար, ապակատար, վաղակատար** և **ժխտական:**

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ տարբերություն կա դերբայների և ձևաբայերի միջև:
2. Ի՞նչ կիրառություն ունեն ձևաբայերը:
3. Որո՞նք են հայերենի ձևաբայերը:

Վարժություն 82: Գտե՛ք դիմավոր բայերը և կազմե՛ք դրանց անորոշ դերբայները:

Քարափոր տներից կապույտ ծուխը ձգվում է դեպի վեր և լիզում խոնավ ժայռերը: Լուսանում է. լեռան հետևից ելնում է արևը, մամուռից պոկվում են անձրևի կաթիլները և ջինջ արցունքի նման շողշողում: Տարին բոլոր այդ ձորերում ստվեր է, խոնավություն: Մարդիկ ապրում են քարանձավներում և բարձրանում են քարե սանդուղքներով: Ուռենու մամռոտած փչակով ժայռից ժայռ ջուր են բերել ու քարերի վրա բազմացրել ընկուզենի: Հորդ անձրևին ավազախառն հեղեղը ահագին վշշոցով իջնում է սարերից, աղմկում, քամուց ընկուզենիները խշշում են, ձգում են արմատները և կռանում ձորի վրա:

Ակսել Բակունց

Վարժություն 83: Յուրաքանչյուր տողում գտե՛ք ձևաբայի անվանումը:

1. անորոշ, անկատար, ենթակայական
2. հարակատար, համակատար, վաղակատար

3. ապակատար, անորոշ, ենթակայական
4. անկատար, համակատար, անորոշ
5. ժխտական, ենթակայական, հարակատար
6. հարակատար, համակատար, ապակատար
7. անորոշ, ենթակայական, ժխտական
8. հարակատար, ենթակայական, վաղակատար
9. ապակատար, համակատար, անորոշ
10. վաղակատար, հարակատար, անորոշ

Անկատար ձևաբայ

Անկատար ձևաբայը կազմվում է **-ում** վերջավորությամբ, որը դրվում է անորոշ դերբայի **-ել** և **-ալ** վերջավորությունների փոխարեն, ինչպես օրինակ՝ *վազել – վազում, խաղալ – խաղում, հագնել – հագնում, դիպչել – դիպչում, մոռանալ – մոռանում, մոտենալ– մոտենում, կարդացնել – կարդացնում:*

Միանալով օժանդակ բային՝ այս ձևաբայը կազմում է դիմավոր բայեր, ընդ որում օժանդակ բայը կարող է դրվել և՛ ձևաբայից առաջ, և՛ հետո *(Աշոտը կարդում է և Աշոտն է կարդում):*

Մի շարք բայերի անկատար ձևաբայը ձևով նույնանում է **-ում** ածանց ունեցող կամ ներգոյական հոլովով գոյականներին՝ դառնալով համանուն: Համեմատենք՝ *Աղջիկները **ջրում** է այգին* (անկատար ձևաբայ): *Ձկները լողում էին **ջրում** (ջուր բառի ներգոյականը):* *Քամին **շարժում** է տերևները* (անկատար ձևաբայ): *Այդ ժամանակ սկսվեց գրական մի նոր **շարժում*** (**-ում** ածանցով գոյական):

Գալ, լալ, տալ բայերը չունեն **-ում** վերջավորությամբ ձևավորվող անկատար ձևաբայ. գործածվում են *գալիս, լալիս, տալիս* ձևերը, որոնք համընկնում են հարակատար դերբային, օրինակ՝ *Մեր տուն **գալիս** հանդիպել էր եղբորս* (համակատար): *Նա ամեն օր ճիշտ ժամին **գալիս** է դպրոց* (անկատար):

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ո՞ր վերջավորությամբ է կազմվում անկատար ձևաբայը:
2. Ի՞նչ կիրառություն ունի անկատար ձևաբայը:
3. Անկատար ձևաբայերը ձևով ո՞ր բառերին են նույնանում՝ նրանցից տարբերվելով իմաստով ու կիրառությամբ:

Վարժություն 84: Գտե՛ք անկատար ձևաբայով կազմված դիմավոր ձևերը:

Փակում եմ հոգնած աչքերս մի պահ
Եվ տեսնում եմ ես – այնքա՜ն, այնքա՜ն պարզ.–

Գալիք մի գարուն, վառ մի օր ահա,
Երկինքը կապույտ, օրը հրավարս:
Արևը արդեն բարձրացել է քիչ,
Ձնգում է օրը, ինչպես երգեհոն –
Ու կապո՛ւյտ, կապո՛ւյտ, կապո՛ւյտ երկնքից
Թափվում է կարծես երգ ու խնդություն:–
Ոլորապտույտ ձգվում է շոսսեն
Նոր Երևանից դեպի Արարատ...

Եղիշե Չարենց

Նիրհ էին մտել ծաղկունքը բուրյան՝
ադամանդներով, շքեղ գինդերով,
Ծիածանաթև հավքերը իրար
գուրգուրում էին քնքուշ մրմունջով:
Մեխակի բույրով հովն էր շշնջում
հեքիաթներն հազար ու մի գիշերվա,
Արմավն ու նոճին անուշ քնի մեջ՝
օրորվում էին ճամփեքի վրա:

Ավետիք Իսահակյան

Վարժություն 85: Տրված բառերը անորոշ դերբայ դարձնելու միջոցով գտե՛ք, թե յուրաքանչյուր տողի որ բառը անկատար ձևաբայ է:

1. վազում, աշխատում, կարդում, երդում
2. լվանում, փայլեցնում, տրտում, զեղչում
3. հմայում, ցասում, տպագրում, արտադրում
4. վիրավորում, դասավորում, քիմմաքրում, թոթովում
5. կառուցում, միջոցառում, խզմզում, թևածում
6. անէացնում, եփում, հեռուստահաղորդում, զրնգացնում
7. ջերմացնում, տարկետում, լիացնում, ամայացնում
8. զարդարում, հասցնում, վերցնում, խոստում
9. զիջում, տառապում, շատախոսում, աններում
10. ափսոսում, մրսում, ավտոնորոգում, խոսում

Վարժություն 86: Տրված բառերով կազմե՛ք մեկական նախադասություն՝ յուրաքանչյուր բառը գործածելով և՛ որպես անկատար ձևաբայ, և՛ որպես *-ում* ածանցով կազմված գոյական:

Օրինակ՝ Ուսուցիչն **ուղղում** էր աշակերտի սխալները *(անկատար ձևաբայ)*:
Աշակերտներն ավարտեցին սխալների **ուղղումը** *(-ում ածանցով գոյական)*:

Բուժում, զոջում, դիմում, բնորոշում, փոխադրում:

Ապակատար ձևաբայ

Ապակատար ձևաբայը կազմվում է՝ անորոշ դերբային ավելացնելով **-ու** վերջավորությունը, ինչպես օրինակ՝ *վազել – վազելու, խաղալ – խաղալու, հագնել – հագնելու, դիպչել – դիպչելու, մոռանալ – մոռանալու, մոտենալ – մոտենալու, կարդացնել – կարդացնելու:*

Այս ձևաբայը նմանվում է անորոշ դերբայի սեռականի ձևերին: Այսպես՝

Նա երկար ճամփա ունի ***անցնելու:***

Նա անպայման ***անցնելու*** *է մեր փողոցով:*

Սրանք իրարից տարբերելը շատ հեշտ է, եթե հիշենք, որ ապակատար ձևաբայն ունի միայն մեկ կիրառություն. օժանդակ բայի հետ կազմում է դիմավոր ձևեր, իսկ անորոշ դերբայը կարող է հոլովվել՝ նախադասության մեջ ստանալով գոյականին բնորոշ պաշտոններ: Ուստի առաջին օրինակում *անցնելու* բառը անորոշ դերբայի սեռական հոլովաձևն է, իսկ երկրորդում՝ ապակատար ձևաբայ:

Բացի այդ՝ հնարավոր է տարբերել ժխտական օժանդակ բայի միջոցով: Օրինակ՝ *Այս ջուրը խմելու է – Այս ջուրը խմելու չէ: Նա այս ջուրը խմելու է – Նա այս ջուրը չի խմելու:* Ապակատարի դեպքում օժանդակ բայի ժխտական ձևն ունենում է նախադաս շարադասություն և 3-րդ դեմքի **է**-ն դառնում է **ի՝ չի**: Իսկ անորոշ դերբայի հետ գործածված ժխտական օժանդակ բայը դրվում է հետադաս շարադասությամբ և չի փոխվում **ի**-ի:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչպե՞ս է կազմվում ապակատար ձևաբայը:
2. Ո՞ր դերբայի ո՞ր հոլովաձևին է նման ապակատար ձևաբայը:
3. Ինչպե՞ս տարբերել ապակատար ձևաբայը անորոշի սեռականից:

Վարժություն 87: Գտե՛ք ապակատար ձևաբայերը և կազմե՛ք դրանց անկատարը: Որոշե՛ք այդ բառերի խոնարհումը (լծորդությունը):

Վեր կացավ Մոսին, իրեն կտրատում.
– Թող գա՛,– գոռում է,– որ բռնենք նորից,
Թե չէ նամարդը, արևս եմ երդվում,
Էլ չի պրծնելու երբեք իմ ձեռքից:

– Դե իմ անունո՛վ երդվիր, անզգա՛մ,
Որ էլ Սարոյին դու չես սիրելու,
Թե չէ տեսնո՞ւմ ես խանչալը հանած՝
Մինչև դաստակը սիրտդ եմ խրելու:

Ինչպես դատարկվեց կյանքում ամեն բան,
Սարերը մնացին որբ ու անչոբան,

Թե ինչպես հանկարծ նա գնաց հեռու,
Էլ չի դառնալո՛ւ, էլ չի դառնալո՛ւ...

Հովհաննես Թումանյան

Վարժություն 88: Առանձին սյունակներով դո՛ւրս գրեք անորոշ դերբայի սեռական հոլովաձևերը և ապակատար ձևաբայերը: Որոշե՛ք այդ բայերի կազմությունը (պարզ կամ ածանցավոր):

Աչքերիս մեջ գարնան օրեր,
Ճամփես դեպի աստղերն անմեռ՝
Ինձ ելնելու քարեր կան դեռ,
Ինձ ելնելու սարեր կան դեռ,
Սարեր, քարեր, դարեր կան դեռ...

Հովհաննես Շիրազ

1. Բադու կինը՝ իր պես զառամած մի պառավ, ընթրիք եփելու ժամանակը գիտեր: 2. Թե սաղ մնամ, եկող աշունք գնալու եմ: 3. Նա չէր սիրում Ավանին, որ որսկան շան պես հոտոտում էր, թե որտեղից կարող է պլոկել, երկու խոսք գրելու համար մի հավ առնել: 4. Մի օր էլ հոր հետ միասին դուրգար Դավիթի մոտ գնացին՝ Հաբուդին նրա մոտ թողնելու համար: 5. Իսանանց տանուտեր ախպերն ասում էր, որ կռիվը օգուտ է ժողովրդին, որ ռուսի թագավորի թախտը հաստատ է, ժողովուրդը՝ շատ, և որ շուտով Գերմանի թագավորը հաղթվելու է: 6. Վարժապետ Մինասն ասաց, որ շուտով գալու են, հողերը չափեն, հարուստից խլեն աղքատին տան, չունևորին ճոթ ու կտոր են տալու: 7. Երբ տասնապետը եկավ խրամատին նայելու, տեսավ Պետուն՝ ընկած երեսնիվայր: 8. Ծիրանի տափը հիշատակելու ոչինչ չէր ունենա, եթե երկու գյուղի՝ Միրի և Մրոցի միջև անվերջ շարունակվող կռիվների, խոսք ու զրույցի առարկա չդառնար:

Ակսել Բակունց

Ես չեմ երգելու այժմ շառաչուն
Գալիքի մասին, որ գալու է դեռ:

Եղիշե Չարենց

Վարժություն 89: Ո՞ր շարքի բոլոր բայերն են ապակատար ձևաբայ:

ա) 1. Լինելու է, չէր կարողանալու, ելնելու ենք, երդվելու էր:
2. Պատրաստվում է գրոհելու, մեկնում է մրցելու, գրվելու է, խոսվելու է:
3. Եկել է կռվելու, մնալու էին, չէր անելու, հասնելու են:
4. Ուտելու բույս, անցնելու ճամփա, գրելու գիրք, չեմ տեսնելու:

բ) 1. Պատասխանելու էր, ստանալու էին, գրոհելու հրաման, անցնելու ճանապարհ:
2. Դրոշմելու եք, գնում էին հաղթելու, ցանելու կարտոֆիլ, զարմանալու առիթ:
3. Պարելու ցանկություն, հիշելու դեպք, ծիծաղելու են, չեն նկատելու:
4. Փորելու են, քանդելու էին, չեն կառուցելու, չեն հասնելու:

Վաղակատար ձևաբայ

Վաղակատար ձևաբայի վերջավորություններն են **-ել, -(աց)ել:**

Անորոշ դերբայ	*Վաղակատար ձևաբայ*
վազ-ել	վազ-ել
խաղ-ալ	խաղ-ացել
մոտ-են-ալ	մոտ-եց-ել
հեռ-ան-ալ	հեռ-աց-ել
գտ-ն-ել	գտ-ել
դիպ-չ-ել	դիպ-ել
հեռ-ացն-ել	հեռ-ացր-ել
մոտ-եցն-ել	մոտ-եցր-ել
հաս-ցն-ել	հաս-ցր-ել

Ինչպես տեսնում ենք, **ն, չ** սոսկածանցները վաղակատարում ընկնում են, իսկ **են, են** ածանցների փոխարեն դրվում են **աց, եց**: Պատճառական **ացն, եցն, ցն** ածանցների փոխարեն էլ դրվում են **ացր, եցր, ցր**:

Ե խոնարհման պարզ բայերի անորոշ դերբայը և վաղակատար ձևաբայը ձևով համընկնում են: Դրանք հնարավոր է իրարից տարբերել գործածությամբ. անորոշ դերբայը հիմնականում օժանդակ բայի հետ չի գործածվում, իսկ վաղակատար ձևաբայը հանդես է գալիս միայն օժանդակ բայի հետ՝ դառնալով պարզ ստորոգյալ: Եթե անորոշ դերբայն էլ օժանդակ բայի հետ կազմել է բարդադրյալ ստորոգյալ, ապա անորոշն ու վաղակատարը հնարավոր է իրարից տարբերել ժխտական օժանդակ բայի միջոցով: Անորոշի դեպքում ժխտական օժանդակ բայը հետադաս է, իսկ վաղակատարի դեպքում՝ նախադաս: Այսպես՝

Արեգակին պետք է հեռվից ***նայել****:*

Արամայիս Սահակյան

Նրա սիրած զբաղմունքը ֆիլմեր ***նայելն*** *է (նայելը չէ):*

Նա ***նայել*** *է այդ բոլոր ֆիլմերը (չի նայել):*

Առաջին երկու դեպքում *նայել*-ը անորոշ դերբայ է, իսկ երրորդում՝ վաղակատար ձևաբայ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչպե՞ս է կազմվում վաղակատար ձևաբայը:
2. Սոսկածանցների և պատճառական ածանցների ի՞նչ փոփոխություններ են կատարվում վաղակատարում:
3. Ո՞ր բայերի անորոշն ու վաղակատարն են ձևով նույնը:
4. Ինչպե՞ս տարբերել նույն ձևն ունեցող անորոշ դերբայն ու վաղակատար ձևաբայը:

Վարժություն 90: Գտե՛ք և առանձին սյունակներով արտագրե՛ք անորոշ դերբայները (նաև հոլովված) և վաղակատար ձևաբայերը:

Ինչքան ցավ եմ տեսել ես,
Նենգ ու դավ եմ տեսել ես,
Տարել, ներել ու սիրել,–
Վատը լավ եմ տեսել ես:

Քանի՛ ձեռքից եմ վառվել,
Վառվել ու հուր եմ դառել[1],
Հուր եմ դառել՝ լույս տվել,
Լույս տալով եմ սպառվել:

Հովհաննես Թումանյան

Բոլորը դաշտ շտապեցին
Աղոթարան բացվելու հետ՝
Լուսն ու մութին,
Ուսներին բահ ու գերանդի՝
Հավաքելու սերը հանդի:

Մարո Մարգարյան

Դու ասիր[2]՝ նայել, հասկանալ ու սուզվել, դառնալ անէ.–
Նա ասաց՝ լինել, կատարել, ներծծել հուրեր ու շողեր:

Դու ասիր՝ ամփոփել ամբողջը, հաշտվել ու խաղաղ լինել, –
Նա ասաց՝ ամբողջի՛ն տիրանալ, որպեսզի ամբողջը փոխել:

Եղիշե Չարենց

Վարժություն 91: Սոսկածանցների և պատճառական ածանցների փոփոխությունները հաշվի առնելով՝ յուրաքանչյուր շարքում գտե՛ք երեք վաղակատար ձևաբայ և մեկ անորոշ դերբայ:

1. թողել, իջել, գտել, մտնել
2. տեսել, հասել, մեռնել, բուսել
3. կպել, թռել, դիպել, սառչել
4. հեռացել, փոքրացել, տաքանալ, անշքացել
5. սևացել, թեթևանալ, չեզոքացել, խելոքացել
6. հագեցել, մոտեցել, արժենալ, կամեցել
7. զարգացրել, թեժացրել, հիացրել, ուրախացնել
8. ճոխացնել, շիկացրել, հատկացրել, չորացրել
9. գոհացրել, կենդանացնել, սքանչացրել, կայտառացրել
10. վարժեցնել, ծիծաղեցրել, հոգնեցրել, արածեցրել
11. փակցրել, փախցնել, հասցրել, կորցրել

Վարժություն 92: Կազմե՛ք տրված բայերի վաղակատար ձևաբայերը և դրանք գործածե՛ք նախադասություններում:

Նոսրանալ, ծերանալ, թանձրանալ, սովորեցնել, փայլեցնել, նվազեցնել, փախչել, գտնել, մոտենալ, հեռանալ:

1 Գրական ձևն է՝ **դարձել**:
2 Գրական ձևն է՝ **ասացիր**:

Ժխտական ձևաբայ

Ժխտական ձևաբայը կազմվում է՝ անորոշ դերբայի **-ել** վերջավորության փոխարեն կցելով **-ի**, իսկ **-ալ**-ի փոխարեն՝ **-ա** վերջավորությունը, օրինակ՝ *վազել – վազի, խաղալ – խաղա:*

Այս ձևաբայը ևս չունի ինքնուրույն գործածություն. միանալով օժանդակ բայի ժխտական ձևերին՝ այն կազմում է համապատասխան դիմավոր ձևեր՝

չեմ վազի	*չեմ խաղա*
չես վազի	*չես խաղա*
չի վազի	*չի խաղա:*

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչպե՞ս է կազմվում ժխտական ձևաբայը:
2. Ի՞նչ կիրառություն ունի ժխտական ձևաբայը:

Վարժություն 93: Գտե՛ք ժխտական ձևաբայերը:

ա) Կարմիր կովը իր կաշին չի փոխի:
Միսն առանց ոսկորի չի լինի:
Լամպն իր տակը լույս չի տա:
Վարդն առանց փշի չի լինի:
Խնձորը ծառից հեռու չի ընկնի:

բ) Մի ծաղիկ չի տա օտար հողը քեզ,
Բայց թեկուզ ծաղկես օտար դաշտերին,
Թե հայրենիքում մի գավաթ չունես,
Գինիդ արցունք է քո էլ շուրթերին:

Օտար աշխարհը մի հյուղ չի տա քեզ,
Բայց թե պալատ էլ տա արևի տակ,
Թե հայրենիքում մի խրճիթ չունես,
Մոռացված որբ ես օտար լուսնի տակ:

Հովհաննես Շիրազ

Եվ չի լսի ոչ մի կին իմ անկումի մասին այս,
Որ դարձրեց իմ հոգին թարախակալ մի երազ:

Ու չի մատնի ոչ մի բառ շնչում իմ տոթ երգերի,
Որ եղել եմ ես տկար, որ եղել եմ ես գերի:

Եղիշե Չարենց

Վարժություն 94: Կազմե՛ք տրված բայերի ժխտական ձևաբայերը:

Հեռանալ, աղալ, հնարել, գտնել, թաքցնել, սառչել, տպել, հանգստանալ, նայել, ընկնել, հագենալ, սիրել:

ԵՐԿՐՈՐԴԵԼ ԵՎ ՎԵՐԱՓՈԽԵԼ ԿԱՄ ՄԱՍՆԱՎՈՐՎՈՒՄ ԵՎ ԿԱՅԱՆՈՒՄ

| | | |

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչո՞վ են տարբերվում դերբայներն ու ձևաբայերը:
2. Որո՞նք են ժամանակակից հայերենի ձևաբայերը:
3. Ո՞ր վերջավորությամբ է կազմվում անկատար ձևաբայը:
4. Ինչպե՞ս է կազմվում ապակատար ձևաբայը:
5. Ո՞ր դերբայի ո՞ր հոլովաձևին է նմանվում ապակատար ձևաբայը:
6. Ինչպե՞ս է կազմվում վաղակատար ձևաբայը:
7. Սոսկածանցների և պատճառական ածանցների ի՞նչ փոփոխություններ են կատարվում վաղակատար ձևաբայը կազմելիս:
8. Ինչպե՞ս է կազմվում ժխտական ձևաբայը:

Վարժություն 95: Արտագրե՛ք՝ փակագծերում տրված անորոշ դերբայները վերածելով անհրաժեշտ ձևաբայերի:

Մի կետ կա, որտեղից նայելիս քարաժայռը (թվալ) է տղամարդու վիթխարի գլուխ: Վայոց ձորում է (գտնվել) անձեռակերտ այդ հրաշքը, որին ժողովուրդը (տալ) է անուն՝ Վարդանի քար: Եվ նրան, իրոք, երբ (նայել) ես այդ կետից, (թվալ) է՝ (տեսնել) ես սպարապետի կիսադեմը: Երկնակարկառ լեռների միջև (երևալ) է վիթխարի անձեռակերտ արձանի գլուխը, իսկ մարմինը հողի մեջ է: (Մտածել) ես, թե արձանը դրված է եղել բարձրաբերձ լեռան գլխին, բայց մի օր անակնկալ (տապալել) ու (ընկնել) է ձորը:

Հինավուրց մի առասպել (վկայել) է, որ Ավարայրի ճակատամարտի ժամանակ՝ յուրաքանչյուր հարյուր հիսունմեկ թվականին, երբ ընկան հազարավոր հայ կտրիճներ և սպարապետ Վարդան Մամիկոնյանը, ժողովուրդը լացուկոծով լցրեց այս խորունկ ձորը, որը կոչվեց Վայոց ձոր: Մարդիկ չէին (ուզել) հավատալ անվեհեր քաջորդու մահվանը և Աստծուն թախանձագին (աղերսել) էին, որ վերադարձնի նրան: Եվ մի առավոտ նրանք տեսան Վարդանի քարեղեն կիսադեմը:

Եգիպտական սֆինքսները, փարավոնների վիթխարի արձանները, խորհրդավոր ու առեղծվածներով լի բուրգերն անգամ (ստեղծել) են մարդիկ. Վարդանի դիմաքանդակը բնության գործն է և, այո՛, նաև ժողովրդի. նրա հազարամյա հորդաբուխ սերն է (ծնել) քարեղեն այս անըմբռնելի հրաշքը:

Ըստ Վարդգես Պետրոսյանի

Վարժություն 96: Խմբավորե՛ք և առանձին սյունակներով գրե՛ք յուրաքանչյուր տեսակի դերբայներն ու ձևաբայերը (հոլովված ձևեր տրված չեն):

Վազում, կարդալ, սպասելու, գրի, արտասանող, հաղորդելիս, աշխատող, երգող, հեղեղելու, հիացող, ելնում, պակասեցրել, սպասում, հիվանդացել, դիմավորում, խաղալ, հեռանալ, գտնել, հոգնած, ընդգծում, նկարած, տպագրելիս, նորոգած, մոտենալ, իմացած, առկայծելիս, մոտենա, հղկելիս, մոտենում, ձևավորի, ցախրում, սեղմելու, բացատրում, հեռացել, հյուսած, հպատակեցրել, տնտեսելու, պլանում, ընծայի, գրելիս, նշելու, քաղցրացել, գովի:

Գիտե՞ք, որ...

Աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու շիրմաքարին գրված է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից» քաղված հետևյալ արտահայտությունը. «Մահկանացու ծնեալ, անմահ գիւր յիշատակ եթող»:

«Բազմավեպը» հայագիտական, բանասիրական, գրական հանդես է: Լույս է տեսնում 1843-ից Վենետիկի Սուրբ Ղազար կղզում առանց ընդհատումների և հայերեն ամենաերկարակյաց պարբերականն է: Հիմնադիր խմբագիրը Գաբրիել Այվազովսկին է՝ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու եղբայրը:

Մալխասյանց Ստեփան Սարգսի (1857–1947)

Ծնվել է Ախալցխայում: 1874-78 թթ. սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1889-ին ավարտել է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը. այդտեղ էլ ստացել է թեկնածուի գիտական աստիճան: 1940-ին ստացել է բանասիրության դոկտորի գիտական աստիճան: ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր անդամներից է: Երկար տարիներ զբաղվել է ուսուցչությամբ. շուրջ 20 տարի պաշտոնավարել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Կյանքի վերջին տարիներին ամբողջովին նվիրվել է գիտահետազոտական աշխատանքին: Նրա պատմաբանասիրական հետաքրքրությունները բազմազան են: Հրատարակել է Ստեփանոս Տարոնացու (Ասողիկ) «Պատմություն տիեզերական» գիրքը՝ քննական բնագրով ու ծանոթագրություններով (1885), ինչպես նաև Ղևոնդ վարդապետի «Պատմությունը», Ղազար Փարպեցու (1904), Ագաթանգեղոսի (1909), Մ. Խորենացու (1913) «Պատմությունները», Ամիրդովլաթի «Օգուտ բժշկության» գիրքը: Թարգմանություններ է կատարել այլ լեզուներից և գրաբարից: Ունի մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ. հատկապես զբաղվել է գրաբարի կառուցվածքի նկարագրությամբ, աշխարհաբարի քերականության հարցերով: Նրա գլուխգործոցը քառահատոր «Հայերեն բացատրական բառարանն» է, որն արժանացել է պետական բարձրագույն պարգևի:

ԽՈՆԱՐՀՈՒՄ

Բայի փոփոխությունը եղանակով ու ժամանակով կոչվում է **խոնարհում: Խոնարհված բայերը** կոչվում են նաև **դիմավոր բայեր**: Խոնարհումը կատարվում է երկու եղանակով:

ա) Վերջավորություններով, որոնք ավելանում են բայահիմքին (գրեց-ի, նայ-իր, տեսնե-ի, զարմաց-ա և այլն): Սրանք կոչվում են **պարզ դիմավոր ձևեր**:

բ) Ձևաբայերով և օժանդակ բայով: Այս ձևերի կազմությանը մասնակցում են անկատար, ապակատար, վաղակատար և ժխտական ձևաբայերը (վազում է, նկարելու է, լսել էր, չեմ մոտենա): Ձևաբայերով ու օժանդակ բայով կազմված բայաձևերը կոչվում են **բաղադրյալ դիմավոր** ձևեր:

Խոնարհված բայերով արտահայտվում են բայի եղանակը, ժամանակը, դեմքը և թիվը:

Բայի եղանակները

Խոսողը գործողության նկատմամբ կարող է ունենալ տարբեր վերաբերմունք՝ պայմանավորված նրանով, թե նա ինչպես է ընկալում նախադասության բովանդակության հարաբերումն իրականությանը: Այդ վերաբերմունքը կարող է լինել չեզոք, այսինքն՝ բայը կարող է արտահայտել իրականությունը՝ առանց որևէ վերաբերմունքի, որպես ստույգ գործողություն, օրինակ՝

Ու *խոսում* է տղան կրկին
Հեռու-մոտիկ ընկերներից:

Մարո Մարգարյան

Դա կարող է լինել ցանկալի գործողություն.

***Լինեի** չոբան սարերում հեռու:*

Վահան Տերյան

Կարող է արտահայտվել հրամանի ձևով.

***Գրի՛ր** այդ նախադասությունը:*

Վերաբերմունքը կարող է լինել նաև ենթադրական.

*Չգիտեմ՝ նա **կգա՞**, թե՞ ոչ:*

Բայի եղանակը հատուկ բայաձևերով արտահայտում է գործողության նկատմամբ խոսողի վերաբերմունքը:

Բայն ունի հինգ եղանակ՝ **սահմանական, հրամայական, ըղձական, ենթադրական (պայմանական)** և **հարկադրական:**

Բայի ժամանակները

Գործողությունը կարող է կատարվել տարբեր ժամանակներում: Այն կարող է համընկնել խոսելու պահին, կարող է կատարվել դրանից առաջ կամ հետո:

Խոսելու պահին համընկնող գործողությունն արտահայտող բայը դրվում է **ներկա** ժամանակով.

*Նա այժմ **ապրում է** Հայաստանում:*

Խոսելու պահից առաջ կատարված գործողությունը դրվում է **անցյալ** ժամանակով:

Շատ դարեր առաջ հին Հայաստանում
Տորք Անգեղ անվամբ մի մարդ ***էր կենում...***

Ղազարոս Աղայան

Խոսելու պահից հետո կատարվելիք գործողությունը դրվում է **ապառնի** ժամանակով.

Նա վաղը ***մեկնելու է*** *գործուղման:*

Խոնարհված բայերն արտահայտում են նաև բազմաթիվ միջանկյալ ժամանակներ՝ հեռավոր անցյալ, խոսելու պահին ավելի մոտ անցյալ, օրինակ.

Գնաց*, խորունկ մի հոր* ***փորեց,***
Իջավ, մտավ *վիհին էն խավար* (մոտ անցյալ):

Հովհաննես Թումանյան

Այդ ցեղերն ***ապրում էին*** *լեռնային շրջաններում* (վաղ անցյալ):

Բայի դեմքը

Բայի դեմքը ցույց է տալիս խոսողի, խոսակցի կամ մի երրորդ անձի (առարկայի) կատարած գործողությունը: Բայն ունի երեք դեմք:

Բայի առաջին դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարում է խոսողը.

Փակում եմ *հոգնած աչքերս մի պահ* (ես):

Եղիշե Չարենց

Բայի երկրորդ դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարում է խոսակիցը.

Գալիս ես *մրցույթի* (դու):

Բայի երրորդ դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարում է ո՛չ խոսողը, ո՛չ էլ խոսակիցը, այլ մի երրորդ անձ (կամ առարկա):

Նա ***նվագում է****, իսկ Աննան* ***երգում է****:*
Քամին ***ոռնում էր****:*

Բայի թիվը

Բայի թիվը ցույց է տալիս՝ մե՞կ, թե՞ մեկից ավելի անձերի կամ առարկաների կողմից է կատարվում գործողությունը: Բայն ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի:

Եզակի թիվը ցույց է տալիս մեկ անձի կամ առարկայի կատարած գործողությունը.

Տեսնում եմ *ասես քեզ մինչև հիմա*
Այն մեծ քաղաքի ժխորների մեջ:

Մարո Մարգարյան

Հոգնակի թիվը ցույց է տալիս մեկից ավելի անձերի կամ առարկաների կատարած գործողությունը.

Երեխաները ***գնացել են*** *զբոսանքի:*

Աղբյուրները ***հնչում են*** *ու* ***անց կենում****:*

Հովհաննես Թումանյան

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է խոնարհումը:
2. Որո՞նք են բայի եղանակները:
3. Որո՞նք են բայի հիմնական ժամանակները:
4. Ի՞նչ է ցույց տալիս բայի դեմքը:
5. Ի՞նչ է ցույց տալիս բայի թիվը:

Վարժություն 97: Գրե՛ք շղատառ բայերի դեմքը և թիվը:

Շատ *թաքցրի* սրտիս միջին
Զգայազուրկ մարդկանցից,
Այժմ *ուզում եմ* քո առաջին
Ողջը դատարկել իմ սրտից:
Հովհաննես Թումանյան

Լսո՞ւմ եք ինձ:
Բավակա՞ն է,
Հանեցե՛ք ձեր դիմակները:
Հանեցե՛ք,
Որ քամու ձեռքով
Ձեզ կարոտած օդն *ապտակի*
Ձեր իսկական դեմքը տխեղծ,
Եվ շող-շաղափն արեգակի
Սրսկումի նման *ծակի*
Ընդարմացած ձեր դեմքը խեղճ:
Պարույր Սևակ

Եվ ես նրան մի անգամ
Այսպես *տեսա* երազում...
...Ամպը *լացել, հեռացել,*
Ու թաց հողն էր *երազում*:
Նա հանդերից *էր գալիս*
Գյուղի ճամփով խաղաղիկ,
Սև աբեմի փեշերին
Փուշ *էր կպել* ու ծաղիկ:
Նա հանդերից էր գալիս,
Գունատ շուրթերը *մխում*,
Դողում էին ակամա,
Ու մեղեդին *էր բխում*...
Վահագն Դավթյան

Վարժություն 98: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք նշված դեմքի և թվի բայաձևը՝ ավելացնելով համապատասխան անձնական դերանուն:

1. *1-ին դեմք, հոգնակի թիվ* – գրել է, կարդացիր, գրում եմ, գրում ենք
2. *2-րդ դեմք, եզակի թիվ* – վազեց, գնալու էին, անցավ, գնալու ես
3. *3-րդ դեմք, հոգնակի թիվ* – ծածկել է, հանձնեցիք, գրում են, լսեցի
4. *2-րդ դեմք, հոգնակի թիվ* – միացրինք, նկարել էիք, մրցելու էին, հոգնեց
5. *1-ին դեմք, եզակի թիվ* – նորոգեցի, կմոտենան, հիշում էին, պարզեցին
6. *3-րդ դեմք, եզակի թիվ* – այցելել են, ներկեց, նշում էիք, այցելեցի
7. *2-րդ դեմք, եզակի թիվ* – մեկնում ենք, հիշել էին, մասնակցելու ես, տեսա
8. *3-րդ դեմք, հոգնակի թիվ* – հաղթեցին, հիացա, գծում ես, մոտեցավ
9. *1-ին դեմք, հոգնակի թիվ* – զբոսնում է, երթևեկում են, դիտում ենք, հայտնեցին
10. *2-րդ դեմք, եզակի թիվ* – բացատրեց, հիշեցրի, ասել ես, նայեց

Դրական և ժխտական խոնարհում

Բոլոր խոնարհված բայերը կարող են ունենալ դրական և ժխտական ձևեր:
Դրական խոնարհման ժամանակ հաստատվում է գործողության կատարումը:

*Ես **լսում եմ** նրա ոտնաձայները:*

***Երգի՛ր** այդ երգը:*

*Հայկը նամակ **էր գրում**:*

Ժխտական խոնարհման ժամանակ գործողության կատարումը ժխտվում է:

*Քեզ երբեք սիրտս **չի մոռանա**...*

Վահան Տերյան

***Մի՛ գնա** այնտեղ:*

*Նա **չէր եղել** այդ քաղաքում:*

ՕԺԱՆԴԱԿ ԲԱՅ

Օժանդակ բայը անվանվում է նաև **եմ** բայ: Օժանդակ բայը մասնակցում է բաղադրյալ ժամանակաձևերի կազմությանը՝ գործածվելով համապատասխան ձևաբայերի հետ: Կարող է կազմել նաև բաղադրյալ ստորոգյալ՝ *գեղեցիկ է:*

Օժանդակ բայն ունի երկու ժամանակ՝ ներկա և անցյալ, երկու թիվ՝ եզակի և հոգնակի, և երեք դեմք:

ԴՐԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Ներկա			Անցյալ	
դեմք	եզակի թիվ	հոգնակի թիվ	եզակի թիվ	հոգնակի թիվ
I	եմ	ենք	էի	էինք
II	ես	եք	էիր	էիք
III	է	են	էր	էին

ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Ներկա			Անցյալ	
դեմք	եզակի թիվ	հոգնակի թիվ	եզակի թիվ	հոգնակի թիվ
I	չեմ	չենք	չէի	չէինք
II	չես	չեք	չէիր	չէիք
III	չի	չեն	չէր	չէին

Օժանդակ բայի ուղղագրությունը և արտասանությունը

Օժանդակ բայը գրվում է բայաձևից անջատ: Ներկա ժամանակի բոլոր ձևերը գրվում են **ե**-ով՝ բացի եզակի երրորդ դեմքից, որը գրվում է **է**-ով: Անցյալ ժամանակի բոլոր ձևերը գրվում են **է**-ով: Ժխտական խոնարհման դեպքում ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքի **է**-ն դառնում է **ի**՝ *գրում է – չի գրում:*

Օժանդակ բայի ներկա ժամանակի՝ **ե**-ով գրվող ձևերում **ե**-ն արտասանվում է **է**

ՅԻՇԵ՛Ք

Բայն ունի երեք սեռ՝ **ներգործական, կրավորական** և **չեզոք**:

Ներգործական են այն բայերը, որոնք կարող են ստանալ ուղիղ խնդիր լրացում (կրող առարկա), օրինակ՝ *գրել* (նամակ), *կառուցել* (շենք), *երգել* (երգ), *նկարել* (ծառ), *հիշել* (դեպքը) և այլն:

Կրավորական են այն բայերը, որոնք կարող են ստանալ ներգործող անուղղակի խնդիր լրացում (այն առարկան, որից գործողությունն անցնում է ենթակային): Կրավորական բայերի մեջ պարտադիր կա **-վ-** ածանցը, օրինակ՝ *Ապակին **կոտրվեց** քամուց: Աշխատանքը **գնահատվեց** հանձնաժողովի կողմից:*

Չեզոք բայերը չեն կարող ստանալ ո՛չ ուղիղ խնդիր, ո՛չ ներգործող խնդիր, իսկ նրանց կազմում **-վ-** ածանցը կարող է և՛ լինել, և՛ չլինել, օրինակ՝ *Նա **զբոսնում է**: Մենք **զրուցում ենք**: Նա **շարժվեց** տեղից: **Բնակվում է** քաղաքում:*

Ամփոփում

Անդեմ բայերն արտահայտում են գործողության ընդհանուր գաղափար:

Դիմավոր բայերը անդեմ բայերից տարբերվում են նրանով, որ ունեն դեմք, թիվ, եղանակ և ժամանակ:

Նշված հատկանիշներն արտահայտվում են բայի խոնարհման վերջավորությունների կամ օժանդակ բայերի միջոցով:

Թե՛ անդեմ, թե՛ դիմավոր ձևերն ունեն սեռ:

Բառերի թեքված ձևերի ամբողջական համակարգը կոչվում է հարացույց (օրինակ՝ հոլովման, խոնարհման հարացույցներ):

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչպե՞ս են արտահայտում գործողությունը դրական խոնարհման բայերը:
2. Ինչպե՞ս են արտահայտում գործողությունը ժխտական խոնարհման բայերը:
3. Ո՞րն է օժանդակ բայը, քանի ժամանակ, դեմք և թիվ ունի:
4. Ի՞նչ է հարացույցը:

Վարժություն 99: Դո՛ւրս գրեք ձևաբայերով կամ վերջավորություններով կազմված դիմավոր բայերը և նշե՛ք դրանց դեմքը, թիվը, դրական կամ ժխտական խոնարհում ունենալը:

Ակսել Բակունցի մասին հիշողություններ գրող ընկերները նրան գրեթե միշտ պատկերել են որպես գերազանցապես զգայուն ու թախծոտ մարդու: Իմ ճանաչած Բակունցը նաև ուրախ էր, կենսախինդ, լավատես և հաճախ էր զվարճանում, թեև խմիչքը գործածում էր չափավոր: Հիշում եմ (կարծեմ հազար ինը հարյուր

երեսուներեք թվականն էր) Չարենցն ու Բակունցը մի օր ինձ դիտմամբ հանդիմանեցին, թե միշտ ասում եմ, որ որսորդ եմ, սակայն որսս դեռ չեն տեսել:

– Լավ,– ասացի ես,– հենց այսօր կգնամ Լոռի. երկու օրից եթե կխտարը շալակիս քաղաք չմտա, այն ժամանակ իրավունք ունեք ինձ ծաղրելու:

Ասացի ու աղջամուղջին ճամփա ընկա: Մյուս օրը մի երկու ընկերների հետ բարձրացա Լալվարի երկնակարկառ ծերպերը, ու շատ ժամանակ չանցած՝ բարձունքներում մի եղնիկ խփեցինք: Երբ հոգնած ու չարչարված իջնում էինք Սանահինի կայարան, ձայն տվի ընկերներիս.

– Տղե՛րք, գնանք Երևան, ու ձեզ ծանոթացնեմ Ակսել Բակունցի և Եղիշե Չարենցի հետ:

Ի սրտե ուրախացան, բայց քաշվում էին. գեղջկական ամոթխածությունը նրանց մեջ դաստիարակվել էր մանկությունից: Բայց ես չթողեցի, որ վերադառնան. հենց որսի հագուստով էլ գնացք նստեցինք:

Հաջորդ օրը մեծ խնջույք կազմակերպեցի մեր տանը, և լոռեցի որսորդները անմոռանալի ու սրտառուչ մի երեկո անցկացրին մեր արձակի ու պոեզիայի երկու գագաթների հետ: Շատ կատակներ արեց այդ երեկո Բակունցը, շատ սրամիտ ու խելացի խոսքեր ասաց՝ չափի զգացումը, սակայն, չկորցնելով նույնիսկ կատաղի գինարբուքի ժամանակ:

Ըստ Վախթանգ Անանյանի

Վարժություն 100: Դո՛ւրս գրեք դիմավոր բայերը և դարձրե՛ք անորոշ դերբայ:

Առաջին անգամ էի ոչ միայն ճամփորդում օվկիանոսով, այլև տեսնում այն: Երբ ափը բոլորովին աներևութացավ, ինձ պաշարեց մի տարօրինակ թախիծ: Թվաց՝ լիովին անջատվեցի երկրագնդից և ընկա նոր տարերքների գիրկը: Շատ եմ ճամփորդել ծովերով, շատ մրրիկներ ու փոթորիկներ եմ տեսել, բայց ծովերը երբեք ինձ այնքան երկյուղ չեն ներշնչել, որքան արտաքուստ նրանցից ավելի անդորր ու անվրդով օվկիանոսը: Այնտեղ՝ ծովերի վրա, երկիրը գրեթե միշտ մոտդ է, և եթե երբեմն չես էլ տեսնում, կարծես հովանավորում է քեզ իր մերձությամբ: Այստեղ ջրի ու երկնքի միջև ես, և այն միտքը, թե մի քանի մղոն է այդ ջրի խորությունը, անընդհատ ճնշում է հոգիդ: Մի առավոտ օվկիանոսը ծածկվեց մշուշով, իսկ երկինքը՝ գորշ թուխպերով, որոնք հետզհետե թանձրացան՝ փակելով ամբողջ երկնակամարը: Շուտով փրփրաբաշ ալիքներն այնքան էին բարձրանում, որ նավը տաշեղի պես ելնում էր նրանց կատարները: Փոթորիկը տևեց կես օր: Այնուհետև մառախուղը ցրվեց, երկինքը պարզվեց: Ճամփորդները, որոնք սահմռկած թաքնվել էին իրենց խցերում, դուրս թափվեցին: Կանայք, վախից և ալեկոծությունից սփրթնած, բայց իրենց հոգեկան անդորրը ինչ-որ չափով վերագտած, սեթևեթանքով ծիծաղում էին, իսկ տղամարդիկ շինծու զվարթությամբ աշխատում էին ցույց տալ, թե փոթորիկը բնավ չի խռովել իրենց հոգիները:

Նեապոլ-Նյու Յորք մեր ճամփորդությունը տևեց տասնութ օր: Տասնիններորդ օրը հորիզոնում աղոտ նկատվեցին Ամերիկայի Միացյալ Նահանգների ափերը:

Ըստ Ալեքսանդր Շիրվանզադեի

Սահմանական եղանակ

Սահմանական եղանակի բայաձևերը ցույց են տալիս ստույգ, հավաստի կատարվող գործողություն բոլոր ժամանակներով: Գործողությունն իրականում կարող է չկատարվել, սակայն խոսողը այն ներկայացնում է որպես ստույգ գործողություն, օրինակ՝ *Ես **գրում եմ**:*

Սահմանական եղանակն ունի յոթ ժամանակաձև, որոնցից վեցը բաղադրյալ են, իսկ մեկը՝ պարզ:

Բաղադրյալ ժամանակաձևերը կազմվում են **անկատար, ապակատար, վաղակատար** ձևաբայերով և **օժանդակ բայով:** Սահմանական եղանակի բաղադրյալ դիմավոր ժամանակաձևերը անվանվում են ձևաբայի և օժանդակ բայի ժամանակի անունով՝ **անկատար ներկա, անկատար անցյալ, ապակատար ներկա, ապակատար անցյալ, վաղակատար ներկա, վաղակատար անցյալ**:

Պարզ ժամանակաձևը մեկն է՝ **անցյալ կատարյալ**: Պարզ դիմավոր ձևերը կազմվում են՝ բայի հիմքին ավելացնելով համապատասխան վերջավորություններ՝ *գրեցի, տեսավ:*

Անկատար ներկա

***Քայլում եմ** ու **հիանում եմ** ճարտարապետական գլուխգործոցներով:*

Ընդգծված բառերը դրված են անկատար ներկա ժամանակաձևով և ցույց են տալիս խոսելու պահին կատարվող և դեռ չավարտված, ընթացքի մեջ գտնվող գործողություն:

Անկատար ներկա ժամանակաձևը կազմվում է անկատար ձևաբայով և օժանդակի բայի ներկայի ձևերով:

դեմք	Եզակի թիվ		Հոգնակի թիվ	
I	գրում եմ,	կարդում եմ	գրում ենք,	կարդում ենք
II	գրում ես,	կարդում ես	գրում եք,	կարդում եք
III	գրում է,	կարդում է	գրում են,	կարդում են

Անկատար անցյալ

*Ես **քայլում էի** փողոցով:*
*Նա **աշխատում էր** այգում:*
*Երեխան **խաղում էր** բակում:*

Ընդգծված բառերը դրված են անկատար անցյալ ժամանակաձևով և ցույց են տալիս խոսելու պահից առաջ սկսված և անավարտ, ընթացքի մեջ գտնվող գործողություն:

Անկատար անցյալը կազմվում է անկատար ձևաբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով:

Դեմք	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
I	գրում էի, կարդում էի	գրում էինք, կարդում էինք
II	գրում էիր, կարդում էիր	գրում էիք, կարդում էիք
III	գրում էր, կարդում էր	գրում էին, կարդում էին

Ապակատար ներկա

*Շենքի կառուցումն **ավարտվելու է** եկող տարի:*

Ընդգծված բառը դրված է ապակատար ներկա ժամանակաձևով և ցույց է տալիս խոսելու պահից հետո կատարվելիք գործողություն:

Ապակատար ներկան կազմվում է ապակատար ձևաբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով:

Դեմք	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
I	գրելու եմ, կարդալու եմ	գրելու ենք, կարդալու ենք
II	գրելու ես, կարդալու ես	գրելու եք, կարդալու եք
III	գրելու է, կարդալու է	գրելու են, կարդալու են

Ապակատար անցյալ

*Գնացքը **շարժվելու էր** կեսգիշերից հետո, բայց մեկնումը հետաձգեցին:*

Ընդգծված բառը դրված է ապակատար անցյալ ժամանակաձևով և ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետից հետո կատարվելիք գործողություն:

Ապակատար անցյալը կազմվում է ապակատար ձևաբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով:

Դեմք	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
I	գրելու էի, կարդալու էի	գրելու էինք, կարդալու էինք
II	գրելու էիր, կարդալու էիր	գրելու էիք, կարդալու էիք
III	գրելու էր, կարդալու էր	գրելու էին, կարդալու էին

Վաղակատար ներկա

*Ես **գրել եմ** հանձնարարված աշխատանքը:*

Ընդգծված բառը դրված է վաղակատար ներկա ժամանակաձևով և ցույց է տալիս խոսելու պահից առաջ սկսված և ավարտված գործողություն:

Վաղակատար ներկան կազմվում է վաղակատար ձևաբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով:

Դեմք	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
I	գրել եմ, կարդացել եմ	գրել ենք, կարդացել ենք
II	գրել ես, կարդացել ես	գրել եք, կարդացել եք
III	գրել է, կարդացել է	գրել են, կարդացել են

Վաղակատար անցյալ

*Անտառապահը շատ **էր հոգնել. ման էր եկել** ամբողջ օրը:*

Ընդգծված բառերը դրված են վաղակատար անցյալ ժամանակաձևով և ցույց են տալիս մի անցյալ ժամանակակետում սկսված և ավարտված գործողություն:

Վաղակատար անցյալը կազմվում է վաղակատար ձևաբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով:

Դեմք	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
I	գրել էի, կարդացել էի	գրել էինք, կարդացել էինք
II	գրել էիր, կարդացել էիր	գրել էիք, կարդացել էիք
III	գրել էր, կարդացել էր	գրել էին, կարդացել էին

Վաղակատար ձևաբայով կազմվող դիմավոր ձևերը (ներկա և անցյալ) հիմնականում ցույց են տալիս մի այնպիսի գործողություն, որին խոսողը ականատես չի եղել: Օրինակ՝

*Երեկ Փարիզում **կայացել է** Շառլ Ազնավուրի մենահամերգը:*

Անցյալ կատարյալ

*Մատաղ սիրտս լացով **լցվեց,** Քանի անգամ նա **փշրվեց**՝*
Դարձավ կուժը ջուր ծախողիս, Ծախելով ծովն արցունքներիս:

Հովհաննես Շիրազ

Ընդգծված բառերը դրված են անցյալ կատարյալ ժամանակաձևով և ցույց են տալիս մի անցյալ ժամանակակետում սկսված և ավարտված գործողություն:

Անցյալ կատարյալը սահմանական եղանակի միակ պարզ ժամանակաձևն է, քանի որ կազմվում է առանց օժանդակ բայի՝ վերջավորություններով: Անցյալ կատարյալը կազմվում է երեք տիպի վերջավորություններով՝ 1) **-ի, -իր, –, -ինք, -իք, -ին**. 2) **-ի, -իր, -եց, -ինք, -իք, -ին**. 3) **-ա, -ար, -ավ, -անք, -աք, -ան**:

1-ին տիպի վերջավորություններով կազմվում է **ե** և **ա** խոնարհման պարզ և բազմապատկական բայերի անցյալ կատարյալը:

Դեմք	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
I	գրեց - **ի** կարդաց - **ի** կտրատեց - **ի**	գրեց - **ինք** կարդաց - **ինք** կտրատեց - **ինք**
II	գրեց - **իր** կարդաց - **իր** կտրատեց - **իր**	գրեց - **իք** կարդաց - **իք** կտրատեց - **իք**
III	գրեց - **–** կարդաց - **–** կտրատեց - **–**	գրեց - **ին** կարդաց - **ին** կտրատեց - **ին**

Վերջավորություններից առաջ դրված **աց** և **եց** մասնիկները հիմքի ածանցներ են:

Ան, են ածանց ունեցող **ա** խոնարհման բայերի անցյալ կատարյալը կազմվում է **-ա, -ար, -ավ, -անք, -աք, -ան** վերջավորություններով, և **ան, են** ածանցների փոխարեն դրվում են **աց, եց**: **Ն** և **է** սոսկածանցները անցյալ կատարյալում ընկնում են:

Դեմք	Եզակի թիվ		Հոգնակի թիվ	
I	հեռաց - **ա**, գտ - **ա**,	մոտեց - **ա**, փախ - **ա**	հեռաց - **անք**, գտ - **անք**,	մոտեց - **անք**, փախ - **անք**
II	հեռաց - **ար**, գտ - **ար**,	մոտեց - **ար**, փախ - **ար**	հեռաց - **աք**, գտ - **աք**,	մոտեց - **աք**, փախ - **աք**
III	հեռաց - **ավ**, գտ - **ավ**,	մոտեց - **ավ**, փախ - **ավ**	հեռաց - **ան**, գտ - **ան**,	մոտեց - **ան**, փախ - **ան**

Պատճառական բայերի անցյալ կատարյալը կազմվում է **-ի, -իր, -եց, -ինք, -իք, -ին** վերջավորություններով: Պատճառական **ացն, եցն, ցն** ածանցների փոխարեն անցյալ կատարյալում դրվում են **ացր, եցր, ցր**:

Դեմք	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
I	հեռացր - **ի**, վազեցր - **ի**, թռցր - **ի**	հեռացր - **ինք**, վազեցր - **ինք**, թռցր - **ինք**
II	հեռացր - **իր**, վազեցր - **իր**, թռցր - **իր**	հեռացր - **իք**, վազեցր - **իք**, թռցր - **իք**
III	հեռացր - **եց**, վազեցր - **եց**, թռցր - **եց**	հեռացր - **ին**, վազեցր - **ին**, թռցր - **ին**

Անցյալ կատարյալ ժամանակաձևով դրված բայերը հիմնականում ցույց են տալիս խոսելու պահից առաջ կատարված գործողություն, որին խոսողը ականատես է եղել:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ցույց տալիս սահմանական եղանակը:
2. Քանի՞ ժամանակաձև ունի սահմանական եղանակը, և որո՞նք են դրանք:
3. Որո՞նք են սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակաձևերը:
4. Ո՞րն է սահմանական եղանակի միակ պարզ ժամանակաձևը:
5. Ինչպե՞ս են կազմվում սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակաձևերը:
6. Ի՞նչ վերջավորություններով է կազմվում անցյալ կատարյալը:

Վարժություն 101: Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված սահմանական եղանակով:

ա) 1. գրել է, նայում էր, չեմ ների, չարչարեց
2. դասավորեմ, շնորհի՛ր, տանելու է, բերեց
3. ապաքինվելու էր, պոռթկացել է, փղձկում էին, տարավ
4. սարսափում է, արշավեց, չէր ուզում, հանդգնի՛ր

բ) 1. պապանձվեց, կսթափվի, համարձակվում են, անէացել է
2. չի ուզում, չեմ վազի, չեք օժանդակել, չէր հեռանալու
3. անրջում է, վերացրել է, թռավ, գրեց
4. կգրավես, մեղադրում է, պտուտակվեց, հասավ

գ) 1. անցի՛ր, կարդացիր, մոռացել է, տեսավ
2. դարձի՛ր, խաղացիր, նայեցիր, բերում էր
3. տնտղեց, սավառնելու է, զրպարտել է, չի մոտեցրել
4. կառանձնանամ, փթթեր, շշնջաց, փակցրել էր

Վարժություն 102: Գտե՛ք և դո՛ւրս գրեք սահմանական եղանակի բայաձևերը՝ նշելով դրանց ժամանակը, դեմքը և թիվը:

Երգում է քաղաքն իր երգն առօրյա,
Իսկ ես մտածկոտ, տրտում ու լռին
Կանգնել եմ ահա կամուրջի վրա
Եվ նայում եմ հորդ, հեռացող ջրին:
Նայում եմ տարված, մոռացված, անթարթ:
Վազում են, վազում ջրերը անվերջ:
Փրփուրի միջից ահա մի նայադ[1]
Ինձ ձեռքով արեց և իր մոտ կանչեց,
Որպես մանկական կապույտ երազում,
Խառնվեց ահա ճերմակ փրփուրին.
Եվ թվում է, թե կամուրջն է վազում,
Որ հասնի անդարձ հեռացող ջրին:

Եղիշե Չարենց

Նադիր շահը զորք հավաքեց,
Զորք հավաքեց անհամար,
Եկավ, Թըմկա բերդը պատեց,
Ինչպես գիշերն էն խավար:
– Հե՛յ, քա՛ջ Թաթուլ,– կանչեց շահը,–
Անմա՞հ էիր քեզ կարծում,
Ե՛կ, բերել եմ ես քո մահը,
Ի՞նչ ես թառել ամրոցում:

Հովհաննես Թումանյան

[1] Հոսող ջրերի հավերժահարս, ջրահարս:

Վարժություն 103: Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված անցյալ կատարյալ ժամանակով:

ա) 1. կվազեմ, տեսա, նայեցի, խաղա
2. հասավ, գրեցինք, զարգացար, ընկաք
3. նստեց, աշխատենք, տպեցիք, մոռացանք:
4. դարձան, փոխվեց, հասի՛ր, տեսաք:

բ) 1. հնչեց, լռեցի, մոտեցաք, թռան
2. տե՛ս, կոտրվեց, հեռանանք, վայելեի
3. ջրեցի, քանդեցի, խլեցի, զարգացնեի
4. պատռվեց, ջնջեցիք, երգենք, մեռավ

գ) 1. աշխատեցիք, թաքցնեմ, քողարկեց, շողացի
2. բուժված, գովերգի՛ր, շարժվեցինք, լրջացան
3. բարկացանք, փութաց, նայեց, հոգնած
4. գժվեցիք, արթնացավ, դրեց, մտորեցի

Վարժություն 104: Արտագրե՛ք նախադասությունները՝ փակագծերում տրված բայերը դնելով սահմանական եղանակի համապատասխան ժամանակաձևերով:

1. Արևի ճառագայթները ... նեղփեղկ լուսամուտից, և նրանցով ... մի աներևույթ պատ, որի միջով քուլա-քուլա ... բուրվառի ծուխը: *(ներս ընկնել, բարձրանալ, ստեղծել)*
2. Ցերեկը, երբ արևի լույսը պայծառ է, ... ժամանակի ավերիչ հետքերը, իսկ գիշերը սֆինքսի դեմքը ավելի հարթ ..., և ստվերների մեկընդմեջ փոփոխություններից սֆինքսը կարծես ..., մտածում և զգում: *(թվալ, երևալ, հուզել)*
3. Հազար ինը հարյուր քսաներկու թվականին անգլիացի հնագետ Հովարդ Կարտերի գլխավորությամբ Եգիպտոսում՝ Նեղոսի ձախ ափին, երկարատև որոնումներից հետո ... ստորերկրյա մի խորհրդավոր դամբարան, որը ... եգիպտական փարավոններից մեկին՝ Թութանհամոնին. նա ... մեզանից երեք հազար հինգ հարյուր տարի առաջ: *(պատկանել, իշխել, հայտնաբերել)*
4. Սյունազարդ եկեղեցում մի տարեց կին աղոթք ..., մի կին էլ, խախտելով խորհրդավոր լռությունը, բրիչով հատակին կաթկթած մոմերն ..., և բրիչը սուր ճռռոց ...: *(քերել, արձակել, մրմնջալ)*
5. Իրիկնապահին, երբ բոսոր արևը տխուր գգվանքով աստիճանաբար ... բարձրաբերձ սարերի կատարներին, մենք ... մի կածան, որը ... դեպի մոտակա եկեղեցին: *(գտնել, փարվել, տանել)*
6. Առատ լույսից շլացած՝ անընդմեջ այս ու այն կողմ ... խայտացող ձկները հազիվ մի երկու թզաչափ ... ծփծփացող ջրից, ապա դարձյալ ճողփյունով ... ջուրը: *(ընկնել, ցատկել, կտրել)*

7. Արդեն բարձրացած արփին ... թիավարի մեջքն ու ծոծրակը, և նա վերջնականապես ... վաղորդայնի թմբիրից ու աչքերը լայն ...՝ ծուլորեն զննելով շուրջը: *(սթափվել, տաքացնել, բաց անել)*
8. Արդեն փոքր-ինչ ... արևելքը, և աստիճանաբար տարրալուծվող խավարում ... շրջապատի առարկաները՝ աղյուսե տները, տախտակե ցանկապատը, իսկ հեռվում ... լեռնաշղթան: *(սևին տալ, շառագունել, նշմարել)*
9. Թեև նախորդ օրը հոգնած էի, այնուամենայնիվ շատ վաղ ... . գյուղում մարդը կարծես մի տեսակ ..., եթե չասենք ափսոսում, որ վաղորդյան զով ժամերը քնին ...: *(ամաչել, նվիրել, արթնանալ)*
10. Առավոտյան աղջամուղջը դեռ նոր ..., և արևելքը դեռ նոր ..., բայց հյուրընկալս՝ քահանան, արդեն փութկոտ քայլերով ... դեպի գյուղի հինավուրց եկեղեցին: *(ցրել, գնալ, շառագունել)*

Վարժություն 105: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք նշված ժամանակաձևի բայաձևը

1. անկատար ներկա – գրել եմ, գրելու եմ, գրեցի, գրում եմ
2. վաղակատար ներկա – նորոգել էին, նորոգել են, նորոգում են, նորոգում էին
3. անկատար անցյալ – նկարեցին, նկարում էր, նկարելու էին, նկարել է
4. ապակատար ներկա – հիշում եմ, հիշել էին, հիշել ես, հիշելու են
5. վաղակատար անցյալ – երգեցին, երգել էր, երգելու է, երգում էր
6. ապակատար անցյալ – կարդալու էր, կարդացել էր, կարդում էր, կարդում է
7. անցյալ կատարյալ – խաղում է, խաղացել է, խաղացին, խաղալու էր
8. անցյալ կատարյալ – գտնում է, գտել է, գտնելու են, գտան
9. վաղակատար ներկա – տեսել է, տեսել էր, տեսնելու էիր, տեսավ
10. անկատար ներկա – մտածեցին, մտածելու են, մտածում ես, մտածում էր

Վարժություն 106: Դո՛ւրս գրեք սահմանական եղանակի բայաձևերը և խմբավորե՛ք ըստ ժամանակաձևերի՝ նշելով նաև դեմքը և թիվը:

ա) Մեր ընտանիքում բացարձակ ներդաշնակություն էր տիրում: Միայն վաղեմի մի քեն երբեմն մորս՝ Քնարին, հակադրում էր հորս: Մայրս ծնվել էր Իզմիր քաղաքում: Նրա աղջկական ազգանունը Բաղդասարյան էր, բայց անձնագրում Բաղդասարյանը խեղաթյուրվել, տեղի էր տվել Փափազյանին: Այդ անհեթեթ թյուրիմացության միակ մեղավորը հայրս էր: Անձնագրային սեղանի մոտ կանգնած՝ նա մի ակնթարթ մոռանում է մորս ազգանունը ու ստիպված ասում է առաջին ազգանունը, որը միտքն է գալիս: Հայրս՝ Միշա Մամիկոնի Ազնավուրյանը, ծախսարար ու դյուրահավատ մի մարդ էր՝ ծնված Թիֆլիսում Վրաստանի մայրաքաղաքում: Քույրս՝ Ահդան, ծնվել էր հինավուրց Սալոնիկում Հունաստանում: Մենք հայ ընտանիք էինք ու բոլոր գաղթական հայերի պես կապված էինք մեր լեզվին, սովորույթներին ու եկեղեցուն: Հավասար չափով զգայուն էինք և՛ հումորի, և՛ ողբերգության

նկատմամբ: Սիրում էինք սրտաբուխ ծիծաղել, մեղմահնչյուն երգել, առանց գլուխը կորցնելու հարբել, խրոխտ պարել և սրտահույզ դեպքերից արտասվել: Այո՛, նաև արտասվում էինք, որովհետև հայի հոգին շատ նրբազգաց է: Հայը լաց է լինում և՛ կնունքին, և՛ պսակին, և՛ թաղմանը:

Ըստ Շարլ Ազնավուրի

բ) Հարմար դիրք ընտրելուց և կտավը տախտակին ամրացնելուց հետո միայն նկատեց, որ Վարագա գագաթը արդեն շառագունել է: Ամպերը գունատվում և ապա շիկանում էին՝ դեղին, կարմիր, նարնջագույն երանգներ ընդունելով: Կարծես արևի լուսեղեն հեղեղը եկել ու ծովացել էր կորնթարդ լեռան առաջ և ուր որ է նրա ձյունափառ գագաթներից խուժելու էր ցած՝ դեպի քնից նոր արթնացած Վանա չքնաղ ծովը՝ հանկարծակիի բերելով նրան, որը, անակնկալից ուշքի գալով, ագահորեն կլանելու էր այդ վիթխարի հեղեղը և հազարագույն նրբերանգներով անդրադարձնելու երկինքը: Թերլեմեզյանը, հրացանն ու պատմուճանը մի կողմ դրած, ինքնամոռաց որսում ու անընդմեջ կտավին էր հանձնում հարազատ բնօրրանի երփներանգ այգաբացի ակնախտիղ գույները: Թվում էր՝ աներևույթ մի ուժ մի ակնթարթ քարացրել, կանգնեցրել էր ամեն շարժում ու ժամանակ, որ վրձինը՝ նկարչի անբաժան ուղեկիցը, իր գործը տեսնի: Հանկարծ խաղաղ օդի մեջ շրխկաց նախ առաջին, ապա երկրորդ հրացանազարկը: Հրացանազարկի՝ հեռվից երևացող ծուխն ասես բարձրանում էր ոչ թե հրացանի մահաբեր փողից, այլ առավոտ կանուխ վառած թոնիրներից: Այդ պատրանքը մի պահ տևեց միայն: Հաջորդ վայրկյանին նկարչի վրձինը ընկավ ձեռքից:

Ըստ Զարգանի Դարյանի

Կարստ Յոզեֆ (1871–1942)

Գերմանացի լեզվաբան, հայագետ. ուսումնառությունը ձեռք է բերել Ստրասբուրգի համալսարանում, որտեղ աշակերտել է Հ. Հյուբշմանին: Աշխատել է նույն համալսարանում: 1899թ. «Կիլիկյան հայերենի արտասանությունն ու ձայնավորները» աշխատության համար ստացել է դոկտորի աստիճան: 1901թ. գերմաներենով հրատարակել է իր նշանավոր աշխատությունը՝ «Կիլիկյան հայերենի պատմական քերականությունը»: Այստեղ որոշ տեղ է հատկացված նաև միջնադարյան առակների ու բարոյախոսական երկերի դիտարկումներին:

«Հայոց ազգագրական դիրքը» (1911, գերմ.), «Ալարոդյաններ և նախաբասկեր» (1928, ֆրանս.), «Հայ բանասիրության պատմություն» (1907, գերմ.) աշխատություններում փորձել է պարզել հայերի նախնական էթնիկական շփումներն ու խմորումները: Գերմաներեն է թարգմանել Սմբատ Սպարապետի և Մխիթար Գոշի դատաստանագրքերը: Ունի նաև միջին հայերենի բառարան, որը դեռևս անտիպ է:

Հրամայական եղանակ

__Շաչեցե՛ք__, հողմե՛ր, __փչեցե՛ք__ ուժգին,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:

Ավետիք Իսահակյան

Ընդգծված բառերը արտահայտում են գործողության հրաման և դրված են հրամայական եղանակով:

Հրամայական եղանակի բայաձևերն արտահայտում են գործողության հրաման, կոչ, հորդոր, խնդրանք:

Հրամայական եղանակն ունի մեկ ժամանակաձև՝ ապառնի, մեկ դեմք՝ երկրորդ, և երկու թիվ՝ եզակի և հոգնակի:

Եզակի՝

__Գրի՛ր__ այդ նամակը:
__Կարդա՛__ այս գիրքը:

Հոգնակի՝

«__Կանգնեցե՛ք__»,– գոչեց վրձինը ձեռքին
Կախարդ ծերունին հուզված տարերքին:

Հովհաննես Թումանյան

Հրամայական եզակին **ե** խոնարհման բոլոր և **ա** խոնարհման ածանցավոր բայերի դեպքում կազմվում է **-ի՛ր**, իսկ **ա** խոնարհման պարզ բայերի դեպքում՝ **-ա՛** վերջավորություններով: **Ն** և **է** ածանցները հրամայականում ընկնում են, իսկ **ան, են** ածանցների փոխարեն դրվում են **աց, եց**, ինչպես՝ *գրել – գրի՛ր, կարդալ – կարդա՛, գտնել – գտի՛ր, փախչել – փախի՛ր, հեռանալ – հեռացի՛ր, մոտենալ – մոտեցի՛ր:*

Հրամայական հոգնակին կազմվում է **-ե՛ք** վերջավորությամբ, որին միանում են հիմքի **աց, եց** ածանցները՝ *վազեցե՛ք, խաղացե՛ք:*

Այսօր լայնորեն տարածված են նաև **ե** խոնարհման բայերի հրամայականի կարճ ձևերը՝ առանց **եց** ածանցի՝ *վազե՛ք, նստե՛ք:*

Ացն, եցն, ցն ածանցներն ունեցող բայերի եզակի հրամայականը ստանում է **-ո՛ւ**, իսկ հոգնակին՝ **-ե՛ք** վերջավորություն: **Ացն, եցն, ցն,** ածանցների փոխարեն դրվում են **ացր, եցր, ցր՝** *հեռացնել – հեռացրո՛ւ – հեռացրե՛ք, մոտեցնել – մոտեցրո՛ւ – մոտեցրե՛ք, թռցնել – թռցրո՛ւ – թռցրե՛ք:*

Հրամայական եղանակի ժխտականը կոչվում է **արգելական հրամայական:** Այն կազմվում է՝ **մի՛** բառը ավելացնելով դրական ձևին, օրինակ՝ *գրի՛ր – մի՛ գրիր, գրե՛ք – մի՛ գրեք, կարդա՛ – մի՛ կարդա, կարդացե՛ք – մի՛ կարդացեք:*

Հրամայական եղանակի բայերը միշտ շեշտվում են: Արգելական հրամայականի դեպքում շեշտը դրվում է **մի՛** արգելականի վրա:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ցույց տալիս հրամայական եղանակը:
2. Քանի՞ ժամանակաձև ունի հրամայական եղանակը:
3. Որո՞նք են հրամայական եղանակի բայաձևերի վերջավորությունները:

Վարժություն 107: Գտե՛ք հրամայական եղանակի բայերը, բացատրե՛ք կազմությունը:

Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին,
Մեր երկրիրը ավերված, բայց սուրբ է և հին:

Վահան Տերյան

Հե՛յ, հեռավո՛ր ընկերներ ու եղբայրներ, –
Դուք չե՞ք լսում. ձեզ ենք կանչում, –
Զվարթ ու սեգ,
Եկե՛ք, մտե՛ք շուրջպարը մեր –
Եկե՛ք, եկե՛ք:

Վահան Տերյան

Բախտդ հեռվում մի՛ որոնիր, սիրելի՛ս,
Ամեն մեկին երգ մի՛ ձոնիր, սիրելի՛ս,
Ոսկե ձուկը ցանցիդ մեջ չէ քանի դեռ,
Հաղթանակդ զուր մի՛ տոնիր, սիրելի՛ս...

Հարցրո՛ւ քեզ՝ պատին մի քար դրած կա՞ս,
Քո ուսերին հոգսի մի բեռ կրած կա՞ս,
Շատ ես սիրում մրգեր՝ անո՛ւշ, քաղցրահամ,
Սակայն կյանքում գոնե մի ծառ ջրած կա՞ս:

Լիպարիտ Սարգսյան

Աստըծո նման խաղա՛ղ պահիր քեզ,
Աստըծո նման եղի՛ր բարեսիրտ,
Նրա պես եղի՛ր հավասարատես
և ծաղկեցըրո՛ւ նշխարը լույսիդ:

Աստըծո նման եղի՛ր գթառատ,
շուրջդ բարություն ու սե՛ր սերմանիր,
ձեռքդ տա՛ր զգույշ և հոգիներից
չարի, պղծության արմա՛տը հանիր:

Հանի՛ր, քանի դեռ ուշ չէ հավիտյան,
քանի դեռ ցավ կա հոգում բզկտված,
և հավատա՛, որ քեզ էլ հավատան,
և հավատա՛, որ խեղճ են ու լքված:

Եվ հավատալով բաշխի՛ր քեզ, օրհնյա՛լ,
մատուցվի՛ր, ինչպես սերն է մատուցվում.
ոգեղեն խոսքը և լույսն աստղերի
ահա գալիս են, քո մեջ ագուցվում:

...Քո լեռան վրա չի ծաղկում ոչինչ,
քո լեռն՝ ամայի, և հուզումդ՝ մերկ,
լուսնի տակ շփոթ մի՛ կանգնիր այդպես,
մի՛ սարսռեցրու կարոտներդ մեղկ:

Եվ թե քեզ ուտեն, դու մի՛ վշտանա,
մի՛ տրտմիր ցավով, այլ լոկ իմացի՛ր,
որ զեռունները մարմինդ կերան,
նրանք, որ միայն ապրում են հացիվ:

Եվ թեև սուտ է, թեև չի լինի,
սակայն հավատա՛ կրկին ու կրկին,
որ քո մասունքը նրանց մեջ մի օր
աշխարհ կբերի Հրաշք-Մանուկին:

Ռազմիկ Դավոյան

Վարժություն 108: Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված հրամայական եղանակով (հրամայականի շեշտերը դրված չեն):

ա) 1. հեռացիր, անցիր, նկարիր, մի նշիր
2. նայեցիր, մեկնիր, տես, հայտնեք
3. վերցրեք, մի առարկիր, գրիր, սիրեցիր
4. լսիր, մի պատռիր, զարկեցիր, ընդունիր

բ) 1. մի քայլեք, կրակեք, տեսեք, խղճայիք
2. փութացեք, մի բացեք, վերցրու, նետիր
3. կոծկեցիր, հասիր, մարտնչիր, ունեցիր
4. մի գա, գծիր, չեմ տա, պատմիր

գ) 1. մեծարեք, արարեք, տարեք, գրեիք
2. քերթեք, սիրեք, նստեցիք, բացեցիք
3. կաշկանդիր, խղճա, կերակրիր, տաքացրու
4. մի թելադրիր, չեմ մեծարի, մի կորցրու, չես ուզում

Վարժություն 109: Կազմե՛ք տրված բայերի հրամայականի եզակի և հոգնակի ձևերը:

Կարդալ, փախչել, մոտենալ, հեռանալ, գտնել, գրել, մոտեցնել, հիշեցնել, քայլել, անցնել:

Ըղձական եղանակ

*Դեռ մի կարոտ ունեմ անհագ՝ **հասնեմ** Անի ու նոր **մեռնեմ**,*
*Բանամ ճամփիս դռները փակ, **տեսնեմ** Անին ու նոր **մեռնեմ**:*

Հովհաննես Շիրազ

Ընդգծված բայերը դրված են ըղձական եղանակով և ցույց են տալիս ցանկալի գործողություն, գործողության կատարման իղձ, ցանկություն:

Ըղձական եղանակն ունի երկու ժամանակաձև՝ **ապառնի** և **անցյալ**:

Ըղձական ապառնին ցույց է տալիս խոսելու պահից հետո կատարվելիք ցանկալի գործողություն և կազմվում է՝ անորոշ դերբայի **-ել, -ալ** վերջավորությունների փոխարեն ավելացնելով համապատասխան վերջավորություններ:

Դեմք	Ե խոնարհում		Ա խոնարհում	
	Եզակի թիվ	Հոգնակի թիվ	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
I	վազ - **եմ**	վազ - **ենք**	կարդ - **ամ**	կարդ - **անք**
II	վազ - **ես**	վազ - **եք**	կարդ - **աս**	կարդ - **աք**
III	վազ - **ի**	վազ - **են**	կարդ - **ա**	կարդ - **ան**

Ըղձական անցյալը ցույց է տալիս խոսելու պահից առաջ կատարվելիք ցանկալի գործողություն և կազմվում է՝ անորոշ դերբայի **-ել, -ալ** վերջավորությունների փոխարեն ավելացնելով համապատասխան վերջավորություններ:

Դեմք	Ե խոնարհում		Ա խոնարհում	
	Եզակի թիվ	Հոգնակի թիվ	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
I	վազ - **(ե)ի**	վազ - **(ե)ինք**	կարդ - **(ա)յի**	կարդ - **(ա)յինք**
II	վազ - **(ե)իր**	վազ - **(ե)իք**	կարդ - **(ա)յիր**	կարդ - **(ա)յիք**
III	վազ - **(ե)ր**	վազ - **(ե)ին**	կարդ - **(ա)ր**	կարդ - **(ա)յին**

Ըղձական եղանակի ապառնու և անցյալի վերջավորություններում արտասանության ժամանակ երկու ձայնավորների միջև լսվող **յ** ձայնակապը (գրե(յ)ի) կանոնի համաձայն գրվում է միայն **ա** խոնարհման բայերում (կարդայի, խաղայի):

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ցույց տալիս ըղձական եղանակը:
2. Որո՞նք են ըղձական եղանակի ժամանակաձևերը:
3. Ի՞նչ վերջավորություններով են կազմվում ըղձական եղանակի ժամանակաձևերը:

Վարժություն 110: Գտե՛ք և դո՛ւրս գրեք ըղձական եղանակի բայերը: Նշե՛ք այն բայերը, որոնք հեղինակն է ստեղծել:

ա) Մայրաքաղաք Երևանին Անին դարձնեմ մայրաքաղաք,
Պալատներով իմ նորաթագ վեմեմ Անին, կյանքի գոչեմ:

Բանտից հանեմ մեծ Հայաստանն՝ այս ազատված փոքրիս խառնեմ,
Գրկելով հողն իմ բովանդակ՝ հայկեմ Անին ու նոր մեռնեմ:

Հայոց թագի շաղափն հասնի Վանա ծովի մութ վահանին,
Առագաստեմ ծովերս անտակ, թագեմ Անին, թագավորեմ:

Հազար տարվա կարոտ ունի իմ երազը հազարաթև՝
Ա՛խ, թեկուզ լուռ, դեռ ավերակ տեսնեմ Անին ու նոր մեռնեմ:

Որպես ոսկի վաղվա գուշակ, որպես Մասիսն իմ անուշակ,
Գլխին հայոց մի դրոշակ՝ տեսնեմ Անին... ու չմեռնեմ:

Հովհաննես Շիրազ

բ) Գտնեմ դեռ կորած խաչքար մի, հա՛յր իմ,
Որպես շիրիմդ՝ համբուրեմ ու լամ,
Քարի տակ՝ սիրտդ աշխարհ մի, հա՛յր իմ,
Էլ ինչպե՞ս, հայ՛ր իմ, համբուրեմ՝ չլամ,
Գրկեմ խաչքարե նշխար մի, հա՛յր իմ,
Համբուրեմ, գգվեմ, գուրգուրեմ ու լամ:

Հովհաննես Շիրազ

Վարժություն 111: Առանձին սյունակներով դո՛ւրս գրեք ըղձական եղանակի *-ե* և *-ա* խոնարհման բայերը, նշե՛ք ժամանակը, դեմքը, թիվը:

Մի գիշերով արթնանայիր,
Իմ հեռավո՛ր աշխարհ,
Եվ լուսնկան մեր կտուրից
Թվար խոշոր նշխար:

Կարկաչեր երգը ջրվորի
Գիշերվա մեջ վճիտ,
Ու երկինքը խշշար վրաս
Իբրև աստղոտ մի չիթ:

Եվ կալերից արևաբույր
Գային բարակ հովեր,
Ու մեր բարդին, թաթին ելած,
Շեկլիկ աստղը շոյեր:

Նորից ամեն տերևի մեջ
Դողար մի լույս ասուպ,
Տատս չոքեր ու Աստծո հետ
Աներ զրույցն իր սուրբ:

Գետի ահեղ որոտը գար
Մութ ու ահեղ ձորից,
Եվ աշխարհում ամեն ինչի
Հավատայի նորից:

Հավատայի, որ այդ գետում
Կան ջրի լույս հարսներ,
Եվ նրանցից մեկն անպայման
Պիտի որ ինձ հասներ:

Հավատայի, որ շողերից
Ճանապարհներ հյուսել,
Դու ես շրջում, Աստվածամա՛յր,
Բաժանում գութ ու սեր....

Վահագն Դավթյան

Վարժություն 112: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն բայը, որը ըղձական եղանակի չէ:

1. գրեմ, տեսնեիր, կարդաց, լիներ
2. հավատար, հիանային, լսեր, կարողացան
3. ոգեշնչվեց, մոռանայի, հիշի, նկարեր
4. այցելեր, հաղթեինք, վազեց, մոտենա
5. ստեղծագործես, կառուցեմ, նշեցին, լուսավորի
6. նավարկեն, հուսադրեց, կատարի, միանար
7. ներկայացնես, ճամփորդեին, հանդիպեց, լիանար
8. մոտեցավ, ընթերցես, հղկեին, զմայլվեն
9. թիավարի, զբոսնեն, դիտեմ, լուսացավ
10. հավատանք, գեղեցկացնի, հանդիպեիր, թեթևացա

Վարժություն 113: Խոնարհե՛ք տրված բայերը ըղձական եղանակի երկու ժամանակներով:

Քայլել, նկարել, կարդալ, հիանալ, գտնել:

Ենթադրական (պայմանական) եղանակ

*Դու **կգաս** ու կրկին հեքիաթով **կդյութես**...*

Վահան Տերյան

Ընդգծված բայերը դրված են ենթադրական եղանակով:

Ենթադրական եղանակի բայաձևերը ցույց են տալիս հաստատ կամ պայմանով, ենթադրաբար կատարվելիք գործողություն: Այս եղանակն ունի երկու ժամանակաձև՝ ապառնի և անցյալ:

Ենթադրական ապառնին կազմվում է՝ **կ** եղանակիչը ավելացնելով ըղձական ապառնու ձևերին, և ցույց է տալիս խոսելու պահից հետո հաստատ կամ էլ պայմանով, ենթադրաբար կատարվելիք գործողություն:

Դեմք	Ե խոնարհում		Ա խոնարհում	
	Եզակի թիվ	Հոգնակի թիվ	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
I	**կվազեմ**	**կվազենք**	**կխաղամ**	**կխաղանք**
II	**կվազես**	**կվազեք**	**կխաղաս**	**կխաղաք**
III	**կվազի**	**կվազեն**	**կխաղա**	**կխաղան**

Ենթադրական անցյալը կազմվում է՝ **կ** եղանակիչը ավելացնելով ըղձական անցյալի ձևերին, և ցույց է տալիս խոսելու պահից առաջ հաստատ կամ էլ պայմանով, ենթադրաբար կատարվելիք գործողություն:

Դեմք	Ե խոնարհում		Ա խոնարհում	
	Եզակի թիվ	Հոգնակի թիվ	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
I	**կ**վազեի	**կ**վազեինք	**կ**խաղայի	**կ**խաղայինք
II	**կ**վազեիր	**կ**վազեիք	**կ**խաղայիր	**կ**խաղայիք
III	**կ**վազեր	**կ**վազեին	**կ**խաղար	**կ**խաղային

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ցույց տալիս ենթադրական եղանակը:
2. Քանի՞ ժամանակաձև ունի ենթադրական եղանակը:
3. Ինչպե՞ս են կազմվում ենթադրական եղանակի ժամանակաձևերը:

Վարժություն 114: Գտե՛ք ենթադրական եղանակով դրված բայերը, դարձրե՛ք անորոշ դերբայ և որոշե՛ք խոնարհումը՝ *-է՞*, թե՞ *-ա*: Նշե՛ք շեղումները ժամանակակից հայերենից:

Էլի գարուն կգա, կբացվի վարդը,
Սիրեկանը էլի յարին կմնա:
Կփոխվին տարիքը, կփոխվի մարդը,
Բլբուլի երգը էլի սարին կմնա:
Ուրիշ բլբուլ կգա, կմտնի բաղը,
Ուրիշ աշուղ կասե աշխարհի խաղը.
Ինչ որ ե՛ս չեմ ասե – նա՛ կասե վաղը,
Օրերը ծուխ կըլին, տարին կմնա:
Հազար վարդ կբացվի աշխարհի մեջը,
Հազար աչք կթացվի աշխարհի մեջը,
Հազար սիրտ կխոցվի աշխարհի մեջը –
Էշխը կրակ կըլի, արին կմնա:
Ուրիշ սրտի համար կհալվի խունկը,
Կբացվի շուշանը, վարդերի տունկը,
Գոզալը լաց կըլնի, կընկնի արցունքը –
Գերեզմանիս մարմար քարին կմնա:

Եղիշե Չարենց

Վարժություն 115: Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված ենթադրական եղանակով:

ա) 1. կդյութես, կնայենք, կուտի, կկատարի
2. կապրենք, կուտակենք, կաշխատենք, կալարենք

3. չեմ սուզվի, կմեծարվի, չես խղճա, կոշտացավ
4. կգա, կհոգա, կտկտա, կտա

բ) 1. կփրկի, կասես, կնայեք, կորացե՛ք
2. կտեսնի, կուսանի, կկուրանա, կկայանա
3. կուրացավ, չի կուրանա, կգնա, կասեք
4. կդնի, կփորի, կկատաղի, կարի

գ) 1. չի մաշկի, չի տեսնի, չի գրում, չի տեսել
2. կասեմ, կուզեմ, կգամ, կտամ
3. մի՛ գա, մի՛ ասա, մի՛ զգա, մի՛ խաղա
4. կերգես, չէիր կարդում, չես նազի, կշորորաս

Վարժություն 116: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն բայը, որը ենթադրական եղանակի բայաձև չէ:

1. կարագանա, կանեանան, կարդան, կաղամ
2. կանխազգացիր, կախորժի, կըղձանք, կաներևութանա
3. կմկմաց, կանշարժանան, կագահանան, կուշանամ
4. կիմանա, կարողանար, կամայանա, կարմատանային
5. կամուսնանա, կայցելես, կարտացոլի, կծկվեց
6. կուզենա, կաղոթեմ, կաղմկեին, կշտամբեցին
7. կենդանացավ, կարդարանայիր, կընկերանան, կուղարկի
8. կառաջարկենք, կիրառվեց, կընդգրկվի, կարժեզրկվի
9. կարդուկեն, կոշտացնի, կաղեղվի, կուղղեին
10. կաճեն, կաշկանդվեին, կայրեր, կանվանեն

Վարժություն 117: Խոնարհե՛ք տրված բայերը ենթադրական եղանակի երկու ժամանակներով (եզակի և հոգնակի):

Կառուցել, սովորել, դժվարանալ, հասնել, բացատրել:

Հարկադրական եղանակ

*Դու **պիտի ապրես** քո հայրենիքում:*

Ընդգծված բայը դրված է հարկադրական եղանակով: Հարկադրական եղանակի բայաձևերը ցույց են տալիս հարկադրաբար, անհրաժեշտաբար կատարելի գործողություն: Հարկադրական եղանակն ունի երկու ժամանակաձև՝ **ապառնի** և **անցյալ**:

Հարկադրական ապառնին ցույց է տալիս խոսելու պահից հետո հարկադրաբար, անհրաժեշտաբար կատարվելիք գործողություն և կազմվում է՝ ըղձական ապառնուն ավելացնելով **պիտի** կամ **պետք է** եղանակիչը:

Դեմք	Ե խոնարհում		Ա խոնարհում	
	Եզակի թիվ	Հոգնակի թիվ	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
I	**պիտի** վազեմ	**պիտի** վազենք	**պիտի** խաղամ	**պիտի** խաղանք
II	**պիտի** վազես	**պիտի** վազեք	**պիտի** խաղաս	**պիտի** խաղաք
III	**պիտի** վազի	**պիտի** վազեն	**պիտի** խաղա	**պիտի** խաղան

Հարկադրական անցյալը ցույց է տալիս խոսելու պահից առաջ հարկադրաբար, անհրաժեշտաբար կատարվելիք գործողություն և կազմվում է՝ ըղձական անցյալին ավելացնելով **պիտի** կամ **պետք է** եղանակիչը:

Դեմք	Ե խոնարհում		Ա խոնարհում	
	Եզակի թիվ	Հոգնակի թիվ	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
I	**պիտի** վազեի	**պիտի** վազեինք	**պիտի** խաղայի	**պիտի** խաղայինք
II	**պիտի** վազեիր	**պիտի** վազեիք	**պիտի** խաղայիր	**պիտի** խաղայիք
III	**պիտի** վազեր	**պիտի** վազեին	**պիտի** խաղար	**պիտի** խաղային

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ցույց տալիս հարկադրական եղանակը:
2. Ի՞նչ ժամանակաձևեր ունի հարկադրական եղանակը:
3. Ինչպե՞ս են կազմվում հարկադրական եղանակի ժամանակաձևերը:

Վարժություն 118: Գտե՛ք հարկադրական եղանակի բայերը, որոշե՛ք դրանց դեմքը, թիվը և ժամանակը:

Աշուղ Սայաթ-Նովի նման ես երգ ու տաղ պիտի ասեմ,
Երգեմ պիտի գիշեր-ցերեկ – ու սրտի խաղ պիտի ասեմ,
Եվ էն սրտին, որ իր խորքում սիրո երգեր ունի ու սեր,
Ես էն սրտին դրախտային մրգերի բաղ պիտի ասեմ:

Եղիշե Չարենց

Ես պիտի դուրս գամ դեպի հրապարակ,
Առանց քնարի, անզարդ խոսքերով.
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ՝
Խավարի ընդդեմ պատերազմելով:

Միքայել Նալբանդյան

Եթե սիրում ես, էլ դարդ մի՛ անիր,
Պիտի պըսակեմ ես ձեզ անպատճառ...

Բայց ուր լինիս, դարձյալ հոգիս
Շուրջդ պիտի թրթռա:

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը՝ վառ հագած,
Հազա՛ր-հազա՛ր լուսապայծառ հոգիներով ճառագած:

Ու երկնահաս քո բարձունքին՝ Արարատի սուրբ լանջին,
Կենսաժպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՛ր հայրենիք
Հըզո՛ր հայրենիք...

Հովհաննես Թումանյան

Վարժություն 119: Խոնարհե՛ք տրված բայերը հարկադրական եղանակի երկու ժամանակներով (եզակի և հոգնակի):

Օգնել, խնամել, պատրաստել, այցելել, ներկայացնել:

Ժխտական խոնարհում

Դրական խոնարհման ժամանակ բայի արտահայտած գործողության կատարումը հաստատվում է, իսկ ժխտական խոնարհման դեպքում՝ հերքվում, ժխտվում: Ժխտական խոնարհումը կատարվում է **չ** և **մի՛** մասնիկների միջոցով:

Սահմանական եղանակի ժխտական խոնարհման ժամանակ գործում են հետևյալ օրինաչափությունները:

Բաղադրյալ դիմավոր ձևերի (անկատար, ապակատար, վաղակատար անցյալ և ներկա) ժխտականի կազմության ժամանակ օժանդակ բայը դառնում է նախադաս և ստանում է **չ** մասնիկը, իսկ օժանդակ բայերի ներկա ժամանակի եզակի III դեմքի **է**-ն դառնում **է** ի (գրում է – չի գրում, գրելու է – չի գրելու, գրել է – չի գրել):

Սահմանական եղանակի անցյալ կատարյալ և ըղձական եղանակի ապառնի և անցյալ ժամանակաձևերի ժխտականը կազմվում է՝ **չ** մասնիկն ավելացնելով բայաձևին. *գրեցի – չգրեցի, տեսա – չտեսա, գրեմ – չգրեմ, գրեի – չգրեի:*

Հարկադրական եղանակի ժխտականը կազմվում է՝ **չ** մասնիկը ավելացնելով եղանակիչին՝ *պիտի գրեմ, պետք է կարդամ, պիտի գրեի, պետք է կարդայի – չպիտի գրեմ, չպետք է կարդամ, չպիտի գրեի, չպետք է կարդայի:*

Ենթադրական եղանակի ժխտականը կազմվում է յուրահատուկ ձևով և ոչ թե դրականի ձևափոխմամբ, ինչպես մյուս դեպքերում: Ժխտական ձևաբային ավելացվում են օժանդակ բայի ժխտված ձևերը, այսինքն՝ դրական խոնարհման պարզ դիմավոր ձևը դառնում է բաղադրյալ դիմավոր ձև:

կվազեմ, կխաղամ – չեմ վազի, չեմ խաղա
կվազեի, կխաղայի – չէի վազի, չէի խաղա

Պետք է հիշել, որ սա ժխտական դերբայի միակ կիրառությունն է:

Հրամայական եղանակի ժխտականը կազմվում է **մի՛**-ով՝ *գրի՛ր – մի՛ գրիր, կարդա՛ – մի՛ կարդա:*

ԲԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

Դերանուն	Հոլովում							
	1. Ընդհանուր հոլովում			2. Ընդհանուր հոլովում				
	եզակի թիվ		հոգնակի թիվ	եզակի թիվ		հոգնակի թիվ		
	գրում էր	կարդում էր	գրում էին	գրում էի	կարդում էի	գրում էինք	կարդում էինք	
I	գրում ես	կարդում ես	գրում էք	գրում էին	կարդում էին	գրում էիք	կարդում էիք	
II	գրում է	կարդում է	գրում էն	գրում էր	կարդում էր	գրում էին	կարդում էին	
III	3. Հարակատարում ներկա			4. Հարակատարում անցյալ				
	եզակի թիվ		հոգնակի թիվ	եզակի թիվ		հոգնակի թիվ		
	գրել եմ	կարդացել եմ	գրել ենք	գրել էի	կարդացել էի	գրել էինք	կարդացել էինք	
I	գրել ես	կարդացել ես	գրել եք	գրել էին	կարդացել էին	գրել էիք	կարդացել էիք	
II	գրել է	կարդացել է	գրել էն	գրել էր	կարդացել էր	գրել էին	կարդացել էին	
III	5. Անորոշ անցյալ			6. Անորոշ անցյալ				
	եզակի թիվ		հոգնակի թիվ	եզակի թիվ		հոգնակի թիվ		
	գրել եմ	կարդացել եմ	գրել ենք	գրել էի	կարդացել էի	գրել էինք	կարդացել էինք	
I	գրել ես	կարդացել ես	գրել եք	գրել էին	կարդացել էին	գրել էիք	կարդացել էիք	
II	գրել է	կարդացել է	գրել էն	գրել էր	կարդացել էր	գրել էին	կարդացել էին	
III	7. Ենթադրյալ անցյալ							
	եզակի թիվ		հոգնակի թիվ					
	գրելու էի	կարդալու էի	գրելու էինք					
I	գրելու էիր	կարդալու էիր	գրելու էիք					
II	գրելու էր	կարդալու էր	գրելու էին					
III								

| | | |

ԲԱՅԻ ԺԱՏԿԱՆ ԽՈՍԱՓՈՒՄԸ

| | | |

| | | |

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ են արտահայտում ժխտական խոնարհման բայերը:
2. Ինչպե՞ս են կազմվում ժխտական ժամանակաձևերը:

Վարժություն 120: Արտագրե՛ք: Գտե՛ք դրական խոնարհման բայերը և ընդգծե՛ք մեկ գծով, ժխտական խոնարհմանը՝ երկու գծով:

Բարի նախանձով նրան եմ հիշում,
Ով չի մոլորվում անթափանց մուժում,
Ով չի վհատվում երկար վերելքից,
Չի հուսահատվում վայրի տարերքից,
Ով ստի հանդեպ բերան չի փակում,
Ով հոտած ջրում ուռկան չի ձգում,
Չի նայում կյանքին իբրև բոստանի,
Որտեղից պիտի չաղ բաժին տանի:

Ես նախանձում եմ նրան, վերջապես,
Անհուն նախանձով նրան եմ հիշում,
Ով հոգում չունի նախանձի նշույլ.
Ով աչք չի տնկում սուտ փառք ու պատվին
(Ինչպե՞ս նախանձես այն ճարպիկ կատվին,
Որ մի չաղ պատառ միս է թռցրել)...
Ով սերմ է ցանել ու բերք է հնձում,
Անբանն է միայն նրան նախանձում...

Բանից պարզվում է, ես ու իմ հոգին,
Որ չեմ նախանձում կյանքում ո՛չ ոքի...

Պարույր Սևակ

Վարժություն 121: Կազմե՛ք հետևյալ խոնարհված բայերի ժխտական ձևերը:

Կգաս, ասա՛, գրեցի, հեռանում էր, հասել է, զարկե՛ք, կլավանար, տեսել է, հեռացի՛ր, տո՛ւր, մտնում էր, ասաց, հիշելու էր, կբերեր, կանցներ:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է հարացույցը:
2. Ո՞րն է օժանդակ բայը, քանի ժամանակ, դեմք և թիվ ունի:
3. Ի՞նչ է ցույց տալիս սահմանական եղանակը:
4. Քանի՞ ժամանակաձև ունի սահմանական եղանակը, և որո՞նք են դրանք:
5. Որո՞նք են սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակաձևերը, և ինչպե՞ս են կազմվում դրանք:
6. Ո՞րն է սահմանական եղանակի միակ պարզ ժամանակաձևը, և ինչպե՞ս է կազմվում:

7. Ի՞նչ է ցույց տալիս հրամայական եղանակը:
8. Քանի՞ ժամանակաձև ունի հրամայականը:
9. Որո՞նք են հրամայական եղանակի բայաձևերի վերջավորությունները:
10. Ի՞նչ է ցույց տալիս ըղձական եղանակը:
11. Ի՞նչ ժամանակաձևեր ունի ըղձականը, և ինչպե՞ս են կազմվում դրանք:
12. Ի՞նչ է ցույց տալիս ենթադրական եղանակը:
13. Որո՞նք են ենթադրական եղանակի ժամանակաձևերը, և ինչպե՞ս են կազմվում դրանք:
14. Ի՞նչ է ցույց տալիս հարկադրական եղանակը:
15. Ի՞նչ ժամանակաձևեր ունի հարկադրական եղանակը, և ինչպե՞ս են դրանք կազմվում:
16. Ի՞նչ են ցույց տալիս ժխտական խոնարհման բայերը:

Վարժություն 122: Դո՛ւրս գրեք դիմավոր բայերը և որոշե՛ք դրանց եղանակը, ժամանակը, դեմքը և թիվը:

Տատս, պատշգամբում նստած, կանաչ լոբի է մաքրում: Մենք մի քիչ խոսեցինք դեսից-դենից, հետո նա վեր կացավ. «Գնամ, մարգերը ջրեմ, գամ»: Գնաց, եկավ: Հետո նայեց երկնքին. «Էսօր անձրև է գալու»,– ասաց: «Ռադիո՞ն հաղորդեց»: «Արևը,– ասաց տատս,– ծակծկում է»: Խոսում էր ու ձեռքի հետ ինչ-որ բան էր գործում: «Քո բաժին գինին կտամ,– ասաց,– տասը լիտր: Մենակ դու չես: Իմ սարքած գինին է: Դու կարմիրն ես սիրում, չէ՞...»: Ես մի քանի ժամ նստեցի տատիս մոտ: Նա անընդհատ խոսում էր ինձ հետ, բայց և հասցնում էր իր գործերը: Հանկարծ մտածեցի՝ ինչքա՞ն բան է իմանում տատս և ի՞նչ լավ է անում ամեն ինչ: Նույնիսկ էլեկտրական սալիկը նորոգեց. ինչ-որ բան էր փչացել. ես բզբզեցի, բայց գլուխ չեկավ: «Տակիդ աթոռը ճռռում է,– ասաց,– որ գնացիր, կսարքեմ»: Ա՛յ քեզ տատ...

Ես հանկարծ մտածեցի՝ բացի գրելուց, խոսելուց՝ ես ի՞նչ եմ ընդունակ անելու: Մի քիչ երգում եմ, սուրճ եմ եփում: Ուրի՞շ... Մի ձեռքիս մատներն էլ լրիվ չծալվեցին: «Տա՛տ,– հարցնում եմ,– դու ե՞րբ ես հանգստանում»: Զարմանքով նայում է ինձ: «Հիմա ի՞նչ եմ անում որ»: Ոնց խայտառակվեցի. էլեկտրական սալիկն էլ ինքը սարքեց. ինսուլներեք տարեկան է և երկու տարի է դպրոց գնացել, այն էլ եկեղեցու դպրոց: Իսկ ես երևանյան դպրոցում ֆիզիկայից «գերազանց» էի ստանում: Միանգամից վեր է կենում. «Գնամ, հավերին կուտ տամ. մեղք են»: «Ժամը քանի՞սի՞ն ես կուտ տալիս»: «Երկրորդ անգամ՝ իննին»: Նայում եմ ժամացույցիս. իններեք երեք րոպե է պակաս: «Ժա՞մը ոնց իմացար, ա՛յ տատ»: Մեղավոր նայում է ինձ: նայում է վերև՝ արևին, հետո գնում է մանրաքայլ:

Իսկ մենք հաց կտրելու մեքենա էլ ենք հորինել:

Ըստ Վարդգես Պետրոսյանի

Վարժություն 123: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք տողասկզբում նշված եղանակի բայաձևը:

սահմանական – գրեմ, կգրեմ, գրեցի, գրի՛ր
սահմանական – երգում է, չի երգի, պետք է երգի, երգենք

Ըղձական – նկարեցինք, կնկարի, նկարել է, նկարեին
Ըղձական – վերադառնալու էին, վերադառնայինք, վերադարձավ, կվերադառնա
Ենթադրական – կորցրեց, կայծկլտաց, կանցնեն, կենդանանար
Ենթադրական – չեմ գնալու, չի կարդա, չես նշել, չբերեց
Հարկադրական – կգնար, բերելու է, պիտի գնա, չեն գրում
Հրամայական – տանեին, իջեցրե՛ք, կարդացին, ելնեն

Գիտե՞ք, որ...

Աստվածաշունչն առաջին անգամ հայերեն տպագրվել է 1666–68 թվականներին Ամստերդամում՝ տպագրիչներ Ոսկան Երևանցու և Մատթեոս Ծարեցու ջանքերով:

Անտուան Մեյե (1866–1936)

Ֆրանսիացի լեզվաբան, հայագետ, սլավոնագետ: Ֆրանսիական ակադեմիայի (1924) և արտասահմանյան մի շարք ակադեմիաների և գիտական ընկերությունների անդամ: 1885–89թթ. սովորել է Սորբոնի համալսարանում՝ աշակերտելով Մ. Բրեալին, Ֆ. դը Սոսյուրին, Օ. Կարիերին, որից սովորել է ժամանակակից հայոց լեզու: 1890–91թթ. եղել է Վիեննայի Մխիթարյան միաբանությունում, աշակերտել է Հ. Տաշյանին և նրանից սովորել գրաբար: 1891-ին այցելել է Հայաստան (երկրորդ անգամ՝ 1903-ին), Էջմիածնի մատենադարանում ուսումնասիրել է հայկական ձեռագրեր, քննել է գրաբարի հնչյունաբանությունը: 1902–05թթ. գրաբար և նոր հայերեն է դասավանդել Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցում: 1919–21թթ. Ֆ. Մակլերի և ուրիշների հետ հիմնել է հայագիտական տարբեր ընկերություններ:

«Հայերենի բարբառային դիրքը» աշխատության մեջ (1896), հենվելով հայերենի և այլ լեզուների հնչյունական առանձնահատկությունների վրա, Մեյեն որոշել է հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շարքում և հայերենը համարել է առանձին լեզվաճյուղ: Հեղինակել է նաև «Դասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծ» (1903), «Հետազոտություններ հայերենի համեմատական շարահյուսության վերաբերյալ» (2-րդ հրատ. 1968) աշխատությունները: Վերջինը մեծ ավանդ է համեմատական շարահյուսության ուսումնասիրության գործում:

Ա. Մեյեն նաև ակտիվ հասարակական գործիչ էր: նա բազմիցս հանդես է եկել հայանպաստ ելույթներով:

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Հիշենք, որ լեզվի տարբեր միավորներն ու նրանց հատկանիշները ուսումնասիրվում են լեզվաբանության տարբեր բաժիններում: Այդ բաժիններն են **հնչյունաբանությունը, բառագիտությունը** և **քերականությունը**, որն ունի երկու ենթաբաժին՝ **ձևաբանություն** և **շարահյուսություն**: **Հնչյունաբանության** մեջ ուսումնասիրվում են լեզվի հնչյունները, նրանց գրության ու արտասանության, փոփոխության առանձնահատկությունները: **Բառագիտության** մեջ ուսումնասիրվում են բառերի ծագումը, կազմությունը, ձևաիմաստային հատկանիշները: **Ձևաբանության** մեջ ուսումնասիրվում են բառերի ուղիղ և քերականորեն փոփոխված ձևերի առանձնահատկությունները, յուրաքանչյուր խոսքի մասի հատկանիշները: **Շարահյուսության** մեջ ուսումնասիրվում են բառերի ու նախադասությունների կապակցման միջոցներն ու եղանակները, բառերի դերը բառակապակցություններում, պարզ և բարդ նախադասություններում: Օրինակ՝ *տուն* բառը բառագիտության մեջ ուսումնասիրվում է հետևյալ մոտեցումներով. պա՞րզ բառ է, թե՞ բաղադրյալ, մենիմա՞ստ է, թե՞ բազմիմաստ, ունի՞ արդյոք հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հնդեվրոպակա՞ն ծագում ունի, թե՞ փոխառվել է այլ լեզուներից: Ձևաբանության մեջ կարևորվում է այն, թե *տուն* բառը ինչ խոսքի մաս է, ինչ կարգեր ունի, այսինքն՝ հոլովվո՞ւմ է, ունի՞ եզակի և հոգնակի թվեր, ինչպե՞ս են դրանք կազմվում և այլն: Շարահյուսության մեջ ուսումնասիրվում է, թե *տուն* բառը ինչպես է կապակցվում այլ բառերի, նախադասության մեջ ինչ անդամների պաշտոններ կարող է կատարել, որ պաշտոնում ինչ ձևով է դրվում և այլն:

Այսպիսով՝ շարահյուսությունն ուսումնասիրում է բառերի ու նախադասությունների կապակցման միջոցներն ու եղանակները, ինչպես նաև նրանց կիրառությունների առանձնահատկությունները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որո՞նք են լեզվաբանության բաժինները:
2. Ի՞նչ է ուսումնասիրվում հնչյունաբանության մեջ:
3. Ի՞նչ է ուսումնասիրվում բառագիտության մեջ:
4. Ի՞նչ ենթաբաժիններից է կազմված քերականությունը:
5. Ի՞նչ է ուսումնասիրվում ձևաբանության մեջ:
6. Ի՞նչ է ուսումնասիրվում շարահյուսության մեջ:

Վարժություն 1: Տրված բառերն ու բառաձևերը դասավորե՛ք այնպիսի շարադասությամբ, որ ստացվեն նախադասություններ (երբեմն հնարավոր են շարադասական մի քանի տարբերակներ):

1. Գարնան, ջահելացել էր, քաղաքն, անուշաբույր, հինավուրց, շնչից, ասես:
2. Շոգեքարշը, առաջ, անիվների, տաղտկալի, գնում էր, չխկչխկոցով:

3. Թռչունները, ժամանակ, բարձրաբերձ, քամիների, պատսպարվում էին, ժայռերի, խոռոչներում:
4. Արևելյան, բակերում, այդ, ու, փոքր, քաղաքի, մեծ, բնակիչների, մասն, գտնվում էր, պահին, պարտեզներում:
5. Իրար, ճառագայթները, էին հանդիպել, բոսորագույն, նոր-նոր, ու, աղջամուղջն, արևի, թանձրացող:
6. Ականակիտ, հատակի, ողորկ, ջրի, քարերը, տարուբերվող, միջով, հայելու, երևում էին:
7. Այդ, մեկի, գտնվում էինք, երկնամուխ, պահին, լանջին, մենք, լեռներից:
8. Լուսնի, բաց, շողը, լուսամուտի, ներս էր ընկել, թրթռուն, փեղկից:
9. Նա, ճանապարհով, նեղ, ու, դեպի, խորդուբորդ, փողոցը, ուղղվեց, գլխավոր:
10. Փողոցում, զբաղված, մի քանի, առօրյա, ծերունիներ, զրույցով, կային:

Վարժություն 2: Գրե՛ք հինգ այնպիսի նախադասություն, որոնց անդամները ունենան նշված իմաստները:

1. Առարկայի հատկանիշ – առարկա – գործողության կատարման ձև – գործողություն:
2. Քանակ – անձ – գործողության կատարման ժամանակ – գործողություն – գործողության կատարման տեղ:
3. Առարկայի հատկանիշ – առարկա – գործողության կատարման ժամանակ – գործողության կատարման ձև – գործողություն – գործողության կատարման տեղ:
4. Քանակ – առարկա – գործողության կատարման չափ – գործողություն:
5. Առարկայի հատկանիշ – առարկա – գործողության կատարման ժամանակ – գործողություն – գործողությունը կրող առարկա:

Օրինակ՝ Քչքչան առվակը ուրախ հոսում էր *(առարկայի հատկանիշ – առարկա – գործողության կատարման ձև – գործողություն):*

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀՈՄԱՆԻՇՆԵՐ

Հոմանշությունը լեզվական այն իրողությունն է, որի դեպքում լեզվական մեկից ավելի միավորներ արտահայտում են մոտ կամ նույն իմաստը: Բառային հոմանիշները իմաստով մոտ կամ նույն բառերն են, ինչպես՝ *գեղեցիկ – սքանչելի – հիանալի – գեղանի – չնաշխարհիկ, ուղի – ճանապարհ, լուսամուտ – պատուհան* և այլն: Շարահյուսական հոմանիշները շարահյուսական այն կապակցություններն են, որոնք տարբեր կազմություններ ունեն, սակայն գրեթե նույն իմաստն են արտահայտում: Օրինակ՝ *Երբ հանդիպումն ավարտվեց, բոլորը մոտեցան աշխարհահռչակ նկարչին* նախադասության իմաստը հնարավոր է արտահայտել մեկ այլ ձևով՝ *Հանդիպումն ավարտվելուց հետո բոլորը մոտեցան աշխարհահռչակ*

նկարչին: Շարահյուսական կապակցությունները հոմանշային հարաբերություն կարող են ունենալ նաև բարդ բառերի հետ, օրինակ՝ *հին ոճի – հնաոճ, նուրբ կազմվածք ունեցող – նրբակազմ* և այլն:

Շարահյուսական հոմանիշները, թեև գրեթե նույն իմաստն են արտահայտում, սակայն միմյանցից տարբերվում են ոճական արժեքով, կառուցվածքով ու ծավալով, իմաստային նրբերանգներով: Այդ պատճառով էլ խոսք կազմողն ընտրում է իր կարծիքով տվյալ դեպքում ավելի հարմարը: Շարահյուսական հոմանիշների ճիշտ և տեղին գործածությունը խոսքի միօրինակությունից խուսափելու, տարբեր ձևերով արտահայտվելու հնարավորություն է ստեղծում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է հոմանշությունը:
2. Ի՞նչ է շարահյուսական հոմանշությունը:
3. Ի՞նչ դեր ունի խոսքում շարահյուսական հոմանիշների ընտրությունը:

Վարժություն 3: Արտագրե՛ք՝ փակագծերում տրված հոմանիշներից ընտրելով իմաստով և ոճականորեն համապատասխանողը:

1. Տեղի բնակիչներից նա լսեց ու գրի առավ մի *(հին, հնամաշ)* զրույց:
2. Քաղցած գայլը պտտվում էր ոչխարների *(ախոռի, փարախի)* շուրջը:
3. Մի *(աղոտ, դժգույն)* միտք պտտվում էր նրա գլխում:
4. Իշխանն անթարթ հայացքը *(գամել, մեխել)* էր արքայի դեմքին:
5. Տեսնելով ներս մտնողներին՝ նա իսկույն *(քողարկեց, թաքցրեց)* ձեռքին եղած նամակը:
6. Տղան ամբողջ օրը *(պրպտեց, որոնեց)* այդ հարցի պատասխանը և ի վերջո գտավ:
7. Մեղրը կաթ-կաթ *(ծորում, հոսում)* էր տակառի ծեղքից:
8. Հյուրերը եկել էին *(դրկից, հարևան)* գյուղից:
9. Վերելակը խափանվել էր, և տղան ստիպված *(բարձրացավ, մագլցեց)* աստիճաններով:
10. Մեղմ քամին *(տատանում, թափահարում)* էր ծառերի կատարները:

Վարժություն 4: Արտագրե՛ք՝ փակագծում տրված բառերից ու կապակցություններից ընտրելով ոճով և իմաստով համապատասխանողը:

1. Այդ վայրում *(քաղցր համ ունեցող, քաղցրահամ)* ջրի պաշարներ կան:
2. Գետում *(ձուկ որսացող, ձկնորս)* այդ մարդիկ անակնկալ ձայնից իսկույն շրջվեցին դեպի ձայնի կողմը:
3. Որակյալ *(ասֆալտապատ, ասֆալտով պատված)* պողոտան շատ գեղեցիկ էր:

4. Այդ հանրախանութում վաճառվում են և՛ հնաոճ, և՛ *(նորաոճ, նոր ոճ ունեցող)* պայուսակներ:
5. Տուֆ *(քարից շինված, քարաշեն)* նորակառույց տունը հիացրեց բոլորին:
6. Հեռվից նայելիս աչքի էր ընկնում մուգ *(ապակիներով պատված, ապակեպատ)* կրպակը:
7. Մշուշի միջից երևում էին լեռների՝ արծաթափայլ *(ձյունով պատված, ձնապատ)* գագաթները:
8. Թանձր *(մառախլապատ, մառախուղով պատված)* անտառը հեռվից գորշ էր թվում:
9. Այդ հզոր *(արքայորդին, արքայի որդին)* մի կամազուրկ ու վախկոտ մարդ էր:
10. Պալատի՝ մարմարե *(սյունազարդ, սյուներով զարդարված)* միջանցքով անցնում էր մռայլադեմ մի մարդ:

ԲԱՐԴ ԲԱՌ ԵՎ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բարդ բառերի մի մասի իմաստը հնարավոր է արտահայտել բառակապակցության միջոցով և հակառակը, օրինակ՝ *մշտավառ – միշտ վառվող, երախտամոռ – երախտիքը մոռացող, անվանացանկ – անունների ցանկ, քաղցրահամ – քաղցր համ ունեցող* և այլն: Այսինքն՝ բերված բառերն ու բառակապակցությունները հոմանիշներ են, քանի որ գրեթե նույն իմաստն են արտահայտում: Իհարկե միշտ չէ, որ հնարավոր է հոմանշային նման շարքեր կազմել: Բաղադրիչ բառերը, միավորվելով և բարդ բառ կազմելով, կարող են միասնաբար մի նոր իմաստ արտահայտել, որը չի համապատասխանում բաղադրիչ բառերով կազմված բառակապակցության իմաստին: Օրինակ՝ *բարձրահարկ* բառը նշանակում է շատ հարկեր ունեցող, և *բարձր հարկ* բառակապակցությունը նրան հոմանիշ չէ: Հետևաբար բարդ բառերն ու բառակապակցությունները միայն այն դեպքում են հոմանիշներ, երբ արտահայտում են իրար մոտ իմաստներ:

Միևնույն իմաստի՝ այս երկու տարբեր ձևով արտահայտելու հնարավորությունը խոսքը բազմազան դարձնելու միջոցներից է:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ե՞րբ են բարդ բառն ու բառակապակցությունը հոմանիշներ դառնում:
2. Ի՞նչ դեր է կատարում խոսքում միևնույն իմաստի՝ բառով և բառակապակցությամբ արտահայտելու հնարավորությունը:

Վարժություն 5: Յուրաքանչյուր կապակցության իմաստն արտահայտե՛ք մեկ բառով:

Հիանալի և սքանչելի, ձյան շերտ, ասֆալտով պատված, կանաչով զարդարված, գեղեցիկ դեմքով, խաղալու դաշտ, ձուկ որսացող, հարգելու արժանի,

ցուցադրվող նմուշ, սյուներով զարդարված, կամրջի սյուն, կարկաչյունով հոսող, ալիքներով ծփացող, լի և առատ, ստեղների շարք, ապակիներով պատված, բնության տված, անտառի շերտ, արծաթի փայլ ունեցող, հողմով աշխատող աղաց, հորդ և առատ, զբոսնելու այգի, մռայլ դեմք ունեցող, մանուշակի գույն ունեցող, տուֆից կերտված, առատ հոսող, նուրբ հյուսված, օղակի ձև ունեցող, շոկոլադով պատված:

Վարժություն 6: Գտե՛ք, թե յուրաքանչյուր շարքի որ կապակցության իմաստն է հնարավոր արտահայտել մեկ բառով:

1. ծառի ստվեր, ծառի տերև, ծառի ճյուղ, ծառի սունկ
2. լճի ջուր, լճի մակերես, լճի ափ, լճի ձուկ
3. բույս աճեցնող, բույս քաղող, բույս խնամող, բույս ուտող
4. սուրճի բաժակ, սուրճի աղաց, սուրճի մշակաբույս, սուրճի արկղ
5. գորգ գնող, գորգ վաճառող, գորգ լվացող, գորգ ներմուծող
6. փայտ հատող, փայտ կոտրող, փայտ սղոցող, փայտ ներկող
7. անտառ նկարող, անտառ գնացող, անտառ պահպանող, անտառ մտնող
8. լուսամուտի ապակի, լուսամուտի բռնակ, լուսամուտի ծխնի, լուսամուտի գոգ
9. ծիրանի այգի, ծիրանի գույն, ծիրանի կորիզ, ծիրանի մուրաբա
10. դարի հայտնագործություն, դարի տևողություն, դարի ընթացք, դարի վերջ

Վարժություն 7: Յուրաքանչյուր շարքից ընտրե՛ք այն բառը, որի հետ տողասկզբի բառը կկազմի այնպիսի կապակցություն, որի իմաստը հնարավոր է արտահայտել մեկ բառով. կազմե՛ք այդ բառերը:

1. գայլի – ձագ, մորթի, ոհմակ, ախորժակ
2. անձրևի – խշշոց, կանխատեսում, ջուր, շրջան
3. արքայի – գահ, որդի, հրաման, թագ
4. աքլորի – թև, կանչ, կատար, պոչ
5. խաղողի – որթ, տերև, գույն, հյութ
6. գրքի – հեղինակ, ընթերցող, հատոր, պահարան
7. թռչուն – կերակրող, բուծող, ուսումնասիրող, քանդակող
8. ծովի – ալիք, նկար, շառաչյուն, ավազ
9. խաղի – ընթացք, մասնակից, ավարտ, մրցավար
10. պարի – քայլ, հագուստ, մասնակից, երաժշտություն

Վարժություն 8: Գտե՛ք, թե որ դեպքում մեկ բառով արտահայտված իմաստը չի համապատասխանում կապակցության իմաստին:

1. լայն տերևներ ունեցող — լայնատերև
2. գորգով պատված — գորգապատ

3. բարձր հարկ	բարձրահարկ
4. քաղցր ձայն	քաղցրաձայն
5. քաղցր ձայն ունեցող	քաղցրաձայն
6. ծառի բուն	ծառաբուն
7. սալիկներով պատված	սալիկապատ
8. բարձր ձայն	բարձրաձայն
9. փայտ փորող	փայտփորիկ
10. շուն և գայլ	շնագայլ
11. խաղողի հյութ	խաղողահյութ
12. ջրի աման	ջրաման
13. ծաղիկների փունջ	ծաղկեփունջ
14. միրգ սիրող	մրգասեր
15. արջ և մուկ	արջամուկ
16. ջերմության չափ	ջերմաչափ
17. մրջյունի կեր	մրջնակեր
18. առյուծի սիրտ	առյուծասիրտ
19. մեծ միտք ունեցող	մեծամիտ
20. եղյամով պատված	եղյամապատ

ՀՈԼՈՎԱՁԵՎ ԵՎ ԿԱՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑ

Հայտնի է, որ գոյականները, դերանունների մի մասը, անորոշ դերբայը և առհասարակ գոյականաբար գործածված բառերը հոլովվում են և այդ միջոցով կապակցվում այլ բառերի: Օրինակ՝ *խոսել* և *դեպք* բառերը բերված ձևերով միմյանց չեն կապակցվում, բայց եթե *դեպք* բառը հոլովենք, ապա կկապակցվի *խոսել* բառին, և կստանանք *խոսել դեպքից* կապակցությունը: Այդ նույն բառերը կարող ենք կապակցել նաև *մասին* կապի միջոցով՝ ստանալով գրեթե նույն իմաստն արտահայտող *խոսել դեպքի մասին* կապակցությունը: Ուրեմն հաճախ իմաստով մոտ կապակցություններ կարող ենք ստանալ՝ բառերը կապակցելով և՛ հոլովաձևերի, և՛ կապերի միջոցով: Հետևաբար շատ դեպքերում հոլովաձևերով ու կապական կառույցներով ձևավորված կապակցությունները հոմանիշներ են դառնում, օրինակ՝ *նկարել թղթին – նկարել թղթի վրա, շարել արկղում – շարել արկղի մեջ, գնալ աշխատելու – գնալ աշխատելու համար* և այլն: Սակայն միշտ չէ, որ հնարավոր է հոլովաձևով ու կապական կառույցով հոմանիշներ ստանալ: Օրինակ՝ *նստել ծառի տակ, հավաքվել դպրոցի մոտ, ընթանալ առանց կանգառի* և շատ այլ կապակցությունների իմաստները հնարավոր չէ արտահայտել առանց կապերի: Ուրեմն կապական կառույցներն ու հոլովաձևերը լիովին նույնարժեք չեն: Պարզապես երբեմն հնարավոր է կապական կառույցներով ու հոլովաձևերով ար-

տահայտել գրեթե նույն իմաստը, իսկ երբեմն՝ ոչ: Հոլովաձևով ու կապական կառույցով ձևավորվող հոմանիշների գործածությունը խոսքը տարբեր ձևերով արտահայտելու միջոցներից է:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բացի հոլովելուց՝ ուրիշ ի՞նչ միջոցով կարող ենք կապակցել բառերը:
2. Արդյո՞ք միշտ են կապական ու հոլովաձևերով կապակցված կառույցները հոմանիշներ դառնում:

Վարժություն 9: Հոլովաձևերով կապակցված կառույցների իմաստներն արտահայտե՛ք կապային կառույցներով:

Զրուցել գործից, նկարել թղթին, աշխատանքը կատարել սարքավորումներով, գնալ աշխատելու, դասավորել արկղում, դնել սեղանին, փորագրել քարին, խոսել անելիքներից, գնալ ընկերներով, թերանալ աշխատանքում, ջուրը լցնել դույլը:

Վարժություն 10: Շղատառ կապային կառույցները փոխարինե՛ք բառաձևերով:

Գիրքը դրեց *սեղանի վրա:* Նա պատմում էր իրենց *գործերի մասին:* Երկար *ձողի միջոցով* կարողացան մաքրել խցանված խողովակը: Աշակերտը տետրը վերցրեց *սեղանի վրայից:* Մեկնեց արտասահման՝ *սովորելու համար:* Իրերը դրված էին *ճամպրուկի մեջ:* Այդտեղ որսը, *համաձայն օրենքի,* արգելված է: Գինին լցրին *կարասի մեջ:*

Վարժություն 11: Արտագրե՛ք տեքստը՝ հնարավորության դեպքում հոլովական կապակցությունները փոխարինելով կապային կառույցներով և հակառակը (ընդամենը 10 փոփոխություն):

Արմենը ընկերներով գնացել էր զբոսանքի: Նրանք քայլում էին զբոսայգու ծառուղիներով և զրուցում իրենց առօրյա գործերի մասին: Քիչ հեռու մի աղբյուր-հուշարձան կար, որի հուշաքարի վրա փորագրված էին գեղեցիկ զարդանախշեր: Աղբյուրի խողովակի միջից թափվող ջուրը լցվում էր քարե ավազանի մեջ: Զբոսայգում խաղացող մի երեխա մոտեցավ աղբյուրին՝ ջուր խմելու համար: Երբ նա կռացավ, որ ջուր խմի, ձեռքի խաղալիքն ընկավ ավազանը: Երեխան սկսեց լաց լինել: Տղաները մոտեցան, որ օգնեն, սակայն ավազանը խորն էր, և ոչ ոքի ձեռքը չհասավ ջրի մեջ սուզված խաղալիքին: Մոտակա նստարանի վրա մի ճյուղ էր ընկած: Արմենը վերցրեց և ճյուղի միջոցով կարողացավ հանել խաղալիքը: Երեխան վերցրեց խաղալիքը և շնորհակալություն հայտնելով տղաներին՝ գնաց, որ շարունակի իր խաղը:

ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Անդեմ բայերը բաժանվում են երկու խմբի՝ **դերբայներ** և **ձևաբայեր**: Դերբայներն են **անորոշը** (գրել, կարդալ), **ենթակայականը** (գրող, կարդացող), **հարակատարը** (գրած, կարդացած), **համակատարը** (գրելիս, կարդալիս), իսկ ձևաբայերն են **անկատարը** (գրում, կարդում), **վաղակատարը** (գրել, կարդացել), **ապակատարը** (գրելու, կարդալու) և **ժխտական** ձևաբայը (գրի, կարդա): Ձևաբայերը գործածվում են միայն **եմ** օժանդակ բայի հետ՝ կազմելով դիմավոր ձևեր: Դերբայները, ի տարբերություն ձևաբայերի, կարող են առանց օժանդակ բայի հանդես գալ նախադասության և բառակապակցության կազմում, օրինակ՝ ***Փորագրված*** *նախշը շատ գեղեցիկ էր* նախադասության մեջ *փորագրված* հարակատար դերբայը գործածվել է որպես *նախշ* բառի որոշիչ: Դերբայները կարող են լրացումներ ունենալ, օրինակ՝ ***Քարին*** *փորագրված նախշը շատ գեղեցիկ էր* նախադասության մեջ *քարին* բառը լրացնում է *փորագրված* դերբային որպես կողմնակի տեղի պարագա: Դերբայների լրացումները կոչվում են կողմնակի: *Քարին* լրացումն էլ իր հերթին կարող է լրացում ունենալ, ինչպես՝ ***Հուշարձանի*** *քարին փորագրված նախշը շատ գեղեցիկ էր*: Դերբայն իր լրացման կամ լրացումների, ինչպես նաև լրացման լրացումների հետ կարող է կազմել կապակցություն, որը կոչվում է **դերբայական դարձված**: Այսինքն՝ դերբայական դարձվածը բառակապակցություն է, որի գերադաս անդամն արտահայտված է դերբայով: Բերված վերջին օրինակում գործածված է *հուշարձանի քարին փորագրված* դերբայական դարձվածը, որը կատարում է որոշչի շարահյուսական պաշտոն: Այդ որոշչի իմաստը հնարավոր է արտահայտել ոչ միայն նշված դերբայական դարձվածով, այլև որոշիչ ստորադաս նախադասությամբ, ինչպես՝ *Նախշը,* ***որը փորագրված էր հուշարձանի քարին,*** *շատ գեղեցիկ էր:* Հետևաբար *հուշարձանի քարին փորագրված* դերբայական դարձվածը և *որը փորագրված էր հուշարձանի քարին* ստորադաս նախադասությունը շարահյուսական հոմանիշներ են:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

1. Կիրառական ի՞նչ տարբերություն կա դերբայների և ձևաբայերի միջև:
2. Ի՞նչ է կոչվում դերբայով և նրա լրացումներով ու լրացման լրացումներով ձևավորված կապակցությունը:
3. Ի՞նչ միավորի է հոմանիշ դառնում դերբայական դարձվածը:

Վարժություն 12: Գտե՛ք և դո՛ւրս գրեք դերբայական դարձվածները, որոշե՛ք, թե որ դերբայով են ձևավորվել:

Հինավուրց եկեղեցու կորնթարդ գմբեթը խարխլվել էր երևի հիսունինը-վաթսուն տարի առաջ: Բայց ամբողջովին չէր ավերվել, մինչև օրս կանգուն է գմբեթի կեսը, և հիմա էլ վերև բարձրացող անմիտ հետաքրքրասերներից շատերը, չընդունե-

լով այդ պատմական հուշարձանի կարևորությունը, իրենց «անմահ» անուններն են փորագրում դեռևս կանգուն պատերին: Կիսաքանդ գմբեթն ամռան տոթակեզ ամիսներին ծածկվում է հուռթի կանաչով, ու խոչընդոտներից չընկճվող խոտերը, ծակելով ամրակուռ շաղախը, խցկվում են ամեն մի ճեղք: Այդ տեղ-տեղ պատռված գորգի վրա երևում են նաև ծաղիկներ՝ դեղին, կարմիր, մուգ կապույտ:

Մի օր էլ գյուղի բնակիչները հանկարծակիի եկան: Փարթամ կանաչի մեջ տեսան մի ծառ՝ ծիրանենի: Քանի դեռ ծառը փոքր էր եղել, չէր երևացել առատ խոտերի մեջ, բայց մի օր արդեն վեր էր բարձրացել՝ իր անակնկալ հայտնությամբ ապշեցնելով բոլորին: Պատկերացրե՛ք եկեղեցու կիսավեր գմբեթը՝ ասես մեջտեղից դանակով կտրած, և այդ գմբեթին աճած մի ծառ:

Ժամանակ անցավ, և հարմարվեցին ծառի ներկայությանը: Իսկ ամռանը չարաճճի երեխաները, իրենց աշխույժ գոռում-գոչյուններով կենդանացնելով կեսօրվա միապաղաղ անդորրը, մագլցեցին պատերն ի վեր և անհամբերությամբ պոկոտեցին զարմանալի ծառի երախայրիքը[1]: Ընդամենը ութ-ինը ծիրաններ էին՝ դեռևս խակ ու անհամ, բայց երեխաները հանդիսավոր հուզմունքով կերան՝ սպասելով ինչ-որ անօրինակ դեպքի: Ոչ մի արտասովորություն չկար. սովորական ծիրաններ էին, որոնցից լիքն է այգիներում ու շուկաներում:

Ու ծիրանի ծառը դարձավ գյուղի բնակիչ: Դժվար էր ասել՝ երբ և ով էր կորիզը նետել եկեղեցու գմբեթին, բայց ավելի դժվար էր ըմբռնել, թե ինչպես էր կորիզը հարմարվել ճեղքում և արմատները թել-թել տարածել շաղախի միջով: Այո՛, զարմանալի էր, բայց ծառը գոյատևում էր, ու մարդիկ դադարեցին զարմանալուց: Նայելով ծառին՝ ես անընդհատ մտքումս հարց եմ տալիս. «Ինչպե՞ս ես դիմանում, ծիրանի՛ ծառ»:

Ըստ Վարդգես Պետրոսյանի

ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ կետադրման՝ դերբայական դարձվածները լինում են տրոհվող և չտրոհվող: Հիմնականում տրոհվում են այն դերբայական դարձվածները, որոնց գերադաս անդամն արտահայտված է **անորոշ դերբայի գործիական հոլովով** կամ **հարակատար դերբայով**: Այս դերբայական դարձվածները նախադասության մեջ նախադաս կամ վերջադաս լինելիս տրոհվում են բութով, իսկ միջադաս դիրքում՝ ստորակետերով, օրինակ՝ *Մտերմիկ զրուցելով՝ ընկերները քայլում էին զբոսայգում: Ընկերները, մտերմիկ զրուցելով, քայլում էին զբոսայգում: Ընկերները քայլում էին զբոսայգում՝ մտերմիկ զրուցելով: Իր գործը կիսատ թողած՝ նա օգնում էր ընկերոջը: Նա, իր գործը կիսատ թողած, օգնում էր ընկերոջը: Նա օգնում էր ընկերոջը՝ իր գործը կիսատ թողած:*

Բարդ նախադասության կազմում դերբայական դարձվածի դիրքը որոշելու համար հաշվի է առնվում նրա տեղը տվյալ բաղադրիչ նախադասության մեջ, օրի-

1 Երախայրիք – առաջին պտուղ:

նակ՝ *Ես բարևեցի բոլորին՝* ***ուրախ ժպտալով****, և նստեցի աթոռին:* Այս նախադասության մեջ *ուրախ ժպտալով* դերբայական դարձվածը հետադաս է և տրոհվել է բութով, որովհետև գտնվում է առաջին բաղադրիչ նախադասության վերջում: Տրոհվող դարձվածից հետո դրվում է ստորակետ, եթե նույնիսկ ենթական չի փոխվում:

Դերբայական դարձվածը չի տրոհվում մի շարք դեպքերում:

ա) Եթե նախադաս որոշիչ է, օրինակ՝ ***Սեղանին դրված*** *ծաղկամանը գեղեցիկ էր:*

բ) Եթե գտնվում է *դիմավոր բայ + անորոշ դերբայ* կամ *ստորոգելի + ստորոգիչ + անորոշ դերբայ* կառույցների բաղադրիչների միջև, օրինակ՝ *Որսորդն սկսեց* ***տարբեր մանրամասներ հավելելով*** *պատմել դեպքը: Աշակերտը մտադիր էր* ***զանազան պատրվակներ հորինելով*** *արդարացնել իր բացակայությունը:*

գ) Եթե գտնվում է հարկադրական եղանակի բայաձևերի բաղադրիչների միջև, օրինակ՝ *Պիտի* ***փայտեր հավաքելով*** *խարույկ վառեր:*

դ) Եթե դարձվածին անմիջապես հաջորդում է օժանդակ բայ կամ **էլ** շաղկապը, օրինակ՝ *Նա այդ ամենը* ***առավոտից մինչև երեկո աշխատելով*** *է ստեղծել: Նա* ***տարբեր աշխատանքներ կատարելով*** *էլ կարողացավ մի քանի արհեստ սովորել:*

ե) Եթե դարձվածի գերադաս անդամ դերբայը գործածված է գոյականաբար, օրինակ՝ *Մոտեցավ* ***առաջին շարքում նստածին****:* ***Նրա ասածի մասին*** *չէի մտածել:*

Բարդ նախադասության բաղադրիչները կապող շաղկապին հաջորդող դերբայական դարձվածը կարող է տրոհվել և՛ բութով, և՛ ստորակետերով, քանի որ շաղկապը ո՛չ դարձվածի անդամ է, ո՛չ նախադասության, օրինակ՝ *Անձրևը սաստկանում էր, և,* ***գյուղ հասնելով****, մենք գիշերեցինք այնտեղ: Անձրևը սաստկանում էր, և* ***գյուղ հասնելով****՝ մենք գիշերեցինք այնտեղ:*

Մյուս դերբայներով ձևավորված դերբայական դարձվածները չեն տրոհվում, օրինակ՝ ***Իր այգում աշխատելիս*** *նա տեսավ ճանապարհով անցնող մարդուն:* ***Բակում խաղացող*** *երեխաները դադարեցրին խաղը:* Այսպիսի դերբայական դարձվածները տրոհվում են այն դեպքում, երբ կատարում են որևէ տրոհվող անդամի պաշտոն, օրինակ՝ *Նա՝* ***իրեն միշտ գովողը****, այս անգամ լռեց:* Այս նախադասության մեջ ***իրեն միշտ գովողը*** դերբայական դարձվածը գործածվել է բացահայտչի պաշտոնով և այդ պատճառով էլ տրոհվել է բացահայտչին բնորոշ կետադրությամբ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ըստ կետադրման՝ ի՞նչ տեսակների են լինում դերբայական դարձվածները:
2. Դերբայական ո՞ր դարձվածներն են կետադրվում:

3. Ինչպե՞ս են կետադրվում նախադաս, միջադաս և հետադաս դերբայական դարձվածները:
4. Ո՞ր դեպքերում դերբայական դարձվածները չեն տրոհվում:

Վարժություն 13: Արտագրե՛ք նախադասությունները և կետադրե՛ք դերբայական դարձվածները (կետադրական մյուս նշանները դրված են):

1. Հինավուրց կաղնիներ էին կայծակնահար տապալվում վերջին շառաչյունների երկյուղները պարգևելով անտառների խորքերին:
2. Գարնանային փթթուն այգիների վրա անդրադարձող բոցերի խուրձը շլացուցիչ երանգներ էր սփռում այս ու այն կողմ գոյացնելով մի հրաշալի պատրանք:
3. Ինչ-որ անըմբռնելի ուժից մղված նա հանկարծ վեր կացավ և կտրուկ շարժումով փակեց սենյակի դուռը:
4. Արփին դանդաղընթաց գլորվում էր դեպի Մասիս լեռը հետևից քարշ տալով Արարատյան դաշտի շերտ-շերտ տատանվող շոգը:
5. Ես մի քանի ակնթարթ նայեցի թռչունին, ապա քայլեցի դեպի տուն երփներանգ խճեր հավաքելով:
6. Նկատվելու երկյուղից կծկվելով ոմանք թաքնվեցին ծառերի արանքում, ոմանք՝ թփերի մեջ, ու համակ լսողություն դարձած բոլորը սկսեցին հետևել ձիերի ոտնատրոփին:
7. Տարված խառնիճաղանջ մտքերով չէր զգում, որ անընդհատ պտտվում է ու վերադառնում միևնույն տեղը:
8. Օտարերկրացի ճանապարհորդները մեր երկրի մասին տարբեր տեղեկություններ են թողել մերթ ներկայացնելով աշխարհագրական յուրօրինակությունները, մերթ բուսական և կենդանական աշխարհը, մերթ մարդկանց վարքն ու բարքը:
9. Երբ մի քիչ էլ քայլեցինք ու այդ քարակարկառն անցնելով թեքվեցինք դեպի սարի աջակողմը, տեսանք, որ նոր-նոր է սկսվում հիմնական անտառը:
10. Լուսնի թրթռուն շողը ներս ընկավ լուսամուտից լուսավորելով մահճակալին քնած մանկան դեմքը:

Վարժություն 14: Դո՛ւրս գրեք դերբայական դարձվածներով նախադասությունները և նշե՛ք, թե որ դարձվածներն են տրոհվող (բացի դերբայական դարձվածների կետադրությունից՝ մյուս նշանները դրված են):

Այժմ ինձ փոքր-ինչ հանգիստ էի զգում: Ես՝ Ռոբինզոն Կրուզոս, որ այդքան նեղությունների ու փորձությունների միջով էի անցել, այժմ վերագտել էի հոգեկան անդորրս: Վերջին ճամփորդությունս լավ էր անցել: Ինձ պատահած միակ անախորժ դեպքն այն էր, որ մի գետակ անցնելիս իմ ձին սայթաքեց, և ես ուշքի եկա

ջրի մեջ: Թեև ջուրը խոր չէր, բայց ես ոտքից գլուխ թրջվեցի: Իհարկե, առանձնապես մեծ պատահար չէր, սակայն վատն այն էր, որ լիովին թրջվել էր ծոցատետրս, որում գրի էի առել ինձ հանդիպած ժողովուրդների ու վայրերի անունները, իսկ ես տարված լինելով ճանապարհի հոգսերով ժամանակին ուշադրություն չդարձրի ու չջորացրի, և թերթիկները փտեցին: Այդ պատճառով էլ հետագայում շատ վայրերի անուններ չկարողացա մտաբերել:

Ինչպես ասացի, իմ այս վերջին ճամփորդությունը հիմնականում հաջող անցավ, և մենք միջօրեին մտանք Պեկին: Դեռ մի շաբաթ չէր անցել, որ Պեկինում էինք, երբ իմ անհանգիստ հոգին սկսեց ձանձրանալ: Ես արդեն հիմնականում ծանոթացել էի այդ հինավուրց քաղաքին, և այն այլևս չէր հետաքրքրում: Բայց մի օր ինձ մոտ եկավ մեր թարգմանիչ պորտուգալացին և հայտնեց, թե մի լուր ունի, որը կուրախացնի ինձ, բայց կտխրեցնի իրեն: Ես ասացի, որ այս երկրում ինձ հայտնի չէ որևէ բան, որը կարող է ինձ տխրեցնել կամ ուրախացնել: Սակայն նա վստահ լինելով իր լուրի ազդեցությանը ասաց, որ քաղաքում մոսկվացի և լեհ վաճառականներ կան, որոնք պատրաստվում են ութ-ինը շաբաթից քարավանով ճանապարհ ընկնել Ռուսաստան: Իմ պորտուգալացի բարեկամը համոզված էր, որ ես օգտվելով այդ պատեհ առիթից կմեկնեմ նրանց հետ հրաժեշտ տալով իրեն: Խոստովանում եմ, որ ես և՛ ուրախացա, և՛ տխրեցի, բայց կասկածեցի լուրի ճշմարտությանը, որովհետև ոչ ոքի հայտնի չէր դա, ուստի հարցրի.

– Հաստա՞տ գիտեք:

– Այո՛,– պատասխանեց նա,– այս առավոտ հանդիպեցի մի հին ծանոթի՝ մի հայի, որը եկել է Աստրախանից: Նա քարավանի հետ պետք է մեկնի Մոսկվա, ապա Վոլգա գետով իջնի Աստրախան:

Ուրախանալով այս անսպասելի լուրից ես առատ վարձատրեցի պորտուգալացուն, որ ուրախ բաժանվենք թե՛ ես, թե՛ նա:

Ըստ Դանիել Դեֆոյի

ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՊԱՐԶԻ ԵՎ ՀԱԿԱՌԱԿԸ

Հաճախ հնարավոր է բարդ ստորադասական նախադասությունը փոխակերպել պարզի և հակառակը, օրինակ՝ ***Երբ անձրևը դադարեց,*** *երեխաները շարունակեցին իրենց խաղը* – ***Անձրևի դադարելուց հետո*** *երեխաները շարունակեցին իրենց խաղը:* Սրանք շարահյուսական հոմանիշներ են: Փոխակերպումը կատարվում է որոշակի սկզբունքներով:

ա) Ստորադաս նախադասության պարզ ստորոգյալը վերածվում է դերբայի, իսկ բաղադրյալ ստորոգյալի դեպքում օժանդակ բայ-ստորոգիչը կա՛մ փոխարինվում է *լինել* բայով, կա՛մ դուրս է ընկնում. վերացական իմաստով բայ-ստորոգիչները (*դառնալ, թվալ, համարվել, կոչվել* և այլն) դառնում են դերբայներ:

բ) Ստորադաս նախադասությունը կապակցող շաղկապը կամ հարաբերական-կապակցական բառերը դուրս են ընկնում, և նրանց փոխարեն կարող է դրվել համապատասխան կապ:

գ) Ստորադաս նախադասության ենթական վերածվում է կողմնակի ենթակայի, որը կարող է դրվել սեռական հոլովով:

Բերվող օրինակում կատարվել են նշված երեք փոփոխությունները.

Երբ անձրևը դադարեց, երեխաները շարունակեցին իրենց խաղը:

Անձրևի դադարելուց հետո երեխաները շարունակեցին իրենց խաղը:

Այսինքն՝ ստորադաս նախադասության *դադարեց* ստորոգյալը կորցրել է դեմքը՝ վերածվելով անորոշ դերբայի, որը դրվել է բացառական հոլովով՝ *դադարելուց, երբ* հարաբերական դերանվան փոխարեն գործածվել է *հետո* կապը, *անձրևը* ենթական վերածվել է կողմնակի ենթակայի, որը դրվել է սեռական հոլովով՝ *անձրևի:*

Այս փոփոխությունները կարող են մասնակիորեն կատարվել: Օրինակ՝ *Նա խնդրեց ընկերոջը, որ օգնի իրեն – Նա խնդրեց ընկերոջը օգնել իրեն.* այս փոխակերպման դեպքում դուրս է ընկել *որ* շաղկապը, բայց նրա փոխարեն կապ չի դրվել, իսկ ենթակայի փոփոխություն չէր կարող կատարվել, քանի որ ստորադաս նախադասության մեջ ենթակա չկա: Կատարվել է հետևյալ փոփոխությունը. ստորադաս նախադասության *օգնի* ստորոգյալը վերածվել է դերբայի՝ *օգնել:*

Արդեն ասվել է, որ բաղադրյալ ստորոգյալի դեպքում օժանդակ բայ-ստորոգիչը դուրս է ընկնում կամ փոխարինվում է *լինել* բայով, ինչպես՝ *Տեսա այն նկարը, որը գեղեցիկ է – Տեսա գեղեցիկ նկարը (է* ստորոգիչը դուրս է ընկել). *Տեսա այն մարդուն, որը նախկինում այդ գործարանի տնօրենն էր – Տեսա նախկինում այդ գործարանի տնօրենը եղած մարդուն (էր* ստորոգիչը փոխարինվել է *լինել (եղած)* բայով): Իսկ վերացական իմաստ ունեցող բայով արտահայտված ստորոգիչը վերածվում է դերբայի, ինչպես՝ *Մոտեցանք այն տանը, որը հեռվից գեղեցիկ էր թվում – Մոտեցանք հեռվից գեղեցիկ թվացող տանը.* ստորադաս նախադասության *գեղեցիկ էր թվում* բաղադրյալ ստորոգյալի *թվում էր* ստորոգիչը վերածվել է դերբայի՝ *թվացող:*

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ փոփոխություններ են հնարավոր ստորադաս նախադասությունը փոխակերպելիս:
2. Փոխակերպման ժամանակ ինչպե՞ս կարող է փոխվել բաղադրյալ ստորոգյալը:

Վարժություն 15: Ընտրե՛ք և արտագրե՛ք բարդ ստորադասական նախադասությունների ճիշտ փոխակերպումները:

1. Նա տեսավ, որ ճամփորդները մոտենում են գյուղի եկեղեցուն:
   ա) Նա տեսավ գյուղի եկեղեցուն մոտեցող ճամփորդներին:
   բ) Նա տեսավ ճամփորդների՝ գյուղի եկեղեցուն մոտենալը:
2. Բոլորը գիտեին, որ նա հաղթել է մրցույթում:
   ա) Բոլորը գիտեին նրա՝ մրցույթում հաղթելը:
   բ) Բոլորը գիտեին նրա՝ մրցույթում հաղթելու մասին:
3. Բոլորը գիտեին այն մասին, որ նա հաղթել է մրցույթում:
   ա) Բոլորը գիտեին նրա՝ մրցույթում հաղթելը:
   բ) Բոլորը գիտեին նրա՝ մրցույթում հաղթելու մասին:
4. Հանդիպման էին եկել այն նկարիչները, որոնք մասնակցել էին ցուցահանդեսին:
   ա) Հանդիպման եկած նկարիչները մասնակցել էին ցուցահանդեսին:
   բ) Հանդիպման էին եկել ցուցահանդեսին մասնակցած նկարիչները:
5. Բարձունքից գահավիժում էր փրփրացայտ ջրվեժը, որը հիացնում էր բոլորին:
   ա) Բարձունքից գահավիժող փրփրացայտ ջրվեժը հիացնում էր բոլորին:
   բ) Բարձունքից գահավիժում էր բոլորին հիացնող փրփրացայտ ջրվեժը:
6. Նա հրաժարվել էր գիտաժողովին մասնակցելուց, որովհետև վերապատրաստման համար մեկնելու էր արտասահման:
   ա) Նա հրաժարվել էր գիտաժողովին մասնակցելուց վերապատրաստման համար արտասահման մեկնելու պատճառով:
   բ) Նա վերապատրաստման համար արտասահման մեկնելու նպատակով հրաժարվել էր գիտաժողովին մասնակցելուց:
7. Որպեսզի մինչև մութն ընկնելը հասնի գյուղ, անտառապահը գնաց լեռնային ծուռումուռ կածանով:
   ա) Մինչև մութն ընկնելը գյուղ հասնելու համար անտառապահը գնաց լեռնային ծուռումուռ կածանով:
   բ) Նախքան մութը կընկներ, անտառապահը գյուղ հասնելու համար գնաց լեռնային ծուռումուռ կածանով:
8. Արշակը առավոտյան խնդրեց հարևանին, որ օգնի իրեն:
   ա) Արշակը առավոտյան խնդրեց հարևանին օգնել իրեն:
   բ) Արշակը առավոտյան խնդրեց հարևանին իրեն օգնելու մասին:
9. Եթե սուրհանդակը ուշանար, արքան օգնական զորք էր ուղարկելու:
   ա) Սուրհանդակի ուշանալու պատճառով արքան օգնական զորք էր ուղարկելու:
   բ) Սուրհանդակի ուշանալու դեպքում արքան օգնական զորք էր ուղարկելու:

10. Նախքան անձրևը կսկսվեր, գյուղացիները հավաքվեցին մշակույթի տան դահլիճում:

ա) Անձրև սկսվելու պատճառով գյուղացիները հավաքվեցին մշակույթի տան դահլիճում:

բ) Նախքան անձրևի սկսվելը գյուղացիները հավաքվեցին մշակույթի տան դահլիճում:

Վարժություն 16: Ընտրե՛ք և արտագրե՛ք պարզ ընդարձակ նախադասությունների ճիշտ փոխակերպումները:

1. Ձորով հոսում էր շրջակա լեռների ձնաջրերից սկիզբ առնող մի գետ:

ա) Ձորով հոսող գետը սկիզբ էր առնում շրջակա լեռների ձնաջրերից:

բ) Ձորով հոսում էր մի գետ, որը սկիզբ էր առնում շրջակա լեռների ձնաջրերից:

2. Նա տեսավ հեղեղից կամրջի քանդվելը:

ա) Նա տեսավ, որ կամուրջը քանդվեց հեղեղից:

բ) Նա տեսավ, թե ինչպես կամուրջը քանդվեց հեղեղից:

3. Տնօրենը կարգադրեց հաշվապահին հաշվարկի արդյունքներն ուղարկել իրեն:

ա) Տնօրենը կարգադրեց հաշվապահին, որ հաշվարկի արդյունքներն ուղարկի իրեն:

բ) Տնօրենը կարգադրեց, որ հաշվապահը հաշվարկի արդյունքներն ուղարկի իրեն:

4. Գյուղամիջում հավաքված մարդիկ խոսում էին գարնանացանի խնդիրների մասին:

ա) Գյուղամիջում մարդիկ էին հավաքվել, որոնք խոսում էին գարնանացանի խնդիրների մասին:

բ) Մարդիկ, որոնք հավաքվել էին գյուղամիջում, խոսում էին գարնանացանի խնդիրների մասին:

5. Սարալանջին տեղ-տեղ մնացած ձյան շերտերը պսպղում էին արևից:

ա) Սարալանջին տեղ-տեղ ձյան շերտեր էին մնացել, որոնք պսպղում էին արևից:

բ) Ձյան շերտերը, որոնք տեղ-տեղ մնացել էին սարալանջին, պսպղում էին արևից:

6. Նրանք առավոտյան մեկնեցին՝ չնայած եղանակի անբարենպաստ լինելուն:

ա) Նրանք առավոտյան կմեկնեին, եթե եղանակը անբարենպաստ էլ լիներ:

բ) Նրանք առավոտյան մեկնեցին, թեև եղանակը անբարենպաստ էր:

7. Զանգը հնչելուն պես բոլորը դուրս վազեցին:

ա) Երբ զանգը հնչում էր, բոլորը դուրս էին վազում:
բ) Հենց որ զանգը հնչեց, բոլորը դուրս վազեցին:

8. Ծառերն օրորվում էին սարերից փչող սառը քամուց:
ա) Ծառերն օրորվում էին սառը քամուց, որը փչում էր սարերից:
բ) Սառը քամին, որը փչում էր սարերից, օրորում էր ծառերը:

9. Խողովակը նորոգելու դեպքում ահագին ջուր կխնայեին:
ա) Որպեսզի ահագին ջուր խնայեին, պետք է նորոգեին խողովակը:
բ) Եթե խողովակը նորոգեին, ահագին ջուր կխնայեին:

10. Այգիները ժամանակին ջրելու դեպքում լավ բերք կստանային:
ա) Եթե այգիները ժամանակին ջրվեին, լավ բերք կստանային:
ա) Եթե այգիները ժամանակին ջրեին, լավ բերք կստանային:

ԲԱՐԴ ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ-ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բարդ ստորադասական նախադասությունները փոխակերպելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքներին:

ա) Պետք է պահպանել ստորադաս նախադասության պաշտոնը, այսինքն՝ որոշիչ ստորադաս նախադասությունը ճիշտ փոխակերպման դեպքում պետք է վերածվի որոշչի, ձևի պարագա ստորադաս նախադասությունը՝ ձևի պարագայի, և այլն: Օրինակ՝ *Նա տեսավ, որ երեխաները խաղում են բակում* նախադասությունը, որի ստորադաս բաղադրիչը ուղիղ խնդիր է, կփոխակերպվի այսպես. *Նա տեսավ երեխաների՝ բակում խաղալը:* Սխալ կլինի *Նա տեսավ բակում խաղացող երեխաներին* փոխակերպումը, քանի որ *բակում խաղացող* դերբայական դարձվածը որոշչի պաշտոն է կատարում:

բ) Իրենց արտահայտության կերպով գործողությունները լինում են կատարված, կատարվող և կատարելի, այսինքն՝ ներկայացվող ժամանակակետում գործողությունը կարող է լինել այս երեք վիճակներից մեկում: Օրինակ՝ *Նա երեկ զբոսնում էր պուրակում* նախադասության *զբոսնում էր* ստորոգյալը դրված է անցյալ ժամանակի բայով, որը, սակայն, արտահայտում է տվյալ պահին ընթացքի մեջ եղող գործողություն: Ստորադաս նախադասությունը փոխակերպելիս հիմնականում պետք է պահպանել բայի նույն վիճակը, ինչպես՝ *Մարդը, որը* ***աշխատել էր*** *գործարանում, եկավ – Գործարանում* ***աշխատած*** *մարդը եկավ* (կատարված վիճակ): *Մարդը, որը* ***աշխատում է*** *գործարանում, եկավ – Գործարանում* ***աշխատող*** *մարդը եկավ* (կատարվող վիճակ): Հետաձգվեց աշխատանքը, որը մենք **պետք է կատարեինք** – Հետաձգվեց մեր **կատարելիք** աշխատանքը (կատարելի վիճակ):

գ) Փոխակերպման հետևանքով ստացված կապակցությունը պետք է դառնա այն բառի լրացումը, որին լրացնում է երկրորդական նախադասությունը, օրինակ՝ *Արմենը և Գևորգը,* ***որն ապրում է մեր շենքում****, եկան մեր տուն – Արմենը և* ***մեր շենքում ապրող*** *Գևորգը եկան մեր տուն:* Սխալ կլինի *Մեր շենքում ապրող*

Արմենը և Գևորգը եկան մեր տուն փոխակերպումը, քանի որ *Գևորգը* բառին լրացնող որոշիչ ստորադաս նախադասությանը փոխարինած դարձվածը կլրացնի նաև *Արմենը* բառին:

Փոխակերպելիս շաղկապներին ու հարաբերական-կապակցական դերանուններին փոխարինում են համապատասխան կապեր: Աղյուսակներով ներկայացված են շաղկապների ու կապերի, ինչպես նաև դիմավոր բայերի ու դերբայների փոխարինության հիմնական զույգերը՝ համապատասխան օրինակներով:

Շաղկապների ու կապերի փոխարինության հիմնական զույգերը			
Շաղկապը կամ դերանունը	**Նախադասությունը**	**Կապը**	**Փոխակերպված նախադասությունը**
որովհետև	Որովհետև հիվանդ էր, չէր եկել:	***պատճառով***	Հիվանդ լինելու պատճառով չէր եկել:
քանի որ	Քանի որ հիվանդ էր, չէր եկել:	***պատճառով***	Հիվանդ լինելու պատճառով չէր եկել:
հենց որ	Հենց որ անձրևը դադարեց, նրանք մեկնեցին:	***պես***	Անձրևի դադարելուն պես նրանք մեկնեցին:
թե չէ	Անձրևը դադարեց թե չէ, նրանք մեկնեցին:	***պես***	Անձրևի դադարելուն պես նրանք մեկնեցին:
որպեսզի	Գնաց քաղաք, որպեսզի հանդիպի ընկերոջը:	***համար, նպատակով*** (կամ առանց կապի)	Գնաց քաղաք՝ ընկերոջը հանդիպելու (համար, նպատակով):
եթե	Եթե եղանակը լավ լինի, կմեկնենք:	***դեպքում***	Եղանակի լավ լինելու դեպքում կմեկնենք:
թեև	Թեև պայմանները նպաստավոր չէին, մենք հաղթեցինք:	***հակառակ, չնայած***	Հակառակ//չնայած պայմանների նպաստավոր չլինելուն՝ մենք հաղթեցինք:
նախքան	Նախքան աշխատանքը կսկսվեր, ղեկավարը ողջունեց նրանց:	***նախքան***	Նախքան աշխատանքի սկսվելը ղեկավարը ողջունեց նրանց:
այնքան	Մենք այնքան էինք հեռացել, որ տները չէին նշմարվում:	***չափ***	Մենք տների չնշմարվելու չափ հեռացել էինք:
այնպես	Նա այնպես էր վազում, ինչպես գիշատիչ գազանից են փախչում:	***նման, պես***	Նա գիշատիչ գազանից փախչելու նման//պես էր վազում:

Փոխակերպելիս պետք է հաշվի առնել նաև ստորադաս նախադասության ստորոգյալի իմաստային նրբերանգները: Օրինակ՝ անկատարով կազմված ժամանակաձևերը տարբեր իմաստներ են արտահայտում: Դրանք կարող են արտա-

հայտել տվյալ պահին կատարվող գործողություն, ինչպես՝ *Նա **քայլում է** փողոցով.* կարող են արտահայտել մշտապես կրկնվող գործողություն, ինչպես՝ *Նա ամեն օր **գնում է** դպրոց.* կարող են արտահայտել անցյալում կատարված գործողություններ, ինչպես՝ *Հորավարն իր մի քանի քաջերի հետ **հարձակվում է** նահանջողների վրա և **գերեվարում** նրանց.* կարող են արտահայտել ապառնու իմաստ, ինչպես՝ *Նա վաղը **մեկնում է** արտասահման* և այլն:

Երբ + անկատար կառույցը փոխակերպվելիս սովորաբար արտահայտվում է *համակատար դերբայով* կամ *անորոշի սեռական հոլով + ժամանակ* կապակցությամբ, օրինակ՝ *երբ գրում էր – գրելիս* կամ *գրելու ժամանակ:* Սակայն այն դեպքերում, երբ անկատարն արտահայտում է մշտապես կրկնվող կամ անցյալում կատարված գործողություն, ապա արտահայտվում է *անորոշի բացառական հոլով + հետո* կապակցությամբ, օրինակ՝ *Երբ **սովորում էր** դասերը, հեռուստացույց էր դիտում – Դասերը **սովորելուց հետո** հեռուստացույց էր դիտում. Երբ դպրոցն **ավարտում է**, ընդունվում է բուհ – Դպրոցն **ավարտելուց հետո** ընդունվում է բուհ:*

Երբ + վաղակատար և *երբ + անցյալ կատարյալ* կառույցները փոխակերպվելիս արտահայտվում են *անորոշի բացառական հոլով + հետո* կապակցությամբ, օրինակ՝ *երբ գրել էր, երբ գրեց – գրելուց հետո:*

Ներկայացվածները հիմնական սկզբունքներն են. հնարավոր են շեղումներ դրանցից:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Իմաստային-քերականական ի՞նչ իրողություններ պետք է հաշվի առնել փոխակերպելիս:
2. Փոխակերպելիս ստորադաս նախադասության ստորոգյալի իմաստային ի՞նչ առանձնահատկություններ պետք է հաշվի առնել:

Վարժություն 17: Տրված բարդ ստորադասական նախադասությունները փոխակերպե՛ք պարզի:

1. Այդպես անծայրածիր հորիզոնն է կերպարանափոխվում, երբ արևի թափառական թրթռացող մի շող ընկնում է փրփրադեզ թուխպերին:
2. Գլխում խառնիճաղանջ մտքեր էին, որոնք սահում էին առանց որևէ կոնկրետ ձև ստանալու:
3. Երբ դարպասը ծխնիների սուր ճռնչոցով փակվեց, դիմացի սյունազարդ պատշգամբում մի մարդ երևաց:
4. Օրվա վերջին, երբ աղջամուղջն աստիճանաբար թանձրանում էր, նրանք հասան գյուղ:
5. Երբ բանտից ազատվեց, Օհանը այլևս չուզեց տեսնել իր դավաճան, փոքրոգի ընկերներին:
6. Ո՞վ է եղել այդ մարդը, որը փորձել է սրբագրել բնությունը:

7. Մտախոհ քայլողները չզգացին, որ իրենք դուրս են եկել հինավուրց անտառից:
8. Ահա օձագալար գետը, որը ոլոր-մոլոր անցնում է ձորով:
9. Հանկարծ լռության մեջ լսվում են ժամացույցի զարկերը, որոնք նրան հանում են անէությունից:
10. Նա լարում էր հիշողությունը, որ ամեն ինչ կշռադատի:
11. Կարկաչուն գետի ափին հինավուրց ընկուզենին է, որի տերևները արդեն դեղնել էին:
12. Նրանք լայնահուն պողոտայով քայլեցին, մինչև որ ընդհուպ մոտեցան մի բարձրահարկ շենքի:
13. Խորհրդավոր ճամփորդը ոչինչ չտեսավ, որովհետև երբևէ չշրջվեց:
14. Նա կանգ առավ այն ժամանակ, երբ թանձրացող աղջամուղջը պարուրում էր շրջապատի տներն ու ծառերի սաղարթները:
15. Ներսում մի ընդարձակ սրահ էր, որը լուսավորված էր լամպերով և բուխարու մեջ բոցկլտացող կրակով:
16. Իր բանջարանոցը, ծառերը կամ որթատունկերը ջրող այգեպանը մասնակից է դառնում մի ծիսակատարության, որն իր համար մեծ խորհուրդ ունի:
17. Թեև ջուրը խոր չէր, ես ոտքից գլուխ թրջվեցի:
18. Իրականությունն այն է, որ տարբեր եղանակներին ձկները տարբեր տեսք են ընդունում:
19. Ո՞ւր էին այն թերահավատ նախապաշարումներն ու խոհերը, որոնք անընդհատ ճնշում էին ուղեղս մեր քաղաքային եկեղեցիներում:
20. Երբ ափը բոլորովին աներևութացավ, ինձ պաշարեց մի տարօրինակ թախիծ:

Վարժություն 18: Տրված պարզ նախադասությունները փոխակերպե՛ք բարդ ստորադասականի:

1. Նա նստել էր մի հինավուրց ծառի՝ հողից դուրս եկած օձագալար արմատներին:
2. Այդ թանգարանում շրջելիս հաճախ վերանում ես առօրյայից:
3. Այդ օրը հայր ու որդի գնացել էին այգիները՝ բերքը հավաքելու:
4. Հիացմունք պարգևող այդ պատկերը ես վայելում էի ամեն օր:
5. Մինչև ընկերների՝ իր տուն գալը նա շտապ-շտապ դասավորեց իրերը:
6. Աշխատանքից վերադառնալուն պես այցելում էր վատառողջ հարևանին:
7. Նա անհամբեր սպասում էր հոր՝ արտասահմանից վերադառնալուն:
8. Փողոցով մտամոլոր քայլելու ժամանակ նա ոչ մի անգամ հետ չնայեց:
9. Այդ տարօրինակ մարդուն շրջապատածները սարսափով ու անվստահությամբ լի հայացքներով էին նայում նրան:
10. Հանկարծակի ընդհատված խոսակցությունը մի քանի վայրկյանից վերսկսվեց:

11. Դիմացս հինավուրց սաղարթախիտ անտառն էր՝ ընկղմված թանձր խավարի մեջ:
12. Մասամբ ցրվել էին մինչ այդ մեր կատարած տանջալլուկ երթի տպավորությունները:
13. Տարված լինելով ճանապարհի հոգսերով՝ ժամանակին ուշադրություն չդարձրի:
14. Ճամփորդները նստեցին առվակի՝ ծաղիկներով ու խոտերով ծածկված ափին:
15. Մենք մի կերպ անցնում էինք անձրևից լպրծուն դարձած ճանապարհով:
16. Պարտեզի կենտրոնում կարկաչուն շատրվանն էր՝ շրջապատված երփներանգ ծաղիկների ածուներով:
17. Նրանից խնդրեցի նամակը՝ մի լավ ուսումնասիրելու:
18. Միասին գնացել էինք Օշական՝ հայ հանճարի՝ Մեսրոպ Մաշտոցի շիրիմին այցելելու:
19. Զբոսայգու նստարանին նստածները աշխույժ զրուցում էին:
20. Շատրվանների ախորժալուր խշշոցը լսելիս նրա տրամադրությունը բարձրանում էր:

Վարժություն 19: Ընտրե՛ք փակագծում տրված այն բառաձևը կամ կապակցությունը, որի գործածման դեպքում փոխակերպումը ճիշտ կլինի:

1. Տեսա այն մարդուն, որը եկել էր:
   Տեսա *(եկող, եկած)* մարդուն:
2. Հետաձգվեց ուղևորությունը, որը մենք կատարելու էինք հաջորդ շաբաթ:
   Հետաձգվեց հաջորդ շաբաթ մեր *(կատարած, կատարելիք)* ուղևորությունը:
3. Ջուրը, որը թափվում էր վնասված խողովակից, թրջել էր հատակը:
   Վնասված խողովակից *(թափվող, թափված)* ջուրը թրջել էր հատակը:
4. Նա սրտնեղում էր, որ չգիտի այդ պատմության ավարտը:
   Նա սրտնեղում էր այդ պատմության ավարտը *(չիմանալով, չիմանալուց)*:
5. Հենց որ անձրևը դադարեց, երեխաները ելան բակ:
   Անձրևը *(դադարելուն պես, դադարելուց հետո)* երեխաները ելան բակ:
6. Երբ կառուցում էին տունը, նա մեկնեց արտասահման:
   Տունը *(կառուցելու ժամանակ, կառուցելուց հետո)* նա մեկնեց արտասահման:
7. Որպեսզի չմատնի իրեն, լռեց:
   Իրեն *(չմատնելու համար, չմատնելու պատճառով)* լռեց:
8. Երբ ավարտվեց հանդիպումը, մարզիկներն անմիջապես գնացին օդանավակայան:

Հանդիպումը *(ավարտվելուն պես, ավարտվելուց հետո)* մարզիկներն անմիջապես գնացին օդանավակայան:

9. Երբ գնում էր թատրոն, հանդիպեց դասընկերոջը:
   Թատրոն *(գնալիս, գնալուց հետո)* հանդիպեց դասընկերոջը:
10. Որպեսզի չվնասի նկարը, աշխատում էր շատ զգույշ:
    Նկարը *(չվնասելու պատճառով, չվնասելու համար)* աշխատում էր շատ զգույշ:

Ջահուկյան Գևորգ Բեգլարի (1920–2005)

Ծնվել է Կալինինոյի շրջանի Շահնազար (այժմ՝ Մեծավան) գյուղում: 1937–41թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետում: 1941–43թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:

1947-ին Գ. Ջահուկյանը պաշտպանել է թեկնածուական, իսկ 1955-ին՝ դոկտորական ատենախոսություն: 1962-ից մինչև կյանքի վերջը եղել է ԳԱ լեզվի ինստիտուտի տնօրեն՝ միաժամանակ պաշտոնավարելով համալսարանում իբրև ռոմանագերմանական բանասիրության ամբիոնի վարիչ, ապա՝ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի պրոֆեսոր: 1974 թվականին ընտրվել է ԳԱ ակադեմիկոս:

Գ. Ջահուկյանն իր անգնահատելի նպաստն է բերել հայ նորագույն լեզվաբանության հիմնադրման գործին: Ականավոր լեզվաբանի թողած գիտական պատկառելի ժառանգության մեջ նշանակալից են «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» (1959), «Ակնարկներ հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության» (ռուս., 1967), «Հայոց լեզի համեմատական քերականություն» (ռուս., 1982), «Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան» (1987) աշխատությունները:

Գ. Ջահուկյանի հետագա շրջանի կոթողային աշխատությունները՝ «Հայ բարբառագիտության ներածություն» (1972), «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» (1969), «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» (1974), «Ժամանակակից հայերենի իմաստաբանություն և բառակազմություն» (1989), շրջադարձային նշանակություն ունեցան և ճանապարհ հարթեցին հետագա ուսումնասիրությունների և հայ լեզվաբանությունը միջազգային ասպարեզ հանելու համար: Նա անդամակցում էր Եվրոպայի և ԱՄՆ-ի լեզվաբանական ընկերություններին: 1965թ. նա արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, 1988թ.՝ ՀԽՍՀ Պետական, իսկ 1996-ին՝ ՀՀ գիտության ազգային մրցանակների: Պարգևատրվել է Հոկտեմբերյան հեղափոխության, «Պատվո նշան», «Մեսրոպ Մաշտոց» շքանշաններով և մի շարք մեդալներով:

ՄԵՋԲԵՐՎՈՂ ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔ

Խոսողը հաճախ կարող է մեջբերել իր կամ ուրիշի խոսքը, օրինակ՝ – *Ես վաղը մեկնելու եմ,– ասաց ընկերս: Ես քեզ խնդրել էի. – Ոչ ոքի չհայտնես:* Խոսքը կարող է մեջբերվել նաև ոչ այն ձևով, ինչպես որ ասվել է, այլ պատմողաբար, անուղղակիորեն, ինչպես՝ *Ընկերս ասաց, որ ինքը վաղը մեկնելու է: Ես քեզ խնդրել էի, որ ոչ ոքի չհայտնես:* Միևնույն մեջբերվող խոսքի ուղղակի և անուղղակի ձևերը շարահյուսական հոմանիշներ են: Ուղղակի խոսքը հեղինակային խոսքին կարող է կապակցվել ասացական իմաստով տարբեր բառերով, ինչպես *ասել, պատասխանել, կարգադրել, հայտնել, հաղորդել* և այլն: Օրինակ՝ – *Հյուրերն արդեն ժամանել են,– հայտնեց օգնականը:*

Երբեմն հեղինակային խոսքը և ուղղակի խոսքը կարող են կապակցվել խոսողի զգացական վիճակն արտահայտող բառերով, ինչպես՝ *ժպտալ, վրդովվել, հուզվել, ոգևորվել, բարկանալ, ուրախանալ* և այլն: Օրինակ՝ – *Եթե այդպես է, ուրեմն ամեն ինչ լավ է,– ուրախացավ նա: – Ինչո՞ւ ինձ չես հայտնել այդ ամենը,– զայրացավ իշխանը:*

Ուղղակի խոսքը պայմանականորեն բաժանվում է երկու տեսակի՝ հնչող և չհնչող, այսինքն՝ հնչող է բարձրաձայն ասվող խոսքը, իսկ չհնչող է մտածմունքը, նամակում գրվածը և այլն: Իհարկե, գրվածն էլ հնարավոր է ընթերցել, այսինքն՝ այդ դեպքում այն հնչում է, սակայն իրենց կետադրությամբ հնչող և չհնչող մեջբերվող խոսքերը տարբերվում են. մեջբերվող չհնչող խոսքը գրվում է չակերտներով, իսկ հնչող խոսքը՝ անջատման գծով:

Հեղինակի խոսքը ուղղակի խոսքի նկատմամբ կարող է լինել նախադաս, միջադաս կամ հետադաս, ինչպես՝ ***Նա ասաց.*** *– Ես այսօր մեկնելու եմ: – Ես,–* ***ասաց նա,*** *– այսօր մեկնելու եմ: – Ես այսօր մեկնելու եմ,–* ***ասաց նա:***

Եթե հեղինակի խոսքը նախադաս է, ապա ունենում է *ենթակա – ստորոգյալ* շարադասությունը (*նա ասաց*), իսկ եթե միջադաս է կամ վերջադաս, ապա *ստորոգյալ – ենթակա* շարադասությունը (*ասաց նա*):

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է մեջբերվող խոսքը:
2. Ինչպե՞ս կարող է մեջբերվել խոսքը:
3. Պայմանականորեն ի՞նչ տեսակների է բաժանվում մեջբերվող խոսքը:
4. Հեղինակի խոսքը մեջբերվող խոսքի նկատմամբ ի՞նչ դիրք կարող է ունենալ:

Վարժություն 20: Կարդացե՛ք և առանձնացրե՛ք մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսքերը:

«Հին աշխարհի պատմություն» առարկայի դասին էր, որ ես առաջին անգամ ապշեցրի դասընկերներիս՝ հասկացնելով, որ իրենց առջև հիրավի յուրօրինակ

մտքի տեր մի անձնավորություն է: Այնպես պատահեց, որ դա համընկավ այդ առարկայի հենց առաջին դասին: Հենց որ դասագրքերը բաժանեցին, ուսուցչուհին ասաց, որ բացենք ութսունիններորդ էջը: Ես ասացի, որ ավելի ճիշտ կլիներ առաջին դասին նախ բաց անել առաջին էջը: Նա նույն վայրկյանին հարցրեց, թե ինչ է իմ անուն-ազգանունը, և ես զվարթ ասացի.

– Վիլյամ Սարոյան:

– Ուրեմն այսպես, Վիլյա՛մ Սարոյան,– զայրույթով վրա բերեց ուսուցչուհին,– լռե՛ք և ինձ հնարավորությո՛ւն տվեք դասավանդելու:

Ես նստեցի, իսկ ուսուցչուհին սկսեց խոսել դասագրքում պատկերված երկու քարաբեկորների մասին՝ ասելով, թե ըստ հնէաբանների՝ դրանք քսան հազար տարեկան են: Հենց այդ պահին էլ ծնվեց մտածողությանս նոր համակարգը, որի համաձայն՝ հարցերը չպետք է անընդհատ ուսուցիչները տան, իսկ աշակերտները ճգնեն պատասխանել, ուստի հարցրի.

– Որտեղի՞ց գիտեք:

Ամբողջ դասարանը գոռում-գոչյունով շտապեց իր հավանությունը տալ իմ նոր համակարգին, իսկ ուսուցչուհին հարցիս պատասխանելու փոխարեն ստիպեց ինձ փախուստի դիմել, այսինքն՝ սրընթաց նետվեց դեպի ինձ: Ես հապշտապ դուրս թռա դասարանից և որոշեցի առանց հետևանքներին սպասելու եղելության մասին տեղյակ պահել տնօրենին: Երբ նրան պատմեցի կատարվածը, անակնկալի եկա, քանի որ նրա համակրանքն ուսուցչուհու կողմն էր, և նա խոժոռ հայացքով ոտքից գլուխ չափում էր ինձ: Տնօրենը հարցրեց, թե ինչ է իմ ազգանունը և ազգությունը: Լսելով պատասխանս՝ ջղայնությամբ ասաց.

– Միայն հայը կարող էր նման հարց տալ. իմ՝ Կալիֆոռնիայի դպրոցներում աշխատելու տարիներին ոչ ոք երբևէ նման հարց չի տվել:

– Այո՛,– վրդովված պատասխանեցի ես,– այն բոլոր տարիներին էլ, քանի դեռ Նյուտոնը չէր հետաքրքրվել, թե ինչու է խնձորը ծառից ընկնում, ոչ ոք երբևիցէ նման հարց չէր տվել:

Ըստ Վիլյամ Սարոյանի

Վարժություն 21: Գրե՛ք հինգ ուղղակի և հինգ անուղղակի խոսքով նախադասություն:

Վարժություն 22: Գրե՛ք փոքրիկ շարադրություն «Զբոսանք» վերնագրով՝ գործածելով առնվազն հինգ ուղղակի խոսք:

ՄԵՋԲԵՐՎՈՂ ՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՆՈՒՂՂԱԿԻՔ

Մեջբերվող ուղղակի խոսքը հիմնականում հնարավոր է արտահայտել նաև անուղղակի ձևով, որը դառնում է տվյալ մեջբերվող խոսքի շարահյուսական հոմանիշը, ինչպես՝ – *Մենք ավարտել ենք աշխատանքը,– ասաց նա: Նա ասաց, որ*

իրենք ավարտել են աշխատանքը: Ուղղակի խոսքն անուղղակիի փոխակերպելիս կատարվում են մի շարք փոփոխություններ:

1. Նախ հիշենք, որ հեղինակի խոսքն ուղղակի խոսքի նկատմամբ կարող է լինել նախադաս, միջադաս կամ հետադաս, իսկ անուղղակի խոսքի դեպքում այն նախադաս է, օրինակ՝ – *Ես կարդացել եմ այդ գիրքը,– **ասաց նա**: **Նա ասաց**, որ ինքը կարդացել է այդ գիրքը:*

2. Հեղինակի խոսքը և ուղղակի խոսքը, բացի *ասել, պատասխանել, կարգադրել, հայտնել, հաղորդել* և նման այլ ասացական բայերից, կարող են կապակցվել նաև զգացական բայերով, ինչպես՝ *վրդովվել, հուզվել, ոգևորվել, բարկանալ, ուրախանալ* և այլն, օրինակ՝ – *Ամեն ինչ լավ է կատարվել,– ուրախացավ նա:* Զգացական բայերով կապակցված ուղղակի խոսքը չի փոխակերպվում, քանի որ փոխակերպման դեպքում անհրաժեշտ կլինի փոփոխություն կատարել նաև հեղինակի խոսքում (օրինակ՝ ավելացնել *ասելով* դերբայը):

3. Այն ուղղակի խոսքերը, որոնք հարցական են, անուղղակիի վերածվելիս հեղինակի խոսքին կապվում են *թե* շաղկապով, օրինակ՝ *Նա հարցրեց ինձ. – Ե՞րբ է ավարտվելու քո գործուղումը: Նա հարցրեց ինձ, **թե** երբ է ավարտվելու իմ գործուղումը: – Մի՞թե նա քեզ չի հայտնել այդ ամենը,– զարմացած հարցրեց ընկերս: Ընկերս զարմացած հարցրեց, **թե** մի՞թե նա ինձ չի հայտնել այդ ամենը:* Մյուս դեպքերում անուղղակի խոսքը հեղինակի խոսքին կապակցվում է հիմնականում ***որ*** շաղկապով, ինչպես՝ *Նկարիչն ասաց. – Իմ նկարների ցուցահանդեսը կբացվի մեկ ամսից: Նկարիչն ասաց, **որ** իր նկարների ցուցահանդեսը կբացվի մեկ ամսից:* Եթե հարցական ուղղակի խոսքում չկան հարցական դերանուններ կամ հարցական-երկբայական երանգով վերաբերականներ, ապա անուղղակիի փոխակերպելիս կարելի է ավելացնել *արդյոք* բառը, ինչպես՝ – *Աշխատանքն ավարտվե՞լ է,– հարցրեց նա: Նա հարցրեց, թե արդյո՞ք աշխատանքն ավարտվել է:*

4. Հրամայական եղանակի բայերով արտահայտված ստորոգյալ ունեցող ուղղակի խոսքը փոխակերպելիս կարելի է ավելացնել *թող* բառը, իսկ հրամայական բայը վերածվում է ըղձական եղանակի բայաձևի, ինչպես՝ – *Եթե դուք որևէ ցանկություն ունեք,– ասաց տանտերը հյուրերին,– հայտնե՛ք: Տանտերը հյուրերին ասաց, որ եթե նրանք որևէ ցանկություն ունեն, **թող** հայտնեն:*

5. Ուղղակի խոսքը փոխակերպելիս կատարվում են նաև համապատասխան դիմային փոփոխություններ, ինչպես՝

– Դու քո աշխատանքը կներկայացնես վաղը,– ասաց նկարիչը ինձ:	*Նկարիչը ինձ ասաց, որ ես իմ աշխատանքը կներկայացնեմ վաղը:*
– Դու քո աշխատանքը կներկայացնես վաղը,– ասաց նկարիչը քեզ:	*Նկարիչը քեզ ասաց, որ դու քո աշխատանքը կներկայացնես վաղը:*

– Դու քո աշխատանքը կներկայացնես վաղը,– ասաց նկարիչը նրան (Աշոտին):	*Նկարիչը նրան (Աշոտին) ասաց, որ նա իր աշխատանքը կներկայացնի վաղը:*

6. Ուղղակի խոսքը փոխակերպելիս կոչականը կարող է ենթարկվել մի քանի փոփոխությունների:

ա) Զգացական արժեքով կոչականները դուրս են ընկնում, օրինակ՝ – *Սիրելի՛ս, ես ինչպե՞ս օգնեմ քեզ,– հարցրեց տղան: Տղան հարցրեց, թե ինքը ինչպես օգնի նրան:*

բ) Կոչականը կարող է վերածվել ենթակայի, ինչպես՝ – *Արմեն, վաղը ե՛կ ինձ օգնելու,– ասաց հայրը: Հայրն ասաց, որ Արմենը վաղը գա իրեն օգնելու:*

գ) Կոչականը կարող է վերածվել հանգման անուղղակի խնդրի, ինչպես՝ – *Արմեն, վաղը ե՛կ ինձ օգնելու,– ասաց հայրը: Հայրն ասաց Արմենին, որ վաղը գա իրեն օգնելու:*

դ) Եթե կոչականն արտահայտող գոյականը որպես հանգման անուղղակի խնդիր գործածված է հեղինակային խոսքում, ապա փոխակերպման ժամանակ կոչականը դուրս է ընկնում, ինչպես՝ *Որդին ասաց* ***հորը****. –* ***Հա՛յր****, ես կկատարեմ այդ աշխատանքը: Որդին ասաց հորը, որ ինքը կկատարի այդ աշխատանքը:*

ե) Եթե ուղղակի խոսքում կա կրկնվող կոչական, ապա անուղղակի վերածելիս հանգման խնդիր կամ ենթակա դառնում է նրանցից մեկը, իսկ մյուսները դուրս են ընկնում, ինչպես՝ – ***Մայրի՛կ, մայրի՛կ,*** *ե՞րբ ենք գնալու,– հարցրեց երեխան: Երեխան հարցրեց* ***մայրիկին****, թե երբ են գնալու:* Իսկ եթե կան տարբեր կոչականներ, բոլորն էլ փոխակերպվելիս վերածվում են կա՛մ հանգման խնդրի, կա՛մ ենթակայի, օրինակ՝ – ***Արմե՛ն, Դավի՛թ,*** *տո՛ւն եկեք,– կանչեց մայրը: Մայրը կանչեց* ***Արմենին, Դավիթին****, որ տուն գան:*

7. Ուղղակի խոսքն անուղղակիի փոխակերպելիս դուրս են ընկնում ձայնարկությունները և վերաբերմունք արտահայտող բառերը՝ **կարծեմ, լա՛վ, ներեցե՛ք** և այլն: Օրինակ՝ – *Վա՛յ, նա արդեն վերադարձե՞լ է,– զարմացած հարցրեց Հասմիկը: Հասմիկը զարմացած հարցրեց, թե նա արդեն վերադարձե՞լ է: – Լավ, ես քեզ կօգնեմ,– ասաց ծերունին տղային: Ծերունին տղային ասաց, որ ինքը նրան կօգնի:*

8. Ուղղակի խոսքում եղած առաջին շարքի ցուցական դերանունները փոխակերպման ժամանակ անհրաժեշտության դեպքում փոխարինվում են երկրորդ շարքի դերանուններով՝ **այս – այդ, այստեղ – այդտեղ, այսքան – այդքան, այսպես – այդպես** և այլն (բացի **սույն**-ից): Անուղղակին ուղղակիի փոխակերպելիս հակառակ փոփոխությունը (*այդ – այս*) պարտադիր չէ: Օրինակ՝ – *Վերցրո՛ւ* ***այս*** *ներկը և* ***սրանո՛վ*** *ներկիր ցանկապատը,– ասաց պապը թոռանը: Պապը թոռանը ասաց, որ վերցնի* ***այդ*** *ներկը և* ***դրանով*** *ներկի ցանկապատը:*

Փոխակերպման ժամանակ նույն սկզբունքով են փոփոխվում նաև ցուցական դերանուններով կազմված բաղադրյալ բառերը, օրինակ՝ **այսօր – այդ օրը** և այլն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ շարադասությամբ է դրվում անուղղակի խոսքը հեղինակի խոսքի նկատմամբ:
2. Ի՞նչ շաղկապներով է կապակցվում անուղղակի խոսքը:
3. Փոխակերպման ի՞նչ առանձնահատկություններ ունի հարցական ուղղակի խոսքը:
4. Փոխակերպման ի՞նչ առանձնահատկություններ ունի հրամայական բայ-ստորոգյալ ունեցող ուղղակի խոսքը:
5. Մեջբերվող ուղղակի խոսքն անուղղակիի փոխակերպելիս ի՞նչ փոփոխությունների կարող է ենթարկվել կոչականը:

Վարժություն 23: Տրված ուղղակի խոսքը փոխակերպե՛ք անուղղակիի:

1. – Դա այն հայտնի քանդակագործն է,– լսելի եղավ ամեն կողմից:
2. Այդ ժամանակ իմ մեջ թպրտում էր որսորդի ոգին, և մտքում ինքս ինձ ասում էի. «Սրանից հաջող որս որտե՞ղ կգտնես. վազի՛ր, հրացանդ բե՛ր»:
3. «Հետախույզ են ուղարկել»,– մտածեցի ես՝ լիովին անշարժանալով:
4. «Որտե՞ղ մնաց, ե՞րբ և ո՞ւր կորավ այդ դժոխքի դևը»,– վրդովմունքից խեղդվելով՝ խորհում էի ողջ գիշեր:
5. – Լավ,– ասացի ես,– հենց վաղը՝ երեկոյան կողմ, կգնամ այցելության:
6. Դպրոցի տեսուչն ինձ կանչեց և ցույց տալով նամակը՝ հարցրեց.
   – Կարո՞ղ ես ասել՝ ում ձեռագիրն է:
7. – Ուզում եմ՝ ես ու դու այստեղ մի քիչ էլ զբոսնենք, դիտենք մամռապատ խաչքարերով գերեզմանատունը, խաղողի որթատունկերը,– պատասխանեց նա ինձ:
8. – Նե՛րս կանչիր հյուրիդ,– ինձ ասաց բարեհամբույր կինը, ապա դառնալով պառավին՝ ավելացրեց, – դու մի երկու հա՛ց հանիր, ես հիմա կգամ:
9. «Մոռացա՞վ, անտեսե՞ց ինձ սպարապետը»,– սրդողած խորհում էր Ատոմը:
10. – Մենք բարեհաջող անցանք, դուք զգու՛յշ եղեք՝ հանկարծ չսայթաքեք,– մեզ պատասխանեց զինվորը:
11. «Մի՞թե ոչինչ չի փոխվել»,– մտածեց նա՝ անհնար համարելով այդ:
12. Մի քանի վայրկյան հետո ես գլխի եմ ընկնում և ասում ծերունուն.
    – Հայրի՛կ, այստեղ ամեն մարդ ինքն իրեն պետք է սպասարկի:
13. – Դե՛, այս մե՛նն էլ շուռ տվեք ու վերջացրե՛ք գործը,– երիտասարդ բանվորներին հրահանգեց մի ալեզարդ մարդ:
14. Նա վճռական շարժումով մոտեցավ հորը և ասաց.
    – Հա՛յր, իմ քննական համերգն է, արի՛ լսելու:

15. Ընկերս ինձ մի օր ասաց.
– Ես վերջապես իմացա՝ ովքեր են եղել ինձ վրա հարձակվողները:
16. Նա անդրավարտիքի գրպանից հանեց թղթերը և ինձ ասաց.
– Մի նոր բան եմ գրել. ես կկարդամ, դու լսի՛ր:
17. – Իմ գործադրած նախազգուշություններն ապարդյուն անցան,– ասաց նա տխրությամբ:
18. Այնժամ նա զգույշ հետ դարձավ և շշնջաց.
– Մենք պետք է գնանք, քանի դեռ մեզ չեն նկատել:
19. – Մենք կարծում ենք, որ Դուք չեք կարողանա մեզ օգնել, և ես էլ այդ դեպքում նրանց պատվերը չեմ հասցնի կատարել,– պատասխանեց նա ինձ:
20. – Մա՛րդ աստծո, չէի՞ր կարող նախօրոք տեղյակ պահել մեզ քո մտադրության մասին,– վրդովված ասաց ծերունին վարպետին:

Վարժություն 24: Տրված անուղղակի խոսքը փոխակերպե՛ք ուղղակիի:

1. Ուղեկիցս ասաց, որ տարիներ առաջ այդ վայրը նույնպես ծածկված է եղել սաղարթախիտ ծառերով:
2. Վարդանը խնդրեց ընկերոջը, որ իրեն հայտնի մասնակիցների հանդիպման վայրը:
3. Անշարժ նստած՝ նա խորհում էր, որ նրանք իրեն չօգնեցին, բայց ինքը միշտ էլ աջակցել էր այդ մարդկանց:
4. Այդ ամենից հետո մարգիչն ասաց, որ իրենք բոլորն էլ ջանք չեն խնայել, և դրա շնորհիվ էլ հաղթել են նրանց:
5. Գարեգինը հարցրեց նրանց, թե նրանք իրեն չե՞ն կարող արդյոք ներգրավել այն խմբի մեջ, որը մեկնելու է պեղումներ կատարելու:
6. Աշակերտները հարցրին ուսուցչին, թե իրենք երբ կգնան այն թանգարանը, որի մասին նա դասի ընթացքում պատմել էր իրենց:
7. Պատվիրակը հայտնեց տնօրենին, որ ինքը եկել է նրանց հանձնարարությամբ և պետք է վերադառնալով նրա պատասխանն էլ հայտնի նրանց:
8. Վարորդը հայտնեց ուղևորներին, որ ինքը պետք է կնքել տա փաստաթղթերը, բայց իսկույն կվերադառնա, ուստի նրանք իրեն սպասեն ավտոբուսում:
9. Նրանք նամակով հայտնում էին մեզ, որ իրենք տեղյակ են մեր հաջողություններին, բայց մենք չգիտենք, որ իրենք էլ են հաղթել մրցույթում:
10. Մինչ այդ ոչինչ չասած մարդը հարցրեց, թե ով է իրեն օգնելու ղեկավարության հանձնարարությունը կատարելիս, և ինքը արդյոք ծանո՞թ է նրան:
11. Նա հավաստիացնում էր, որ իրենք բոլորն էլ լավ են նախապատրաստվել մրցույթին և կատարել են իրենց հանձնարարված բոլոր աշխատանքները:
12. Աշակերտները խնդրեցին ուսուցչին, որ իրենց թույլ տա, որ գնան ցուցահանդես, որտեղ ներկայացված են նաև իրենց դասընկերոջ նկարները:

13. Նա մտքում անընդհատ կրկնում էր, թե ինչու ինքը նրան չնախազգուշացրեց, որ ինքը չի կարող օգնել:
14. Նամակում ասված էր, որ մրցույթին կարող են մասնակցել մեզանից նրանք, ովքեր հաղթել են նախնական փուլում:
15. Նկարիչն ասաց, որ իր կտավներում ինքը փորձել է պատկերել այն ամենը, ինչը տեսնում են բոլորը, բայց ոչ բոլորն են կարողանում պատկերել:
16. Ձկնորսը պատասխանեց, որ իր մաշված ուռկանով ինքը չի կարող ձուկ որսալ:
17. Հյուրերը հարցրին տանտիրոջը, թե նա երբ է վերադարձել գործուղումից, և ինչու էին իրեն այդպես անակնկալ գործուղել:
18. Դռնապանն ասաց հարցնողներին, որ ինքը չգիտի, թե նա երբ կգա. իրենց այդ մասին նա չի հայտնել:
19. Լրագրում գրված էր, որ նկարիչն իր համար էլ անսպասելի գտել է մի եղանակ, որով կարողանում է իր կտավների գույները պայծառացնել:
20. Հայկը հայտնեց Վահեին, որ իր գործն արդեն ավարտել է և գնում է տուն. թող նա կիսատ թողնի իր գործը, իրենք վաղը միասին կշարունակեն:

ՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔԻ ԿԵՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես ասվել է, մեջբերվող խոսքը պայմանականորեն բաժանվում է երկու տեսակի՝ հնչող և չհնչող:

1. **Որպես հնչող խոսք** մեջբերվող ուղղակի խոսքը կետադրվում է հետևյալ ձևով:

Եթե հեղինակի խոսքը նախադաս է, ապա նրանից հետո դրվում է միջակետ, իսկ ուղղակի խոսքը մեծատառով գրվում է նոր տողից. նրանից առաջ դրվում է անջատման գիծ, օրինակ՝

Տեսնելով մեզ բակում՝ նա հարցրեց.

– Ի՞նչ եք ուզում:

Եթե հեղինակի խոսքը միջադաս կամ վերջադաս է, ապա նրանից առաջ դրվում է ստորակետ-գիծ (կամ էլ կախման կետեր-գիծ), իսկ հեղինակի միջադաս խոսքից հետո դրվում է կա՛մ ստորակետ-գիծ, կա՛մ միջակետ-գիծ, կա՛մ վերջակետ-գիծ: Ստորակետ-գիծը միշտ գործածվում է որպես հեղինակի և ուղղակի խոսքի տրոհման միջոց, իսկ միջակետի, վերջակետի, ինչպես նաև կախման կետերի գործածությունը պայմանավորված է նրանով, թե տվյալ դեպքում հեղինակի խոսքին նախորդող և հաջորդող միավորներն իրար նկատմամբ շարահյուսական ինչ հարաբերություն ունեն: Օրինակ՝ *Մենք ոչինչ չենք կարող անել. ամեն ինչ վերջացած է* նախադասության բաղադրիչներն ունեն պատճառահետևանքային հարաբերություն, ուստի նրանց միջև միջակետ է դրվել: Եթե այս նախադասությունն ընդմիջվի հեղինակի խոսքով, ապա նրանից հետո կդրվի միջակետ-գիծ, ինչպես՝ – *Մենք ոչինչ չենք կարող անել,– ասաց մարգիչը.– ամեն ինչ վերջացած է:*

Այլ օրինակներ՝

– Ես,– ասաց ճամփորդը,– շատ հեռվից եմ գալիս:

– Խավար գիշեր է,– ասաց տանտերը.– չես կարող մեկնել:

– Ամեն ինչ ավարտված է,– ափսոսանքով ասաց իշխանը:– Ձիերը թամբե՛ք և մեկնե՛ք:

– Ես...– կմկմաց տղան,– ես ի՞նչ կարող էի անել:

2. **Որպես չինչող խոսք** մեջբերվող ուղղակի խոսքը կետադրվում է հետևյալ ձևով:

Եթե հեղինակային խոսքը նախադաս է, ապա նրանից հետո դրվում է միջակետ, իսկ ուղղակի խոսքն առնվում է չակերտների մեջ, օրինակ՝ *Նա գրում է. «Շուտով վերադառնալու եմ»: Վահրամ Փափազյանն ասել է. «Հանցանք է արշավի ձին արորի լծելը»:*

Եթե հեղինակի խոսքը միջադաս է, ապա, ինչպես մեջբերվող հնչող խոսքի դեպքում, նրանից առաջ կարող է դրվել ստորակետ-գիծ կամ կախման կետեր-գիծ, իսկ նրանից հետո՝ ստորակետ/միջակետ/վերջակետ-գիծ, և ուղղակի խոսքն առնվում է չակերտների մեջ, օրինակ՝ *«Ես,– գրում էր նա,– շուտով կվերադառնամ»: «Մենք ավարտել ենք աշխատանքը,– գրում էր որդին:– Մի քանի օրից ես կվերադառնամ տուն»:*

Եթե հեղինակի խոսքը վերջադաս է, ապա ուղղակի խոսքն առնվում է չակերտների մեջ, և նրանից հետո դրվում է ստորակետ-գիծ, օրինակ՝ *«Ես շուտով կվերադառնամ»,– գրում էր նա: ««Շունն ու կատուն» Թումանյանը գրել է 1886 թվականին»,– գրված էր շարադրության մեջ:*

Մեջբերվող կարճ ուղղակի խոսքը, եթե հաջորդում է հեղինակի խոսքին, ապա կարող է տրոհվել նաև բութով. այդ դեպքում գրվում է փոքրատառով և նույն տողում, օրինակ՝ *Նա ասաց՝* ***կօգնեմ և կաջակցեմ:*** *Նա խորհրդավոր ժպիտով ասաց՝* ***եկա, տեսա, հաղթեցի:***

Հարցական նախադասությամբ արտահայտված ուղղակի խոսքն անուղղակիի փոխակերպվելիս կետադրվում է հետևյալ սկզբունքներով:

ա) Եթե ուղղակի խոսքում կան հարցական-երկբայական վերաբերականներ, ապա նրանց հարցական նշանը անուղղակի խոսքում պահպանվում է, օրինակ՝ – *Մի՞թե նա վերադարձել է,– հարցրեց նկարիչը: Նկարիչը հարցրեց, թե մի՞թե նա վերադարձել է:*

բ) Եթե ուղղակի խոսքում կան հարցական դերանուններ, ապա անուղղակի խոսքում դրանք վերածվում են հարաբերական դերանունների, և նրանց վրա հարցական նշան չի դրվում, օրինակ՝ – *Ե՞րբ ես վերադարձել,– հարցրեց ընկերս: Ընկերս հարցրեց, թե երբ եմ վերադարձել:*

գ) Եթե ուղղակի խոսքում չկան ո՛չ հարցական-երկբայական վերաբերականներ, ո՛չ էլ հարցական դերանուններ, ապա անուղղակիի վերածվելիս հարցական նշանը պահպանվում է, և կարող է ավելացվել *արդյոք* բառը, օրինակ՝ – *Դու այցելեցի՞ր*

ընկերոջդ,– հարցրեց ինձ Գեղամը: "Գեղամը ինձ հարցրեց, թե ես այցելեցի" (արդյոք) ընկերոջս:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչպե՞ս է կետադրվում հնչող ուղղակի խոսքը:
2. Ինչպե՞ս է կետադրվում չհնչող ուղղակի խոսքը:
3. Ինչպե՞ս է կետադրվում կարճ ուղղակի խոսքը:

Վարժություն 25: Արտագրե՛ք և կետադրե՛ք մեջբերվող ուղղակի խոսքերը (կետադրական մյուս նշանները դրված են):

Լաջվարդ երկինքը՝ իր փայլփլուն արևով, և դրախտից մի կտոր ցոլցլում էին պաղպաջուն լճակի հայելու մեջ:

Եվ տեսավ Լիլիթը, որ արփին այնքան հրեղեն չէ, ինչքան իր աչքերի կրակը, և երկինքն այնքան խորունկ չէ, ինչքան իր աչքերի հունը: Ինքն է ամենակատարյալը, և լիճն ու դրախտը լցված են իր չնաշխարհիկ դեմքի լույսով:

Մինչ այդ մի զույգ հակինթե թիթեռներ՝ ադամանդե թևերով ու գույն-գույն նախշերով, եկան և նստեցին նրա քաղցրաբույր մազերի վրա: Լիլիթը նայեց և ժպտաց ինքնագոհ: Ի՞նչ գեղեցիկ կլիներ, եթե սրանք միշտ մազերիս վրա մնային մտածեց նա:

Եվ իսկույն երփներանգ ծաղիկներ քաղեց, որոնք հազար թույրով փայլում էին ու բուրում իր շուրջը, և շարեց ոսկեհուր վարսերի մեջ:

Ադամը, որը, հեռվում արձանացած, հափշտակված դիտում էր ընկերուհուն, մեկեն սիրտ առավ և մոտեցավ նրան:

Լիլի՛թ՝ հրեշտակներից չքնաղս կցկտուր թոթովեց Ադամը այդ ի՞նչ ծաղիկներ էին, որ դու քաղեցիր:

Սրա՞նք, հրաշալիքներ են սրանք, բայց դու չես հասկանում Ադամի խոսքը արհամարհանքով կտրեց Լիլիթը:

Ո՛չ, հոգի՛ս, ես գիտեմ Եդեմում այնպիսի վայրեր, ուր ստեղծողն անգամ տակավին ոտք չի դրել, այնպիսի գույնզգույն ծաղիկներ՝ անպատմելի բույրերով, այնպիսի սաղարթախիտ ծառեր՝ ամենահամեղ պտուղներով զարդարուն... Կուզե՞ս՝ գնանք, շրջենք այդ վայրերում:

Ադամն այնպիսի փաղաքուշ ձայնով ասաց, որ մի ակնթարթ մեղմացավ Լիլիթի զայրույթը:

Լավ, Ադա՛մ, կգնանք, բայց ոչ այսօր. հետո, հետո:

Լիլի՛թ՝ նազելիս, այո՛, երբ որ կամենաս, սակայն գիշեր է գալու հիմա. գնանք իմ տաղավարը, որ շինել եմ հրաշագեղ սոխակների բներին կից՝ ամենաշքեղ ծաղիկներով պարուրված: Քնի՛ր այնտեղ, իսկ ես կհսկեմ քո անուշ նիրհը:

Ըստ Ավետիք Իսահակյանի

Վարժություն 26: Արտագրե՛ք և կետադրե՛ք տրված նախադասությունները:

1. Վարդանը խորհում էր Ինչու ես ժամանակին չզգուշացրի նրան:
2. Ով պետք է կատարի այդ ծանր աշխատանքը հարցրեց տնօրենը:
3. Հայրը հարցրեց որդուն թե նա այցելեց հիվանդ հորեղբորը:
4. Մի պահ մտածեց ու ասաց կօգնեմ:
5. Ես գրում էր ընկերը կարող եմ քեզ համար մի հարմար աշխատանք գտնել:
6. Որդիս ասաց հայրը երբ ես ավարտելու գործդ:
7. Կգնամ ու կհաղթեմ մտածում էր նա չէ որ լավ եմ մարզվել:
8. Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել մինչև հոկտեմբերի 31-ը գրված էր հայտարարության մեջ:
9. Սիրելի աշակերտներ ասաց ուսուցիչը վաղը գնալու ենք պատկերասրահ:
10. Եղբայրը հարցրեց ընկերներին թե ինչու իրեն այդ մասին չէին հայտնել:

Ղարիբյան Արարատ Սահակի (1899–1977)

Ծնվել է Արտաշատի շրջանի Դարղալու (այժմ՝ Այգեզարդ) գյուղում: Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում: 1937թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ 1940-ին՝ դոկտորի գիտական աստիճան: 1947թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1960թ.՝ իսկական անդամ: Տարբեր տարիների պաշտոնավարել է հբրև հայոց լեզվի ամբիոնի վարիչ (համալսարանում և մանկավարժական ինստիտուտում), ԳԱ լեզվի ինստիտուտի տնօրեն: Զբաղվել է հիմնականում հայոց լեզվի պատմության, հայ բարբառագիտության, հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի և բառարանագրության հարցերով: Կարևոր է նրա ներդրումը հայ բարբառների գիտական դասակարգման բնագավառում: հայերենի բարբառների ձևաբանական դասակարգման մեջ ավելացրել է չորրորդ՝ ս ճյուղը:

Զբաղվել է նաև ընդհանուր և պատմահամեմատական լեզվաբանության հարցերով: Նրա գրչին են պատկանում «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» (1937), «Հայերենի բարբառների մի նոր ճյուղ» (1939), «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա» (1954) և այլ գրքեր:

Զգալի է Ա. Ղարիբյանի ավանդը նաև բառարանագրության ասպարեզում. նրա «Ռուս-հայերեն բառարանը», որն ընդգրկում է շուրջ 85 հազար բառահոդված (1968), արժանացել է ՀԽՍՀ Պետական մրցանակի:

Ա. Ղարիբյանը հեղինակ է նաև դպրոցական բազմաթիվ դասագրքերի: Միջնակարգ դպրոցի 5–6-րդ դասարանների համար նրա կազմած հայոց լեզվի դասագիրքը ունեցել է 25 վերահրատարակություն:

Ա. Ղարիբյանը արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, խ. Աբովյանի անվան մեդալով:

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ. ՆՐԱՆՑ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ

Բայը, ինչպես հայտնի է, ժամանակակից հայերենում ունի երեք սեռ՝ *ներգործական, կրավորական* և *չեզոք:* Ներգործական բայերը պահանջում են ուղիղ խնդիր լրացում, օրինակ՝ *գրել նամակ, կառուցել տուն, նկարել նկար* և այլն: *Նամակ, տուն, նկար* բառերը ուղիղ խնդիրներ են: Կրավորական սեռի բայերը կազմվում են *-վ-* ածանցով և պահանջում են ներգործող անուղղակի խնդիր լրացում, օրինակ՝ *կոտրվել քամուց, գնահատվել հանձնաժողովի կողմից, ընդունվել հանդիսատեսի կողմից, ծածկվել ձյունով* և այլն: *Քամուց, հանձնաժողովի կողմից, հանդիսատեսի կողմից, ձյունով* բառերն ու կապակցությունները ներգործող անուղղակի խնդիրներ են: Անձ ցույց տվող գոյականներով ու դերանուններով արտահայտված ներգործող անուղղակի խնդիրները ձևավորվում են *սեռական հոլով + կողմից* կապակցությամբ, իսկ մյուս ներգործող խնդիրները՝ բացառական կամ գործիական հոլովներով դրված բառերով: Չեզոք սեռի բայերը չեն պահանջում ո՛չ ուղիղ խնդիր, ո՛չ էլ ներգործող անուղղակի խնդիր լրացումներ: Օրինակ՝ *զբոսնել, հիանալ, զմայլվել, ուրախանալ* բայերը չեզոք սեռի են:

Միևնույն բայի ներգործական և կրավորական ձևերով ստորոգյալներ ունեցող և նույն բառերից կազմված նախադասությունները դառնում են շարահյուսական հոմանիշներ, ինչպես՝ *Հեղեղը քանդեց կամուրջը – Կամուրջը քանդվեց հեղեղից:* Ներգործական կառույցը կրավորականի փոխակերպելիս կատարվում է երեք փոփոխություն:

ա) Ներգործական սեռի բայը փոխարինվում է կրավորական սեռի բայով:

բ) Ենթական վերածվում է ներգործող խնդրի:

գ) Ուղիղ խնդիրը վերածվում է ենթակայի:

Բերված օրինակում *քանդել* ներգործական սեռի բայը վերածվել է *քանդվել* կրավորականի, *հեղեղը* ենթական վերածվել է ներգործող խնդրի՝ *հեղեղից,* իսկ *կամուրջը* ուղիղ խնդիրը վերածվել է ենթակայի: Նույն ձևով՝ *Անձրևը թրջեց հողը – Հողը թրջվեց անձրևից: Մասնագետները գնահատեցին աշխատանքը – Աշխատանքը գնահատվեց մասնագետների կողմից:*

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որո՞նք են բայի սեռերը:
2. Ի՞նչ լրացում են պահանջում ներգործական սեռի բայերը:
3. Ի՞նչ լրացում են պահանջում կրավորական սեռի բայերը:
4. Ի՞նչ փոփոխություններ են կատարվում ներգործական կառույցով նախադասությունները կրավորականի փոխակերպելիս:

Վարժություն 27: Ներգործական կառուցվածքով տրված նախադասությունները փոխակերպե՛ք կրավորականի:

1. Հուժկու հարվածը ավերեց պատը:

2. Պայծառ արևը լուսավորել էր ամեն ինչ:
3. Ուժգին քամին տարուբերում էր նույնիսկ դարավոր ծառերը:
4. Ձյան ճերմակ սավանը ծածկել էր տանիքները:
5. Հեղեղը խարխլել էր հինավուրց կամուրջը:
6. Հանձնաժողովը քննարկեց մասնակիցների աշխատանքները:
7. Նա հաշվարկել էր բոլոր անհրաժեշտ տվյալները:
8. Երկարատև խոնավությունը քայքայել էր ամեն ինչ:
9. Քամին թեքել էր տանիքին ամրացված ալեհավաքը:
10. Ափերից ելած ջուրը ծածկել էր մոտակա տները:

Վարժություն 28: Կրավորական կառուցվածքով տրված նախադասությունները փոխակերպե՛ք ներգործականի:

1. Երկաթե դարպասը թեքվել էր ուժգին հարվածից:
2. Նրանց կատարած աշխատանքը բարձր գնահատվեց մասնագետների կողմից:
3. Այդ լքված տանը ամեն ինչ ծածկվել էր փոշով:
4. Ծառը ջրվել էր վնասված խողովակից թափված ջրից:
5. Միամիտ ծերունին համոզվել էր նրա կեղծ խոսքերից:
6. Ժայռը հղկվել էր ալիքների անընդմեջ հարվածներից:
7. Անսպասելի հանդիպումից նա չափազանց հուզվել էր:
8. Ծաղիկները օրորվում էին երեկոյան զեփյուռից:
9. Այդ շենքը կառուցվել էր հմուտ վարպետների կողմից:
10. Լեռների կատարները ծածկվել էին թանձր մառախուղով:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԻ, ՆՐԱՆՑ ՀՆՉԵՐԱՆԳԸ ԵՎ ԿԵՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախադասությունների միջոցով խոսողը տարբեր տեղեկություններ է հաղորդում և հաղորդվածի նկատմամբ էլ տարբեր վերաբերմունք է ունենում: Բերենք օրինակ: *Խաղն ավարտվեց: Մեր թիմը հաղթեց:* Այս նախադասությունները խոսողը կարող է ասել չեզոք հնչերանգով, երբ ինչ-որ դեպք է պատմում, քանի որ նպատակը տեղեկություն հաղորդելն է: Կարող է շարունակել ասենք այսպես՝ *Բայց մենք չբավարարվեցինք ձեռք բերածով և շարունակեցինք ավելի ակտիվորեն մարզվել:* Սակայն նույն նախադասությունները կարող են ասվել նաև խաղի ավարտվելու պահին հենց խաղադաշտում, երբ հաղթողներն անհամբեր սպասում են խաղի ավարտվելուն, որպեսզի տոնեն իրենց հաղթանակը: Այդ դեպքում ոգևորված խոսողը նախադասությունները կարտաբերի բացականչությամբ ու այդ հնչերանգով իր ուրախությունը, այսինքն՝ իր վերաբերմունքը կարտահայտի, ինչպես՝ *Խաղն ավարտվե՛ց: Մեր թիմը հաղթե՛ց:* Այսպիսով՝ նախադասությունները կարող են արտասանվել տարբեր հնչերանգներով՝ ըստ հաղորդման նպա-

տակի և խոսողի վերաբերմունքի: Սրա հիման վրա առանձնացվում են նախադասության հաղորդակցական տեսակները:

Ըստ հաղորդակցման նպատակի՝ նախադասությունները լինում են ***պատմողական, հարցական, հրամայական, բացականչական***:

Պատմողական նախադասության հաղորդակցական նպատակն է տեղեկություն հաղորդելը: Նրանով հաստատվում կամ ժխտվում է որևէ իրողություն, փաստ: Օրինակ՝ *Արդեն սկսվել են գյուղատնտեսական աշխատանքները:* Պատմողական նախադասությունը խոսողն արտաբերում է համեմատաբար չեզոք հնչերանգով, միջին արագությամբ: Պատմողական նախադասության ստորոգյալը կարող է լինել պարզ՝ արտահայտված բայի սահմանական, ըղձական, ենթադրական (պայմանական) և հարկադրական եղանակների բայաձևերով, օրինակ՝ *Ծաղիկներն* ***օրորվում էին*** *զեփյուռից: Եթե* ***գնայի*** *հանգստանալու, ապա* ***չէի մասնակցի*** *առաջնությանը: Որպեսզի այս բույսը լավ* ***աճի, պետք է ջրենք*** *շաբաթը մեկ անգամ:* Ստորոգյալը կարող է լինել նաև բաղադրյալ, ինչպես՝ *Նորակառույց տունը շատ* ***գեղեցիկ է:*** *Տերևը* ***դեղին է:*** Պատմողական նախադասությունը կարող է լինել նաև միակազմ անդեմ նախադասություն, ինչպես՝ *Ամառ: Կիզիչ արև:*

Հարցական նախադասության հաղորդակցական նպատակը տեղեկություն ստանալն է: Այն արտահայտում է հարցում որևէ իրողության վերաբերյալ, օրինակ՝ *Ո՞վ է բերել անհրաժեշտ սարքավորումները: Ե՞րբ է սկսվելու աշխատանքը:* Այս նախադասություններն արտաբերվում են բարձրացող-իջնող հնչերանգով. հարցական հնչերանգը գրավոր խոսքում ներկայացվում է հարցական նշանի միջոցով: Ըստ ձևավորման առանձնահատկությունների՝ ժամանակակից հայերենում կա հարցական պարզ նախադասության երեք տեսակ:

ա) Հարցական նախադասություններ, որոնք պատմողական նախադասությունների կրկնությունն են հարցական հնչերանգով, օրինակ՝ *Դու գնացի՞ր գյուղ:* Հարցական նշանը դրվում է տվյալ դեպքում հարցում արտահայտող բառի վրա, ինչպես՝ *Արմե՞նը գնաց գյուղ: Արմենը գնա՞ց գյուղ: Արմենը գնաց գյո՞ւղ:*

բ) Հարցական նախադասություններ, որոնց կազմում կան հարցական դերանուններ, *օրինակ՝* ***Ո՞վ*** *է կանչում ինձ:* Հարցական նշանը դրվում է հարցական դերանվան վրա:

Այս նախադասություններում պարզ ստորոգյալի օժանդակ բայը դրվում է դերանունից կամ նրա բառախմբից հետո, ինչպես՝ *Ո՞ւմ է կանչել տնօրենը: Ե՞րբ է ավարտվելու աշխատանքը: Ո՞ւմ համար է այս գիրքը:*

գ) Հարցական նախադասություններ, որոնց կազմում կան երկբայական-հարցական վերաբերականներ, *օրինակ՝* ***Մի՞թե*** *կարող ես չգնալ:* ***Չլինի՞ թե*** *չես ցանկանում գալ:* Հարցական նշանը սովորաբար դրվում է վերաբերականի վրա, սակայն կարող է դրվել նաև այլ բառի վրա, որով հարցում է արտահայտվում, ինչպես՝ *Դու արդյոք չէի՞ր կարող դա անել:*

Կա հարցի մի տեսակ, որը կոչվում է *ճարտասանական հարց:* Ճարտասանական հարցը կազմությամբ չի տարբերվում մյուս հարցական նախադա-

սություններից, սակայն տարբերվում է հաղորդակցման նպատակով, քանի որ ճարտասանական հարցի միջոցով խոսողը ուշադրություն է հրավիրում, շեշտում է որևէ միտք, այլ ոչ թե հարց է տալիս՝ ակնկալելով պատասխան, օրինակ՝ *Ո՞վ կգնար այդ վտանգավոր վայրը: Մի՞թե վերջին պոետն եմ ես (Վահան Տերյան):*

Հրամայական նախադասության հաղորդակցական նպատակն է խոսակցին մղել որևէ գործողության: Այս նախադասություններն արտահայտում են հրաման, պահանջ, հորդոր, ցանկություն, խնդրանք, օրինակ՝ – *Մի՛ աղմկեք: – Գրե՛ք նոր տողից:* Հրամայական նախադասությունների ստորոգյալը սովորաբար արտահայտվում է հրամայական եղանակի բայաձևերով, ինչպես բերված օրինակներում: Սակայն հրամայական նախադասության ստորոգյալը կարող է լինել նաև սահմանական, ըղձական, ենթադրական, հարկադրական եղանակների բայ, օրինակ՝ – *Հենց հիմա սկսո՛ւմ եք աշխատանքը: – Չթողնե՛ն նրան մոտենալ: – Կգնա՛ք և աշխատանքը կկատարե՛ք: – Պետք է կատարե՛ք այդ աշխատանքը:* Հրամայական նախադասությունը կարող է լինել նաև միակազմ անդեմ նախադասություն, ինչպես՝ *Լռությո՛ւն: Ծաղիկները չտրորե՛լ:* Հրամայական հնչերանգը գրավոր խոսքում ներկայացվում է շեշտի միջոցով: Շեշտը սովորաբար դրվում է ստորոգյալի կամ նրան անմիջապես նախորդող լրացման վրա, իսկ միակազմ նախադասությունների դեպքում՝ գերադաս անդամի վրա, ինչպես՝ *Անմիջապես տո՛ւն գնա: Չաղմկե՛լ:*

Բացականչական նախադասության նպատակն է արտահայտել գործողություն կատարելու կամք, իղձ, ցանկություն կամ որևէ զգացում՝ ուրախություն, հիացմունք, ափսոսանք, հեգնանք, խրախուսանք և այլն, օրինակ՝ *Է՛յ, ջա՛ն, Հայրենի՛ք, ինչքա՛ն սիրուն ես (Ավետիք Իսահակյան): Ապրե՛ք, երեխե՛ք, բայց մեզ պես չապրեք (Հովհաննես Թումանյան): – Ինչ հիմար բան ասացիր, Անտոնի՛նա (Շիրվանզադե): Կեցցե՛ն մրցույթում հաղթողները:* Բացականչական նախադասությունների ստորոգյալն առաջին հերթին արտահայտվում է ըղձական եղանակի բայաձևերով, ինչպես՝ *Լինե՛ր հեռու մի անկյուն (Հովհաննես Թումանյան):* Սակայն ստորոգյալը կարող է արտահայտված լինել այլ եղանակների բայաձևերով կամ լինել բաղադրյալ: Բացականչական նախադասություններում մեծ մասամբ լինում են ձայնարկություններ, հարաբերական դերանուններ, ինչպես՝ *Ա՜խ, լինել թեթև, հրոտ, հրակամ, վառվե՛լ որպես զոհ (Եղիշե Չարենց): Որքա՛ն դժվար պիտի բաժանվես:* Բացականչական նախադասությունը կարող է լինել միակազմ անդեմ նախադասություն, ինչպես՝ *Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ (Վահան Տերյան):* Բացականչական հնչերանգը գրավոր խոսքում ներկայացվում է բացականչական նշանի միջոցով: Բացականչական նշանը դրվում է տվյալ դեպքում բացականչական երանգով արտաբերվող բառի, ձայնարկությունների ու հարաբերական դերանունների վրա, ինչպես բերված օրինակներում:

Ծանոթություն – Բացականչական նախադասությունների մի մասն արտահայտում է իղձ, ցանկություն և երբեմն առանձնացվում է որպես առանձին՝ *ըղձական* տեսակ, օրինակ՝ *Թռչե՛ի մտքով տուն (Գեղամ Սարյան):*

Կան նախադասություններ, որոնց մեջ հնչերանգային մեկից ավելի հատկանիշներ են միավորված, օրինակ՝ *Ի՞նչ են տարել նրանք կյանքից, թե ի՞նչ տանես դու քեզ հետ (Հովհաննես Թումանյան):* Այսպիսի նախադասությունները կոչվում են *համակցված* կամ *խառը* հնչերանգով նախադասություններ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչի՞ հիման վրա են առանձնացվում նախադասության հաղորդակցական տեսակները:
2. Նախադասության ի՞նչ հաղորդակցական տեսակներ կան:
3. Ի՞նչ հատկանիշներ ունի պատմողական նախադասությունը:
4. Ի՞նչ հատկանիշներ ունի հարցական նախադասությունը:
5. Ի՞նչ հատկանիշներ ունի բացականչական նախադասությունը:
6. Ի՞նչ հատկանիշներ ունի հրամայական նախադասությունը:

Վարժություն 29: Առանձին խմբերով դո՛ւրս գրեք հնչերանգային տարբեր տեսակների պատկանող նախադասությունները:

Քանի՛ մահ կա իմ սըրտում,
Թափուր գահ կա իմ սըրտում.
Չէ՞ դու էլ ես մահացու.
Մահի ահ կա իմ սըրտում:

Հովհաննես Թումանյան

Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ
Հեռվից անթիվ ձեռքերով.
– Ջա՛ն, հայրենի՛ անտառներ,
Դուք եք կանչում ինձ ձեր քով:

Հովհաննես Թումանյան

Հե՛յ, ագա՛հ մարդ, հե՛յ, անգո՛հ մարդ՝ միտքըդ երկար,
կյանքըդ կարճ,
Քանի՛-քանիսն անցան քեզ պես քեզնից առաջ, քո առաջ.
Ի՞նչ են տարել նըրանք կյանքից, թե ի՞նչ տանես
դու քեզ հետ,
Խաղա՛ղ անցիր, ուրա՛խ անցիր երկու օրվան էս ճամփեդ:

Հովհաննես Թումանյան

Վարժություն 30: Գրե՛ք «Էքսկուրսիա», «Ծննդյան տարեդարձ», «Անտառում», «Բերքահավաք» վերնագրերից որևէ մեկով փոքրիկ շարադրություն՝ գործածելով հնչերանգային յուրաքանչյուր տեսակի առնվազն հինգ նախադասություն:

ԿԵՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բոլոր գիտությունների
բանալին հարցական նշանն է:
Օնորե դը Բալզակ (19-րդ դ. ֆրանսիացի գրող)

Գրավոր խոսքն արտահայտվում է տառերով և կետադրական նշաններով: Ժամանակակից հայերենում գործածվում է կետադրական 15 նշան: Դրանք են վերջակետը [:], միջակետը [.], ստորակետը [,], բութը [՝], շեշտը [՛], հարցական նշանը [՞], բացականչական նշանը [՛], չակերտները [«»], փակագծերը [()][1], կախման կետերը [...], բազմակետը [....], միության գծիկը [-], անջատման գիծը [–], ենթամնան [~], ապաթարցը [՚]: Իրենց հիմնական կիրառությունների հիման վրա կետադրական նշանները բաժանվում են երեք խմբի՝ **տրոհության, առոգանության, բացահայտության**:

Տրոհության նշաններն են **վերջակետը, միջակետը, ստորակետը, բութը**:

Առոգանության նշաններն են **շեշտը, հարցականը, բացականչականը**:

Բացահայտության նշաններն են **չակերտները, փակագծերը, միության գծիկը, անջատման գիծը, կախման կետերը, բազմակետը, ենթամնան, ապաթարցը**:

Կետադրության միջոցով գրավոր խոսքում հիմնականում արտահայտվում են բանավոր խոսքի հնչերանգային տարբեր հատկանիշները, սակայն կետադրության դերը միայն այդ չէ: Կետադրության միջոցով նաև բացահայտվում, որոշակիանում են տարբեր իմաստներ: Համեմատենք հետևյալ նախադասությունները. *«Անուշը» ինձ շատ է դուր գալիս* և *Անուշը ինձ շատ է դուր գալիս:* Առաջին նախադասության մեջ *Անուշ* բառը գրված է չակերտներում, որից ընթերցողին պարզ է դառնում, որ խոսքը ստեղծագործության վերնագրի մասին է: Երկրորդ նախադասության մեջ *Անուշը* գործածվել է որպես անձնանուն, ուստի գրված է առանց չակերտների: Բանավոր խոսքում շփոթությունից խուսափելու համար անհրաժեշտ է գործածել իմաստը հստակեցնող ինչ-որ բառ, օրինակ՝ *«Անուշ» պոեմն ինձ շատ է դուր գալիս:*

Կետադրման համար կարևոր է 4 գործոն՝ **քերականական միավորի տեսակը, նրա դիրքը, նրան շրջապատող միավորների դիրքը, հեղինակի վերաբերմունքը**: Այս գործոնների ազդեցությունը ցույց տալու համար բերենք օրինակներ:

1. Դերբայական դարձվածի որոշ տեսակներ տրոհվում են, այսինքն՝ դեր է խաղում քերականական որոշակի միավոր՝ դերբայական դարձված լինելու հանգամանքը: Օրինակ՝ *Բանվորներն էլ, ծանր աշխատանքից հոգնած, դարձյալ ստիպված գնացին աշխատելու:*

2. Եթե այս դերբայական դարձվածը լիներ նախադասության վերջում, ապա կտրոհվեր բութով՝ *Բանվորներն էլ դարձյալ ստիպված գնացին աշխատելու՝ ծանր աշխատանքից հոգնած:* Այսինքն՝ կարևոր է նրա դիրքը:

---

1 Կան նաև փակագծերի այլ տեսակներ՝ { }, < >, [ ]:

3. Եթե **էլ** շաղկապը հաջորդեր դերբայական դարձվածին, ապա դարձվածը չէր տրոհվի, օրինակ՝ *Բանվորները ծանր աշխատանքից հոգնած էլ դարձյալ ստիպված գնացին աշխատելու*: Այս դեպքում դեր է խաղում դարձվածին շրջապատող միավորների դիրքը:

4. Եթե դերբայական դարձվածը լիներ նախադասության սկզբում, ապա այն տրոհելը կամ չտրոհելը առաջ կբերեր իմաստային-քերականական փոփոխություններ, այսինքն՝ տրոհելու դեպքում դերբայական դարձվածը կհամարվեր ձևի պարագա, իսկ չտրոհելու դեպքում՝ որոշիչ, ինչպես՝ *Ծանր աշխատանքից հոգնած՝ բանվորներն էլ դարձյալ ստիպված գնացին աշխատելու* (ձևի պարագա) և *Ծանր աշխատանքից հոգնած բանվորներն էլ դարձյալ ստիպված գնացին աշխատելու* (որոշիչ): Այս դեպքում կետադրման հարցում դեր է խաղում հեղինակի վերաբերմունքը, այսինքն՝ նա կետադրում է ըստ այն իմաստի, որը ցանկանում է արտահայտել:

Սրանից բացի՝ հեղինակային կարող է լինել վերջակետի, կախման կետերի, առոգանության նշանների՝ տվյալ դեպքում ոչ պարտադիր կետադրությունը: Մյուս դեպքերում անհրաժեշտ է կետադրել ըստ կանոնների:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ նպատակի են ծառայում կետադրական նշանները:
2. Որո՞նք են ժամանակակից հայերենի կետադրական նշանները:
3. Ի՞նչ տեսակների են բաժանվում կետադրական նշանները:
4. Ի՞նչ գործոններ են կարևոր կետադրման համար:

Վարժություն 31: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք նշված տեսակի կետադրական նշանի անվանումը:

1. Տրոհության – *վերջակետ, շեշտ, հարցական, փակագծեր*
2. Տրոհության – *ենթամնա, միջակետ, բացականչական, կախման կետեր*
3. Տրոհության – *ապաթարց, հարցական, անջատման գիծ, ստորակետ*
4. Տրոհության – *շեշտ, հարցական, բութ, բազմակետ*
5. Առոգանության – *շեշտ, բութ, միջակետ, չակերտներ*
6. Առոգանության – *ենթամնա, հարցական, միության գծիկ, բազմակետ*
7. Առոգանության – *ստորակետ, բութ, բացականչական, միջակետ*
8. Բացահայտության – *չակերտներ, վերջակետ, միջակետ, շեշտ*
9. Բացահայտության – *հարցական, ստորակետ, բացականչական, փակագծեր*
10. Բացահայտության – *միջակետ, միության գծիկ, բացականչական, վերջակետ*
11. Բացահայտության – *անջատման գիծ, բութ, ստորակետ, շեշտ*
12. Բացահայտության – *ստորակետ, միջակետ, կախման կետեր, վերջակետ*

13. Բացահայտության – *վերջակետ, բազմակետ, ստորակետ, միջակետ*
14. Բացահայտության – *շեշտ, միջակետ, ենթամնա, բութ*
15. Բացահայտության – *ապաթարց, բութ, հարցական, շեշտ*

Վարժություն 32: Արտագրե՛ք նախադասությունները՝ հանելով կետադրական նշանները (բացի վերջակետից), և բացատրե՛ք կատարված իմաստային-քերականական փոփոխությունները:

1. – Վարպե՛տ, Սարգիսը եկավ:
2. «Սամվելը» ոգևորեց բոլորին:
3. Ճանապարհից հոգնած՝ մարդիկ նստեցին աղբյուրի մոտ:
4. «Մարոն» նրան շատ դուր եկավ:
5. «Խաչագողի հիշատակարանում» շատ հետաքրքիր դեպքեր են նկարագրված:
6. «Մթնաձորում» ամեն ինչ տպավորիչ էր:
7. Վարդանի՝ տնից դուրս գալուց հետո ամեն ինչ փոխվեց:
8. Երիտասարդ երաժիշտների բոլոր հավաքների ժամանակ հիշվում էր «Սպարտակը»:
9. Հոգեպարար երաժշտությունից հուզված՝ հանդիսատեսները ծափահարում էին:
10. – Պարո՛ն, Գևորգը հիմա կգա:

ՏՐՈՀՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Տրոհության նշաններն են **վերջակետը, միջակետը, ստորակետը, բութը**:

Վերջակետը դրվում է ինքնուրույն նախադասության վերջում, եթե անհրաժեշտություն չկա այդտեղ կախման կետեր դնելու, օրինակ՝ *Մենք գնացինք դպրոց:* Վերջակետ է դրվում նաև այն ենթավերնագրերից հետո, որոնց նույն տողում անմիջապես հաջորդում է տեքստ, օրինակ՝ *Ածական անուն: Ածական խոսքի մասի մեջ միավորվում են առարկայի հատկանիշ արտահայտող բառերը:*

Միջակետը դրվում է բարդ համադասական նախադասության այնպիսի բաղադրիչ նախադասությունների միջև, որոնք իրար կապակցված են առանց շաղկապի, արտահայտում են պատճառահետևանքային հարաբերություն կամ էլ ունեն որոշ ինքնուրույնություն, օրինակ՝ *Ծառերը կամացուկ սվսվում էին. երեկոյան զեփյուռն էր խաղում տերևների մեջ: Խաղաղ գիշեր էր. հեռվում երևում էին տների ուրվագծերը:*

Միջակետ է դրվում ուղղակի խոսքով նախադասություններում՝ հեղինակային նախադաս խոսքից հետո, օրինակ՝ *Նա մտածում էր. «Ի՞նչ եմ անելու»:*

Միջակետ դրվում է նաև համարակալում արտահայտող տառերից և թվանշաններից, ինչպես նաև համառոտագրություններից հետո, օրինակ՝ *ա., բ., 1., 2., Հ. Սահակյան, մ. թ. ա.:*

Ստորակետը դրվում է նախադասության բազմակի անդամների միջև, եթե նրանց միջև չկա **և, ու, կամ, թե** շաղկապներից որևէ մեկը, օրինակ՝ *Արամը, Աշոտը, Գագիկը և Գևորգը եկան: Ես վերցրի մատիտ, թուղթ ու գրիչ: Պետք է մեկնեն Վարդանը, Լևոնը կամ Հայկը: Մայր ու մանուկ, մեծ թե փոքր հավաքվել էին բակում:*

Ստորակետերով են անջատվում նաև կրկնադիր շաղկապներով կապակցված անդամները, իսկ շաղկապների վրա դրվում է շեշտ, օրինակ՝ *Թե՛ սենյակը, թե՛ կահույքը, թե՛ գորգերը* գեղեցիկ էին: *Ե՛վ գործերը, և՛ հիվանդությունը, և՛ ծանր պայմանները* խանգարեցին: Եթե վերջին անդամը կրկնվող շաղկապից բացի կապվում է նաև *և, ու, կամ* շաղկապներից որևէ մեկով, ապա նրանից առաջ ստորակետ չի դրվում, օրինակ՝ *Թե՛ սենյակը, թե՛ կահույքը և թե՛ գորգերը* գեղեցիկ էին:

Բարդ նախադասության բաղադրիչներն իրարից տրոհվում են ստորակետով, եթե բաղադրիչ նախադասությունները կապված են շաղկապով կամ հարաբերական դերանուններով, օրինակ՝ *Նա գնաց տուն, որ հանգստանա: Գնալու էի, բայց խանգարեցին: Լույսը պայծառ էր, և ոչ ոք չէր կարողանում նայել: Անձրև էր տեղում, և այդ անձրևը նրան հիշեցրեց այն տխուր օրը: Եկավ այն մասնագետը, որին սպասում էինք:* Բարդ նախադասության բաղադրիչներն իրարից չեն տրոհվում, եթե կապված են *և, ու, կամ* շաղկապներից որևէ մեկով և ունեն ընդհանուր ենթակա, օրինակ՝ *Աշակերտը գնաց տուն և սկսեց դասերը սովորել: Տղան պետք է հեռանար կամ կատարեր աշխատանքը:*

Անորոշ դերբայի գործիական հոլովով և հարակատար դերբայով ձևավորված նախադաս և հետադաս դերբայական դարձվածները տրոհվում են բութով, իսկ միջադասը՝ ստորակետերով, օրինակ՝ Ես, *ուրախ ժպտալով,* բարևեցի բոլորին: Բոլորը, *հիասթափված նրա խոսքերից,* հեռացան:

Բացի, զատ, բացառությամբ, ըստ, նայած, չնայած, համաձայն, հակառակ, չհաշված, ի տարբերություն, ի հեճուկս, ի պատիվ և մի քանի այլ կապերով ձևավորված միջադաս պարագաներն ու խնդիրները սովորաբար տրոհվում են ստորակետերով, ինչպես՝ *Բոլորը, բացի նրանից, եկել էին: Քաղաքի բնակիչները, ի պատիվ նրա, կառուցեցին թանգարան:* Նախադաս և հետադաս դիրքերում այս անդամները տրոհվում են բութով, ինչպես՝ *Բացի նրանից՝ բոլորը եկել էին: Բոլորը եկել էին՝ բացի նրանից: Ի պատիվ նրա՝ քաղաքի բնակիչները կառուցեցին թանգարան:*

Կոչականը տրոհվում է ստորակետ(եր)ով և շեշտվում, օրինակ՝ – *Արքա՛, ես բերել եմ նամակը:* – *Ես, արքա՛, բերել եմ նամակը:* – *Ես բերել եմ նամակը, արքա՛:* Եթե կոչականն ունի նախադաս լրացում, ապա շեշտվում է լրացումը, օրինակ՝ – *Սիրելի՛ բարեկամներ, շնորհավորում եմ ձեզ:*

Ձայնարկությունները նախադասության մյուս բառերից տրոհվում են ստորակետերով, օրինակ՝ *Հե՛յ, վա՜խ, կոտրան իմ թևերս, Ընկա գիրկդ, Ալագյա՛զ (Ավետիք Իսահակյան):* Եթե կան ձայնարկություններին խնդրառությամբ կապված

բառեր, ապա ձայնարկությունը չի տրոհվում, օրինակ՝ ***Վո՛ւշ*** *քու սերին, քու յարին:* ***Ա՛յ*** *քեզ հսկա (Հովհաննես Թումանյան):*

Վերաբերականների որոշ տեսակներ տրոհվում են ստորակետերով: Վերաբերականները տրոհվում են, եթե իրենց եղանակավորած բառի կողքին չեն, իսկ եթե նախորդում կամ հաջորդում են նրան, ապա չեն տրոհվում, օրինակ՝ *Իհարկե, այդ ամենը ես այն ժամանակ չգիտեի: Այդ ամենը ես այն ժամանակ իհարկե չգիտեի:*

Բութը դրվում է, եթե նախադասություններ կապակցող շաղկապը զեղչված է, օրինակ՝ *Ուզում էի՝ չիանգարեին* (զեղչված է *որ* շաղկապը): *Թվում էր՝ չի վերադառնա* (զեղչված է *թե* շաղկապը):

Բացահայտչի երեք տեսակներն էլ (բուն, մասնական, մասնավորող պարագայական) բացահայտյալից անջատվում են բութով, իսկ հաջորդող բառից՝ ստորակետով, օրինակ՝ *Ընկերս՝ Արամը, այսօր եկավ: Բակում՝ ծառի տակ, դրված էր մի սեղան: Աշոտը՝ որպես ընկեր, իրեն չարդարացրեց:* Բացահայտչից հետո *ստորակետ չի դրվում* հետևյալ հիմնական դեպքերում. ա) եթե նրան հաջորդում է օժանդակ բայ. *Ընկերս՝ Արամն է եկել.* բ) եթե նրան հաջորդում է *էլ* շաղկապը. *Ընկերս՝ Արամն էլ եկավ.* գ) եթե բացահայտյալը հատկացուցիչ է. *Ընկերոջս՝ Արամի գիրքը կորավ.* դ) եթե բացահայտյալը կապի խնդիր է. *Ընկերոջս՝ Արամի մասին պատմել էի նրան.* ե) եթե բացահայտչին հաջորդում է բացահայտյալին եղանակավորող վերաբերական, օրինակ՝ *Նրա ամենամտերիմ ընկերը՝ Կարդգեսն անգամ չէր իմացել նրա մեկնելու մասին.* զ) եթե բացահայտյալը դերբայի լրացում է, օրինակ՝ *Թումանյանի ծննդավայր՝ Դսեղ տանող ճանապարհին նրանք զրուցում էին մեծ գրողի կատարած հայրենանվեր գործերի մասին:*

Եթե հատկացուցչի և հատկացյալի միջև կա գոյական կամ գոյականաբար գործածված բառ, ապա հատկացուցչի վրա դրվում է բութ. ***Գյուղի՝*** (հատկացուցիչ) *առատ* ***անձրևներից*** (գոյական) *քայքայված* ***ճանապարհը*** (հատկացյալ) *անանցանելի էր:* ***Դահլիճի՝ երգողների ձայնից*** *խախտված լռությունը վերականգնվեց:*

Բազմակի կամ մեկից ավելի բառերով արտահայտված հետադաս որոշիչները տրոհվում են բութով, իսկ նրանցից հետո դրվում է ստորակետ, օրինակ՝ *Գրքերը՝ մեծ, փոքր, հաստ ու բարակ, դրված էին սեղանին: Գիրքը՝ կաշվե կանաչ կազմով, շատ գեղեցիկ էր: Գյուղում մի մարդ էր ապրում՝ ժլատ ու փառամոլ, և ոչ ոքի չէր սիրում:*

Բութ է դրվում զեղչված ստորոգյալի փոխարեն, օրինակ՝ *Ես գնացի տուն, իսկ Արամը՝ կինո* (զեղչված է *գնաց* ստորոգյալը):

Բութով տրոհվում են բաղադրյալ ստորոգյալին հաջորդող անորոշ առումով ենթակաները, ինչպես՝ *Նրա բնավորության լավագույն գծերն են՝ ճշտապահություն, պարտաճանաչություն, ընկերասիրություն:*

Կարճ՝ մեկ-երկու բառից կազմված հետադաս ուղղակի խոսքը տրոհվում է բութով, օրինակ՝ *Նա երեկ ասաց՝ կգամ:*

Բութ է դրվում մեկնական իմաստով բառերի ու կապակցությունների վրա՝ **այն է, այսինքն, այսպիսով, այսպես, ավելին, մի խոսքով** և այլն, օրինակ՝ *Այսպիսով՝ ամեն ինչ լավ ավարտվեց: Կան մի շարք խնդիրներ. այսպես՝ անհրաժեշտ է կազմել նախագիծ, կատարել ծախսերի հաշվարկ և որոշել կատարման տևողությունը:*

Երկու դեպքում տրոհվում է նպատակի պարագան:

ա) Նպատակի պարագան միշտ տրոհվում է բութով, երբ նրա լրացյալ բայի օժանդակ բայն ունի շրջուն շարադասություն: Օրինակ՝ *Գյուղ էին մեկնել՝ հանգստանալու (համար), և չմասնակցեցին միջոցառումներին: Աղբյուրն էր իջել՝ ջրի:*

բ) Եթե նպատակի պարագայի և նրա լրացյալ բայի միջև կա նպատակի պարագային չլրացնող գոնե մեկ անդամ, ապա նպատակի պարագան տրոհվում է բութով, օրինակ՝ *Գնաց աղբյուրը՝ ջրի: Գնաց աղբյուրը՝ ջուր բերելու (համար):* Այս նախադասություններում *աղբյուր* բառը չի լրացնում *ջրի* նպատակի պարագային: Իսկ *Գնաց թարմ ջրի* նախադասության մեջ *թարմ* բառը լրացնում է *ջրի* նպատակի պարագային, ուստի նպատակի պարագան չի տրոհվել: Նույն ձևով՝ *Գնաց թարմ ջուր բերելու: Գնաց թարմ ջուր բերելու (համար):*

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որո՞նք են տրոհության նշանները:
2. Որո՞նք են վերջակետի գործածության հիմնական դեպքերը:
3. Որո՞նք են միջակետի գործածության հիմնական դեպքերը:
4. Որո՞նք են ստորակետի գործածության հիմնական դեպքերը:
5. Որո՞նք են բութի գործածության հիմնական դեպքերը:

Վարժություն 33: Արտագրե՛ք և կետադրե՛ք. մեկնաբանե՛ք այն նախադասությունների կետադրությունը, որոնցում պետք է միջակետ դրվի:

1. Ծերունին նստեց ճամփեզրի մի քարի շատ էր հոգնել:
2. Այդ օրը աշխատանքը պետք է ավարտեր ուստի պետք է չարչարվեր մինչև ուշ գիշեր:
3. Տերևները հազիվ նկատելի օրորվում էին երեկոյան զեփյուռն էր խաղում:
4. Չէր կարողանում կենտրոնանալ միտքը թռչում էր հայրենի բնօրրանը:
5. Ոչ ոք չհասկացավ ինչու նա կատարեց դա:
6. Ծառերին արդեն շողշողում էին արևով լեցուն պտուղները բերքահավաքի ժամանակն էր:
7. Մարզիկն անպայման կհաղթեր եթե լսեր մարզիչի խորհուրդները:
8. Շփոթված կանգ առավ կամուրջը քանդված էր:
9. Բոլորը լուռ վեր կացան այլևս ասելիք չկար:
10. Երբ արևը ելավ լեռան թիկունքից լիճը պսպղաց հսկայական ադամանդի նման:

Վարժություն 34: Արտագրե՛ք և ըստ անհրաժեշտության կետադրե՛ք. մեկնաբանե՛ք այն նախադասությունների կետադրությունը, որոնցում պետք է ստորակետ դրվի:

1. Լույսը բացվել էր և ճամփորդները պատրաստվեցին մեկնելու:
2. Աշակերտը սովորեց դասերը և ելավ զբոսնելու:
3. Այդ վայրի փարթամ բուսականությունը քչքչան գետակները հինավուրց հուշարձանները հիացրին զբոսաշրջիկներին:
4. Դերասանները փորձը պետք է կատարեին վերանորոգվող թատրոնում կամ էլ ժամանակավոր տրամադրված դահլիճում:
5. Արևն արդեն ծագել էր բայց դեռ ցուրտ էր:
6. Զբոսայգին վերջերս էին բարեկարգել և այժմ այն շատ գեղեցիկ էր:
7. Դասերից հետո աշակերտները հավաքվել էին դասարանում և քննարկում էին կազմակերպվելիք էքսկուրսիային առնչվող հարցերը:
8. Տնօրենը առանձին-առանձին կարդալով բոլոր հաղթողների անունները շնորհավորեց նրանց:
9. Ձյան փաթիլները թափվում էին և ճերմակ սավանով էր ծածկվում ամեն ինչ:
10. Ջուրը բարձունքից շառաչյունով գահավիժելով զարնվում էր քարերին:

Վարժություն 35: Արտագրե՛ք և ըստ անհրաժեշտության կետադրե՛ք. մեկնաբանե՛ք այն նախադասությունների կետադրությունը, որոնցում պետք է բութ դրվի:

1. Գյուղի կենտրոնում կանգնած էր հուշարձանը հպարտ ու վսեմ:
2. Ծառերի ուժգին քամուց կոտրված ճյուղերը աստիճանաբար չորանում էին:
3. Բոլորը սրտատրոփ սպասում էին բժշկին Գևորգյանին:
4. Հյուրանոցի միջանցքի մաշված ու գունաթափված գորգը փոխարինեցին նորով:
5. Սկիզբ առնելով լեռնագագաթները ծածկող ձյուներից գետակը հասնում էր մինչև մոտակա հորդահոս գետը:
6. Բացի դասարանի ավագից բոլորը ներկա էին:
7. Որպես տեղանքին քաջածանոթ մարդ նա էր առաջնորդում արշավախումբը:
8. Բոլոր երեխաները մտել էին գետը պաղ ալիքներում փոքր-ինչ զովանալու:
9. Ներս մտավ նրա մանկության ընկեր Արմենը:
10. Անսպասելիորեն ձյուն էր տեղացել փակելով բոլոր լեռնային ճանապարհները:

Վարժություն 36: Արտագրե՛ք՝դնելով տրոհության նշանները:

ա) Շուտով երևաց Գարդմանը իր հաստաբեստ պարիսպներով և բարձրաբերձ աշտարակներով: Երկնակարկառ լեռան գագաթին թառած այդ անառիկ ամրոցը որը մանավանդ մութն ընկնելուց հետո ահարկու տպավորություն էր թողնում ամեն մի անցորդի վրա մոտեցող իշխանի սիրտը տխրությամբ համակեց: Նա հիշեց ութ տարի առաջ իր և արքայորդի Աշոտի մուտքն այս ամրոց: Այդ ժամանակ արդարև իր սիրտը նույնպես ուրախ չէր հայոց թագավորը նահատակված էր իշխանները անմիաբան արքայորդին անօգնական ինքը վիրավոր: Բայց Գարդմանն այդ ժամանակ հույս ու հոգի էր ներշնչում մոտեցողին. Սահակ Սևադան հսկում էր այդտեղ ինչպես մի հզոր առյուծ: Նրա համբավը ահաբեկում էր ամբարտավան թշնամիներին և խրախուսում լքվածներին: Այժմ թվում էր ամրոցը սուգ էր մտել և նրա արտաքին պատկերը ոչ թե զորություն այլ լքում ու հուսահատություն էր արտահայտում:

Օրը տարաժամել էր: Չնայած իշխանի քրտինքի մեջ կորած նժույգը հոգնած էր իսկ ճանապարհը զառիվեր այնուամենայնիվ նա անընդհատ շտապեցնում էր խեղճ կենդանուն որպեսզի ամրոց հասնի մի քանի վայրկյան առաջ:

Ըստ Մուրացանի

բ) Ճշմարտության դեմ կմեղանչենք եթե այս ընդարձակ տարածությունը որը կոչվում է Աստաֆյան ուղղակի փողոց անվանենք: Կարող ենք թեթևակի պտույտ անել մեր հինավուրց քաղաքի մի քանի փողոցներում լայն ու հարթ կամ օձագալար ու նեղլիկ որպեսզի համոզվենք որ քաղաքի փողոցներից ոչ մեկը չունի այն առանձնահատկությունները ինչ որ ունի թյուրիմացաբար փողոց կոչվող այս յուրօրինակ տարածությունը: Քաղաքն ունի փողոց որը կոչվում է Տպագրիչների սակայն այստեղ մեծ մասամբ ապրում են պղնձագործ արհեստավորներ ունի Կույր փողոց որը վերջանում է այգիներով Բաղնիքի փողոց որտեղ երկու ատամնաբույժ կա իսկ պարսկական հին բաղնիքից մնացել է միայն մի մեծ փոս: Կան նաև լուրջ փողոցներ քարակոփ տներով բարեկարգ առանց ջրափոսերի սալահատակված մայթերով: Բայց այդ բոլոր փողոցներից ոչ մեկը չունի այն դերը և քաղաքի հպարտությունը չէ ինչպես Աստաֆյանը: Դրանք բոլորն էլ փողոցներ են ուղղակի հաղորդակցման անոթներ են քաղաքի համար և նրանցից ոչ մեկի անունը չի կապվում երազներին սիրահարներին ժամանցներին բամբասանքին շաղակրատությանն ու ապարդյուն թափառումներին: Եթե նրանք արյունատար անոթներ են ապա Աստաֆյանը Երևանի բաբախող սիրտն է:

Ըստ Ակսել Բակունցի

ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Առոգանության նշաններն են **շեշտը, հարցականը, բացականչականը**:

Շեշտը դրվում է հրամայական եղանակի բայաձևերի կամ նրանց նախադաս լրացումների վրա, օրինակ՝ *գրի՛ր, կարդա՛, գեղեցի՛կ գրիր, ուշադի՛ր կարդա* և այլն: Հարադրավոր բայերի դեպքում շեշտը դրվում է անվանական բաղադրիչի վրա, օրինակ՝ *ձե՛ռք տուր, ձա՛յն տուր* և այլն: Եթե հրամայական բայի վրա շեշտ չդրվի, ապա բայը կնմանվի ըղձական եղանակի բայաձևի, ինչպես՝ – ***Կարդա՛*** *այդ բանաստեղծությունը* (հրամայական): *Ուզում էին, որ նա* ***կարդա*** *այդ բանաստեղծությունը* (ըղձական): Ըստ տվյալ դեպքում եղած հնչերանգի՝ հրամայական բայաձևերի վրա դրվող շեշտը կարող է փոխարինվել բացականչական նշանով, ինչպես՝ *Օգնեցե՛ք:*

Կոչականը տրոհվում է ստորակետ(եր)ով և շեշտվում, օրինակ՝ – *Աշակերտնե՛ր, շուտով սկսվելու է մրցույթը:* Եթե կոչականն ունի նախադաս լրացումներ, ապա շեշտը դրվում է կոչականին անմիջապես նախորդող լրացման վրա, օրինակ՝ – *Իմ շատ սիրելի՛ գործընկերներ, այսօր մենք կխոսենք մի շարք հարցերի մասին:* Հետադաս լրացումների դեպքում շեշտը դրվում է կոչականի վրա, օրինակ՝ *Հիշում եմ դեմքը քո ծեր, մա՛յր իմ անուշ ու անգին (Եղիշե Չարենց):* Եթե կոչականի հետ գործածված է նաև կոչական ձայնարկություն, ապա շեշտը դրվում է ձայնարկության վրա, օրինակ՝ – *Ո՛վ տեր արքա, ես միշտ հավատարիմ եմ եղել,– ասաց սուրհանդակը:*

Շեշտ է դրվում նաև առանձին գործածված կոչական ձայնարկությունների վրա, օրինակ՝ *Է՛յ, ի՞նչ ես անում:*

Շեշտվում են կրկնադիր շաղկապները, ինչպես՝ *Թե՛ աշխատանքը, թե՛ աշխատակիցները և թե՛ պայմանները նրան դուր եկան:* Շեշտը դրվում է նաև **այո՛, ո՛չ** վերաբերականների վրա:

Հարցական նշանը դրվում է հարցական դերանունների *(ի՞նչ, ո՞ր, ո՞ւր, ե՞րբ, քանի՞* և այլն), հարցական-երկբայական վերաբերականների *(մի՞թե, չլինի՞ թե* և այլն), ինչպես նաև այն բառի վրա, որը տվյալ դեպքում արտահայտում է հարցում, օրինակ՝ *Դու տո՞ւն գնացիր: Դու տուն գնացի՞ր:*

Բացականչական նշանը դրվում է ձայնարկությունների վրա՝ **վա՛յ, հե՛յ, ջա՛ն**, ինչպես նաև այն բառերի վրա, որոնք տվյալ դեպքում արտաբերվում են բացականչական հնչերանգով, օրինակ՝ *Մենք հաղթեցի՜նք:*

Առոգանության բոլոր նշանները դրվում են բառի վերջին ձայնավորի վրա, եթե այդ ձայնավորը **ը**-ն չէ: Եթե վերջին ձայնավորը **ը**-ն է, ապա կետադրական նշանը ստանում է **ը**-ին նախորդող ձայնավորը, օրինակ՝ *տո՛ւնը, գի՛րքը, սա՛ռը, ա՛րկղ* և այլն: Եթե բառի բոլոր ձայնավորները *ը*-եր են, ապա առոգանության նշանը դրվում է վերջին **ը**-ի վրա, ինչպես՝ *շրը՛խկ, թրը՛խկ* և այլն:

Մի շարք բառեր շեղվում են ընդհանուր սկզբունքից, այսինքն՝ առոգանության նշանը չի դրվում այդ բառերի վերջին ձայնավորի վրա, օրինակ՝ *գոնե, գրե՛թե,*

գո՛ւցե, իհա՛րկե, մանավանդ, մի՛գուցե, մի՞թե, մի՛միայն, նա՛մանավանդ, նո՛ւյնիսկ, նո՛ւյնպես, ո՛վևէ, ո՛րևէ, մաթեմա՛տիկա, ռա՛դիո, տե՛խնիկա, քի՛միա, օլիմպիա՛դա և այլն: Այդպես է նաև *-երորդ* վերջածանցով կազմված բառերում, օրինակ՝ *քանի՞երորդ, ո՞րերորդ, յո՛թերորդ, տասնմե՛կերորդ* և այլն: Առոգանության նշանները վերջին վանկի ձայնավորի վրա չեն դրվում նաև *-իա*-ով վերջացող տեղանուններում՝ *Արմենիա, Իտա՛լիա, Իսպանիա, Ավստրա՛լիա, Գերմանիա, Դանիա* և այլն: Օրինակ՝ – *Նա ո՞ւր է մեկնում, Իտա՞լիա, Իսպա՞նիա, թե՞ Գերմանիա:* Օտար որոշ անձնանունների ուղղական հոլովում առոգանության նշանները չեն դրվում վերջին վանկի ձայնավորի վրա, օրինակ՝ *Բեթհո՛վեն, Լե՛րմոնտով, Մայակո՛վսկի, Պո՛ւշկին* և այլն: Սակայն այս բառերի հոլովված ձևերում և նրանցից կազմված բառերում առոգանության նշանները դրվում են վերջին ձայնավորի վրա, օրինակ՝ *Պուշկինի՛, Պուշկինի՛ց, պուշկինյա՛ն* և այլն:

Օժանդակ բայի դրական ձևերի վրա ևս առոգանության նշաններ չեն դրվում (օրինակ՝ *պատմո՞ւմ ես*), իսկ ժխտական ձևերի վրա դրվում են (օրինակ՝ *չի՞ եկել, չի՛ գնալու):*

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որո՞նք են առոգանության նշանները:
2. Որո՞նք են շեշտի գործածության հիմնական դեպքերը:
3. Որո՞նք են հարցական նշանի գործածության հիմնական դեպքերը:
4. Որո՞նք են բացականչական նշանի գործածության հիմնական դեպքերը:

Վարժություն 37: Արտագրե՛ք՝ դնելով առոգանության նշանները (մյուս նշանները դրված են):

ա) – Հեյ, քաջ Թաթուլ,– կանչեց շահը,–
Անմահ էիր քեզ կարծում.
Եկ, բերել եմ ես քո մահը,
Ինչ ես թառել ամրոցում:

– Մի պարծենա, գոռոզ Նադիր,–
Պատասխանեց էն հըսկան,–
Գըլխովը շատ ամպեր կանցնեն,
Սարը միշտ կա անսասան:

Հովհաննես Թումանյան

բ) Իմ ոսկի օրեր, ուր եք սլանում
Անմիտ, խելահեղ նժույգների պես,
Ուր եք սլանում, ինձ ուր եք տանում,
Օրեր իմ խելառ, մահն է խաբում ձեզ:

Առջևում վիհն է, ուր եք սլանում,
Ետ դարձեք, օրեր, է, խելքի եկեք,
Ձեզ խաբող հեռուն անուշ է թվում,
Մահն է առջևդ, օ, ետ, մանկացեք...

Հովհաննես Շիրազ

Վարժություն 38: Արտագրեք՝ շղատառ բառերի վրա ըստ անհրաժեշտության դնելով առոգանության նշաններ:

1. – Ես *ինչպես* հարցնեմ, թե նա *ինչպես* է կատարել այդ ամենը:
2. – *Ով* էր եկել այդ ծույլերից, որ *ով* օգներ,– թոռներից դժգոհեց պապը:
3. – Դու *կարդա*, Սարգի՛ս, որ փոքր եղբայրդ էլ, քեզնից օրինակ վերցնելով, *կարդա*:
4. – *Վարպետ*, Արմենը շուտով կգա,– ասաց *վարպետ* Գևորգը:
5. – *Երբ* է գալու,– հարցրեց Վարդանը, *երբ* իմացավ, որ եղբայրը վերադառնալու է գործուղումից:
6. – *Ես* պետք է տեղյակ պահեի,– զարմացած հարցրեց Անահիտը,– *ես* ինքս էլ չգիտեի այդ մասին:
7. – *Ում* դիմեմ, որ կարողանա նորոգել այս սարքը. *ում* որ դիմել եմ, մերժել է:
8. – *Քանի* դեռ հիշում եմ, հարցնեմ. *քանի* օրից ես մեկնելու,– ասաց ընկերը:

Ֆրեդերիկ Ֆեյդի (1908–2002)

Ծնվել է Փարիզում: Միջնակարգ կրթությունն ստացել է Վերսալում: 1931–33թթ. սովորել է Արևելյան կենդանի լեզուների դպրոցում՝ աշակերտելով Ֆ. Մակլերին, Կաթոլիկական ինստիտուտում՝ Լ. Մարիեսին, Բարձրագույն ուսմանց դպրոցում՝ Ա. Մեյեին: 1941-ին ավարտել է Սորբոնի համալսարանը: 1949–77թթ. եղել է Արևելյան կենդանի լեզուների դպրոցի և Սորբոնի համալսարանի արևելյան լեզուների ու քաղաքակրթությունների ինստիտուտի հայագիտական ամբիոնի վարիչը: Ազատորեն տիրապետել է գրական արևմտահայերենին: Նշանավոր են «Հայոց լեզվի քերականություն. արևմտյան խոսվածք» (1935), «Հայոց լեզվի ձեռնարկ (արդի արևմտահայերեն)» (1948), «Դասական հայերենի բայական համակարգը» (1969), «Դասական հայերենի հոլովման համակարգը» (1976) աշխատությունները: Պատմաբանասիրական բնույթի ուսումնասիրություններից առավել կարևոր են Փավստոս Բուզանդի «Պատմությանը» նվիրված գործերը, «Խոհեր ս. Մեսրոպի այբուբենի մասին» (1982) աշխատությունը: Նա նշանակալից ավանդ ունի նաև հայ ժողովրդական բանահյուսության և գրականության ուսումնասիրության ասպարեզում, որի լավագույն դրսևորումը «Հայ ժողովրդական դյուցազնավեպը» ուսումնասիրությունն է: Անդրադարձել է նաև Հ. Պարոնյանի, Ա. Չոպանյանի, Ե. Օտյանի գրական գործունեությանը: Ունի բազմաթիվ հայագիտական հոդվածներ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Բացահայտության նշաններն են **չակերտները, փակագծերը, միության գծիկը, անջատման գիծը, կախման կետերը, բազմակետը, ենթամնան, ապաթարցը**:

Չակերտների մեջ առնվում է այսպես կոչված ներքին, չինչող խոսքը (մտածումունք, նամակ և այլն), օրինակ՝ *Նա մտածում էր. «Վաղը կհեռանամ»: Որդին գրում էր. «Շուտով կվերադառնամ»:*

Չակերտների մեջ են առնվում նաև այլ բառերի կապակցված (ոչ առանձին գործածված) վերնագրերը, կազմակերպությունների և այլ պայմանական անվանումները, օրինակ՝ *Թումանյանի «Գիքորը» պատմվածքը, «Գլոբուս» կինոթատրոնը, «Շինարար» ընկերությունը* և այլն: Տեղանունները չակերտների մեջ չեն առնվում, օրինակ՝ *Այդ գյուղը կոչվում է Ծաղկավան:*

Մատենագիտական ցանկերում և հղումներում, երբ հեղինակի անունն արտահայտված է ուղղական հոլովով, ստեղծագործության վերնագիրը գրվում է առանց չակերտների, օրինակ՝ *Մանուկ Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:*

Չակերտներով են գրվում նաև հեգնական, ոչ իրենց բուն իմաստներով գործածված բառերը, օրինակ՝ *Դու «շա՛տ» աշխատեցիր, նույնիսկ աշխատանքային հագուստ չես հագել:*

Ինքնանվանողական գործառույթով գործածվող միավորները ևս գրվում են չակերտներով, թեև կարելի է գրել նաև շղատառ, առանց չակերտների, օրինակ՝ «Տուն» *բառը գոյական է* կամ *Տուն* բառը գոյական է: «Ա»-ն ձայնավոր է կամ *Ա*-ն ձայնավոր է:

Փակագծերի մեջ են առնվում ներդրյալ բառերը, բառակապակցություններն ու նախադասությունները, որոնք լրացուցիչ տեղեկություններ հաղորդող միավորներ են, օրինակ՝ *Աշխարհի չեմպիոնը (նկարում ձախից) պատմել է մրցույթի մասին: Վահանը (այդ էր նրա անունը) նստած էր պատշգամբում:*

Միության գծիկով են գրվում մի շարք բաղադրյալ բառեր: Մասնավորապես գծիկով են գրվում կրկնավոր բարդությունները, առանց բառակազմական միջոցների կապակցվող համադասական բաղադրիչներ ունեցող բարդությունները, օրինակ՝ *մեծ-մեծ, փունջ-փունջ, գալ-գնալ, հուշարձան-կոթող, ջորս-հինգ* և այլն: Միության գծիկ է դրվում նաև թվականներին, հապավումներին, ինքնանվանողական գործառույթով գործածվող բառերին, վերնագրերին կցվող մասնիկներից առաջ, օրինակ՝ *7-ից, 3-րդ, ՀՀ-ում, գրասեղան-ի վերջին արմատը* և այլն: Վերնագրերի մասնիկները կցվում են չակերտներից դուրս այն դեպքում, երբ չակերտներում գրելիս կխաթարվի իմաստը, օրինակ՝ Թումանյանի «Հայոց լեռներում»-ում:

Անջատման գիծը դրվում է մեջբերվող խոսքի սկզբում: Մեջբերվող խոսքին հաջորդող հեղինակային խոսքից առաջ դրվում է ստորակետ-գիծ: Իսկ միջադաս հեղինակային խոսքին հաջորդող ուղղակի խոսքից առաջ կարող է դրվել ստորակետ-գիծ, միջակետ-գիծ կամ վերջակետ-գիծ, օրինակ՝

– Ես,– ասաց վարպետը,– վաղը կգամ:

– Մենք ոչինչ չենք կարող անել,– ասաց նա.– ամեն ինչ պետք է նորից կատարել:

– Շենքը քանդվել է,– հայտնեց ճարտարապետը:– Շուտով կսկսվի նորի շինարարությունը:

Անջատման գիծ է դրվում այն միավորների միջև, որոնք արտահայտում են սկզբնակետի և վերջնակետի տարածական կամ ժամանակային հարաբերություն, օրինակ՝ *Երևան – Գյումրի, ժամը 10–18-ը* և այլն:

Դրամատիկական ստեղծագործություններում անջատման գիծ է դրվում խոսողի անվան և նրա խոսքի միջև, օրինակ՝

Իշխան – *Բոլորդ հավաքվե՛ք այստեղ:*

Կախման կետերը դրվում են նախադասության սկզբում, մեջտեղում կամ վերջում՝ արտահայտելով հույզեր, զգացմունքներ, հուզական անավարտություն, օրինակ՝ *Նա հիշեց այդ հիանալի օրը: Այդ օրը... Ինչպե՞ս կմոռանա: ...Անխոս նստեցինք ձիերը և անցանք գետակը: Արևն արդեն դեպի մայրամուտ էր կախվել: (Ակսել Բակունց)*

Բազմակետը դրվում է մեջբերումներում՝ կրճատման տեղը նշելու համար, օրինակ՝ *«Այդ օրը հավաքվել էին բոլորը: ....Շուտով նա ժամանեց»:* Բազմակետի տեղում կրճատվել են նախադասություններ:

Ենթամնան դրվում է տողադարձի կամ առհասարակ վանկատման ժամանակ բառի անջատված հատվածների միջև, օրինակ՝ *գը-րա-խա-նութ, պա-տու-հան* և այլն: Միության գծիկով գրվող բաղադրյալ բառերի տողադարձի ժամանակ միության գծիկը փոխարինում է ենթամնային, այսինքն՝ ենթամնա չի դրվում, ոչ էլ հաջորդ տողում է գծիկ դրվում, օրինակ՝ *հյուսիս-արևելք, մեծ-մեծ* և այլն:

Ապաթարցը հիմնականում գործածվում է արևմտահայերենում՝ դրվելով զեղչված ձայնավորների փոխարեն, օրինակ՝ *կ'ըլլա (կը ըլլա)*: Արևելահայերենում դրվում է միայն օտար անուններում, օրինակ՝ *դ'Արտանյան* և այլն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

1. Որո՞նք են բացահայտության նշանները:
2. Որո՞նք են չակերտների գործածության հիմնական դեպքերը:
3. Որո՞նք են փակագծերի գործածության հիմնական դեպքերը:
4. Որո՞նք են միության գծիկի գործածության հիմնական դեպքերը:
5. Որո՞նք են անջատման գծի գործածության հիմնական դեպքերը:
6. Որո՞նք են կախման կետերի գործածության հիմնական դեպքերը:
7. Որո՞նք են բազմակետի գործածության հիմնական դեպքերը:
8. Որո՞նք են ենթամնայի գործածության դեպքերը:
9. Որո՞նք են ապաթարցի գործածության դեպքերը:

Վարժություն 39: Արտագրե՛ք՝ դնելով բացահայտության նշանները:

1. Տիգրանը այդ էր տղայի անունը զանգահարեց Ծաղկունք ընկերության գրասենյակ:
2. Միջոցառման ընթացքում աշակերտները ներկայացրին հատվածներ Հ. Թումանյանի Անուշից, Դ. Դեմիրճյանի Վարդանանքից և Ռաֆֆու Սամվելից:
3. Թիմի ավագը նկարում աջից առաջինը այս անգամ ևս փայլեց իր հիանալի խաղով:
4. Նա շա՜տ պարտաճանաչ է. մեկ շաբաթ է՝ իր աշխատանքը չի կատարում:
5. Նա մտածում էր Վաղն անպայման կդիմեմ մասնագետին:
6. Նամակում գրված էր Ես մեկ ամսից կվերադառնամ:
7. Ծիածան ընկերության գրասենյակի դռան ցուցանակին գրված էր Ընդմիջումը ժամը 14 15 ը:
8. Ասֆալտապատ ճանապարհով ճանապարհը նոր էին վերանորոգել սլանում էին մեքենաները:
9. Տղաները մի քանի րոպեից հասան գետափ գետը հոսում էր հենց գյուղի կողքով և հանեցին կարթերը:
10. Միջոցառման վերջում արտասանեցին Ե. Չարենցի Ես իմ անուշ Հայաստանի բանաստեղծությունը:

ԿԵՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԱՆԴԻՊԱԴՐՈՒՄ

Երբեմն գրավոր խոսքում անմիջապես իրար են հաջորդում տարբեր ձևերով կետադրվող միավորներ, այսինքն՝ առաջանում է կետադրական կանոնների հանդիպադրում: Իրար կարող են հակադրվել միայն կետադրական նույնաբնույթ նշանների կանոնները, օրինակ՝ տրոհության երկու նշանների կանոններ և այլն: Որպես ընդհանուր սկզբունք՝ կարելի է նշել հետևյալը. կետադրական կանոնների հանդիպադրման ժամանակ դրվում է հաջորդող կանոնի կետադրությունը՝ բացի հետևյալ երկու դեպքից: ա) **Եվ, ու, կամ** շաղկապներից առաջ դրվում է անհրաժեշտ ստորակետը (տե՛ս կետ 2), բ) կարճ ուղղակի խոսքին հաջորդող կոչականից առաջ դրվում է ուղղակի խոսքը տրոհող բութը (տե՛ս կետ 8):

Կանոնների հանդիպադրության դեպքում գործում են հետևյալ հիմնական սկզբունքները:

1. Եթե կոչականին կամ նրա բառախմբին նախորդում է տրոհվող դերբայական դարձված, ապա կոչականից առաջ դրվում է ստորակետ, այլ ոչ թե դարձվածի տրոհման բութը, օրինակ՝ *Այդքան քիչ մարզվելով, սիրելի՛ մարզիկներ, երբեք լավ չեք խաղա:*

2. Եթե **և, ու, կամ** շաղկապներից առաջ կա այնպիսի միավոր (բացահայտիչ, տրոհվող որոշիչ, միջանկյալ բառ և այլն), որն իրեն հաջորդող բառից պետք է տրոհվի ստորակետով, ապա այդ ստորակետը դրվում է, օրինակ՝ *Եկավ ընկերս՝ Արամը, և օգնեց մեզ: Սեղանին դրված էին մի գիրք՝ կազմը պատռված, և մի*

լուսանկար: Այդ դժվար պահին նա չէր վհատվել, ո՛վ զարմանք, և շուտով լողալով ափ դուրս եկավ:

3. Եթե այն միավորին (տրոհվող որոշիչ, բացահայտիչ, միջանկյալ բառ և այլն), որն իրեն հաջորդող բառից պետք է տրոհվի ստորակետով, հաջորդում է բութով տրոհվող միավոր, ապա ստորակետի փոխարեն դրվում է բութ, օրինակ՝ *Եկավ ընկերս՝ Արամը՝ բերելով խնդրածս գիրքը: Մնացել էր միայն մի ծառ՝ ճյուղակոտոր, մերկացած՝ զարմացնելով բոլորին: Ահա լողում է նա, ո՛վ զարմանք՝ մաքառելով ալիքների դեմ:*

4. Եթե կոչականից անմիջապես հետո կա զեղչված շաղկապ, ապա ոչ թե դրվում է կոչականին տրոհող ստորակետը, այլ կոչականի վրա դրվում է բութ, օրինակ՝ – *Գիտեմ, Արա՛մ՝ (որ) շատ ես աշխատում:*

5. Եթե այն միավորին (տրոհվող որոշիչ, բացահայտիչ, միջանկյալ բառ և այլն), որն իրեն հաջորդող բառից պետք է տրոհվի ստորակետով, հաջորդում են կախման կետեր, ապա ստորակետի փոխարեն դրվում են կախման կետերը, օրինակ՝

Իսկ մենք՝ ես ու դու... արվեստ ենք խաղում
Եվ մի այնպիսի՞ համոզվածությամբ,
Որ Սերվանտեսի հերոսն էլ չուներ...
Պարույր Սևակ

6. Եթե գերադաս և ստորադաս նախադասությունները կապող շաղկապը զեղչված է, բայց նրանց միջև կա հեղինակային խոսք, ապա բութ չի դրվում, օրինակ՝ – *Գիտեմ,– ասաց նա,– (որ) շատ ես աշխատում:* Այդ բութը վերականգնվում է ուղղակի խոսքն անուղղակիի վերածելիս, օրինակ՝ *Նա ասաց, որ գիտի՝ շատ եմ աշխատում:*

7. Եթե բութով տրոհվող միավորների միջև կա հեղինակային խոսք, ապա բութ չի դրվում, այլ դրվում է հեղինակային խոսքի ստորակետ-գիծը (կամ կախման կետեր-գիծը), համեմատենք՝ – *Ես,– ասաց նա,– քո հարազատ հորեղբայրը, քեզ չեմ ների: – Ես՝ քո հարազատ հորեղբայրը, քեզ չեմ ների,– ասաց նա:*

8. Եթե կարճ՝ բութով տրոհվող ուղղակի խոսքին հաջորդում է կոչական, ապա կոչականից առաջ ստորակետ չի դրվում, այլ դրվում է ուղղակի խոսքի բութը, օրինակ՝ *Ասաց՝ վարպե՛տ, արի՛:*

9. Բոլոր դեպքերում, երբ տրոհության այլ նշանով պիտի ավարտվեր նախադասությունը, այդ նշանը փոխարինվում է վերջակետով, օրինակ՝ *Եկավ նկարիչը՝ Գաբրիելյանը:*

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է կետադրական կանոնների հանդիպադրումը:
2. Կետադրական կանոնների հանդիպադրման ի՞նչ հիմնական դեպքեր կան:
3. Կետադրական կանոնների հանդիպադրման դեպքում ո՞ր կանոնին է առաջնություն տրվում:

Վարժություն 40: Կետադրե՛ք տրված նախադասությունները:

1. Ներս մտավ գյուղապետը Գևորգյանը ձյունը վերարկուի ուսերից թափ տալով:
2. Սեղանին դրել էր ծաղիկներ կարմիր դեղին սպիտակ և մի գեղեցիկ արձանիկ:
3. Եկավ թիմի ավագը Հակոբը և ողջունեց բոլորին:
4. Այդքան քիչ կարդալով սիրելիս ոչնչի չես հասնի:
5. Գիտեմ ասաց արքան թշնամին արդեն սահմանի մոտ է:
6. Ելույթ ունեցավ տարեց դերասաններից մեկը Հակոբյանը բարձրահասակ ու ամրակազմ մի մարդ:
7. Աշակերտներն ընթերցեցին Հ. Թումանյանի պոեմներից մեկը Անուշը և մի քանի քառյակներ:
8. Քամին օրորում էր այգու ծառերը խնձորենիներն ու ծիրանենիները հաճելի սոսափյուն տարածելով շուրջբոլորը:

Վարժություն 41: Արտագրե՛ք և կետադրե՛ք:

ա) Մենք տասը երեխա էինք և որքան էլ հայրիկը սիրում էր իր զավակներին նրանց դպրոցական կյանքին հետևելու ժամանակ և հնարավորություն չուներ:

Մի օր Գայանյան դպրոցի տեսուչը տեղեկացնում է հայրիկին որ գա դպրոց իր աղջիկներից մեկի Անուշի մասին խոսելու: Գայանյանի փոխարեն հայրիկը գնում է Հովնանյան օրիորդաց դպրոց և հարցնում թե ինչպես է սովորում Նվարդը: Ուսուցիչները կռահելով կատարվածը և զվարթ ծիծաղելով ասում են

Պարոն Թումանյան Նվարդը վաղուց ավարտել է դպրոցը:

Այստեղ հայրիկը հանկարծակիի է գալիս և հիշում որ երևի հարկավոր է գնալ Գայանյան դպրոց որտեղ սովորում են մյուս աղջիկները: Հապշտապ գնում է այնտեղ հարցուփորձ անում մյուս աղջկա Արփիկի մասին բայց պարզվում է որ նրա համար չէին կանչել այլ Անուշի: Ինքնըստինքյան հասկանալի է որ զանազան տարաբնույթ գործերով զբաղված լինելով հայրիկը ժամանակ չուներ հետևելու մեր կրթության ամենօրյա գործընթացին բայց երբեմն երբ ժամանակ էր գտնում մանրազնին նայում էր մեր աշակերտական տետրերը: Մեծ ուշադրություն էր դարձնում մանավանդ գրության լեզվին և ձեռագրին: Հիշում եմ որ հազար ինը հարյուր տասնհինգ թվականին ամռանը եղբայրս Արտավազդը Վանից մի նամակ էր գրել: Հայրս առանց կարդալու հետ ուղարկեց վրան գրելով Գրիր թե ինչ ես գրել:

Ըստ Նվարդ Թումանյանի

բ) Մի օր երբ առավոտյան տնից դուրս էր գալիս Թումանյանը հանկարծ տեսնում է որ տանն ինչ-որ պատրաստություն կա հանել են մեծ ու փայլփլուն կաթսան կրակը բոցկլտում է շտապ-շտապ ջուր են բերում: Ինքնիրեն որոշում է թե այդ օրն իրենց տանը անպայման խաշ են եփում և լուռ ելնում է տնից: Ու որտեղ պատա-

հում է որևէ ծանոթի հրավիրում է իրենց տուն խաշ ուտելու: Քիչ անց նա հյուրերի մի երկար շարքի գլուխն անցած վերադառնում է տուն: Տնեցիները ապշում են իսկ Թումանյանը պատվիրում է բերել խաշը:

Ինչ խաշ անակնկալ այդ խոսքից զարմացած ասում է տիկին Օլգան նույնիսկ կերակուրը դեռ չեմ եփել:

Բայց էն ինչ էր առավոտյան որ մեծ պղինձը հանել էիք հարցնում է Թումանյանը:

Ջուր էինք տաքացնում այսօր մեծ լվացք ունենք պատասխանում է տանտիրուհին:

Սակայն Հովհաննեսը ոչ շփոթվում է ոչ հանկարծակիի գալիս այլ իրեն հատուկ զվարճախոսությամբ պատմում է ապշած հյուրերին թե ինչ թյուրիմացություն է եղել և խնդրում է փոքր-ինչ սպասել: Հետո իսկույն ևեթ ուղարկում է պատրաստի կերակուրներ բերելու և քիչ անց արդեն տանը մի թունդ գինարբուք էր:

Ըստ Լեոյի

գ) Հայաստանի Հանրապետության լճերից մեկը գեղատեսիլ Արփին ամենից հյուրընկալն է հավալուսնի համար: Այն ժամանակ երբ այդ թռչունները կապուտաչյա Սևանի վրա հատուկենտ են երևում Արփի լճում երբեմն տասնյակներով են հանդիպում: Այդ թռչունն ամենից առաջ ուշադրություն է գրավում կտուցից կախված յուրօրինակ պարկով: Այդ պարկը որը մինչև տասը լիտր ջուր կամ տասը-տասնհինգ կիլոգրամ ձուկ կարող է տեղավորել իր մեջ ամրացած է նրա կտուցի ներքին փեղկի եզրերին: Իսկ կտուցի վերին փեղկը կափարիչի դեր է կատարում այդ տարօրինակ ամբարի համար: Երբ որսն առատ է նրա մեջ հավալուսնը արագարագ լցնում է թպրտացող կենդանի ձկներին իսկ հետո երբ անդորր է ու ոչ ոք չի խանգարում ախորժակով ուտում է կամ տանում քաղցած ձագերին: Երբ պարկը լիքն է ձկներով հավալուսնը ծանր ու դժվար է թռչում: Փորձառու որսորդները պատմում են որ այդպես ծանր-ծանր թռչելու պահին երբ կրակում ես սկսում է ձկները հապշտապ հանել և պարկից ցած թափել: Ոմանք կատակով ասում են թե կաշառք է տալիս որ իրեն չսպանեն: Իրականում սակայն դրանով նա թեթևանում է բեռից որ արագացնի թռիչքը:

Ըստ Վախթանգ Անանյանի

դ) Չնայած նախընթաց ամբողջ օրը ճանապարհորդել էի այնուամենայնիվ երեկ շատ վաղ արթնացա: Գյուղը ինքն է կարծես արթնացնում քեզ: Մարդն այստեղ ամաչում է եթե չասենք ափսոսում որ վաղորդյան զով ժամերը քնին նվիրի: Երբ դուրս եկա բակ աղջամուղջը դեռ նոր էր ցրվում և արևելքը դեռ նոր էր շառագունում բայց հյուրընկալս քահանան արդեն փութկոտ քայլերով գնում էր գյուղի հինավուրց եկեղեցին:

Միթե այսքան կանուխ պիտի սկսեք ժամերգությունը ապշած հարցրի ես:

Ոչ դեռ սաղմոս պիտի քաղեմ Դուք կարող եք կես ժամ ուշ գալ պատասխանեց նա:

Ես եկեղեցում երկար կանգնել չէի կարողանում որոշեցի օգուտ քաղել ինձ ընձեռված ժամանակից և բարձրանալ գյուղի վերնակողմը նրա ընդհանուր դիրքը և շրջապատը դիտելու:

Բակի ճյուղերը լայն փռած հաստաբուն ընկուզենու տակ մի անկյունում տանտիրուհին և իր հարսը կթում էին կովերը: Որպեսզի տնից լրիվ քաղցած դուրս չգայի մոտեցա նրանց և մի գավաթ կաթ խնդրեցի: Ես ախորժանոք ըմբոշխնեցի տաք փրփուրը վրան անուշահամ ըմպելիքը և խնդրեցի երկրորդը որը միևնույն հոգածությամբ լցվեց և բարյացակամորեն հանձնվեց ինձ: Իմ նախաճաշը վերջացել էր որի համար խոնարհ շնորհակալություն հայտնելով հարցրի գյուղի վերին կողմերն անցնելու ճանապարհը և հեռացա:

Ըստ Մուրացանի

Գիտե՞ք, որ...

1967 թվականից ամեն տարի՝ ապրիլի 2-ին (Հանս Քրիստիան Անդերսենի ծննդյան օրն է), աշխարհում նշվում է Մանկական գրքի միջազգային օրը:

Մառ Նիկողայոս Յակովի (1864–1934)

Խորհրդային ականավոր գիտնական, լեզվաբան-հայագետ, արևելագետ: Ծնվել է Քութայիսում (հայրը՝ շոտլանդացի, մայրը՝ վրացուհի): 1884-ին ավարտել է տեղի գիմնազիան, ապա ընդունվել է Պետերբուրգի համալսարանի արևելագիտության ֆակուլտետը: 1891-ին նշանակվել է նույն համալսարանի պրիվատ-դոցենտ, 1900-ին՝ հայ-վրացական բանասիրության ամբիոնի վարիչ: 1901թ. ստացել է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան, 1909-ին դարձել է ակադեմիկոս: Հայաստանում կատարել է արդյունավետ պեղումներ, որոնց արդյունքները ամփոփված են մի շարք հրապարակումներում: Հայագիտական-բանասիրական մեծ արժեք ունի Վարդան Այգեկցու առակների՝ նրա հրապարակած քննական ժողովածուն: Հայերենագիտական ուսումնասիրություններում անդրադարձել է հայոց լեզվի ծագման ակունքներին, այլ լեզուների հետ ունեցած առնչություններին, հատուկ ուսումնասիրություն է նվիրել հին հայերենին՝ գրաբարին: Նա հայերենը համարում էր խաչավորված, խառնածին լեզու և ժխտում էր նրա հնդեվրոպական ծագումը:

Մառը ուներ գիտական լայն հետաքրքրություններ և հայ մատենագրության ու մշակույթի մեծագույն գիտակներից էր:

ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ՈՃԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ոճերի դասակարգման կարևոր չափանիշներից է խոսքի կիրառության ոլորտը: Ըստ դրա՝ առանձնացվում է նաև գիտական ոճն իր ենթատեսակներով: Գիտական ոճն ունի կիրառության լայն ու բազմապիսի ոլորտներ: Այս ոճով են գրվում մենագրությունները, դասագրքերը, ատենախոսությունները, գիտական հոդվածները և այլն: Գիտական ոճը կարող է ունենալ նաև բանավոր դրսևորումներ, մանավանդ գիտական բանավեճերի ժամանակ, բայց և այնպես այն առավելապես հանդես է գալիս գրավոր ձևով:

Գիտական ոճը ոճական երանգավորման առումով համեմատաբար չեզոք է: Գիտական ոճի հաջորդ առանձնահատկությունն այն է, որ ձևավորվում է գրական լեզվի օրինաչափություններով, և լեզվական միջոցների գործածությունը կանոնակարգված է: Գիտական նյութը կամ իրողությունը ներկայացվում է հասկացությունների միջոցով, իսկ միտքը հաղորդվում է դատողություններով և մտահանգումներով, որոնք մշակվում, կանոնավորվում և համակարգվում են: Գիտական ոճի կարևոր նախապայման են ինչպես շարադրանքի ճշտությունն ու ճշգրտությունը, այնպես էլ տրամաբանականությունն ու պատճառահետևանքային կապը:

Ասվածը հավասարապես վերաբերում է ինչպես բնագիտական, այնպես և հասարակական (հումանիտար) գիտություններին, քանի որ դրանք բոլորն էլ ծառայում են բացահայտելու, ճանաչել տալու կյանքի, հասարակական երևույթների ծագման ու զարգացման, նրանց հետագա բնականոն փոփոխությունների օրենքներն ու օրինաչափությունները: Գիտական ոճը հիմնականում ներկայացվում է կանոնների, սահմանումների, բանաձևերի միջոցով, որոնք ճիշտ են, ճշգրիտ, սեղմ ու հակիրճ և կառուցվում են պարզ, մատչելի, տրամաբանված, կուռ և հետևողական դատողություններով, հենվում են համապատասխան փաստերի, ապացույցների, փաստարկների ու եզրահանգումների վրա:

Անշուշտ, գիտական ոճին բնորոշ են խոսքի բոլոր արժանիքները, բայց առավել հատուկ են **տրամաբանականությունը, ճշգրտությունը, պարզությունն** ու **մատչելիությունը**:

Խոսքի **տրամաբանականության** կարևոր նախապայմաններից մեկը շարադրանքի կառուցվածքի ճիշտ պահպանումն է՝ ներածական մաս, բուն նյութի շարադրանք և ամփոփում: Եզրակացությունները բխում են նյութի բովանդակությունից, իրար չեն հակասում, և ամբողջ նյութը հաճախ բաժանվում է փոքրիկ մասերի, որոնք ներկայացնում են մտքի աստիճանական ընթացքն ու զարգացումը՝ մասնավորից դեպի ընդհանուրը, իսկ երբեմն՝ հակառակը:

Այստեղ կարևոր նշանակություն են ձեռք բերում լեզվական այն միջոցները (բառեր, արտահայտություններ), որոնք ամենից առաջ նպաստում են խոսքի պատճառահետևանքային կապի ստեղծմանը տվյալ խոսքաշարում, ինչպիսիք են՝

հետևաբար, քանի որ, դրա շնորհիվ, այդ իսկ պատճառով, ուրեմն, այսպիսով, ինչպես նշվեց և այլն:

Պարզությունը՝ որպես գիտական ոճի հատկանիշ, նախ և առաջ ենթադրում է հասկանալիություն, մատչելիություն: Գիտական խոսքաշարում (տեքստում) թեև երբեմն հանդիպում են ոչ մասնագետին անհասկանալի բառեր, արտահայտություններ, հատկապես տերմիններ, բայց և այնպես այստեղ կարևոր նշանակություն են ստանում շարադրանքի մատչելիությունը, նախադասությունների պարզ կառուցվածքը, շարքային ընթերցողին հասկանալի, ոչ խրթին շարադրանքը, ապա նաև շարադրանքի գիտահանրամատչելի ոճը:

Ճշգրտությունը գիտական ոճի կարևորագույն և պարտադիր հատկանիշներից է: Գիտական շարադրանքում յուրաքանչյուր հասկացություն պետք է լինի մենիմաստ և միանշանակ: Այստեղ յուրաքանչյուր բառ գործածվում է իր անվանողական նշանակությամբ, տվյալ առարկան, իրողությունը կամ փաստը արտահայտող ճշգրիտ բովանդակությամբ՝ առանց բառերի փոխաբերական, հուզաարտահայտչական իմաստների:

Գիտական ոճն ունի նաև իր ուրույն բառապաշարն ու քերականական կառուցվածքը՝ այս առումով ևս զգալիորեն տարբերվելով գործառական մյուս ոճերից:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որո՞նք են գիտական ոճի կիրառության հիմնական ոլորտները:
2. Որո՞նք են գիտական ոճին բնորոշ հիմնական առանձնահատկությունները:

Վարժություն 1: Կարդացե՛ք և համեմատե՛ք գիտական և գեղարվեստական ոճերով գրված տեքստերը, բնութագրե՛ք տարբերությունները:

ա) Իր նազանքներով, իր չքնաղ տեսքով և հեռո՛ւ-հեռո՛ւ երկրներից ժամանած թռչունների երամներով Սևանը քաշում է ինձ դեպի իրեն: Ես նրան հաճախ եմ այցի գնում և՛ տարվա այն եղանակին, երբ զմրուխտ են հագնում նրա ափերը, երբ Գեղամա լեռների վեր գագաթները ցոլանում են նրա վճիտ հայելու մեջ, և՛ այն ժամանակ, երբ մերկանում է նրա շրջապատը, բայց ինքը զարդարվում է հյուսիսից հյուր եկած թռչունների երամներով:

Հազար գեղեցկություն ունի Սևանը: Երբ անվրդով նիրհում է իր զմրուխտ ափերի մեջ, չես կարող որոշել՝ երկի՞նքն է ցոլում նրա մեջ, թե՞ ինքը՝ երկինքն է իջել՝ հանգստանալու Գեղամա լեռների շուրջպարի մեջ:

Դե ինչպե՞ս նստես Երևանի շոգում, երբ այդպիսի մի գեղեցկուհի է սպասում քեզ լեռներում:

Վախթանգ Անանյան

բ) Սևանա լիճը քաղցրահամ, բարձրադիր, նավարկելի լիճ է: Գտնվում է ծովի մակերևույթից մոտ 1900 մ բարձրության վրա: Սևանը կազմված է Մեծ Սևանից

ու Փոքր Սևանից, որոնք իրարից բաժանվում են Արտանիշի և Նորատուսի հրվանդաններով ու նրանց միացնող ստորջրյա թմբով: Նախքան լճի մակարդակի արհեստական իջեցումը նրա երկարությունը 75 կմ էր, միջին լայնությունը՝ 19 կմ, միջին խորությունը՝ 41,3 մ, իսկ ամենախոր մասի՝ Փոքր Սևանի խորությունը՝ գրեթե 98,7 մ: Այդ պայմաններում լճի ընդհանուր ծավալը կազմում էր 58,5 մլրդ մ^3, ջրի մակարդակի արհեստական իջեցումից հետո՝ շուրջ 32,9 մլրդ մ^3: Սևանա լիճ են թափվում 28 գետ ու գետակ՝ Ձկնագետը, Գավառագետը, Արգիճին, Վարդենիսը, Կարճաղբյուրը, Մասրիկը և այլն: Լճից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը:

Ըստ «Դպրոցական մեծ հանրագիտարանի»

Վարժություն 2: «Կաղնի», «Շուն» կամ «Ցորեն» վերնագրերից որևէ մեկով գրե՛ք գիտական և գեղարվեստական ոճերով շարադրված փոքրիկ տեքստեր՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով հանրագիտարանից, համացանցից կամ այլ աղբյուրներից:

ԳԻՏԱԿԱՆ ՈՃԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

Գիտական ոճի բառապաշարի հիմնական շերտը տերմիններն են կամ մասնագիտական բառերը:

Տերմինը բառ է կամ բառակապակցություն, որն անվանում է գիտության տարբեր ոլորտների, տեխնիկայի, տնտեսության, մշակույթի, արվեստի և գրականության որևէ հասկացություն: Տերմինի և բառի առաջին էական տարբերությունն այն է, որ տերմինները սովորաբար մենիմաստ են, մինչդեռ բառերը կարող են նաև բազմիմաստ լինել: Տերմինը չունի փոխաբերական իմաստ, հուզաարտահայտչական երանգավորում: Տերմինը և բառը հաճախ չեն համընկնում նաև կառուցվածքային առումով. տերմինը արտահայտվում է ինչպես մեկ բառով, այնպես էլ բառակապակցությամբ, ինչպես՝ *ենթակա, ստորոգյալ, վեպ, պոեմ, մեղսունակ, հայց,* բայց և՝ *պարզ ստորոգյալ, բարդ համադասական նախադասություն, պարբերական համակարգ* և այլն:

Նշենք տարբեր ոլորտների մի քանի տերմիններ. լեզվաբանական՝ *հնչույթ, բառ, նախադասություն, խոսքի մաս, մակդիր,* գրականագիտական՝ *արձակ, չափածո, պոեմ, գրական ժանր,* երաժշտական՝ *մեներգ, տենոր, սիմֆոնիկ նվագախումբ,* իրավաբանական՝ *ցուցմունք, վկա, ամբաստանյալ, մեղսունակ,* բժշկական՝ *հարբուխ, քաղցկեղ* և այլն:

Գիտական ոճում զգալի թիվ են կազմում նաև միջազգային տերմինները, հատկապես բժշկության, ֆիզիկայի, կենսաբանության, մարզական և այլ բնագավառներում, օրինակ՝ *դիոդ, ռեակցիա, պարաբոլ* և այլն:

Գիտական ոճի բառապաշարում գործածվում են նաև ընդհանուր գործածական բառերը, որոնք արտահայտչական առումով հիմնականում չեզոք են և չունեն ոճական որոշակի երանգավորում: Այս բառաշերտի մեջ մտնում են առօրյա-խոսակցական լեզվի ամենասովորական, կիրառական մեծ հաճախականություն

ունեցող կենցաղային տարբեր առարկաներ, հասկացություններ արտահայտող բառերը, դերանունները, թվականները, սպասարկու բառերը և այլն, օրինակ՝ *ջուր, աղ, թթու, ջերմաստիճան, այս, այդ, առաջին, երկրորդ* և այլն:

Անվանողական տարբեր նպատակներով գիտական ոճի բառապաշարում գործածական են նաև փոխառություններ, նորակազմություններ, երբեմն օտարաբանություններ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որո՞նք են գիտական ոճի բառապաշարի հիմնական շերտերը:
2. Ի՞նչ է տերմինը:
3. Ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան բառի և տերմինի միջև:

Վարժություն 3: Տերմինները խմբավորե՛ք՝ նշելով, թե գիտության որ բնագավառին են վերաբերում:

Դիոդ, նատրիում, ստորոգյալ, կիսահաղորդիչ, վալենտականություն, մկանային հյուսվածք, համադասական շաղկապ, օքսիդավերականգնման ռեակցիա, հասարակած, սրտամկան, գլխուղեղ, հոսանքի լարում, գետաբերան, հոլովում, շերտավոր ամպ, ամպերմետր, թթվածին, շնչուղի, սահմանադրական իրավունք, ներտ գազ, լեռնազանգված:

Վարժություն 4: Գտե՛ք, թե շղատառ բառերը որ դեպքում են տերմիններ կամ մասնագիտական բառեր, իսկ որ դեպքում՝ համագործածական բառեր:

Գետաբերանը գետի վերջին հատվածն է՝ *ծովի, լճի* կամ մեկ այլ *գետի* մեջ թափվելու տեղում: Տարբերում են գետաբերանի հետևյալ տիպերը՝ *կույր, սովորական, դելտա, լիման, էստուար:*

Մոտակա գյուղի մի քանի տղաներ *գետում* ձուկ էին որսում. դա նրանց *սովորական* զբաղմունքն էր:

Գինեքարը կամ *կրեմորաարտարը գինեթթվի կալիումական թթու աղ* է: Պարունակվում է *խաղողահյութում:* Գինու մշակման և հնացման ժամանակ առաջանում է *բյուրեղային նստվածքի* ձևով:

Վարունգի *թթու* պատրաստելու համար տատիկը *աղ* գնեց:

Բնական *կաուչուկը* պարունակվում է *կաուչուկատու բույսերի* կաթնահյութի՝ *լատեքսի* մեջ: Հիմնականում ստանում են *արևադարձային երկրներում* աճող բրազիլական հևեյա ծառի *լատեքսից:* «Կաուչուկ» բառը ծագել է «կաուչու» բառից, որով Բրազիլիայի բնիկները կոչել են Ամազոն գետի ափին աճող հևեյայից արտազատվող նյութը. «կաու» նշանակում է ծառ, «ուչու»՝ հոսել:

Ըստ «Հայկական սովետական հանրագիտարանի»

ԳԻՏԱԿԱՆ ՈՉԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գիտական ոճին նախ և առաջ բնորոշ է քերականական միջոցների ու ձևերի խնայողությունը. այս առումով նախընտրելի են քերականական կարճ ձևերը: Գիտական ոճում ավելի լայն կիրառություն ունեն վերացական իմաստ արտահայտող գոյականները, բայանունները, քանի որ սրանցով ավելի հաճախ են հասկացություններ անվանվում: Եզակի թվով դրված գոյականը կարող է արտահայտել հոգնակիի իմաստ, օրինակ՝ *Ենթական նախադասության գլխավոր անդամն է: Խնդիրը բայական անդամի լրացում է* և այլն: *Ենթակա, նախադասություն, անդամ, խնդիր, լրացում* բառերը դրված են եզակի թվով: Նման դեպքում եզակի թվով դրված գոյականը արտահայտում է տեսակի կամ սեռի անվանում՝ նշելով նրա հիմնական հատկանիշը կամ հատկանիշները:

Գիտական ոճին բնորոշ է նաև ածականների հաճախակի գործածությունը, որոնք տվյալ դեպքում հանդես են գալիս որպես որևէ հասկացության հատկանիշ արտահայտող լրացում:

Դերանվանական ձևերից հաճախակի են գործածվում հարցահարաբերական և ցուցական դերանունները, իսկ անձնական դերանուններից՝ հոգնակի առաջին դեմքը՝ «մենքը»՝ իբրև «հեղինակային մենք», օրինակ՝ *Մենք կարծում ենք, որ այդ մասնիկները ածանցներ են:*

Բայի դիմավոր ձևերից գործածության ավելի մեծ հաճախականություն ունի սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերի երրորդ դեմքը, որի միջոցով արտահայտվում են դատողություններ և մտահանգումներ: Գրեթե չեն գործածվում ձայնարկությունները, քանի որ դրանք խոսքին հուզականություն հաղորդող բառեր են:

Շարահյուսական համակարգում գերակշռում են բարդ նախադասությունները՝ հիմնականում պատմողական, որոնք դատողություններ են արտահայտում:

Բարդ ստորադասական նախադասություններում զգալի տեղ են գրավում պայմանի, պատճառի, հետևանքի երկրորդական նախադասությունները, որոնց շնորհիվ ևս դրսևորվում է գիտական շարադրանքի տրամաբանական, պատճառահետևանքային կապը: Նախադասության անդամների զեղչում հիմնականում չի լինում:

Գիտական շարադրանքում շատ են նաև բաղադրյալ կամ հարադրավոր բայերով արտահայտված ստորոգյալները, ինչպես՝ *կիրառություն է գտնում, փորձ է կատարվում, վերլուծության է ենթարկվում, գերիշխող է դառնում* և այլն: Գիտական ոճը զուրկ է հուզաարտահայտչական երանգավորումից:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր առմամբ քերականական ի՞նչ հատկանիշներ են բնորոշ գիտական ոճին:
2. Անձնական դերանունների կիրառական ի՞նչ առանձնահատկություն է դրսևորվում գիտական ոճում:

3. Հնչերանգային և կառուցվածքային ինչպիսի՞ նախադասությունների գործածությունն է գերակշռում գիտական ոճում:

Վարժություն 5: Տրված բառերով կազմե՛ք երկուական նախադասություն, որոնցից մեկում նրանք տերմինային արժեք ունենան, մյուսում՝ ոչ:

Աղ, թթու, բառ, ջուր, երկաթ, արյուն, ավազ:

Վարժություն 6: Օգտվելով ձեր դասագրքերից և այլ աղբյուրներից՝ գրե՛ք գիտական փոքրիկ շարադրանք տարբեր թեմաներով՝ «Գետ», «Օդ», «Բայ», «Մագնիսական դաշտ» և այլն:

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅԱԳԵՏՆԵՐ

Սևակ (Գրիգորյան) Գուրգեն Գրիգորի (1904–1980)

Ծնվել է Թիֆլիսում: Սկզբնական կրթությունն ստացել է Ներսիսյան դպրոցում, բարձրագույնը՝ Երևանի պետական համալսարանում: 1932-ին ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի, 1948-ին՝ դոկտորի գիտական աստիճան: 1956-ին ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1971-ին՝ իսկական անդամ: Ստացել է նաև Հայաստանի և Վրաստանի գիտության վաստակավոր գործչի կոչումներ: 1931–79թթ. դասախոսել է Երևանի պետական համալսարանում: Շուրջ 30 տարի նա վարել է Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի վարիչի պաշտոնը: 1932–40 թթ. եղել է տերմինաբանական կոմիտեի գիտական քարտուղարը, մի որոշ շրջանում՝ լեզվի ինստիտուտի ժամանակակից հայոց լեզվի, այնուհետև՝ խոսքի մշակույթի ու տերմինաբանության բաժնի վարիչ: Զբաղվել է հիմնականում ժամանակակից հայոց լեզվի տեսության ու պատմության, խոսքի մշակույթի ու տերմինաշինության հարցերով: Առանձնապես հայտնի են նրա «Խոսքի մասերի ուսմունքը» (1939), «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն» (1939), նույնի վերամշակված հրատարակությունը՝ «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» (1955), «Ժամանակակից հայոց լեզվի պատմություն» (1948) գրքերը: Նրա՝ շարահյուսության դպրոցական դասագիրքը ունեցել է տասնյակ վերահրատարակություններ: Կատարել է նաև թարգմանություններ ռուսերենից: Հայաստանում ղեկավարել է էսպերանտական շարժումը[1]:

1 Էսպերանտո – (բառացի՝ հուսացող) միջազգային արհեստական լեզու, որը 1887թ. ստեղծել է վարշավացի բժիշկ Ֆ. Զամենհոֆը: Այդ լեզուն աչքի էր ընկնում բառակազմության և քերականության պարզությամբ: Բառերի արմատները հիմնականում վերցված էին եվրոպական տարածված լեզուներից:

ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարժություն 1: Գտե՛ք, թե յուրաքանչյուր շարքում որ բառը խոսքի մասի անվանում չէ:

1. գոյական, դերանուն, ուղղական
2. ածական, թվական, սահմանական
3. կոչական, ձայնարկություն, վերաբերական
4. բայ, դերբայ, մակբայ
5. կապ, շաղկապ, ձայնակապ

Վարժություն 2: Առանձին սյունակներով դո՛ւրս գրեք հատուկ և հասարակ գոյականները, որոշե՛ք, թե դրանք որ հոլովման են պատկանում:

Հայն իր մանկանը կոչել է Ազատ,
Որ ազատ լինի հողը հարազատ:

Բայց հարձակվել են վայրենի՛ մարդիկ,
Եվ նա զավակին կոչել է Մարտիկ:

Երկիրն է պղծել թշնամին հրեշ,
Եվ հայրը որդուն կոչել է Վրեժ:

Որպեսզի որդին կռվի տաքարյուն,
Հայրը ծնվածին կոչել է Կորյուն:

Նահատակնե՛ր են պետք եղել հերոս,
Եվ նոր անուն է գտել՝ Մարտիրոս:

Որպեսզի երկիրն առնի հարություն,
Հայը կոչվել է նաև Հարություն:

Լավ լուրերի է սպասել հավետ,
Եվ իր մանչուկին ասել է Ավետ:

Որ ազգը կռվի և մնա սակայն,
Որդուն կոչել է նա Մնացական:

Հույսո՛վ է ապրել մթում խաբուսիկ
Եվ անվանել է իր որդուն Հուսիկ...

Արամայիս Սահակյան

Վարժություն 3: Արտագրե՛ք՝ մեծատառերը թողնելով միայն անհրաժեշտ դեպքերում:

1. ՆՇԱՆԱՎՈՐ ԳԱՌՆԻԻ ՏԱՃԱՐԸ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԴԱՐՁԱՎ ՏՐԴԱՏ ԵՐՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԻ ՔՐՈՋ՝ ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏԻ ԱՄԱՌԱՆՈՑԸ: 2. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԻՏԱԼԱՑԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԵՏ ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻՆ ԱՊՐԵԼ Է ՄԻԼԱՆՈՒՄ, ՀՌՈՄՈՒՄ, ԻՍԿ ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋՈՒՄ՝ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ: 3. ՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՆԿԱՐԻՉ ԳԵՎՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆԸ 1884 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵԿՆՈՒՄ Է ԱՐՏԱՍԱՀՄԱՆ՝ ՀՌՈՄ, ՎԵՆԵՏԻԿ, ՆԵԱՊՈԼ, ՖԼՈՐԵՆՑԻԱ: ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ՆՐԱ ՆԿԱՐՆԵՐԸ ՑՈՒՑԱԴՐՎԵԼ ԵՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ, ՇՈՒՇԻՈՒՄ, ՌՈՍՏՈՎՈՒՄ, ՄՈՍԿՎԱՅՈՒՄ, ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, ԵՐԵՎԱՆՈՒՄ: 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԻՑ ՀԻԱՆԱԼԻ ԵՐԵՎՈՒՄ Է ԱՐԱՐԱՏԸ:

Վարժություն 4: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն գոյականը, որի հոգնակին կազմվում է *-եր* վերջավորությամբ:

1. խնձորենի, մայրուղի, խաղաքայլ, գրասեղան
2. աշխատաժամ, գիտարշավ, հաշվապահ, ծաղկաման
3. ծառուղի, հյուրասենյակ, մատենագետ, զբոսանավ
4. կատվառյուծ, բևեռաղվես, որսաշուն, ծովախոզուկ
5. ուղեկալ, այգեգործ, պատգամաբեր, պայմանագիր
6. պատշգամբ, շարժասանդուղք, ծառասունկ, ուղղանկյուն
7. ձկնորս, նկարագիր, ճաշասենյակ, հարցազրույց
8. ծոցատետր, ձնծաղիկ, կարկատան, կենդանատեսակ
9. գրադարան, ծառաշարք, դեղանոթ, տափօղակ
10. պատճեն, գծանշում, ժայռափլվածք, ստեղնաշար

Վարժություն 5: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն գոյականը, որի հոգնակին կազմվում է *-ներ* վերջավորությամբ:

1. ժայռաքար, բառատետր, ժայռապատկեր, դաշտավայր
2. լամպագիր, արտոնագիր, դաշնագիր, արձակագիր
3. երկաթագործ, տողասկիզբ, հուշասյուն, շրջանագիծ
4. գետաձի, դեղահաբ, գործընկեր, պարաքայլ
5. կշռաքար, դիմանկար, ծննդավայր, ջրափոս
6. ծրագիր, անձրևաջուր, շոգենավ, բարձրավանդակ
7. տեսախցիկ, գլխացավ, դեղատուն, ձիասայլ
8. թռչնաձագ, գիսաստղ, կրկնապատկեր, սահադաշտ
9. մայթեզր, սիզամարգ, հեռագրասյուն, կատվազգի
10. զոդաձող, հոսանքալար, հաղորդավար, գրչատուփ

Վարժություն 6: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն գոյականը, որի հոգնակին չի գրվում կրկնակ *ն*-ով:

1. անուն, ծառաբուն, նստարան, հրացան
2. ոտնաձայն, պատճեն, վիպասան, երասան
3. դերասան, հեռագրասյուն, գրասեղան, մրցաշրջան
4. շուշան, ծիածան, որսաշուն, մեծատուն
5. զանգակատուն, խեցգետին, անկյուն, սվին
6. մառան, հացատուն, շտեմարան, մկան
7. հայրանուն, գարուն, արծվաբույն, տանտիկին
8. եռանկյուն, հակաթույն, պատմություն, թեյման
9. թալիսման, գազալցակայան, կամրջասյուն, վայրկյան
10. թվանշան, ծոցագրպան, ապարանջան, դրամատուն

Վարժություն 7: Արտագրե՛ք նախադասությունները՝ փակագծերում տրված գոյականները տեղադրելով անհրաժեշտ հոլովով, առումով և թվով:

1. Նկատելով վիրավոր ...՝ ... միանգամից կանգնեցրեց հեծանիվը, ցած թռավ և ... միջով մոտեցավ նրան:

   (խոտ, թռչուն, երեխա)
2. Այդ բոլորը ... ցույց էր տալիս իր բարձրաստիճան ... , բացատրում էր նրանց իր ճարտարապետական գաղտնիքները և հրճվում էր՝ լսելով նրանց գովաբանող ... :

   (խոսք, հյուր, ծերունի)
3. Հաճախ նա հյուրերին առաջնորդում էր դեպի արքայական ... , որոնք գտնվում էին ... ապառաժոտ լանջերում կամ ծովափնյա թավուտ ... :

   (ժայռ, անտառ, որսարան)
4. Ծառի դալար ... հուժկու ... ժամանակ մաքառում էին հողմերի դեմ, ինչպես կտրիճ զորավարի՝ բազում ... հաղթանակած թիկնապահներ:

   (մրրիկ, ճյուղ, կռիվ)
5. Փրփրահոս ... ափին կա ուղղաձիգ մի քարաժայռ, որը խորհրդավոր ... չունի. վայրի է, ինչպես այն լեռը, որի գառիվեր կրծքից պոկվել ու գլորվել էր, բայց նա ավելին գիտի, քան մեր պատմաբանները, որովհետև լեռնային աշխարհի և՛ երջանիկ, և՛ դժբախտ ... մշտնջենական վկան է:

   (օր, գետ, արձանագրություն)
6. Ապրիլ ամսվա առաջին ... էին, և ... ճյուները հալվել էին, ու սարերն այլևս առաջվա նման ... արձագանք չէին տալիս:

   (օր, լեռնալանջ, ամպրոպ)

7. Ճանապարհն անցնում էր մի հինավուրց անտառի ... , և ճանապարհի ողջ ... շարված էին տարբեր ... ՝ մեծ մասամբ թխկիներ:

(եզր, ծառ, երկայնք)

8. Այդ աշխույժ երաժշտությունը գալիս էր հեռվից՝ ... , այնտեղ՝ զինվորական ժամանակավոր ... , երեկոները ակորդեոն էին նվագում, և ... հասնում էր մինչև մեր տուն:

(ձայն, դաշտ, բնակատեղ)

9. Մի անգամ ականատես եմ եղել այդ թռչունների ... . լույսը բացվելուն պես մտան ... փայլփլող ջուրը, կիսաշրջանաձև շարվեցին լճակի ծփծփացող ... և մի կենդանի շղթա կազմած՝ եկան դեպի ծանծաղ մասը:

(որս, մակերևույթ, արև)

10. Մենք, ... մեջ թաքնված, հետևում էինք հավալուսների որսին, և շուտով նկատեցինք, որ բռնած բոլոր ... չեն ուտում. մի մասը տեղավորում են իրենց ... կախված պարկերում:

(կտուց, եղեգ, ձուկ)

Վարժություն 8: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն բառը, որն իր հոլովմամբ տարբեր է տվյալ շարքի մյուս բառերից:

1. գրադարան, կինոթատրոն, դեղատուն, հիվանդանոց
2. կատու, առյուծ, թռչուն, մարդ
3. այգի, գինի, կիրակի, երկաթուղի
4. ամիս, տարի, օր, դար
5. արյուն, լեռ, գարուն, թոռ
6. քույր, եղբայր, ընկեր, կին
7. տուն, շուն, սյուն, դուռ
8. հայր, մայր, եղբայր, քույր
9. ուսում, զարգացում, դիմում, հարցում
10. գոյական, ածական, թվական, դերանուն

Վարժություն 9: Գտե՛ք, թե յուրաքանչյուր շարքի որ բառը տողասկզբում նշված դերբայը չէ:

1. *անորոշ* – զրնգալ, նախազգալ, հոգալ, արևագալ
2. *անորոշ* – գթալ, գդալ, թնդալ, դղրդալ
3. *անորոշ* – ծխալ, խոկալ, անսխալ, մխալ
4. *անորոշ* – եռածալ, կսկծալ, ցնծալ, հեծեծալ
5. *անորոշ* – պոռթկալ, ջահակալ, փռթկալ, թրխկալ
6. *անորոշ* – նորոգել, համակարգել, շանթարգել, հարգել
7. *անորոշ* – բարեկարգել, անկարգել, վարգել, գովերգել
8. *անորոշ* – փաթաթել, արծաթել, արծաթաթել, փթթել
9. *անորոշ* – հոլովել, խորովել, հորովել, խռովել

10. *անորոշ* – ավել, դավել, ցավել, քավել
11. *ենթակայական* – կաշկանդող, քանդող, ամրապնդող, անվադող
12. *ենթակայական* – տապակող, արևկող, գուշակող, սպիտակող
13. *ենթակայական* – գրոհող, շնորհող, ճանապարհող, վարելահող
14. *ենթակայական* – պտտաձող, փորձող, վարձող, սոսնձող
15. *ենթակայական* – վերհիշող, հուշող, արևաշող, մշուշող
16. *հարակատար* – ամոթխած, խիզախած, շաղախած, հաճախած
17. *հարակատար* – կարկամած, ամպամած, կազմած, սեղմած
18. *հարակատար* – շփոթված, հրկիզված, առեղծված, բուժված
19. *համակատար* – ավարտելիս, կերտելիս, ավետիս, նպաստելիս
20. *համակատար* – ծալելիս, փայլելիս, ասելիս, ասուլիս

Վարժություն 10: Արտագրե՛ք նախադասությունները՝ փակագծերում տրված անորոշ դերբայները տեղադրելով անհրաժեշտ եղանակով, ժամանակով, դեմքով, թվով:

1. Նկարչի փոթորկահույզ հոգուն ... տարօրինակ մի անդորրություն, որի շնորհիվ ... լիաթոք վայելել հրդեհի ցոլքերի խաղը, որն անընդհատ ... զանազան ձևերով:

(կարողանալ, իջնել, փոփոխել)

2. Աշխարհի ոչ մի պատկերասրահում նկարիչը երբևէ ... այդպիսի ցնցող պատկեր, գույների այդպիսի խաղ, որը նրան իսկույն ևեթ ... ու ... մի ոգեղեն աշխարհ:

(տանել, անէացնել, տեսնել)

3. Երբ Ղազար աղան զորացրման տարիքին ... , նախ ... զինվորական պաշտոններից, ապա ... աստիճանաբար հրաժարվել նաև զինվորական սովորություններից:

(հրաժարվել, հասնել, սկսել)

4. Գետը ... նախկին հունով, մեղմ ... և այդպես կհոսի, մինչև որ ... հորդառատ անձրևները, ու գետը կվարարի:

(սկսել, հոսել, խշշալ)

5. Երբ հոգնած ... հանգստանալու, արևն արդեն ... , ու խավարն աստիճանաբար ... :

(նստել, թանձրանալ, թեքել)

6. Նա հանկարծ մի աղմուկ ... , որը մի քանի ակնթարթ ... նրան մտածմունքներից, բայց շուտով նորից ... իր մտքերի մեջ:

(կտրել, լսել, ընկղմել)

7. Փարթամ կանաչի մեջ նստած՝ նա ... շուրջը և ... կանաչազարդ բնության անօրինակ գեղեցկություններով, իսկ կողքին ... մյուս ուղևորները:

(հիանալ, նայել, հանգստանալ)

8. Ուղտերը ... բոլորաձև ածած արմավենիների տակ, իսկ նրանց անոթի տերերը ... , որպեսզի փոքր-ինչ անց ... :

(ճանապարհ ընկնել, նստել, ճաշել)

9. Իր կողքով ... մի կարկաչուն առվակ, որի ջրի տարուբերվող հայելու միջով ... հատակի ողորկ ու գույնզգույն քարերը, եթե խաղացող երեխաները ... ջուրը:

(երևալ, հոսել, պղտորել)

10. Հղկված, բայց ժամանակի ընթացքում խորդուբորդ դարձած տապանաքարի վրա մարդիկ ժամանակին ինչ-որ բան ... , բայց ոչ ոք, որքան էլ ... , ... կարդալ:

(կարողանալ, գրել, ճգնել)

Վարժություն 11: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք ներգործական սեռի մեկ բայ:

1. նկարել, զբոսնել, հիանալ, փայլփլել
2. թվալ, կոտրել, ծփալ, սուրալ
3. սեթևեթել, քայլել, դողալ, կառուցել
4. ճախրել, շողալ, սահել, ներկել
5. կարմրել, քանդել, եռալ, մոլեգնել
6. ծիծաղել, մեծանալ, ցանել, հետևել
7. լուսավորել, հեռանալ, սլանալ, թերանալ
8. կորանալ, թերթել, լրջանալ, սառչել
9. լուսանալ, կարկաչել, մասնատել, խշշալ
10. ելնել, ուրախանալ, տաքանալ, տպագրել

Վարժություն 12: Որոշե՛ք, թե շղատառ բայերը որ դեպքում են չեզոք սեռի, իսկ որ դեպքում՝ կրավորական:

1. Բռնցքամարտիկը ուժեղ հարվածից *փռվեց* գետնին:
2. Մեր առջև *փռված* էր մարգագետինը:
3. Երիտասարդը սեղմեց իրեն *մեկնված* ձեռքը:
4. Հոգնած ճամփորդը *մեկնվել* էր ծառի տակ ու քնել:
5. Նրա մեջ *վառվեց* վրեժխնդրության բոցը:
6. Լամպի պատրույգը *վառվեց* մոտեցված լուցկու բոցից:
7. Հոգնած ճամփորդը *օրորվելով* քայլում էր:
8. Ծառերն *օրորվում* էին երեկոյան քամուց:
9. Ստորգետնյա խողովակի վնասված տեղը *գտնվեց* հմուտ մասնագետների կողմից:
10. Այդ քաղաքը *գտնվում է* լճի ափին:

Վարժություն 13: Գտե՛ք, թե յուրաքանչյուր շարքի որ բայում վ/-ն կրավորական ածանց չէ:

1. ազդվել, ձգվել, բավել, ստեղծվել
2. տարածվել, կոտրվել, քերծվել, դավել
3. վերափոխվել, արգելվել, բարելավել, պատժվել
4. կախարդվել, մլավել, նախշազարդվել, կառուցվել
5. նվաճվել, համեմվել, շղթայվել, բղավել
6. խուսանավել, փոխակերպվել, հյուսվել, ընդմիջվել
7. վերսկսվել, արշավել, ցանկապատվել, հոշոտվել
8. շեշտվել, հապավել, շրջապատվել, մուտքագրվել
9. ծրագրվել, կուտակվել, պառավել, գրվել
10. ազատագրվել, լուսավորվել, փշրվել, կռավել
11. այրվել, միավորվել, պարսավել, առանձնացվել
12. մեքենագրվել, ծարավել, նորոգվել, գրանցվել
13. գրավել, զեկուցվել, համեմատվել, ճեղքվել
14. հեռացվել, ցավել, իրացվել, տաքացվել
15. փակցվել, կարդացվել, քավել, ավելացվել
16. թոթվել, կահավորվել, ներկվել, մթերվել
17. գույքագրվել, սանձահարվել, զզվել, կարգադրվել
18. նկարագրվել, գժվել, նետվել, հոշոտվել
19. կիրառվել, պահանջվել, շրջվել, հրճվել
20. նշվել, ցողվել, խռովել, խնայվել

Վարժություն 14: Պարզի փոխակերպե՛ք տրված բարդ ստորադասական նախադասությունները:

1. Ոչ ոք չէր համաձայնում գնալ, որովհետև ճանապարհը շատ վտանգավոր էր:
2. Բլրի լանջին կար մի հուշարձան, որը երևում էր ամբողջ գյուղից:
3. Ընթերցվեցին նրանց անունները, ովքեր հաղթել էին մրցույթում:
4. Ճշմարտությունն այն է, որ դու չես կատարել հանձնարարությունը:
5. Հեռուստացույցը, որը նոր էին գնել, շատ որակյալ էր:
6. Դու, որ այդքան լավ ես պատրաստվել, անպայման կհաղթես մրցույթում:
7. Զբոսաշրջիկները, եթե անմիջապես մեկնեն, մինչև մութն ընկնելը կարող են հասնել հյուրանոց:
8. Երբ ավարտեց աշխատանքը, հավաքեց գործիքները:
9. Հենց որ հյուրերը եկան, սկսվեց տոնախմբությունը:
10. Նախքան մեքենան կհասներ շենքին, դիմավորողները թափահարում էին ծաղկեփնջերն ու գույնզգույն փուչիկները:

Վարժություն 15: Տրված պարզ ընդարձակ նախադասությունները փոխակերպե՛ք բարդ ստորադասականի:

1. Իր այգում աշխատելիս նա միշտ ծղոտե լայնեզր գլխարկ էր դնում:
2. Նոր կառուցված շենքը հիացրեց բոլորին:
3. Դասից վերադառնալուն պես այցելում էր վատառողջ ընկերոջը:
4. Խանութի ցուցափեղկում շարված տեսակ-տեսակ խաղալիքներն իրենց գայթակղիչ տեսքով հրապուրում էին երեխաներին:
5. Հակառակ հորդ անձրև տեղալուն՝ նրանք մեկնեցին:
6. Ամեն առիթով իրեն գովողը այս անգամ զարմանալիորեն լռեց:
7. Աշակերտները ցուցահանդես էին գնացել՝ տեսնելու իրենց դասընկերոջ նկարները:
8. Նախքան ներկայացման սկսվելը դահլիճը լեփ-լեցուն էր:
9. Եղանակի լավ լինելու դեպքում շինարարները աշխատանքը մի քանի օրից կավարտեին:
10. Չափազանց զբաղված լինելու պատճառով չէր հասցնում խնամել ծաղիկները:

Վարժություն 16: Ուղղակի խոսքը փոխակերպե՛ք անուղղակիի:

1. – Մենք այդ ամենը կարող ենք կատարել,– պատասխանեց վարպետը:
2. – Երեք օրից,– ավելացրեց ընկերս,– ընկերներդ քո տանը կլինեն:
3. «Դուք կարող եք մասնակցել մրցույթին, եթե ձեզ ձեր ուսման վայրից բնութագիր տան»,– ի պատասխան մեր նամակին՝ գրել էին մրցույթի կազմակերպիչները:
4. Երիտասարդն ասաց գործընկերոջը.
   – Ես իմ խոսքի տերն եմ և, երբ անհրաժեշտ լինի, սիրով կօգնեմ քեզ:
5. «Այդ ամենը,– մտածում էր նա,– ես վաղուց պետք է արած լինեի»:
6. – Այս ամենը կնպաստի աշակերտների ակտիվ մասնակցությանը,– ասաց մարզիչը:
7. – Մի քանի օր հետո,– ինձ պատասխանեց Գևորգը,– ես մեկնելու եմ հանգստանալու և չեմ կարող մասնակցել ձեր կազմակերպած արշավին:
8. – Մենք բոլորս պատրաստ ենք այդ հանդիպմանը,– հայտարարեցին ֆուտբոլիստները:
9. Մարզիչը պատասխանեց.
   – Այս հաղթանակը մեր բոլորի ջանքերի արդյունքն է, այլ ոչ թե միայն իմ:
10. «Բոլոր ցանկացողները մինչև ամսի տասը կարող են դիմել մեզ»,– գրված էր հայտարարության մեջ:

Վարժություն 17: Անուղղակի խոսքը փոխակերպե՛ք ուղղակիի:

1. Ընկերս ասաց, որ ինքը դեմ չէ իմ այդ նախաձեռնությանը:
2. Նա մտածում էր, որ ճիշտ կլիներ, եթե ինքը դիմեր իր ընկերների օգնությանը:
3. Գիտնականը պատմում էր, որ փորձերից մեկի ժամանակ ինքն անսպասելիորեն գտավ այդ հարցի պատասխանը:
4. Ինձ ուղարկված նամակում գրված էր, որ իրենք երեք օրից ինձ կդիմավորեն երկաթուղային կայարանում:
5. Փոքրիկը խոստացավ հայրիկին, որ ինքը երբեք ձեռք չի տա նրա գործիքներին:
6. Երաժիշտներն ասացին, որ այդքան մեծ համերգասրահում նվագելն իրենց համար և՛ պատվաբեր է, և՛ պարտավորեցնող:
7. Գրադարանավարուհին աղջկան ասաց, որ նրա ուզած գիրքը չկա, բայց կա այդ գրքի հեղինակի մեկ ուրիշ վեպ:
8. Վաճառողուհին այցելուին ասաց, որ իրենց խանութից նրա գնած ապրանքը որակյալ է, և դժգոհելու առիթ նա չի ունենա:
9. Աշակերտները հարցրին ուսուցչուհուն, թե իրենք երբ են գնալու այն թանգարանը, որի մասին նա իրենց պատմել էր:
10. Արմենուհին հարցրեց ընկերուհուն, թե նա երբ կարող է գալ իրենց տուն, որպեսզի իրենք միասին իրենց դասերը սովորեն:

Վարժություն 18: Արտագրե՛ք և կետադրե՛ք:

1. Գագիկ Արծրունին մի քանի շաբաթ շարունակ հյուրընկալեց Աբաս թագավորին և ի պատիվ նրա ու հրավիրյալ իշխանների այդ ընթացքում նրանց համար կազմակերպվում էին հաճելի զբոսանքներ: Մի օր շրջում էին անառիկ բերդում և ցույց էր տալիս նրանց ամրոցի տարբեր հրաշալիքներ բնության մարդկանց և մանավանդ իր ձեռքով կերտած ամրությունները վիմափոր անձավները իրենց գաղտնի ճանապարհներով քարակոփ մատուռները և ավազանները: Ցույց էր տալիս այդ լեռնակարկառ բարձրության առաջ բացվող գեղազվարթ տեսարանները որոնցով հիանալու համար բազմում էին քարաբլրի դեպի ծովը նայող ուղղաբերձ պատերի մեջ օթյակաձև փորված նստարաններին: Այդտեղից երևում էր քաղաքը իր գմբեթարդ շինություններով ծովակը իր գեղածուփ կոհակներով և ապառաժոտ կղզիներով:

Ըստ Մուրացանի

2. Մտնելով հյուրանոց հանկարծ կանգ առավ անակնկալ հանդիպումից սահմռկած: Նախ ուզեց ճչալ խելակորույս հետ փախչել սակայն զարմանքն ու հետաքրքրությունն այնքան մեծ էին որ լռելյայն գամվեց տեղում արձանացավ աչքերը հառած այցելուին:

Նրա դիմաց աստիճաններից՝ քիչ ձախ դռան փեղկերի արանքում կանգնած էր տարօրինակ այցելուն իսկ հանդիպակաց պատուհաններից թափանցող արևի ճառագայթները բեկվում էին նրա տարիների տառապանքից երբեմնի փայլը կորցրած ու փոքր-ինչ մշուշված աչքերի մեջ: Նա երեսուն-երեսունհինգ տարեկան բարձրահասակ տղամարդ էր կորնթարդ քթով արևից թրծված բայց նաև վաղաժամ խորշոմած դեմքով: Հագին տեղ-տեղ ծակծկված զինվորական բաճկոն էր ճմռթված ու առանց ուսադիրների: Գլխին մորթե գլխարկ էր գունաթափված խունացած:

Ըստ Նար-Դոսի

3. Երբ թեկուզ մի թռուցիկ հայացքով նայում ես կիսախարխուլ տներով փողոցներից դեպի ձախ անթիվ շոգենավերին բարձր ծխնելույզներով գործարաններին ու էլեկտրական շլացուցիչ լույսերին ժամանակակից քաղաքակրթությունն է աղաղակում հզոր շոգու և կուռ երկաթի գոռոզ ու յուրօրինակ այդ թագավորությունը: Մի կողմում Ասիա է մյուս կողմում Եվրոպա դա հակադրությունների մի կատարյալ քաոս է որտեղ ամենակուլ նորը կատաղի կռիվ է մղում հինավուրցի դեմ:

Սմբատը ծովեզրին լուռ արձանացած ըմբոշխնում էր չքնաղ տեսարանն ու հրճվում:

Բայց նրա ցնծության մեջ կար թույնի մաղձոտ մի կաթիլ որը փոթորկում էր ալեհույզ հոգին: Չնաշխարհիկ բնության թովիչ արթնացումը հիշեցնում էր նրան իր խոտոր կյանքի վաղաժամ նիրհը: Մի ակնթարթ մեծ ճիգով նրան հաջողվեց մոռանալ բոլորը և Միքայելին ու նրա ընկերներին և նրա սաստկացող հոխորտանքները: Ամեն ինչ մոռացավ բացի իր զավակներից:

Ըստ Ալեքսանդր Շիրվանզադեի

ԿԵՏԱԳՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՂՅՈՒՍԱԿ

Այս աղյուսակը համապատասխան օրինակներով համառոտ ներկայացնում է կետադրվող միավորները, նրանց սահմանումները և կետադրության կանոնները:

ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻԱՎՈՐԸ	ՍԱՀՄԱՆՈՒՄԸ	ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
1. Պարզ նախադասություն	Այն նախադասությունն է, որն ունի միայն մեկ ստորոգում:	Վերջում դրվում է վերջակետ կամ կախման կետեր: Օր.՝ *Նա **գնաց** տուն: Նա հիշեց...*
2. Ենթակա	Նախադասության այն գլխավոր անդամն է, որին ստորոգման միջոցով վերագրվում է հատկանիշ: Օր.՝ ***Արևը** ծագեց:* ***Տերևը** կանաչ է:*	Անվանաբայական ստորոգյալի նկատմամբ հետադաս անորոշ առումով բազմակի ենթակաները տրոհվում են բութով: Օր.՝ *Այդ վայրում աճող ծառերից են՝ **խնձորենի, ծիրանենի, բալենի:*** Բութով կարող է տրոհվել դերբայական դարձվածում սեռական հոլովով դրված կողմնակի ենթական, եթե ենթակայի և դերբայի միջև կա գոյական կամ գոյականաբար գործածվող բառ, օր.՝ *Ծերունու՝ հայրենի գյուղ մեկնելը անսպասելի էր:*
3. Որոշիչ	Գոյականական անդամի այն լրացումն է, որն արտահայտում է որակային որևէ հատկանիշ: Օր.՝ ***մեծ, գեղեցիկ** տուն* ***տասը** գիրք* ***այդ** գիրքը* ***ծաղկած** ծառ* ***աշակերտ** Արմենը*	Իրենց որոշյալի նկատմամբ հետադաս բազմակի կամ ծավալուն որոշիչները տրոհվում են բութով, իսկ նրանցից հետո դրվում է ստորակետ: Օր.՝ *Կառույցը՝ **վեհաշուք ու գեղեցիկ,** հիացրեց բոլորին:* Բազմակի համասեռ որոշիչները միմյանցից տրոհվում են ստորակետերով: Օր.՝ *Կարմիր, դեղին, ճերմակ ծաղիկները դրված էին ծաղկամանում:*

4. Հատկացուցիչ	Գոյականական անդամի այն լրացումն է, որն արտահայտում է պատկանելություն, վերաբերում, սերում: Օր.՝ ***գրքի*** *էջը,* ***նրա*** *նկարը:*	Եթե հատկացուցչի և հատկացյալի միջև կա գոյական կամ գոյականաբար գործածված բառ, ապա հատկացուցիչը տրոհվում է բութով: Օր.՝ *Նրա՝ քարից տունը գեղեցիկ է:*
5. Բացահայտիչ	Գոյականով կամ դերանունով արտահայտված անդամի լրացում, որը բացահայտում է նրա ով կամ ինչ լինելը: Առանձնացվում է բացահայտչի 3 տեսակ՝ բուն, մասնական, մասնավորող:	Բացահայտչի 3 տեսակներն էլ բացահայտյալից տրոհվում են բութով, իսկ հաջորդող բառից՝ ստորակետով: Մի շարք դեպքերում ստորակետը կարող է չդրվել: Օր.՝ *Ընկերս՝* ***Աշոտը,*** *մեկնեց:* *Նա՝* ***որպես ընկեր,*** *իրեն չարդարացրեց:* *Բակում՝* ***ծառի տակ,*** *կար մի սեղան:*
6. Նպատակի պարագա	Բայական անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս գործողության կատարման նպատակը: Օր.՝ *Գնաց Եվրոպայում սովորելու:*	Եթե նպատակի պարագայի և նրա լրացյալի միջև կա նպատակի պարագային չլրացնող գոնե մեկ անդամ, նպատակի պարագան տրոհվում է բութով: Նպատակի պարագան տրոհվում է նաև շրջուն օժանդակ բայ ունեցող բային լրացնելու դեպքում: Օր.՝ *Գնաց խանութ՝* ***հացի:*** *Խանութ էին գնացել՝* ***գնումների:*** *Տուն էր գնացել՝* ***գիրքը բերելու համար:***
7. Հիմունքի պարագա	Բայական անդամի այն լրացումն է, որն արտահայտում է գործողության կատարման հիմունքը: Օր.՝ *Այդ ամենը* ***իմ կարծիքով*** *ճիշտ է:*	Կապերով ձևավորված հիմունքի պարագաները նախադասության սկզբում կամ վերջում գտնվելիս տրոհվում են բութով, իսկ միջադաս դիրքում՝ ստորակետերով: Օր.՝ ***Ըստ օրենքի՝*** *արգելված է:* *Աշխատանքը,* ***համաձայն հրամանի,*** *դադարեցվեց:* *Աշխատանքը դադարեցվեց՝* ***ըստ հրահանգի:***

8. Չիջման պարագա	Բայական անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս, թե հակառակ ինչին է կատարվում գործողությունը:	Չիջման պարագաները նախադասության սկզբում կամ վերջում գտնվելիս տրոհվում են բութով, իսկ միջադաս դիրքում՝ ստորակետերով: Օր.՝ ***Հակառակ արգելքին՝*** *նա գնաց:* *Նա,* ***հակառակ արգելքին,*** *գնաց:* *Նա գնաց՝* ***հակառակ արգելքին:***
9. Ձևի պարագա	Բայական անդամի այն լրացումն է, որն արտահայտում է գործողության կատարման ձևը: Օր.՝ ***Արագ*** *վազեց:*	*Ինչպես* հարաբերական դերանունով ձևավորված ձևի պարագաները տրոհվում են ստորակետով: Օր.՝ *Կռվում էր, ինչպես հերոսը:*
10. Դերբայական դարձված	Դերբայն իր լրացում(ներ)ով և լրացման լրացում(ներ)ով կոչվում է դերբայական դարձված:	Անորոշ դերբայի գործիական հոլովով կամ հարակատար դերբայով ձևավորված դերբայական դարձվածները նախադասության սկզբում կամ վերջում գտնվելիս տրոհվում են բութով, իսկ միջադաս դիրքում՝ ստորակետերով: Որոշչի պաշտոն կատարող նախադաս դերբայական դարձվածները, որոնք ձևավորված են հարակատար դերբայով, չեն տրոհվում: Օր.՝ ***Տուն մտնելով՝*** *նա իսկույն ճաշեց:* *Նա հեռացավ՝* ***բոլորին շնորհակալություն հայտնելով:*** *Նա,* ***բոլորին շնորհակալություն հայտնելով,*** *հեռացավ:* ***Աչքերը փակած՝*** *նա լսում էր այդ պատմությունը:* ***Սեղանին դրված*** *ծաղկամանը շատ գեղեցիկ էր:*

11. Վերաբերականներ	Խոսողի դատողական վերաբերմունքն արտահայտող բառերը կոչվում են վերաբերականներ կամ եղանակավորող բառեր: Օր.՝ ***ավաղ, գուցե, հենց*** և այլն:	Վերաբերականների մի մասը, եթե իր դիրքով հեռու է իր եղանակավորած բառից, տրոհվում է ստորակետ(եր)ով: ***Բարեբախտաբար,*** *այդ ամենը մոռացվել է:* Բայց՝ *Այդ ամենը* ***բարեբախտաբար*** *մոռացվել է:*
12. Ձայնարկություններ	Խոսողի զգացական վերաբերմունքը, ինչպես նաև կոչ, նմանաձայնություն արտահայտող բառերը կոչվում են ձայնարկություններ: Օր.՝ ***Վա՛յ, է՛, հե՛յ, տո՛, խը՛ՀՀ*** և այլն:	Ձայնարկությունները հիմնականում նախադասության մյուս բառերից տրոհվում են ստորակետ(եր)ով, և նրանց վրա դրվում է բացականչական նշան կամ շեշտ (երբեմն հարցական): Օր.՝ ***Վա՛յ,*** *դու վերադարձե՞լ ես:*
13. Կոչական	Նախադասության այն միավորն է, որը ցույց է տալիս, թե ում է դիմում խոսողը:	Նախադասության մյուս բառերից տրոհվում է ստորակետերով, շեշտ է ստանում: Եթե կոչականն ունի նախադաս լրացում, ապա շեշտը դրվում է լրացման վրա: *– Արմեն, մենք գնում ենք:* *– Սիրելի՛ Արմեն, մենք գնում ենք:*
14. Ներդրյալ բառեր, բառակապակցություններ և նախադասություններ	Այն բառերը, բառակապակցություններն ու նախադասություններն են, որոնք լրացուցիչ տեղեկություններ են հաղորդում:	Առնվում են փակագծերի մեջ: Օր.՝ *Գոռը* ***(թիմի ավագ)*** *արժանացել է պարգևի:* *Տիգրանը* ***(այդ էր նրա անունը)*** *եկավ:*
15. Միջանկյալ նախադասություններ	Այն նախադասություններն են, որոնք հանդես են գալիս նախադասության կազմում և արտահայտում են գնահատողական, վերաբերմունքային նրբերանգներ: Ի տարբերություն ներդրյալ միավորների՝ ձևականորեն կապվում են նախադասությանը:	Տրոհվում են ստորակետ(եր)ով: Օր.՝ *Դա,* ***կարծում եմ,*** *հեշտ է:*

16. Բազմակի անդամներ	Միևնույն պաշտոնով մեկից ավելի համասեռ անդամներն են:	Միմյանցից տրոհվում են ստորակետերով, իսկ եթե կապակցված են կրկնվող շաղկապներով, ապա շաղկապների վրա դրվում են շեշտեր: Օր.՝ *Նա բաղել էր **կարմիր, դեղին, կապույտ** ծաղիկներ:* ***Թե՛ գիրքը, թե՛ տետրը և թե՛ գրիչը** դրված են սեղանին:*
17. Բարդ համադասական նախադասություն	Իրար նկատմամբ համազոր մեկից ավելի նախադասություններից կազմված բարդ նախադասություն:	Բաղադրիչ նախադասությունների միջև դրվում է ստորակետ կամ միջակետ: Եթե կապակցված են ***և, ու, կամ*** շաղկապներից որևէ մեկով և ունեն ընդհանուր ենթակա, ապա կետադրական որևէ նշան բաղադրիչների միջև չի դրվում: Օր.՝ *Նա եկավ և մեզ օգնեց:* *Նա եկավ, և բոլորը ողջունեցին:* *Գնացի, բայց տանը չէր:* *Ամեն ինչ նորոգված էր, լավ էին աշխատել:*
18. Բարդ ստորադասական նախադասություն	Գերադաս և ստորադաս բաղադրիչներից կազմված բարդ նախադասություն:	Բաղադրիչ նախադասությունները տրոհվում են ստորակետով: Օր.՝ *Երբ ավարտեց աշխատանքը, գնաց:* Եթե բաղադրիչները կապակցող շաղկապը զեղչված է, ապա դրվում է բութ: Օր.՝ *Թվաց՝ լսեց մի ձայն:*

19. Ուղղակի խոսք	Որևէ մեկի խոսքը, որը մեջբերվում է ուղղակիորեն:	Եթե հեղինակի խոսքը նախադաս է, ապա նրանից հետո դրվում է միջակետ, իսկ ուղղակի խոսքից առաջ՝ անջատման գիծ: Հեղինակի՝ միջադաս կամ հետադաս խոսքը հիմնականում տրոհվում է ստորակետ-գծով: Չինչող ուղղակի խոսքն առնվում է չակերտների մեջ: Հեղինակի խոսքի նկատմամբ հետադաս կարճ ուղղակի խոսքը կարող է տրոհվել բութով: Օր.՝ *Նա ասաց.* *– Ես կգնամ:* *– Ես կգնամ,– ասաց նա:* *– Ես,– ասաց նա,– կգնամ:* *Նա մտածեց. «Ես կգնամ»:* *«Ես,– մտածեց նա,– կգնամ»:* *«Ես կգնամ»,– մտածեց նա:* *Նա ասաց՝ կգամ:*
20. Թերի նախադասություն	Այն նախադասությունն է, որի անդամներից մեկը կամ մի քանիսը բաց են թողնված, բայց հասկացվում են խոսքային տվյալ միջավայրից:	Թերի նախադասությունները տրոհվում են ստորակետ(եր)ով: Օր.՝ *Ե՞րբ է եկել, **ցերե՞կը, թե՞ գիշերը*** (այսինքն՝ ցերե՞կն է եկել, թե՞ գիշերն է եկել):
21. Չեղչված անդամներ ու միավորներ	Այն անդամներն ու միավորներն են, որոնք տվյալ դեպքում գործածված չեն, բայց հասկացվում են ընդհանուր իմաստից:	Չեղչված ստորոգյալների և ստորադասական շաղկապների փոխարեն դրվում է բութ: Օր.՝ *Գիտեր՝ կգնա:* *Նա գնաց տուն, իսկ դու՝ գյուղ:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒ ԵՎ ԲԱՐԲԱՌ 3

Նոր գրական հայերեն՝ աշխարհաբար: Աշխարհաբարի զարգացման ընթացքը 9

Հայերենի երկու ճյուղերը՝ արևելահայերենն ու արևմտահայերենը 11

Արևմտահայերենի հնչյունական համակարգը 12

Արևմտահայերենի բառապաշարը 13

Արևմտահայերենի քերականական հիմնական տարբերությունները արևելահայերենից 15

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 19

Բառային իմաստ և քերականական իմաստ 19

Ձևույթներ 20

Հայերենի խոսքի մասերի համակարգը 21

Գոյականի, ածականի և մակբայի հոմանշային շարքերը 24

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ 27

Հատուկ և հասարակ գոյականներ 29

Գոյականի թիվը 35

Գոյականի առումները 38

Գոյականի հոլովները 41

Ուղղական հոլով 43

Սեռական հոլով 46

Տրական հոլով 50

Հայցական հոլով 53

Բացառական հոլով 56
Գործիական հոլով 60
Ներգոյական հոլով 63

ԲԱՅ 69
Դիմավոր և անդեմ բայեր 69
Դերբայներ 71
Անորոշ դերբայ 71
Համակատար դերբայ 75
Հարակատար դերբայ 77
Ենթակայական դերբայ 81
Ձևաբայեր 86
Անկատար ձևաբայ 87
Ապակատար ձևաբայ 89
Վաղակատար ձևաբայ 91
Ժխտական ձևաբայ 93
Խոնարհում 97
Բայի եղանակները 97
Բայի ժամանակները 97
Բայի դեմքը 98
Բայի թիվը 98
Դրական և ժխտական խոնարհում 100
Օժանդակ բայ 100
Օժանդակ բայի ուղղագրությունը և արտասանությունը 100
Ամփոփում 101
Սահմանական եղանակ 103
Անկատար ներկա 103
Անկատար անցյալ 103
Ապակատար ներկա 104
Ապակատար անցյալ 104
Վաղակատար ներկա 104

Վաղակատար անցյալ 105
Անցյալ կատարյալ 105
Հրամայական եղանակ 111
Ըղձական եղանակ 114
Ենթադրական (պայմանական) եղանակ 116
Հարկադրական եղանակ 118
Ժխտական խոնարհում 120

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ 128
Շարահյուսական հոմանիշներ 129
Բարդ բառ և բառակապակցություն 131
Հոլովաձև և կապական կառույց 133
Դերբայական դարձված և երկրորդական նախադասություն 135
Դերբայական դարձվածի կետադրությունը 136
Բարդ ստորադասական նախադասության փոխակերպումը պարզի և հակառակը 139
Բարդ ստորադասական նախադասության փոխակերպման իմաստային-քերականական առանձնահատկությունները 143
Մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսք 149
Մեջբերվող ուղղակի խոսքի փոխակերպումն անուղղակիի 150
Ուղղակի խոսքի կետադրությունը 155
Ներգործական և կրավորական կառույցներ. նրանց փոխակերպումը 159
Նախադասությունների տեսակներն ըստ հաղորդակցական նպատակի, նրանց հնչերանգը և կետադրությունը 160

ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ 164
Տրոհության նշաններ 166
Առոգանության նշաններ 172
Բացահայտության նշաններ 175
Կետադրական կանոնների հանդիպադրում 177

ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 182
Գիտական ոճի առանձնահատկությունները 182
Գիտական ոճի բառապաշարը 184
Գիտական ոճի քերականական
առանձնահատկությունները 186

ՀԱՎԵԼՎԱԾ I 188
Կրկնության վարժություններ 188

ՀԱՎԵԼՎԱԾ II 198
Կետադրման տեղեկատու աղյուսակ 198

Լևոն Եզեկյան, Արտաշես Սարգսյան, Ռուբեն Սաքապետոյան

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
11

ԴԱՍԱԳԻՐՔ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԵՎ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ
11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

Շապիկի ձևավորումը՝ Արտակ Բաղդասարյան

Մուտքագրում՝ Սվետլանա Այվազյան
Էջադրում՝ Միքայել Աբրահամյան
Սրբագրիչ՝ Պարույր Հակոբյան

«ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ
Երևան, Ղ. Փարպեցու 9, հեռ. 53-79-82, 53-79-83
E-mail: manmar@arminco.com

Պատվեր՝947: Տպաքանակ՝ 38180:

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում

ՄԱՆՄԱՐ

MANMAR